ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Դիմորդի ուղեցույց
2026

ԵՐԵՎԱՆ – 2026

Կազմողներ՝

Է. Վ. Ասրիյան
Ա. Ա. Ավետիսյան
Գ. Ռ. Ֆանյան

Դիմորդի ուղեցույց 2026: - Եր., 2026, 175 էջ:

Դիմորդի ուղեցույցը պարունակում է համառոտ տեղեկատվություն ԵՊՀ ֆակուլտետների և կրթական ծրագրերի, նախապատրաստական դասընթացների և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի մասին:

Ներկայացված են վերջին երեք տարիների ընդունելության քննությունների պատկերը, ԵՊՀ բոլոր կրթական ծրագրերով անցողիկ միավորները և դիմորդների թիվն ըստ կրթական ծրագրերի և տեղերի քանակի:

Նախատեսված է ՀՀ հանրակրթական հաստատությունների (դպրոցներ, վարժարաններ, քոլեջներ, նախնական մասնագիտական հաստատություններ) ավարտական դասարանների աշակերտների և սովորողների մասնագիտական կողմնորոշման համար:

Մեր հասցեն. ՀՀ, 0025 ք. Երևան
Երևանի պետական համալսարան
կենտրոնական մասնաշենք, 1-ին հարկ
Ընդունելության և դիմորդների հետ տարվող
աշխատանքների կենտրոն
հեռ. (37410) 55 - 40 - 03, (060) 710-132
(060) 710-679
էլ. փոստ՝ pre-ued@ysu.am

Սիրելի՛ դիմորդ,

շուտով դու կայացնելու ես քո կյանքի ամենակարևոր որոշումներից մեկը. ընտրելու ես մասնագիտությունդ, որն օգնելու է քեզ երազանքների իրագործման և հաջողության հասնելու ճանապարհին:

Երևանի պետական համալսարանը սիրով պատրաստ է բացել իր դռները քո առաջ և իր աշխատակիցների, պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի, շրջանավարտների և ուսանողների հետ միասին օգնել քեզ իրագործելու քո իղձերն ու նպատակները:

Ուսումնառության ընթացքում դու այստեղ ծանոթանալու ես ավելի քան մեկդարյա հարուստ պատմություն ունեցող Մայր բուհի գեղեցիկ ավանդույթներին, ստանալու ես Հայաստանում լավագույն կրթությունը, ձեռք ես բերելու նոր հմտություններ, իրականացնելու ես գիտական առաջին քայլերդ, բացահայտելու ես ներուժդ և ձևավորելու ես քո աշխարհայացքը:

Սիրելի՛ դիմորդ,

անկախ մասնագիտության ընտրությունից՝ ԵՊՀ-ն իր ստեղծագործական ոգեշնչող միջավայրով, բարեփոխումների ծրագրով, նորարարական մեթոդներով ու տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ կազմակերպվող տարբեր դասընթացներով, մշակութային ու մարզական միջոցառումներով հիշարժան ու անմոռանալի է դարձնելու ուսանողական քո առօրյան և հետագայում հաջողությունների հասնելու նոր հնարավորություններ է ընձեռելու:

Ես համոզված եմ, որ մենք միասին քո ուսումնառությունն առավել հետաքրքիր ու արդյունավետ ենք դարձնելու, կյանքի ենք կոչելու քո նորարար գաղափարները, նպաստելու ենք մեր բուհի, ինչպես նաև երկրի զարգացմանն ու առաջընթացին:

Սիրելի՛ դիմորդ,

ես հուսով եմ, որ դու գիտակցաբար կընտրես ԵՊՀ-ն և կդառնաս Մայր բուհի մեծ ընտանիքի մի մասնիկը՝ հավերժ կրելով համալսարանական լինելու բարձր կոչումը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՊՀ ռեկտոր

Ց Ա Ն Կ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ 2026/2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ծածկագիր	Կրթական ծրագիր	Ընդունելության քննություններ			
		Մրցութային			Ոչ մրցութային
056101.01.6 առկա	Մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ) կամ Անգլ (գ)		Հլգ(գ)*
056801.01.6 առկա	Մեխանիկա	Մ(գ)	Ֆ(գ) կամ Անգլ (գ)		Հլգ(գ)*
056802.01.6 առկա	Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ) կամ Օտլ (գ)		Հլգ(գ)*
056201.02.6 առկա	Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն	Մ(գ)	Ֆ(գ) կամ Անգլ (գ)		Հլգ(գ)*
061101.02.6 առկա, հեռակա	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ) կամ Անգլ (գ)		Հլգ(գ)*
061901.01.6 առկա	Տեղեկատվական անվտանգություն	Մ(գ)	Ֆ(գ) կամ Անգլ(գ)		Հլգ(գ)*
055101.01.6 առկա	Ֆիզիկա	Ֆ(գ)	Մ(գ)		Հլգ(գ)*
055101.04.6 առկա	Տվյալների մշակումը ֆիզիկայում և արհեստական բանականություն	Ֆ(գ)	Մ(գ)		Հլգ(գ)*
055102.02.6 առկա	Ռադիոֆիզիկա և համակարգչային տեխնոլոգիաներ (Սինոփսիս)	Ֆ(գ)	Մ(գ)		Հլգ(գ)*
053101.01.6 առկա	Քիմիա	Քիմ(գ)	Կ(գ) կամ Ֆ(գ)		Հլգ(գ)*
053101.02.6 հեռակա	Դեղագործական քիմիա	Քիմ(գ)	Կ(գ) կամ Ֆ(գ)		Հլգ(գ)*
053101.04.6 առկա	Սննդի անվտանգություն	Քիմ(գ)	Կ(գ) կամ Ֆ(գ)		Հլգ(գ)*
091601.01.6 առկա	Ֆարմացիա **	Կ(գ)	Քիմ(գ)	Ֆ(գ)	Հլգ(գ)*
051101.01.6 առկա, հեռակա	Կենսաբանություն	Կ(գ)	Քիմ(գ) կամ Ֆ(գ)		Հլգ(գ)*
051201.03.6 առկա	Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա	Կ(գ)	Քիմ(գ) կամ Ֆ(գ)		Հլգ(գ)*
054201.01.6 առկա	Աշխարհագրություն	Մ(գ)	Ա(գ) կամ Անգլ(գ)		Հլգ(գ)*
054101.01.6 առկա	Երկրաբանություն	Մ(գ)	Ա(գ) կամ Անգլ(գ)		Հլգ(գ)*
054201.02.6 առկա, հեռակա	Քարտեզագրություն և կադաստրային գործ	Մ(գ)	Ա(գ) կամ Անգլ (գ)		Հլգ(գ)*
101801.01.6 առկա, հեռակա	Սերվիս	Հլգ(գ)	Օտլ(գ) կամ Ա(գ)		
022201.01.6 առկա, հեռակա	Պատմություն	ՀՊ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
022202.01.6 առկա	Հնագիտություն և ազգագրություն	ՀՊ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
022802.01.6 առկա	Կովկասագիտություն	ՀՊ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*

Ծածկագիր	Կրթական ծրագիր	Ընդունելության քննություններ			
		Մրցութային			Ոչ մրցութային
021801.02.6 առկա	Արվեստաբանություն	Հլգ(գ)	ՀՊ(գ) կամ Օտլ(գ)		
031501.01.6 առկա	Մշակութաբանություն	Հլգ(գ)	ՀՊ(գ) կամ Օտլ(գ)		
031801.01.6 առկա, հեռակա	Միջազգային հարաբերություններ	Հլգ(գ)	ՀՊ(գ) կամ Օտլ(գ)		
041301.02.6 առկա, հեռակա	Հանրային կառավարում	ՀՊ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
041301.04.6 առկա	Հանրային քաղաքականություն և կառավարում	ՀՊ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
031201.01.6 առկա	Քաղաքագիտություն	ՀՊ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
031101.01.6 առկա, հեռակա	Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
041201.01.6 առկա, հեռակա	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
041301.01.6 առկա, հեռակա	Կառավարում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
022301.01.6 առկա	Փիլիսոփայություն	Հլգ(գ)	ՀՊ(գ) կամ Օտլ(գ)		
031301.01.6 առկա, հեռակա	Հոգեբանություն	Հլգ(գ)	Օտլ(գ) կամ Կ(գ)		
031401.01.6 առկա	Սոցիոլոգիա	Մ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
092301.01.6 առկա, հեռակա	Սոցիալական աշխատանք	Հլգ(գ)	Օտլ(գ) կամ Կ(գ)		
031804.01.6 առկա	Հասարակայնության հետ կապեր	Հլգ(գ)	Օտլ(գ)		
023101.01.6 առկա, հեռակա	Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	Օտլ(գ)		
011301.03.6 առկա	Սոցիալական մանկավարժություն	Հլգ(գ)	Մ(գ) կամ Օտլ(գ)		
032101.01.6 առկա	Լրագրություն	Հլգ(գ)	Օտլ(գ)		
023201.09.6 առկա	Միջմշակութային հաղորդակցություն և թարգմանություն (ռուսերեն)	Ռլ(գ)	Հլգ(գ)		
023102.01.6 առկա	Ռուսերեն և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		
023102.02.6 առկա, հեռակա	Անգլերեն և գրականություն	Անգլ(գ)	Հլգ(գ)		
023201.01.6 առկա	Թարգմանչական գործ (անգլերեն և հայերեն)	Անգլ(գ)	Հլգ(գ)		
023201.02.6 առկա	Միջմշակութային հաղորդակցություն՝ անգլերեն	Անգլ(գ)	Հլգ(գ)		
023201.10.6 առկա	Անգլերեն, ֆրանսերեն և հաղորդակցություն	Հլգ(գ)	Անգլ(գ) կամ Ֆրլ(գ)		
023201.11.6 առկա	Անգլերեն, գերմաներեն և հաղորդակցություն	Հլգ(գ)	Անգլ(գ) կամ Գլ(գ)		

Ծածկագիր	Կրթական ծրագիր	Ընդունելության քննություններ			
		Մրցութային			Ոչ մրցութային
023201.12.6 առկա	Անգլերեն, իսպաներեն և հաղորդակցություն	Հլգ(գ)	Անգլ(գ) կամ Իսլ(գ)		
023201.13.6 առկա	Անգլերեն, իտալերեն և հաղորդակցություն	Հլգ(գ)	Անգլ(գ) կամ Իտլ(գ)		
022801.01.6 առկա	Արաբագիտություն	ՀՊ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
022801.02.6 առկա	Թյուրքագիտություն	ՀՊ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
022801.03.6 առկա	Իրանագիտություն	ՀՊ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
022801.05.6 առկա	Աղրբեջանագիտություն	ՀՊ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
042101.01.6 առկա, հեռակա	Իրավագիտություն	ՀՊ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
022102.01.6	Աստվածաբանություն	ՀՊ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
101501.03.6 առկա, հեռակա	Կրոնական զբոսաշրջություն	ՀՊ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*

ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Ծածկագիր	Կրթական ծրագիր	Ընդունելության քննություններ			
		Մրցութային			Ոչ մրցութային
011301.01.6 առկա, հեռակա	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ) կամ Օտլ(գ)		
011401.20.6 առկա	Ռուսերեն և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		
021201.01.6 առկա	Դիզայն	Գծն	Կոմպ.		Հլգ(գ)*
021401.01.6 առկա	Դեկորատիվ կիրառական արվեստ	Գծն	Կոմպ.		Հլգ(գ)*
022201.01.6 առկա, հեռակա	Պատմություն	ՀՊ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
023101.01.6 առկա	Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	Օտլ(գ)		
023102.02.6 առկա	Անգլերեն և գրականություն	Անգլ(գ)	Հլգ(գ)		
023102.04.6 առկա	Ֆրանսերեն և գրականություն	Հլգ(գ)	Ֆրլ(գ) կամ Անգլ(գ)		
031301.01.6 առկա, հեռակա	Հոգեբանություն	Հլգ(գ)	Օտլ(գ) կամ Կ(գ)		
041201.01.6 առկա, հեռակա	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ) կամ Օտլ(գ)		Օտլ(գ)* կամ Հլգ(գ)*
061101.02.6 առկա	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ) կամ Անգլ(գ)		Հլգ(գ)*
101501.01.6 առկա, հեռակա	Զբոսաշրջություն	Հլգ(գ)	Օտլ(գ) կամ Մ(գ)		

Ծանոթություն

* Հաշվի է առնվում շրջանավարտի ավարտական փաստաթղթի ավարտական քննության կամ տարեկան գնահատականը:

** **«Ֆարմացիա»** կրթական ծրագրի դիմորդներին իրավունք է վերապահվում իրենց ընտրությամբ հանձնել նշված երեք՝ «Կենսաբանություն», «Քիմիա», «Ֆիզիկա» մրցութային քննություններից երկուսը: Մրցույթի ժամանակ հավասար միավորների դեպքում հաշվի է առնվում դիմում հայտում դիմորդի կողմից առաջինը նշված առարկայի քննական գնահատականը:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատմական ակնարկ

Մաթեմատիկոս մասնագետների պատրաստումը ԵՊՀ-ում սկսվել է 1924 թ., հասարակագիտական ֆակուլտետի ֆիզիկամաթեմատիկական ենթաբաժնում, որը 1933 թ. դարձել է ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետ: 1959 թ. այն տրոհվել է երկու ֆակուլտետների՝ ֆիզիկայի և մեխանիկա-մաթեմատիկական: 1963 թ. մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետում բացվել է մաթեմատի–կական կիբեռնետիկայի մասնագիտությունը, որի հիման վրա 1972 թ. ստեղծվել է կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ֆակուլտետը: 1988 թ. մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետը բաժանվել է երկու առանձին՝ մեխանիկայի և մաթեմատիկայի ֆակուլտետների, որոնք 2007 թ. վերամիավոր-վել են մեկ՝ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում: Քառասնական թվականներին, պատմականորեն շատ արագ, Երևանի պետական համալսարա-նում և ՀՀ գիտությունների ակադեմիայում ձևավորվեցին այժմ արդեն լայնորեն ճանաչված հայկական մաթեմատիկական դպրոցը, որի հիմնադիրը ակադեմիկոս Արտաշես Շահինյանն էր և մեխանիկայի դպրոցը, որի հիմնադիրն էր ակադեմիկոս Նագուշ Հարությունյանը:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Հետագա տարիներին ֆակուլտետի կայացմանը և զարգացմանը նպաստել են հանրահայտ գիտնականներ, ակադեմիկոսներ, մաթեմատիկոսներ Մխիթար Ջրբաշյանը, Սերգեյ Մերգելյանը, Ալեքսանդր Թալալյանը, Նորայր Առաքելյանը, Ռաֆայել Ալեքսանդրյանը, Ռուբեն Համբարձումյանը, մեխանիկոսներ Սերգեյ Համբարձումյանը, Բենիամին Աբրահամյանը, Վլադիմիր Սարգսյանը, Գևորգ Բաղդասարյանը, Լենսեր Աղալովյանը:

Այսօր ֆակուլտետն ունի բարձրորակ պրոֆեսորադասախոսական անձնակազմ, ֆակուլտետում դասավանդում են՝ ՀՀ ԳԱԱ 1 ակադեմիկոս և 1 թղթակից անդամ, 13 պրոֆեսոր, 28 դոցենտ, 64 ասիստենտ և դասախոս:

Կառուցվածքը

Ֆակուլտետում գործում է 6 ամբիոն՝ ֆունկցիաների տեսության և դիֆերենցիալ հավասարումների, հանրահաշվի և երկրաչափության, հավանա-կանությունների տեսության և վիճակագրության, ընդհանուր մաթեմատիկայի, ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի, մեխանիկայի: Ֆակուլտետն ունի շուրջ 619 ուսանող, որոնցից 519-ը՝ բակալավրիատում, 100-ը՝ մագիստրատուրայում: Ֆակուլտետում դասավանդման միջազգային բարձր մակարդակի մասին է վկայում այն փաստը, որ մեր բազմաթիվ ուսանողներ կարողանում են հաջողությամբ շարունակել ուսումը և գիտական հետազոտություններ կատարել արտասահմանյան առաջատար համալսարան-ներում՝ ԱՄՆ-ում, Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Շվեդիայում և

այլուր: Նրանցից շատերն այսօր դասավանդում են այդ համալսարաններում: Մեր ուսանողները լուրջ հաջողություններ են արձանագրում միջազգային մաթեմատիկական ուսանողական օլիմպիադաներում:

Առաջարկվող կրթական ծրագրերն ու շնորհվող որակավորումները

Բակալավրիատ

Բակալավրիատում ուսուցումը կատարվում է չորս կրթական ծրագրով՝

- Մաթեմատիկա, որակավորումը՝ մաթեմատիկայի բակալավր
- Մեխանիկա, որակավորումը՝ մեխանիկայի բակալավր
- Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա, որակավորումը՝ ֆինանսական մաթեմատիկայի բակալավր
- Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն, որակավորումը՝ վիճակագրության բակալավր:

Մագիստրատուրա

Մագիստրատուրայում ուսուցումը կատարվում է վեց կրթական ծրագրով: Ընդունելությունը կատարվում է անկախ ՄՈԳ-ից, բացառապես մասնագիտական քննությունների արդյունքների հիման վրա՝ մրցութային կարգով:

- Մաթեմատիկա և կիրառություններ (որակավորումը՝ մաթեմատիկայի մագիստրոս)
- Մեխանիկա և կիրառական մաթեմատիկա (որակավորումը՝ մեխանիկայի մագիստրոս)
- Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն (որակավորումը՝ վիճակագրության մագիստրոս)
- Ֆինանսական մաթեմատիկա (ուսման տևողությունը՝ 1 տարի, որակավորումը՝ ֆինանսական մաթեմատիկայի մագիստրոս)
- Ռիսկերի կառավարում (ուսման տևողությունը՝ 1 տարի, որակավորումը՝ ֆինանսական մաթեմատիկայի մագիստրոս)
- Բլոկչեյն և թվային արժույթներ (ուսման տևողությունը՝ 1 տարի, որակավորումը՝ ֆինանսական մաթեմատիկայի մագիստրոս):

Բակալավրի «Մաթեմատիկա», «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա», «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն ծրագրերը», ինչպես նաև մագիստրոսի «Մաթեմատիկա և կիրառություններ», «Ֆինանսական մաթեմատիկա» և «Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն» ծրագրերը 2025 թ. արժանացել են միջազգային հավատարմագրման գերմանական ASIIN (Accreditation Agency for Study Programmes) կազմակերպության կողմից:

Մաթեմատիկան մարդկային մտքի ամենակարևոր և ամենակատարյալ ստեղծագործություններից է: Այն նույնքան հին է, որքան մարդկությունն ինքը,

սակայն շարունակում է բուռն զարգացում ապրել՝ գտնելով նորանոր կիրառություններ մարդկային գործունեության ամենատարբեր բնագավառներում: Այսօր դժվար է գտնել որևէ գիտական ուղղություն, որը չի օգտվում մաթեմատիկական մեթոդներից և մաթեմատիկայի նվաճումներից: Դա են վկայում մաթեմատիկայի երիտասարդ և արագ զարգացող այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են բիոմաթեմատիկան, ակտուարական մաթեմատիկան, ֆինանսական մաթեմատիկան, տվյալների գիտությունը և այլն:

Հնագույն և այսօր էլ ակտիվ զարգացող գիտություն է նաև **մեխանիկան**: Այն գլխավոր հիմնասյուներից մեկն է, որի վրա հենվել են տեխնիկայի զարգացումն ու առաջընթացը: Նավագնացության, մեքենաշինության, հրթիռաշինության, ռազմական տեխնիկայի, տիեզերական համակարգերի բարդագույն սարքավորումների կիրառությունները մեծապես հիմնված են մեխանիկայի նվաճումների վրա այնպիսի բնագավառներում ինչպիսիք են նյութերի դիմադրությունը, առաձգականության տեսությունը, հիդրոաերոմեխանիկան, թաղանթների և սալերի տեսությունը, մեխանիկական համակարգերի կառավարումը: Այս բոլոր բնագավառներում մեծ դեր ունեն հայ մեխանիկոսները, որոնց աշխատանքներն արժանացել են միջազգային ճանաչման:

Ֆակուլտետի ղեկավարությունը կարևորում է մաթեմատիկայի այնպիսի ուղղությունների ներդրումն ու զարգացումը, որոնք այսօր ունեն առավել մեծ պահանջարկ: Այս առումով նշանակալի քայլ էր **ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա** կրթական ծրագրի ներդնումը: Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի մասնագետները համակցում են մաթեմատիկոսի, ֆինանսիստի, ռիսկերի կառավարչի, ներդրումային կառավարչի մասնագիտությունները: Այս մասնագետները վերլուծում են ռիսկերի ֆինանսական հետևանքները՝ մաթեմատիկական, վիճակագրական և այլ մեթոդների կիրառմամբ, գնահատում են որոշակի իրադարձությունների տեղի ունենալու հավանականությունը, կանխատեսում են մակրոտնտեսական պրոցեսները, հաշվարկում են ապահովագրական սակագների, կենսաթոշակի և այլ նմանատիպ մեծությունների չափերը: Նրանք տեսաբաններ չեն, այլ նախ և առաջ՝ «պրակտիկ ֆինանսիստ-մաթեմատիկոսներ», և նրանց ուժեղ կողմերն են տնտեսագիտության և ֆինանսների, մաթեմատիկայի խորը իմացությունը, ծրագրավորման լեզուների գործիքակազմի կիրառման ունակությունները: Արագ զարգացող և անընդհատ փոփոխվող շուկայական տնտեսակարգը շեշտակի մեծացնում է կազմակերպությունների ֆինանսական ռիսկերը, ինչը հաճախ հանգեցնում է սնանկացման: Նման բացասական երևույթներից խուսափելու ճանապարհն այդ ռիսկերի գնահատումն է և հնարավոր զարգացումների կանխատեսումը: Ֆինանսական մաթեմատիկոսը այն մասնագետն է, որը վերլուծում է այդ ռիսկերի ֆինանսական հետևանքները և կանխարգելում դրանք:

2019 թ-ից ֆակուլտետն իրականացնում է բակալավրի կրթական ծրագիր՝ **կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն**: Տեղեկատվական տեխնոլոգիաների հեղափոխությունն անցյալ դարի վերջում ստեղծել է մի իրավիճակ, երբ աշխարհում ստեղծվող տեղեկատվությունը հասել է աննախադեպ ծավալների: Արդյունքում՝ տվյալների կառավարումը դարձել է տնտեսական գործունեության կարևորագույն խնդիրներից մեկը: Կիրառական վիճակագրությունը և տվյալների գիտությունը մեթոդների և գաղափարների համախմբություն է, որը թույլ է տալիս իմաստավորել ահռելի մեծ ծավալներով տվյալներ: Այս նպատակով կիրառվող գործիքակազմի էական բաղադրիչներից է մեքենայական ուսուցումը՝ բուռն զարգացող ուղղություն, որը կիրառվում է ամենատարբեր խնդիրներում: Այսօր վիճակագրության և տվյալների գիտության մասնագետները բարձր վարձատրվում են և կայուն պահանջարկ ունեն ինչպես միջազգային, այնպես էլ հայկական աշխատաշուկայում: Ֆրանսիական Լե Ման քաղաքի համալսարանի հետ իրագործվում են փոխանակման ծրագրեր վիճակագրություն և ֆինանսական մաթեմատիկա մասնագիտություններով:

Մագիստրատուրայի առավել շնորհալի, մաթեմատիկական բարձր ունակություններով օժտված շրջանավարտները, ովքեր նպատակ ունեն իրենց հետագա կյանքը կապել գիտության հետ, ընդունվում են ասպիրանտուրա: Թեկնածուական թեզը պաշտպանելուց հետո նրանք աշխատանքի են անցնում ԵՊՀ-ի կամ այլ բուհերի մաթեմատիկական ամբիոններում, ակադեմիական ինստիտուտներում, հաշվողական կենտրոններում և այլն: Ֆակուլտետի վերջին տասնամյակների շուրջ 10 շրջանավարտներ այսօր դասավանդում են արևմտյան առաջատար համալսարաններում: Նրանցից շատերի հետ ֆակուլտետն ունի սերտ կապեր (գիտական համագործակցություն, դասախոսությունների շարքեր, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարում, համատեղ սեմինարներ և այլն):

Աշխատանքային հեռանկարներն ու կապն աշխատաշուկայի հետ

Ֆակուլտետի բոլոր չորս մասնագիտություններով սովորող ուսանողները ստանում են հիմնարար մաթեմատիկական կրթություն, որը բարեբեր հող է ստեղծում ամենատարբեր բնագավառներում հաջողությունների հասնելու համար՝ գործարարությունից մինչև քաղաքականություն: Վերջերս հայկական աշխատաշուկայում բավականին մեծացել է որակյալ մաթեմատիկոսների պահանջարկը այնպիսի ընկերություններում, որոնք զբաղվում են մաթեմատիկայի կիրառական խնդիրներով, վիճակագրական հետազոտություններով, ֆինանսական հոսքերի կառավարմամբ, տվյալների մշակմամբ և մեքենայական ուսուցմամբ:

Ինչպես Հայաստանի, այնպես էլ միջազգային աշխատաշուկայում կայուն պահանջարկ ունեն նաև ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա

մասնագիտությամբ շրջանավարտները: Նշենք, որ համաձայն ամերիկյան հեղինակավոր CareerCast կայքի, ԱՄՆ-ում լավագույն աշխատանքների առաջին վեցնյակում են տվյալագետի, ֆինանսական վերլուծաբանի, ակտուարի և մեխանիկ ինժեների աշխատանքները, ընդ որում՝ ակտուարը զբաղեցնում է 1-ին տեղը:

Մեխանիկա մասնագիտությամբ շրջանավարտներն իրենց գործունեությունը կարող են իրականացնել մեխանիկայի, մաթեմատիկայի, ֆիզիկայի տարբեր բնագավառների հետազոտական ինստիտուտներում և գիտատեխնոլոգիական կենտրոններում, համակարգերի և պրոցեսների ավտոմատ կառավարման խնդիրներով զբաղվող միավորումներում, կոնստրուկտորական բյուրոներում:

Մաթեմատիկա և մեխանիկա մասնագիտություններով բակալավրի աստիճան ստացած ուսանողները կարող են ստանալ նաև մաթեմատիկայի ուսուցչի որակավորում, անցնելով մի քանի լրացուցիչ դասընթացներ: Հանրապետության մաթեմատիկայի լավագույն ուսուցիչների գերակշռող մասը մեր ֆակուլտետի շրջանավարտներն են: Ֆակուլտետում կարևորվում է նաև համակարգչային բարձրորակ կրթությունը և ժամանակակից ծրագրավորման լեզուների դասավանդումը: Բազմաթիվ շրջանավարտներ այսօր հաջողությամբ աշխատում են SS ոլորտի տարբեր հաստատություններում: Վերջին տարիներին Հայաստանում ստեղծվել են բազմաթիվ ընկերություններ, որոնք զբաղվում են կիրառական վիճակագրությամբ և տվյալների մշակմամբ, մեքենայական ուսուցմամբ և արհեստական բանականությամբ The (PicsArt, FMD K&L, Bet Construct, Teamable, UCom, MargaSoft, Noymed, Krisp, SFL, Optym, Gurus և այլն): Նրանց հիմնական պատվիրատուներն արտասահմանյան կազմակերպություն–ներ են, ինչի շնորհիվ ապահովվում է աշխատակիցների բարձր աշխատավարձը: Միևնույն ժամանակ այդ ընկերություններն ակտիվորեն ընդլայնվում են, ստեղծվում են նորերը՝ հայկական աշխատաշուկայում ապահովելով որակյալ մասնագետների կայուն պահանջարկ: Ֆակուլտետն ակտիվ համագործակցում է այս ընկերությունների հետ:

Ֆակուլտետում գործում է նաև **«Մաթեմատիկական և կիրառական հետազոտությունների կենտրոնը»**, որի կազմում են մաթեմատիկական հետազոտությունների, մեխանիկայի, գծային և ոչ գծային մոտարկումների և դրանց կիրառությունների, կոսմոլոգիայի, մեքենայական ուսուցման լաբորատորիաները, ինչպես նաև դիսկրետ մաթեմատիկայի էքստրեմալ խնդիրների հետազոտման, մեքենայական ուսուցման և անալիզի և դիֆերենցիալ հավասարումների խմբերը: Կենտրոնն ունի շուրջ 50 աշխատակից, որից 40-ը գիտաշխատողներ են, որոնք տարեկան տպագրում են 70 - 90 հոդված տարբեր երկրների առաջատար գիտական հանդեսներում: Կենտրոնում կատարվում են նաև մեծ ծավալի դրամաշնորհային ծրագրեր արտերկրի մասնագետների հետ

համագործակցությամբ։ Այստեղ իրենց առաջին գիտական հետազոտություններն են կատարում ֆակուլտետի լավագույն մագիստրոսներն ու ասպիրանտները։

Ուսանողական կյանք և ժամանց

Ուսանողական տարիներն առավել հետաքրքիր, հագեցած և արդյունավետ են դարձնում ֆակուլտետում գործող ուսանողական կառույցները՝ Ուսանողական խորհուրդն ու Ուսանողական գիտական ընկերությունը։ Ուսանողները սիրով են մասնակցում նրանց կազմակերպած բազմաբնույթ միջոցառումներին (հանդիպումներ, հավաքույթներ, համերգներ, սպորտային միջոցառումներ, էքսկուրսիաներ, սեմինարներ և այլն)։ Մաթեմատիկակային առավել նվիրված–ները իրենց ունակությունները զարգացնում են օլիմպիական խմբակում, մասնակցում են հանրապետական և միջազգային ուսանողական օլիմպիադա–ներին։

Ընդունելությունն ըստ կրթական ծրագրերի Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ղեկավարությունն ու պրոֆեսորադասախոսական կազմը սիրով սպասում են այն դիմորդներին, ովքեր սիրում են մաթեմատիկան, ունեն մաթեմատիկական ընդունակություններ և ցանկություն՝ դառնալու բարձրորակ մասնագետ, որը կկարողանա իր ունակություններն ամբողջովին դրսևորել հետագա աշխատանքում։

Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում ընդունելությունը կկատարվի հետևյալ կրթական ծրագրերով՝

- մաթեմատիկա
- մեխանիկա
- ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա
- կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն։

Ֆակուլտետի մասին հետագա մանրամասներ կարելի է գտնել ԵՊՀ կայքում (https://www.ysu.am/faculty/516) և Ֆեյսբուքյան հարթակում (YSU Faculty of Mathematics and Mechanics, ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ)։

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիների մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դիմորդների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և տեղերի քանակի.

Կրթական ծրագիր	Ուսուցման համակարգ	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը
Մաթեմատիկա	Անվճ	38	20	44	30	40	26
	Վճ		15		10		20
Մեխանիկա	Անվճ	12	6	21	6	9	7
	Վճ		13		13		14
Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա	Անվճ	84	20	78	15	70	15
	Վճ		45		45		50
Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն	Անվճ	68	26	81	21	70	18
	Վճ		29		34		38

Անցողիկ միավորներն ըստ վերջին 3 տարիների.

Կրթական ծրագիր	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
	Անվճ	Վճ	Անվճ	Վճ	Անվճ	Վճ
Մաթեմատիկա	24.25	17.75	22.75	15.75	27.5	17.5
Մեխանիկա	17.75	17	27	19	19	18.25
Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա	36.75	27.25	35.25	24.25	34.25	16.5
Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն	37.5	27.75	37.25	31.25	37.75	26.25

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատմական ակնարկ

Երևանի պետական համալսարանի ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի (ԻԿՄ) ֆակուլտետը ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ուղղությամբ հիմնարար հետազոտությունների բնագավառում, ինչպես նաև բարձրակարգ ծրագրավորող կադրերի պատրաստման ոլորտում Հայաստանի առաջատար ուսումնական և գիտական կենտրոնն է:

Ֆակուլտետը հիմնադրվել է 1971 թ. (անվանվել է կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ) հաշվողական մաթեմատիկայի ամբիոնի հիմքի վրա, որը բացվել էր 1957 թ. ԵՊՀ ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում: Ֆակուլտետի կայացման, գիտական ուղղությունների ընտրության ու ֆակուլտետի համար կադրերի պատրաստման գործում վճռորոշ դեր են խաղացել այնպիսի ականավոր գիտնականներ, ինչպիսիք են ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Ս.Ն.Մերգելյանը, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Ա.Ա.Լյապունովը, Ռուսաստանի ԳԱ ակադեմիկոս Յու.Ի.Ժուռավլյովը: Նորաստեղծ ֆակուլտետի երեք ամբիոններից մեկի՝ թվային անալիզի ամբիոնի առաջին վարիչը հենց Ս.Ն.Մերգելյանն էր: Ստեղծման օրից մինչ այժմ ֆակուլտետը տվել է շուրջ 9500 շրջանավարտ, որոնցից շատերը իրենց զգալի ավանդն են ներդրել մեր հանրապետության գիտատեխնիկական առաջընթացի գործում:

Կառուցվածքը

Այժմ ԻԿՄ ֆակուլտետում գործում են երեք ամբիոն.

- Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի,
- Թվային անալիզի և մաթեմատիկական մոդելավորման,
- Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների:

Ուսանողների թիվը՝

- բակալավրիատում՝ 1071 (առկա՝ 931 և հեռակա՝ 140),
- մագիստրատուրայում՝ 69,
- ասպիրանտներ՝ 3:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Ֆակուլտետում դասավանդում են 10 պրոֆեսոր, 22 դոցենտ, 35 ասիստենտ և դասախոս, ընդ որում՝ 12 գիտությունների դոկտոր և 34 գիտությունների թեկնածու, որոնցից շատերը ճանաչված մասնագետներ են ոչ միայն Հայաստանում, այլ նաև նրա սահմաններից դուրս:

Առաջարկվող կրթական ծրագրերն ու շնորհվող որակավորումները

Ուսումնական պլաններով ԻԿՄ ֆակուտետի ուսանողների համար իրականացվում է հիմնարար մաթեմատիկական պատրաստվածություն, կարդացվում են համակարգչային գիտության ժամանակակից դասընթացներ:

Մասնագետների պատրաստման գործում հատկապես կարևորվում են համակարգչային գործնական աշխատանքները:

Ֆակուլտետի բակալավրիատում գործում են երկու կրթական ծրագիր.

- Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա - առկա և հեռակա:

Ավարտելով ուսումնառությունը այս ծրագրով ուսանողը ստանում է *ինֆորմատիկայի բակալավրի* աստիճան:

- Տեղեկատվական անվտանգություն - առկա:

Ավարտելով ուսումնառությունը այս ծրագրով ուսանողը ստանում է *տեղեկատվական անվտանգության բակալավրի* աստիճան:

Ֆակուլտետում գործում են նաև երեք առկա մագիստրոսական կրթական ծրագիր.

- Դիսկրետ մաթեմատիկա և տեսական ինֆորմատիկա
- Թվային անալիզ և մաթեմատիկական մոդելավորում
- Հաշվողական մեքենաների, համալիրների, համակարգերի և ցանցերի մաթեմատիկական և ծրագրային ապահովում:

Ավարտելով մագիստրատուրան, ուսանողները ստանում են *ինֆորմատիկայի մագիստրոսի* աստիճան:

Աշխատանքային հեռանկարներն ու կապն աշխատաշուկայի

ԵՊՀ ԻԿՄ ֆակուլտետի կրթական ծրագրերով ուսանած շրջանավարտների համար հիմնական աշխատաշուկան SS ոլորտի ընկերություններն են, ինչպես նաև գիտական, կրթական, պետական, ռազմական հաստատությունները և արդյունաբերական ձեռնարկությունները:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը ՀՀ կառավարության կողմից ճանաչվեց ՀՀ տնտեսության գերակա ուղղություն դեռևս 2000 թ.: Այդ ոլորտը ներառում է մասնավորապես ծրագրային մշակումներ, մաթեմատիկական մոդելավորում և ճարտարագիտական հետազոտումներ: Ոլորտն առանձնանում է մարդկային կապիտալի առանձնահատուկ կարևորությամբ և մրցունակ է համաշխարհային շուկայում: Ոլորտը ներկայացնում են մեծ թվով ընկերություններ, որոնցից ավելի քան մեկ երրորդը՝ արտասահմանյան ընկերությունների մասնաճյուղեր են: Վերջիններիս կողմից Հայաստանում գործունեություն հիմնելու առանցքային դրդապատճառը բարձրորակ մասնագետների առկայությունն է: Շնորհիվ բարձր մրցունակության և արտասահմանյան մասնաճյուղերի մեծ ներկայացվածության՝ վերոհիշյալ ոլորտը Հայաստանում աչքի է ընկնում արտադրողականության բավականին բարձր մակարդակով՝ տնտեսության այլ ոլորտների համեմատությամբ:

ԻԿՄ ֆակուլտետի շրջանավարտները արդեն իսկ հայտնի են Հայաստանում որպես բարձր պատրաստվածության և ժամանակին համահունչ գիտելիքներով օժտված մասնագետներ: Ֆակուլտետում պատրաստված մասնագետները

աշխատաշուկայում մեծ պահանջարկ ունեն, նրանցից շատերը աշխատում են աշխարհի մի շարք երկրների տարբեր կազմակերպություններում՝ ակադեմիական և գիտահետազոտական ինստիտուտներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, պետական և կառավարական կազմակերպություններում, SS ոլորտի ընկերություններում, բանկերում և այլն:

Ուսանողական կյանք և ժամանց

Ֆակուլտետի ուսանողական խորհրդի ջանքերով կազմակերպվում են մշակույթային և սպորտային միջոցառումներ՝ խաղ-վիկտորինաներ, շախմա–տային մրցաշարեր, թանգարանային այցեր, արշավներ, հանդիպումներ մշակութային գործիչների հետ, ֆիլմի դիտումներ, քննարկումներ ամենա-տարբեր թեմաներով, վարպետաց դասեր և այլն, ինչն առավել գրավիչ է դարձնում ուսանողական առօրյան:

Ֆակուլտետի ծրագրավորման թիմերը մասնակցում են ICPC ծրագրավորման միջազգային ուսանողական օլիմպիադաներին, գրանցելով ծանրակշիռ հաջողություններ, բազմիցս նվաճելով այդ հեղինակավոր մրցության եզրափակչին մասնակցելու իրավունք:

Ընդունելությունն ըստ կրթական ծրագրերի

Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետում ընդունելությունը կկատարվի հետևյալ կրթական ծրագրերով՝

- ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա
- տեղեկատվական անվտանգություն:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիների ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դիմորդների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և տեղերի քանակի.

Կրթական ծրագիր	Ուսուցման համակարգ	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	Անվճ	224	40	254	40	260	44
	Վճ		155		156		166
Տեղեկատվական անվտանգություն	Անվճ	76	20	56	20	78	24
	Վճ		25		25		26

Անցողիկ միավորներն ըստ վերջին 3 տարիների.

Կրթական ծրագիր	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
	Անվճ	Վճ	Անվճ	Վճ	Անվճ	Վճ
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	37.75	22	37.25	25.25	38	24.5
Տեղեկատվական անվտանգություն	36.75	32.5	35	23.5	35.75	31.75

ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Պատմական ակնարկ

Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ինստիտուտում համակարգված գիտելիքի դասավանդման հայեցակարգը ձևավորվել է երկու առանցքային սկզբունքների համատեղման արդյունքում: Դրանցից առաջինը նախորդ հինգ սերունդների գիտակրթական ավանդույթների հետևողական շարունակումն է, երկրորդը համապատասխանեցնումն է առաջատար համալսարանների կրթական ծրագրերին:

Ինստիտուտը կոչված է բարձրորակ կադրեր պատրաստել երկու, բովանդակային առումով փոխկապակցված, ուղղություններով: Մեր շրջանավարտը, որպես հետազոտող, հնարավորություն ունի, գիտական աշխատառոի կարգավիճակով, աշխատանքի անցնել Հայաստանի Հանրապետության բազմաթիվ գիտական հաստատություններում: Դրանից բացի, առավել մեծ թվով շրջանավարտներ, որպես ինժեներ-հետազոտողներ, կարող են աշխատել տնտեսության գիտատար և տեխնոլոգիական ճյուղերում:

Կարևորն այն է, որ ինստիտուտում մասնագիտացման վերջնական ընտրությունը ուսանողի կողմից կատարվում է ոչ թե անմիջապես ԲՈՒՀ-ն ընդունվելիս, այլ ուսումնառության երրորդ տարում: Այսինքն՝ միայն մասնագիտության հիմնական դրույթները յուրացնելուց հետո, երբ ուսանողը հնարավորություն է ստանում գիտակցաբար և ինքնուրույն ընտրություն կատարել:

Ֆիզիկամաթեմատիկական կադրերի պատրաստումը Երևանի պետական համալսարանում սկսվել է 1922 թ-ից: Հայաստանում ֆիզիկայի զարգացման համար նշանակալի իրադարձություն էր 1933 թ. համալսարանի կառուցվածքում ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի հիմնադրումը՝ ֆիզիկայի և մաթեմատիկայի առանձին բաժիններով:

Ֆիզիկայի զարգացումը խթանելու և նոր կադրերով ապահովելու նպատակով 1959 թ. համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետից առանձնացել և կազմավորվել է ֆիզիկայի ֆակուլտետը:

1975 թ. ՀԽՍՀ ԳԱ նախագահ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի օժանդակությամբ Ֆիզիկայի ֆակուլտետից առանձնացել և կազմավորվել է ռադիոֆիզիկայի ֆակուլտետը:

Այս երկու ֆակուլտետների հենքի վրա 2023 թ. վերաձևավորվել է ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտը՝ ՀՀ-ում ֆիզիկայի մասնագետների պակասը լրացնելու նպատակով:

Կառուցվածքը

Ներկայում ֆիզիկայի ինստիտուտում սովորում է ավելի քան 772 ուսանող, որոնցից 655-ը՝ բակալավրիատում, 117-ը՝ մագիստրատուրայում, իսկ 25-ը

ուսումը շարունակում է ասպիրանտուրայում: Ինստիտուտում դասավանդում են 29 գիտությունների դոկտոր, 69 թեկնածու:

ԵՊՀ Ֆիզիկայի ինստիտուտի կազմում գործում են 7 ամբիոն և 16 գիտահետազոտական լաբորատորիա:

Պրոֆեսորադասախոսական կազմը ծավալում է գիտամանկավարժական ակտիվ գործունեություն. գիտական արդյունքները ներկայացվում են հեղինակավոր գիտաժողովներում, տպագրվում միջազգային գիտական ամսագրերում: Ինստիտուտի դասախոսները՝ որպես հրավիրյալ մասնագետներ, պարբերաբար դասախոսություններ են կարդում արտերկրի համալսարան-ներում, անցնում են վերապատրաստումներ, ինչպես նաև ներգրավված են միջազգային ու տեղական հետազոտական ծրագրերում:

Ինստիտուտը կայուն կապեր ունի միջազգային գիտական առաջատար կենտրոնների հետ, ինչը շարունակաբար ամրապնդվում է փոխադարձ այցելություններով:

ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտն ունի գործակցային կապեր միջազգային ու տեղական պետական և մասնավոր ընկերությունների, գիտական առաջատար կենտրոնների հետ, որոնց թվում՝ Գերմանիայի արագացուցչային կենտրոնը (DESY), Միջուկային հետազոտությունների եվրոպական կենտրոնը (CERN, Շվեյցարիա), Ջեֆֆերսոնի լաբորատորիան (CEBAF-JLAB, ԱՄՆ), Կայզերսլաուտերնի համալսարանը (Գերմանիա), Սենսորների ինստիտուտը (Ալբորգ, Դանիա), Էլեկտրահաղորդակցության ԳՀԻ-ն, (Տոհոկուի համալսարան, Ճապոնիա), Սոգանգի համալսարանը (Սեուլ, Կորեա), Օսակայի համալսարանը (Ճապոնիա), Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտը (JINR, ՌԴ), ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի (ք. Աշտարակ), Ֆիզիկական հետազոտությունների (ք. Աշտարակ), Կիրառական ֆիզիկայի պրոբլեմների (ք. Երևան) ինստիտուտները, ինչպես նաև «Միացյալ էներգետիկ համակարգեր» ՓԲԸ (United Energy Systems (Russian company that owns Armenia's electricity network), «ԼՏ-ՊԻՐԿԱԼ լազերային տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ն (LT/Pyrkal cjsc.), Կապի և հաղորդակցության ոլորտի առաջատար ընկերությունները և այլն:

Առաջարկվող կրթական ծրագրերն ու շնորհվող որակավորումները

Ինստիտուտում ուսուցումը կազմակերպվում է եռաստիճան համակարգով՝ բակալավրիատ, մագիստրատուրա և ասպիրանտուրա:

Բակալավրիատում գործում է 3 կրթական ծրագիր՝ <u>ֆիզիկա</u>, <u>ռադիոֆիզիկա և համակարգչային տեխնոլոգիաներ, տվյալների մշակումը ֆիզիկայում և արհեստական բանականություն:</u>

1. «Ֆիզիկա» կրթական ծրագրի հիմնական նպատակն է ուսանողներին տրամադրել հիմնարար գիտելիքներ և իմացություն արդի ֆիզիկայի (այդ թվում՝ տեսական ֆիզիկա, լազերային ֆիզիկա, կոնդենսացված վիճակի ֆիզիկա,

օպտիկա, մակրոմոլեկուլների ֆիզիկա, տարրական մասնիկների ֆիզիկա և աստղաֆիզիկա մասնագիտական ուղղությունների) մասին: Ինչպես նաև ուսանողների մոտ ձևավորել ընդհանրական մտավոր կարողություններ՝ ֆիզիկայի տարբեր գիտական աղբյուրներից ստացված տեղեկությունը վերլուծելու և քննադատորեն օգտագործելու համար: Գործնականում կիրառել ֆիզիկական հետազոտությունների տեսության և մեթոդների մասնագիտական իմացությունը համապատասխան աշխատանք կատարելու և (կամ) ուսումնառությունը շարունակելու համար: Ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել այդ ոլորտում գործող ձեռնարկություններում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, ակադեմիական և գիտահետազոտական այլ ինստիտուտներում:

Հնարավոր աշխատավայրերն են՝ ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտի, ինչպես նաև այլ բուհերի ուսումնական և գիտական ստորաբաժանումները, քոլեջները և դպրոցները, ԵՊՀ ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտը (ԵՊՀ ՖԳՀԻ), ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների, ֆիզիկական հետազոտությունների և ռադիոֆիզիկայի ինստիտուտները, Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային լաբորա–տորիան, «Լազերային տեխնիկա» գ/ա միավորումը, հայ-հունական համատեղ ԼՏ-Պիրկալ ՓԲԸ, Բյուրականի աստղադիտարանը, ՏՏ բնագավառում գործող պետական և մասնավոր ձեռնարկությունները:

Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը մագիստրատուրայում:

2. «Ռադիոֆիզիկա և համակարգչային տեխնոլոգիաներ» կրթական ծրագրին մասնակցելով՝ ուսանողները, բացի Ֆիզիկայի հիմունքները ներկայացնող ավանդական դասընթացներից, հանգամանալի գիտելիքներ են ստանում էլեկտրամագնիսական ալիքների ճառագայթման աղբյուրների, դրանց տարածման առանձնահատկությունների և գրանցող սարքերի վերաբերյալ, ինչը հնարավորություն է տալիս «ռադիոֆիզիկոս»-ի որակավորում ստացած մասնագետին աշխատել ամենատարբեր բնագավառներում՝ սկսած գիտակրթա-կան հաստատություններում գիտական հետազոտություններից մինչև ճարտարագիտական բնույթի և ՏՏ ոլորտային ընկերություններում:

Այս մասնագիտությունը յուրացրած շրջանավարտները կարող են մասնագիտանալ նաև «Հեռահաղորդակցություն և ազդանշանների մշակում» ուղղությամբ, ինչը հնարավորություն կտա՝ աշխատել տեղեկատվության մշակման և հաղորդման, տեխնոլոգիաների նախագծման, ավտոմատացման, շահագործման, տեղեկատվության անվտանգության ոլորտներին առնչվող ձեռնարկություններում (U-com, Թիմ Տելեկոմ, MTS, National Instruments, RF instruments և ՀՀ ՏՏ ոլորտի այլ ձեռնարկություններում և այդ ոլորտի արտասահմանյան ձեռնարկությունների մասնաճյուղերում), բանկային

համակարգում, ինչ

պես նաև տվյալ ոլորտի զարգացմանը միտված գիտահետազոտական ինստիտուտներում:

Միկրոէլեկտրոնիկայի ոլորտում աշխարհում առաջատար դիրք զբաղեցնող «Սինոփսիս» կազմակերպությունը, ուր աշխատում են ինտեգրալային սխեմաների նախագծման ուղղությամբ, մասնագիտացված հմուտ հետազոտող–ների լայն գործունեություն է ծավալել մեր երկրում: Կազմակերպությունը մեծ ուշադրություն է դարձնում նաև բանիմաց երիտասարդ մասնագետների պատրաստման խնդրին: Հատկանշական է, որ բարձրորակ կադրերի պահանջարկ ունեցող «Սինոփսիս» կազմակերպությունը գոհունակությամբ աշխատանքի է ընդունում նշված ուղղությամբ մասնագիտացած շրջանավարտների գերակշիռ մասին: Այդ ուղղությամբ «Ռադիոֆիզիկա» մասնագիտությունն ուսանողներն ընտրում են երրորդ կուրսից: ՀՀ կառավարության որոշմամբ 2013 թ-ից գործում է նաև առանձին մասնագիտացում «Գերմեծ ինտեգրալ սխեմաների նախագծում» մագիստրո–սական ծրագրով:

Ներկայումս խիստ կարևորվում է բարձրակարգ ռադիոֆիզիկոս մասնագետների պահանջը երկրի պաշտպանունակության ապահովման գործում, քանի որ անընդհատ աճում է ռազմական ոլորտում կիրառվող և վճռորոշ դեր ունեցող ռադիոէլեկտրոնային սարքերի քանակն ու տեսականին:

Համակարգչային տեխնիկայի զարգացումը որակապես ընդլայնեց բնության երևույթների հետազոտման հնարավորությունները: Արդի գիտության պահանջներին բավարարող գիտափորձը կարելի է իրականացնել, բացառապես համակարգչային մեթոդներով՝ նրա ընթացքը կառավարելու, տվյալները գրանցելու, համակարգելու ու մշակելու միջոցով, իսկ ստացված արդյունքների հավաստիությունը բացահայտել գիտափորձի մոդելավորման օգնությամբ: Ներկայումս ստեղծվել են այդ նպատակին ծառայող մի շարք բարձրորակ համակարգչային նմանակման և մոդելավորման ծրագրեր, որոնք աշխատող հետազոտողից պահանջվում են բարձր մակարդակի մասնագիտական հմտություններ և, պատահական չէ, գիտատեխնիկական ոլորտում համապատասխան մասնագետների մեծ պահանջարկը:

Գործում է նաև «Գիտափորձի համակարգչային ավտոմատացում և մոդելավորում» մասնագիտացումը: Հատկանշական է, որ այդ մասնագիտաց–մամբ դասընթացները յուրացրած շրջանավարտը հնարավորություն կստանա աշխատելու ոչ միայն գիտատեխնիկական, այլ նաև բավականաչափ ընդգրկուն ծրագրավորման և հարակից բնագավառներում:

3. Տվյալների մշակումը ֆիզիկայում և արհեստական բանականություն կրթական ծրագրի նպատակն է տրամադրել հիմնարար գիտելիքներ արդի

ֆիզիկայի և մաթեմատիկայի հիմնախնդիրների վերաբերյալ, ուսանողի մեջ ձևավորել ոլորտին առնչվող տեղեկություններ ստանալու, համակարգելու և վերլուծելու ունակություններ, ինչպես նաև տրամադրել գիտելիքներ մեքենայական ուսուցման (Machine learning) ալգորիթմների, տվյալների մշակման մոդելների (Data science) և հաշվողական համակարգերի վերաբերյալ: Զարգացնելով մտավոր կարողությունները՝ ուսանողները ձեռք են բերում ֆիզիկական երևույթները հետազոտելու, ժամանակակից տեղեկատվական, հաշվողական և արհեստական բանականության մեթոդների կիրառմամբ տվյալների բազա նախագծելու, մոդելավորելու, ծրագրավորելու և ղեկավարելու կարողություններ:

«Տվյալների մշակումը ֆիզիկայում և արհեստական բանականություն» ծրագրի մասնագիտական առարկաները դասավանդում են նաև հրավիրված դասախոսներ, որոնք ՀՀ տարբեր ձեռնարկությունների տվյալ բնագավառի լավագույն մասնագտներն են: Ծրագրի շրջանավարտները հնարավորություն կունենան աշխատելու գիտահետազոտական ինստիտուտներում ու SS ոլորտում գործող մի շարք պետական և մասնավոր ձեռնարկություններում: Նրանք կարող են նաև իրենց ուսումը շարունակել ֆիզիկայի ինստիտուտի և Krisp-ի հովանավորությանբ իրականացվելիք համատեղ մագիստրոսական ծրագրի շրջանակում:

Ի դեպ, Krisp հայտնի հավելվածի հիմնադիրներն ու հիմնական աշխատակազմը ֆիզիկայի ֆակուլտետն ավարտած բարձրորակ ֆիզիկոսներ ու մաթեմատիկոսներ են, որոնք ընդգրկված են բակալավրիատի վերոհիշյալ կրթական ծրագրի դասախոսական կազմում:

«Տվյալների մշակումը ֆիզիկայում և արհեստական բանականություն» ծրագրի շրջանավարտները հնարավորություն ունեն աշխատելու ակադեմիական և գիտահետազոտական ինստիտուտների, ինչպես նաև բուհերի ուսումնական և գիտական ստորաբաժանումներում, քոլեջներում և դպրոցներում, ԵՊՀ ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտում (ԵՊՀ ՖԳՀԻ), ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտում, ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների, ֆիզիկական հետազոտությունների և ռադիոֆիզիկայի ինստիտուտում, Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատոր-իայում, «Լազերային տեխնիկա» ՓԲԸ-ում, «ԼՏ-Պիրկալ» հայ-հունական համատեղ ՓԲԸ-ում, Բյուրականի աստղադիտարանում, SS բնագավառում գործող պետական և մասնավոր ձեռնարկություններում:

Ծրագրի շրջանավարտներն իրենց ուսումը կարող են շարունակել մագիստրոսական տարբեր ծրագրերում:

Ֆիզիկայի ինստիտուտի լավագույն ուսանողներն ստանում են անվանական կրթաթոշակներ:

Ինստիտուտի շրջանավարտները հնարավորություն ունեն աշխատելու միջազգային տարբեր գործընկեր կազմակերպություններում, պետական համակարգում, գիտահետազոտական ու կրթական կենտրոններում և այլուր: Ինստիտուտի բարձր կուրսերի բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները ներգրավվում են գիտահետազոտական խմբերում, որպես երիտասարդ անդամներ՝ հնարավորություն ունենալով զբաղվելու գիտական գործունեությամբ արդեն իսկ ուսանողական տարիներից:

Ուսանողական կյանք և ժամանց

Ֆիզիկայի ինստիտուտում ուսանողական տարիներն ավելի հետաքրքիր դարձնելու նպատակով գործում են ուսանողական տարբեր կառույցներ և ուսանողական խմբակներ: Ինստիտուտում ուսանողները հնարավորություն ունեն մասնակցելու գործընկեր հաստատություններում կազմակերպվող վերապատրաստման դասընթացների, ինչպես նաև «Էրազմուս+» ծրագրի շրջանակում կրթություն ստանալու եվրոպական համալսարաններում: Ուսանողների համար կազմակերպվում են գիտաժողովներ, ուսանողական դպրոցների և սեմինարներ: Մեր ուսանողները նաև ներգրավված են կազմակերպչական աշխատանքներում:

Ընդունելությունն ըստ կրթական ծրագրերի

Ֆիզիկայի իսնտիտուտում ընդունելությունը կկատարվի հետևյալ կրթական ծրագրերով՝

- ֆիզիկա
- տվյալների մշակումը ֆիզիկայում և արհեստական բանականություն
- ռադիոֆիզիկա և համակարգչային տեխնոլոգիաներ:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիների ֆիզիկայի ինստիոտուտի դիմորդների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և տեղերի քանակի.

Կրթական ծրագիր	Ուսուցման համակարգ	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը
Ֆիզիկա	Անվճ	60	47	76	47	58	23
	Վճ		23		23		20
Ռադիոֆիզիկա և համակարգչային տեխնոլոգիաներ	Անվճ	102	47	97	47		
	Վճ		43		48		
Տվյալների մշակումը ֆիզիկայում և արհեստական բանականություն	Անվճ	37	15	30	15	38	15
	Վճ		15		15		15
Ռադիոֆիզիկա	Անվճ	-	-	-	-	68	26
	Վճ		-		-		38
Միջուկային ռեակտորների ֆիզիկա	Անվճ	-	-	-	-	15	6
	Վճ		-		-		10
Նանոֆիզիկա և առաջատար տեխնոլոգիաներ	Անվճ	-	-	-	-	25	10
	Վճ		-		-		7
Երկակի նշանակության տեխնոլոգիաների ֆիզիկա	Անվճ	-	-	-	-	21	9
	Վճ		-		-		7
Կ/Հ ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա	Անվճ	-	-	-	-	15	15
	Վճ		-		-		10
Հ/Հ և ազդանշանների մշակում	Անվճ	-	-	-	-	7	13
	Վճ		-		-		12

Անցողիկ միավորներն ըստ վերջին 3 տարիների.

Կրթական ծրագիր	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
	Անվճ	Վճ	Անվճ	Վճ	Անվճ	Վճ
Ֆիզիկա	27.75	16.5	36	24.75	37.25	30.25
Ռադիոֆիզիկա և համակարգչային տեխնոլոգիաներ	36.5	21.5	33.5	17.5		
Տվյալների մշակումը ֆիզիկայում և արհեստական բանականություն	32.75	26.25	30	16.75	33.25	25
Ռադիոֆիզիկա	-	-	-	-	36.25	16.5
Միջուկային ռեակտորների ֆիզիկա	-	-	-	-	28.25	17.75
Նանոֆիզիկա և առաջատար տեխնոլոգիաներ	-	-	-	-	34.75	31
Երկակի նշանակության տեխնոլոգիաների ֆիզիկա	-	-	-	-	35.25	27.25
Կ/Հ ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա	-	-	-	-	17.5	-
Հ/Հ և ազդանշանների մշակում	-	-	-	-	15.25	-

ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Քիմիան գիտություն է կյանքի մասին և օգնում է բացահայտելու բնության գաղտնիքները, լուծելու շատ հիմնարար խնդիրներ՝ մարդու առողջության, երկարակեցության, սննդի, սկզբունքորեն նոր կատալիտիկ համակարգերի ստեղծման, նոր տեխնոլոգիական գործընթացների և, ընդհանուր առմամբ, նոր նյութերի ստեղծման բնագավառներում: Մեծ է քիմիայի դերը մարդու գործունեության բոլոր բնագավառներում. էներգետիկայում, ծանր և թեթև արդյունաբերությունում, շինարարության, բնապահպանության ոլորտում և այլուր:

Պատմական ակնարկ

Քիմիայի դասավանդումը համալսարանում սկսվել է դեռևս 1921 թ-ից: Այն իրականացնում էր նոր կազմավորված քիմիայի ամբիոնը, որտեղ իրենց ազգանվեր աշխատանքներն են սկսել Ս. Ղամբարյանը, Ա. Հակոբյանը, Լ. Ռոտինյանը և Հ. Ակունյանը:

Այդ գործին իրենց մասնակցությունն են ունեցել նաև ֆակուլտետի դեկան, ագրոքիմիկոս Պ. Քալանթարյանը և այն տարիներին ԵՊՀ ռեկտոր, կենսաքիմիկոս Հ. Հովհաննիսյանը:

Քիմիայի միացյալ ամբիոնը երկար տարիներ ղեկավարել է պրոֆեսոր Ս. Ղամբարյանը: 1927 թ-ից ամբիոնը բաժանվում է օրգանական քիմիայի և ֆիզիկական քիմիայի ամբիոնների:

Քիմիայի ֆակուլտետը՝ որպես ինքնուրույն օղակ, կազմավորվում է 1933 թ-ին: 1934 թ-ին այն գլխավորում է պրոֆեսոր Ղ. Տեր-Ղազարյանը: Հետագայում տարբեր տարիներին ֆակուլտետը ղեկավարել են Դերենիկ Մարուխյանը, Տիրան Ղազանչյանը, Վերգինե Թառայանը (ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ 1956 թ-ից), Կարո Խաչատուրյանը, Մամիկոն Դանոյանը, Սարգիս Ավագյանը, Սուրեն Նալչաջյանը, Աիդա Ավետիսյանը (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս՝ 1996 թ-ից), քիմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Տարիէլ Ղոչիկյանը (2010 թ-ից): 2025 թ-ից ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատարն է քիմ. գիտ. թեկնածու, դոցենտ Արմեն Գալստյանը:

Կառուցվածքը

Ֆակուլտետի ուսումնագիտական գործընթացը կազմակերպվում է երեք ամբիոնների կողմից՝ անօրգանական և անալիտիկ քիմիայի, օրգանական քիմիայի, ֆիզիկական և կոլոիդ քիմիայի: Ֆակուլտետին կից գործում է քիմիայի գիտահետազոտական կենտրոնը իր ԳՀ լաբորատորիաներում՝ օրգանական քիմիա, անօրգանական քիմիա, ֆիզիկական քիմիա և էկոլոգիական անվտանգության, որտեղ իրականացվող աշխատանքներում ընդգրկվում են նաև ֆակուլտետի ուսանողները: Ֆակուլտետի ուսումնագիտական աշխատանքների արդյունքների հիմնական մասը հաջողությամբ տպագրվում է արտերկրում՝

անգլիալեզու, բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում: Ֆակուլտետի ամբիոնները ներառում են լաբորատոր կահույքով և սարքավորումներով համալրված ֆիզիկական քիմիայի, կոլոիդների քիմիայի, սննդի անվտանգության, անալիտիկ քիմիայի, անօրգանական քիմիայի, օրգանական քիմիայի, բարձրամոլեկուլային միացությունների քիմիայի, հետերոցիկլիկ միացությունների քիմայի և մի շարք այլ ուսումնական լաբորատորիաներ: Նշված լաբորատորիաներում անց են կացվում մասնագիտական առարկաների լաբորատոր աշխատանքներն ու գործնական պարապմունքները:

Ներկայումս ֆակուլտետի բակալավրիատում սովորում է 93 ուսանող, իսկ մագիստրատուրայում՝ 36 ուսանող:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Ֆակուլտետում դասավանդում են գիտությունների 7 դոկտոր, պրոֆեսոր, 18 թեկնածու, դոցենտ, 4 թեկնածու, ասիստենտ, 14 դասախոս:

Առաջարկվող կրթական ծրագրերն ու շնորհվող որակավորումները

ԵՊՀ քիմիայի ֆակուլտետում գործում է եռաստիճան ուսուցման համակարգ: Բակալավրիատում մասնագետներ են պատրաստվում ***«Քիմիա»*** և ***«Սննդի անվտանգություն»*** կրթական ծրագրերով: Շրջանավարտները ստանում են քիմիայի բակալավրի աստիճան և միաժամանակ ստեղծում հնարավորություն «Քիմիա» մասնագիտությամբ ուսուցչի որակավորում ստանալու համար: Մագիստրատուրայում **«Քիմիա»**, **«Սննդի անվտանգություն»** և **«Նյութագիտություն»** մասնագիտություններով շրջանավարտները ստանում են քիմիայի մագիստրոսի աստիճան: Իրականացվում է նաև երրորդ աստիճանի կրթություն՝ ասպիրանտուրա:

ԵՊՀ քիմիայի ֆակուլտետը Հայաստանի Հանրապետության միակ կենտրոնն է, որը պատրաստում է բազմապրոֆիլ քիմիկոս մասնագետներ: Ուսումնական գործընթացի ճիշտ կազմակերպումը, ժամանակակից կրթական ծրագրերի և բարձրորակ մասնագետների առկայությունը որակյալ կրթության նախապայմաններն են: Որոշ առարկաներ դասավանդվում են հանրապետության տարբեր մասնագիտական և արտադրական հաստատություններում՝ գիտահետազոտական ինստիտուտներում, սննդարտադրության ձեռնարկություններում: ՀՀ և արտերկրյա կազմակերպությունների ու ուսումնական հաստատությունների հետ ընդլայնված համագործակցություններն էլ ավելի են խթանում միջազգային չափորոշիչներին համապատասխանող բարձրորակ մասնագետների պատրաստման գործընթացին, ինչը աշխատանք գտնելու լավագույն գրավականն է: Ուսման հետ զուգահեռ լավագույն ուսանողները ընդգրկվում են գիտահետազոտական աշխատանքներում:

Քիմիայի ֆակուլտետի ***«Սննդի անվտանգություն»*** բաժինը պատրաստում է սննդի անվտանգության մասնագետներ բակալավրի և մագիստրոսի

աստիճաններով: Ժամանակակից սննդարտադրության պահանջներին համապատասխան անհրաժեշտ են սննդի անվտանգության միջազգային չափորոշիչներին համապատասխանող մասնագետներ, ովքեր կաշխատեն ինչպես սննդի արտադրության կազմակերպման և հսկման մասնագիտական կազմակերպություններում (նախարարություններ, մաքսային վարչություն, իրավական և ստանդարտավորման հիմնարկություններ, փորձաքննական լաբորատորիաներ և այլն), այնպես էլ հետազոտական ակադեմիական և ճյուղային ինստիտուտներում ու համալսարաններում:

Շրջանավարտները ստանում են հիմնարար գիտելիքներ սննդի անվտանգության, որակի բարելավման և սննդի պահպանման, ինչպես նաև արտադրական տեխնոլոգիաների, սննդի քիմիական բաղադրության և անալիզի վերաբերյալ: Կրթական ծրագրում ընդգրկված են նաև մաքրող, ախտահանող, կոսմետիկական, պարֆյումերային և գյուղատնտեսական նշանակության քիմիական միջոցների մասին դասընթացներ:

Քիմիայի ֆակուլտետի ուսումնական գործունեության կարևոր բաղկացուցիչն են ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաները: Այս պրակտիկաների անցկացումը համապատասխան մասնագիտական կենտրոններում նպաստում է նաև մասնագետ-շրջանավարտների հետագա աշխատանքի տեղավորմանը: Շրջանավարտների 80-90%-ը աշխատում է ընտրած մասնագիտությամբ: Արտադրական պրակտիկան իրականացվում է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի և նրա հետ համագործակցող ակադեմիական գիտահետազոտական ինստիտուտներում և ՀՀ առաջատար արտադրող ձեռնարկություններում՝ Գրանդ հոլդինգ, «Հիտեքս պլաստիկ», «Արամիր», «Նյու Պլաստ», ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն, «ԲԻՈ-ՔԻՄ ՍՊԸ», ՀՀ ԳՆ Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության, Հանրապետական անասնաբուժասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն ՊՈԱԿ, Հիգիենիկ ինժիներիայի և դիզայնի Եվրոպական խումբ, «ՊԱՐԵՆ ՔՈՆՍԱԼՏԻՆԳ» ՍՊԸ, Սննդի գիտության և տեխնոլոգիաների հայկական կազմակերպություն, «Ալկոլադ» ՍՊԸ, «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ, Երևանի «ԱՐԱՐԱՏ» կոնյակի գործարան, «ՆԱՏՖՈՒԴ» Մսամթերքի Արտադրական Ձեռնարկություն ՓԲԸ, «Մաքուր երկաթի գործարան» ԲԲԸ, Երևանի գարեջրի գործարան, ՀՀ կաթնամթերքներ արտադրող ձեռնարկություններ, ՀՀ ԳԱԱ քիմիական ինստիտուտներում և այլն, որտեղ ուսանողները ծանոթանում են ժամանակակից սարքավորումների և տեխնոլոգիական գծերի հետ: Այդ կազմակերպությունների նյութատեխնիկական բազաները հնարավորություն են տալիս պատրաստելու որակյալ մասնագետներ, ովքեր իրենց հիմնարար գիտելիքներով և գործնական

պատրաստվածությամբ կբավարարեն այսօրվա պահանջներին և կարող են զբաղեցնել կարևոր աշխատատեղեր ՀՀ և միջազգային կազմակերպություն-ներում ու փորձագիտական կենտրոններում: Քիմիայի ֆակուլտետի շատ շրջանավարտներ անցնում են աշխատանքի այն ձեռնարկություններում և կազմակերպություններում, որտեղ իրականացվում է պրակտիկան: Քիմիայի ֆակուլտետի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել քիմիայի, սննդի արտադրության և անվտանգության հետ առնչվող տարբեր ձեռնարկություններում և հիմնարկներում՝ զբաղեցնելով հետևյալ պաշտոնները. փորձագետ, ավագ փորձագետ, տեխնոլոգ, սննդի անվտանգության մասնագետ, գիտաշխատող, սննդի որակի հսկիչ, արտադրության մենեջեր, միջազգային գիտական ծրագրերի մենեջեր, արտադրության ղեկավար, արտադրության կազմակերպիչ, լաբորանտ, մասնագետ, ավագ մասնագետ, դասախոս, կրիմինալիստ, ուսուցիչ, անալիտիկ և այլն:

Քիմիայի ֆակուլտետի գիտահետազոտական լաբորատորիաներում իրականացվող աշխատանքները մեծապես նպաստել են քիմիայի զարգացմանը և արժանացել ինչպես տեղական, այնպես էլ միջազգային մրցանակների: Ֆակուլտետը մեծ փորձ ունի նաև արդյունաբերական խնդիրների լուծման բնագավառում: Այն միջազգային ճանաչում ունեցող գիտական կենտրոն է: Ֆակուլտետը սերտ կապեր է հաստատել տարբեր երկրների առաջատար գիտական կենտրոնների հետ. ԱՄՆ-ում՝ Հյուսիսարևմտյան համալսարան (Չիկագո), Արիզոնայի համալսարան (Թյուսոն), Գերմանիայում՝ Ռոստոկի, Զաառլանդի և Բայրոթի համալսարաններ, Ֆրանսիայում՝ Փարիզի և Մոնպելյե համալսարանի, Լեհաստանում՝ Սիլեզյան համալսարան (Կատովիցե), Մարի Կյուրի-Սկլադովսկայայի անվան համալսարան (Լյուբլին), Ռուսաստանում՝ Մոսկվայի պետական համալսարան, Ռուսաստանի Ազգերի բարեկամության Համալսարան (Մոսկվա), Կառուցվածքային մակրոկինետիկայի ինստիտուտ (Մոսկվա), ՌԴ ՌԳԱ-ի Գ.Ա.Կրեստովի անվան լուծույթների քիմիայի ինստիտուտ և Դոնի Ռոստովի Հարավային դաշնության համալսարան (ՀԴՀ): Ֆակուլտետը առավել կարևորում է Գերմանիայի Դաշնության համալսարանների հետ համագործակցությունը: Քիմիայի ֆակուլտետի լավագույն ուսանողները իրենց ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը իրականացնում են այդ կենտրոններում, իսկ ասպիրանտներն այնտեղ կատարում և պաշտպանում են ատենախոսություն-ները (BACKIS, ERASMUS և DAAD ծրագրերի շրջանակներում):

Աշխատանքային հեռանկարներն ու կապն աշխատաշուկայի հետ

ԵՊՀ քիմայի ֆակուլտետի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել բնապահպանության, գյուղատնտեսության, արտակարգ իրավիճակների, էներգետիկայի և բնական պաշարների, կրթության և գիտության,

առողջապահության նախարարությունների ստորաբաժանումներում, սննդի և կոսմետոլոգիայի արդյունաբերության հետ առնչվող տարբեր ձեռնարկություն-ներում՝ զբաղեցնելով հետևյալ պաշտոնները.

- գիտաշխատող,
- փորձագետ,
- արտադրանքի մենեջեր,
- տեխնոլոգ,
- լաբորանտ,
- մասնագետ,
- կրիմինալիստ:

Բակալավրիատի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը ԵՊՀ քիմիայի և քիմիային հարակից մասնագիտացումներով մագիստրոսական ծրագրերում, ինչպես նաև արտասահմանյան բուհերում:

Ուսանողական կյանք և ժամանց

Ֆակուլտետում լուրջ աշխատանքներ են տարվում ուսանողական կյանքը հետաքրքիր և լիարժեք դարձնելու համար: Այս աշխատանքներում իրենց մասնակցությունն են բերում ֆակուլտետի ուսանողական կառույցները՝ ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերությունը: Ֆակուլտետում ամեն տարի կազմակերպվում են ՈՒԳԸ նստաշրջաններ, հիշարժան օրերին նվիրված միջոցառումներ, սպորտային տարբեր մրցումներ և խաղեր: Մեր ուսանողներն ակտիվորեն մասնակցում են համահամալսարանա-կան տարաբնույթ միջոցառումներին:

Հաշվի առնելով գիտական արդյունքների խոստումնալից լինելը՝ քիմիայի ֆակուլտետն իր ապագան տեսնում է գիտական և կրթական նվաճումների ներդրման, նորարարական աշխատանքների իրականացման համատեքստում:

Ընդունելությունն ըստ կրթական ծրագրերի

Քիմիայի ֆակուլտետում ընդունելությունը կկատարվի հետևյալ կրթական ծրագրերով՝

- քիմիա
- սննդի անվտանգություն:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիների քիմիայի ֆակուլտետի դիմորդների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և տեղերի քանակի.

Կրթական ծրագիր	Ուսուցման համակարգ	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը
Քիմիա	Անվճ	20	12	20	12	17	12
	Վճ		8		8		9
Սննդի անվտանգություն	Անվճ	15	7	12	7	13	7
	Վճ		8		8		9

Անցողիկ միավորներն ըստ վերջին 3 տարիների.

Կրթական ծրագիր	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
	Անվճ	Վճ	Անվճ	Վճ	Անվճ	Վճ
Քիմիա	18	-	17	-	17.25	-
Սննդի անվտանգություն	17	-	17.25	-	20.25	-

ՖԱՐՄԱՑԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Պատմական ակնարկ

ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտը դեղագետներ պատրաստող առաջատար բարձրագույն կրթական օջախներից է ՀՀ-ում: 1994 թ-ից Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետում գործում էին դեղագործական քիմիայի բաժինը և նրան սպասարկող դեղագործական քիմիայի ամբիոնը, որոնք 2012 թ-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից դեղագիտություն մասնագիտությամբ բարձրագույն (մասնագիտական) կրթական ծրագրերի իրականացման Կ-ԲԿ-000055 լիցենզիան ստանալուց հետո վերանվանվեցին համապատասխանաբար դեղագիտության բաժնի և դեղագիտության ամբիոնի: Դրանց հենքի վրա 2017 թ-ին ստեղծվեց կրթական, գիտահետազոտական և ներդրումային գործառույթների իրականացման առաքելությամբ ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտը, որի գերագույն խնդիրն է միջազգային արդի չափորոշիչներին համապատասխան դեղագետ մասնագետների պատրաստումը, ինչը Հայաստանի Հանրապետությունում դեղարդյունաբե-րության զարգացման կարևորագույն նախապայմաններից է: Ֆարմացիայի ինստիտուտի կայացման գործում իրենց առանցքային ներդրումն են ունեցել վաստակաշատ գիտնականներ ՀՀ–ում դեղաբանության ոլորտի հիմնասյուներից Էդուարդ Սեթի Սեկոյանը և ՀՀ–ում Ապացուցողական բժշկության ուղղության հիմնադիր Ռուբեն Անդրանիկի Հովհաննեսյանը:

Կառուցվածքը

Այսօր ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտում ստեղծված են «Ֆարմացիա» մասնագիտության գրեթե բոլոր ուղղություններով միջազգային չափորոշիչներին համապատասխան գիտակրթական գործունեություն ծավալելու իրական հնարավորություններ: Ինստիտուտի կազմում գործում են երեք մասնագիտական ամբիոններ՝ «Ֆարմքիմիայի և ֆարմակոգնոզիայի», «Ֆարմտեխնոլոգիայի և ֆարմացիայի էկոնոմիկայի ու կառավարման» և «Կենսաբժշկագիտության», ինչպես նաև հետազոտական լաբորատորիաներ՝ պոտենցիալ դեղաբանորեն ակտիվ միացությունների սինթեզի, բժշկակենսաբա-նական սքրինինգի ու դեղերի որակի հսկման և մոնիտորինգի ուղղություններով: 2024 թ-ին «Դեղապատրաստուկների որակի հսկման և մոնիթորինգի» գիտաուսումնական կենտրոնի վերլուծական փորձարկման լաբորատորիան հավատարմագրվել է ԳOUS ԻՍO/ԻԷԿ 17025 ստանդարտի պահանջներին համապատասխան: Ինստիտուտի գիտաուսումնական լաբորատորիաները հագեցած են ժամանակակից լաբորատոր կահույքով և սարքավորումներով, ինչը հնարավորություն է ընձեռում ուսանողների տեսական գիտելիքները լիարժեք կիրառել պրակտիկայում: Նշված լաբորատորիաներում անց են կացվում մասնագիտական առարկաների՝ դեղերի պատրաստման տեխնոլոգիայի

(դեղատնային և գործարանային), ֆարմքիմիայի, ֆարմակոգնոզիայի, կենսատեխնոլոգիայի, թունաբանական քիմիայի, դեղաբանության, դեղերի էկոնոմիկայի և կառավարման, դեղերի կառուցվածքի հետազոտման և որակի հսկման, հիգիենայի և այլն, լաբորատոր աշխատանքներն ու գործնական պարապմունքները: 2024 թ-ին հիմնվել է դեղաբանության լաբորատորիան, որը համալրվել է շուրջ 20 ժամանակակից սարքերով, որոնք ապահովում են փորձարարական դեղաբանության և թունաբանության լաբորատոր աշխատանքների ամբողջական իրականացումը:

Ինստիտուտում ներդրված է հեռաուսուցման համակարգ, որը հնարավորություն է տալիս ուսանողների համար կազմակերպել առցանց դասախոսություններ արտերկրյա գործընկեր համալսարանների հետ:

Ներկայումս ինստիտուտի բակալավրիատում սովորում է 252 ուսանող, իսկ մագիստրատուրայում՝ 44:

Պրոֆեսորադասախոսական կազմը

ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի գիտակրթական գործընթացներին մասնակցում են գիտությունների 4 դոկտոր, պրոֆեսոր (նրանցից մեկը ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս), 17 դոցենտ (գիտությունների թեկնածու), 8 ասիստենտ (գիտությունների թեկնածու) և 5 դասախոս: Ֆարմացիայի ինստիտուտում են դասավանդում ՀՀ-ում դեղերի ոլորտը կարգավորող իրավական փաստաթղթերի և օրենքների ստեղծման մեջ մեծ ներդրում ունեցող Ալբերտ Եփրեմի Սահակյանը, ՀՀ-ում ասիմետրիկ սինթեզի ուղղության հիմնադիր, երկարամյա դասավանդման փորձ ունեցող, Ֆարմացիայի ինստիտուտի կազմավորման ու զարգացման գործընթացում նշանակալի դերակատարում ունեցած ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանը: 2021 թ. Ա.Ս.Սաղյանը արժանացել է ԵՊՀ դասավանդման գերազանցության մրցանակի բնագիտական անվանակարգում:

Առաջարկվող կրթական ծրագրերն ու շնորհվող որակավորումները

Ֆարմացիայի ինստիտուտը կազմակերպում է բակալավրի «Ֆարմացիա» (առկա) և «Դեղագործական քիմիա» (հեռակա) կրթական ծրագրերով ուսուցում:

ՀՀ կառավարության 2021 թ-ի 1902-Լ որոշմամբ Դեղագործությունը հաստատվել է որպես արդյունաբերության զարգացման հինգ գերակա ոլորտներից մեկը: Ոլորտի առանցքային ուսումնական հաստատություններից մեկը ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտն է: Այդ առումով առաջարկվող ծրագրերը միտված են նպաստելու որակավորված մասնագետների թվի աճին և գիտահետազոտական պոտենցիալի զարգացմանը:

«Ֆարմացիա» բակալավրի կրթական ծրագրի նպատակն է պատրաստել միջազգային չափորոշիչներին համապատասխանող բարձրորակ դեղագետ մասնագետներ: Ծրագրի շրջանակներում ուսանողներին տրվում է հիմնարար գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են դեղագետին մասնագիտական

գործունեություն ծավալելու համար, այդ թվում վերլուծելու և գնահատելու դեղերի ազդեցության մեխանիզմների առանձնահատկությունները, կիրառման ոլորտները և կողմնակի էֆեկտները: Ուսանողները ձեռք են բերում խորացված գիտելիքներ դեղերի որակի հսկման, տեղափոխման, պահպանման, արդյունավետության գնահատման, դեղերի շրջանառության կարգավորման ռազմավարության մշակման և փաստաթղթային ձևակերպման գործընթացների մասին: Ուսանողները ստանում են հիմնարար գիտելիքներ գիտահետա-զոտական ինստիտուտներում և դեղագործական ընկերություններում՝ դեղանյութերի սինթեզի, կառուցվածքի հետազոտման և սերտիֆիկացման, ազդեցության մեխանիզմների ուսումնասիրման, դեղանյութերից նոր դեղաձևերի ստացման հետազոտական և կազմակերպչական գործունեությամբ զբաղվելու համար: Ծրագրի ավարտին ուսանողներին շնորհվում է «Ֆարմացիայի» բակալավրի աստիճան:

Ֆարմացիայի ինստիտուտում իրականացվում է հեռակա ուսուցում «Դեղագործական քիմիա» բակալավրի կրթական ծրագրով: Ծրագրի ավարտին ուսանողներին շնորհվում է «Քիմիա» մասնագիտությամբ բակալավրի աստիճան:

Ֆարմացիայի ինստիտուտը «Ֆարմացիա» մասնագիտությամբ կազմակեր-պում է նաև ուսուցում «Ֆարմացիա» և «Դեղերի որակի վերահսկում» մագիստրոսական կրթական ծրագրերով:

2023 թ–ին «Ֆարմացիա» բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը հավատարմագրվել են գերմանական ASIIN միջազգային հեղինակավոր գործակալության կողմից:

«Ֆարմացիա» մագիստրոսի կրթական ծրագրի շրջանակներում ուսանողներին ուսուցանվում են դեղատնտեսագիտական հետազոտական մեթոդներ, դեղագործական կազմակերպությունների կառավարում, դեղագոր-ծական մենեջմենթի և մարքեթինգի ժամանակակից միջազգային պահանջներին համապատասխանող սկզբունքներ և մեթոդներ: Ուսանողները ստանում են հիմնարար գիտելիքներ դեղանյութերի սինթեզի, կառուցվածքի հետազոտման և հավաստագրման, ազդեցության մեխանիզմների ուսումնասիրման, ժամանակակից ռացիոնալ և թիրախային թերապիայի մոտեցումների, դեղանյութերից նոր դեղաձևերի ստացման հետազոտական գործունեությամբ զբաղվելու համար: «Դեղերի որակի վերահսկում» կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները ձեռք են բերում խորը և համակողմանի գիտելիքներ դեղերի որակի հետազոտման ժամանակակից գործիքային անալիզի մեթոդների ուղղությամբ, դեղաբանորեն ակտիվ մոլեկուլների նույնականացման, տարբեր դասերի դեղերի որակի հետազոտման ու գնահատման ուղղությամբ

մասնագիտական գործունեություն ծավալելու համար: Վերոնշյալ 2 ծրագրերի ավարտին ուսանողներին շնորհվում է «Ֆարմացիայի» մագիստրոսի աստիճան:

Այսօր ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտը հնարավորություն է ընձեռում ուսանողներին կրթություն ստանալ ՌԴ Բելգորոդի պետական հետազոտական և Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության համալսարանների հետ հաստատված համատեղ մագիստրոսի կրթական ծրագրերով, արդյունքում շրջանավարտներին շնորհվում է երկակի (երկու համալսարանների) դիպլոմներ:

Ֆարմացիայի ինստիտուտը համագործակցում է հանրապետության և արտերկրյա առաջատար համալսարանների և գիտահետազոտական կենտրոնների հետ, ինչպիսիք են ՌԴ Բելգորոդի պետական հետազոտական, Ռուսաստանի ժողովուրդների բարեկամության, Ուկրաինայի Խարկովի ազգային դեղագործական, Գերմանիայի Ռոստոկի և Գրայֆսվալդի համալսարանները, ՌԴ ԳԱ Ա.Նեսմեյանովի անվան Էլեմենտօրգանական միացությունների ինստիտուտը, ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտա-արտադրական կենտրոնը, ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրոն, «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն»-ը, ՀՀ ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտը, «Արփիմեդ», «Լիքվոր», «Ազատ ֆարմասյութիքլզ» և «Ֆարմատեք» դեղարտադրող ընկերությունները, «Գրիգոր Նարեկացի» և «Աստղիկ» բժշկական կենտրոնները, «Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն»-ը, «Ալֆա-ֆարմ», «Նատալի-ֆարմ», «Վագա–ֆարմ» դեղագործական ընկերությունները և այլն: Նշված ընկերություններում կազմակերպվում են արտադրական պրակտիկաները մասնագիտական առարկաների լաբորատոր աշխատանքների դասավանդումը, ավարտական, մագիստրոսական և ատենախոսական աշխատանքների կատարումը:

Աշխատանքային հեռանկարներն ու կապն աշխատաշուկայի հետ

«Ֆարմացիա» բակալավրիատի ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել դեղագործության և դրան հարակից մասնագիտական ոլորտներում գործող հետևյալ կառույցներում՝

- Դեղերի շրջանառության ոլորտը կարգավորող մարմիններ և կառույցներ (ՀՀ առողջապահության նախարարություն, Առողջապահության պետական մարմին, Դեղերի փորձագիտական կենտրոն և այլն),
- Դեղերի մեծածախ իրացմամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներ,
- Դեղարտադրող ընկերություններ,
- Արտասահմանյան դեղարտադրողների հայաստանյան ներկայացուց-չություններ,
- Հանրային և հիվանդանոցային դեղատներ,
- Գիտահետազոտական և կրթական հաստատություններ:

«Քիմիա» մասնագիտությամբ «Դեղագործական քիմիա» բակալավրի

կրթական ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել դեղագործության և դրան հարակից մասնագիտական ոլորտներում գործող հետևյալ կառույցներում՝

- Դեղարտադրող գործարաններ
- Հանրային և հիվանդանոցային դեղատներ՝ որպես դեղագետի օգնական (օպերատոր, պահեստի բաժնում և այլն):
- Դեղերի շրջանառության ոլորտը կարգավորող մարմիններ և կառույցներ (ՀՀ առողջապահության նախարարություն, Առողջապահության պետական մարմին, Դեղերի փորձագիտական կենտրոն և այլն),
- Դեղերի մեծածախ իրացմամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներ,
- Արտասահմանյան դեղարտադրողների հայաստանյան ներկայացուցչություններ,
- Գիտահետազոտական և կրթական հաստատություններ:

Բակալավրի և՛ առկա, և՛ հեռակա ուսուցմամբ կրթական ծրագրերի շրջանավարտները կարող են «Ֆարմացիա» մասնագիտությամբ շարունակել իրենց ուսումը ինչպես ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի մագիստրատուրայում, այնպես էլ ԵՊԲՀ-ի և ՀՀ ԳԱԱ տարբեր մասնագիտական ինստիտուտների մագիստրատուրաներում, Ամերիկյան համալսարանում և այլն:

«Ֆարմացիա» մասնագիտությամբ մագիստրոսի աստիճան ունեցող շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել դեղագործության և դրան հարակից մասնագիտական ոլորտներում գործող կառույցներում՝ զբաղեցնելով հետևյալ պաշտոնները.

Հանրային և հիվանդանոցային դեղատներ

- դեղագետ

Դեղարտադրող ընկերություններ

- որակավորված անձ
- դեղագետ-տեխնոլոգ
- որակի հսկման պատասխանատու

ՀՀ առողջապահության նախարարության դեղային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչություն

- գլխավոր մասնագետ
- առաջատար մասնագետ
- մասնագետ

Առողջապահության տեսչություն

- դեղագետ-տեսուչ

Փորձագիտական կենտրոններ

- որակի հսկման և գնահատման փորձագետ
- փորձագետ

Դեղերի մեծածախ իրացման կազմակերպություններ

- պատասխանատու դեղագետ
- դեղագործական շուկայի մարկետոլոգ

Արտասահմանյան դեղարտադրողների հայաստանյան ներկայացուցչություններ

- դեղագետ-ներկայացուցիչ
- դեղերի առաջ մղման մասնագետ

Գիտահետազոտական հաստատություններ

- հետազոտող գիտաշխատող

Կրթական հաստատություններ

- դասախոս

ՀՀ ֆարմացիայի ոլորտի առաջատար ընկերությունների հետ ուսանողները ծանոթանում են արդեն իսկ ուսումնառության տարիներին՝ ուսումնական ծրագրի շրջանակներում անցնելով արտադրական պրակտիկա, որը հնարավորություն է տալիս լավագույն ուսանողներին աշխատանքի անցնել այդ ընկերություններում:

Ուսանողական կյանք և ժամանց

Ֆարմացիայի ինստիտուտն աչքի է ընկնում նաև ակտիվ ուսանողական կյանքով: Ինստիտուտի ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության ջանքերով պարբերաբար կազմակերպվում են գիտական (գիտաժողովներ, սեմինարներ, մասնակցություն մասնագիտական մրցույթներին և այլն) և մշակութային միջոցառումներ (ինտելեկտուալ խաղեր, խաղ-մրցույթներ, ուսանողների միջազգային օրվան, դեղագետի միջազգային օրվան նվիրված միջոցառումներ և այլն), որոնք խթանում են ուսանողների մտավոր ունակությունների և պրակտիկ գիտելիքների ամրապնդումը, ինչպես նաև ուսանողական կյանքը դարձնում են հետաքրքիր, իսկ ժամանցը՝ բովանդակալից:

Ընդունելությունն ըստ կրթական ծրագրերի

Ֆարմացիայի ինստիտուտում ընդունելությունը կկատարվի հետևյալ կրթական ծրագրով՝

- ֆարմացիա:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիների ֆարմացիայի ինստիտուտի դիմորդների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և տեղերի քանակի.

Կրթական ծրագիր	Ուսուցման համակարգ	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը
Ֆարմացիա	Անվճ	37	6	40	6	35	6
	Վճ		29		29		34

Անցողիկ միավորներն ըստ վերջին 3 տարիների.

Կրթական ծրագիր	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
	Անվճ	Վճ	Անվճ	Վճ	Անվճ	Վճ
Ֆարմացիա	27	16	23.5	18.75	28.25	16.25

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատմական ակնարկ

1932 թ-ին ԵՊՀ պատմատնտեսագիտական ֆակուլտետի կազմում ստեղծվում են երկրաբանական և աշխարհագրական բաժինները, որոնք 1933-34 ուստարում միավորվում են և կազմավորվում է երկրաբանաաշխարհագրական ֆակուլտետը, որը 1945 թ-ին բաժանվում է առանձին ֆակուլտետների՝ Աշխարհագրության և Երկրաբանության, որոնք գործում են մինչև 2008 թ.: 2008 թ-ին ֆակուլտետները նորից միավորվում են և ձևավորվում է աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետը:

Կառուցվածքը

Ֆակուլտետում ուսումնագիտական աշխատանքները կազմակերպվում են 5 ամբիոնների կողմից.

- Ընդհանուր աշխարհագրություն
- Ռեգիոնալ երկրաբանություն և օգտակար հանածոների հետախուզում
- Երկրաֆիզիկա, ճարտարագիտական երկրաբանություն և ջրաերկրաբանություն
- Քարտեզագրություն և գեոմորֆոլոգիա
- Սերվիս

Ֆակուլտետում գործում են մասնագիտական կաբինետներ և համակարգչային լսարաններ, ուսումնագիտական լաբորատորիաներ՝ ջրաօդերևութաբանության, գրունտների ինժեներաերկրաբանական և գեոտեխնիկական, պետրոֆիզիկայի և մագնիսահետախուզության, միներալոգիայի և պետրոգրաֆիայի, երկրաֆիզիկայի, Երկրի հեռազննման, օդերևութաբանական կայան, Կայուն զարգացման կենտրոն, փորձառական զբոսաշրջության հաբ-լսարան, ժամանակակից ուսումնական տեխնոլոգիաներով (ինտերակտիվ գրատախտակներ, վիրտուալ իրականության (VR) ակնոցներ) հագեցած ինտերակտիվ լսարան, որտեղ ամբողջացվում է ուսումնագիտական գործընթացը, ամրապնդվում են ուսանողների մասնագիտական գիտելիքները:

Ներկայումս ֆակուլտետում սովորում է 686 ուսանող, որից 439-ը՝ առկա բակալավրիատում, 141-ը՝ հեռակա բակալավրիատում, 106-ը՝ առկա մագիստրատուրայում: Ֆակուլտետի հետբուհական կրթություն են ստանում 18 ուսանողներ, որոնցից 8-ը՝ որպես ասպիրանտ (4 առկա, 4 հեռակա), իսկ 10-ը՝ որպես հայցորդ:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Ներկայումս ֆակուլտետում դասավանդում են գիտությունների 4 դոկտոր-պրոֆեսոր, 36 գիտությունների թեկնածու, 7 ասիստենտ, 22 դասախոս: Ուսումնական գործընթացի կազմակերպմանը՝ հրավիրյալ դասախոս

կարգավիճակով, մասնակցում են համապատասխան ոլորտների լավագույն մասնագետներ։

Առաջարկվող կրթական ծրագրերն ու շնորհվող որակավորումները

Ֆակուլտետում գործում են բակալավրի 4 և մագիստրատուրայի 9 կրթական ծրագրեր։

Բակալավրի ծրագրերն են՝

1) «Աշխարհագրություն» կրթական ծրագիր

Աշխարհագրությունը որպես գիտություն անցել է զարգացման հարուստ ճանապարհ։ Այն ունեցել է իր քանակական ու որակական թռիչքները, պայմանավորված հասարակական զարգացման վերելքներով ու վայրէջքներով։ Աշխարհագրություն գիտությունը ներկայումս ապրում է որակական խորքային փոփոխությունների ժամանակաշրջան։ Դա պայմանավորված է հասարակական պահանջներով, ներկայումս շարունակվող համամոլորակային երևույթներով, ինչպես նաև «հասարակություն-բնություն» հարաբերությունների խորացող ճգնաժամով։ Ելնելով վերը նշվածից՝ հատուկ ուշադրություն է դարձվում աշխարհագրության ուսումնական պլանների մաթեմատիզացման, թվայնացման, հումանիզացման և էկոլոգացման գործընթացներին։

«Աշխարհագրություն» կրթական ծրագրով դասավանդվող առարկաներն ուսանողներին հնարավորություն են տալիս ձեռք բերել գիտելիքներ Երկրագնդի աշխարհագրական թաղանթի ոլորտների ու բաղադրիչների, լանդշաֆտների կառավարման, պլանավորման ու դիզայնի, ջրաբանության, օդերևութաբանության, կլիմայի գլոբալ փոփոխությունների, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, կառավարման և պահպանության, քարտեզագրության, բնակչության տարածքային կազմակերպման, տեղաբաշխման, տնտեսության բոլոր ճյուղերի, սոցիալ-տնտեսական շրջանացման, վարչատարածքային կառուցվածքի, համամոլորակային հիմնախնդիրների մասին։

Այս կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները բակալավրում 3-րդ կուրսից մասնագիտանում են «Ջրաօդերևութաբանություն» և «Սոցիալ-տնտեսական աշխարհագրություն» մասնագիտացումների ուղղությամբ։

«Աշխարհագրություն» կրթական ծրագրում ձեռք բերված տեսական գիտելիքներն ամրապնդվում են ուսումնական և մասնագիտական պրակտիկաների միջոցով։ Այդ նպատակով առաջին և երկրորդ կուրսերի ուսանողների պրակտիկան կազմակերպվում է ԵՊՀ ուսումնական բազաներում, ինչպես նաև ավտոբուսային և հետիոտն բազմաթիվ երթուղիներով՝ ՀՀ մարզերում և մերձերևանյան գոտում։ Մասնագիտական պրակտիկան կազմակերպվում է ՀՀ տարբեր պետական գերատեսչություններում ու հիմնարկ-ձեռնարկություններում, այդ թվում՝ ՀՀ շրջակա միջավայրի և նրա կազմում գտնվող «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ում,

ինչպես նաև «Զվարթնոց ավիաօդերևութաբանական կենտրոն» ՓԲԸ-ում, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ էկոնոմիկայի նախարարություններում, համայնքապետարաններում ու մարզպետարան-ներում, միջազգային և մասնավոր կազմակերպություններում, էկոլոգիական տարբեր գերատեսչություններում:

Կրթական ծրագիրն ավարտելուց հետո շրջանավարտը ստանում է «Աշխարհագրության» բակալավրի որակավորում, ինչպես նաև ուսանողները հնարավորություն ունեն զուգահեռ ուսումնասիրելու նաև մանկավարժություն, անցնել մանկավարժական պրակտիկա և ստանալ նաև «աշխարհագրության ուսուցչի» որակավորում:

2) «Երկրաբանություն» կրթական ծրագիր

Երկրաբանությունը գիտություն է Երկիր մոլորակի ծագման, զարգացման, երկրակեղևի ձևավորման, օգտակար հանածոների հանքավայրերի առաջացման, դրանց՝ տարբեր երկրաբանական մեթոդներով, որոնման, հետախուզման և պաշարների գնահատման մասին:

«Երկրաբանություն» կրթական ծրագրով դասավանդվող առարկաներն ուսանողներին հնարավորություն են տալիս ձեռք բերել գիտելիքներ Երկրի կառուցվածքի, նրանում առկա օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման մասին, երկրաբանական մեթոդների կիրառմամբ վտանգավոր երկրաբանական երևույթների (սողանքների, երկրաշարժերի, կարստային դատարկություններ կա այլն), առաջացման, տարածման և հնարավոր կանխարգելման խնդիրների ուսումնասիրման մասին: ՀՀ հանքարդյունահանման, երկրաբանահետախուզական, քաղաքաշինական, ջրաերկրաբանական, ինժեներաերկրաբանական կառույցների, ճանապարհա-շինարարական աշխատանքների, ինչպես նաև բնապահպանության բնագավառներում իրականացվող աշխատանքների ծավալների աճն արդիական է պահում համապատասխան կրթական ծրագրով կադրերի պատրաստումը:

«Երկրաբանություն» կրթական ծրագրում ձեռք բերված տեսական գիտելիքներն ամրապնդվում են ուսումնական և մասնագիտական պրակտիկաների միջոցով: Այդ նպատակով ուսանողներն իրենց առաջին մասնագիտական փորձը ձեռք են բերում դաշտային ուսումնական պրակտիկաների ընթացքում՝ ինչպես ՀՀ տարբեր մարզեր կազմակերպված երթուղիներով, այնպես էլ ԵՊՀ ուսումնական բազաներում: Ուսումնական պրակտիկաների ընթացքում ուսանողները ծանոթանում են երկրաբանական դաշտային աշխատանքների հիմունքներին, ձեռք են բերում մասնագիտական և աշխատանքային հմտություններ: Մասնագիտական պրակտիկան ուսանողն անց է կացնում հանքարդյունաբերական ձեռնարկություններում, ՀՀ ՆԳՆ սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայությունում, Ա.Նազարովի

անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ շրջակա միջավայրի նախարարություններում, ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեում, ակադեմիական և գիտահետազոտական կազմակերպություններում, այլ պետական և մասնավոր ու միջազգային ձեռնարկություններում:

Ֆրանսիայի, Գերմանիայի և Ռուսաստանի մի շարք գիտաուսումնական հաստատությունների հետ սերտ կապերի շնորհիվ՝ ուսանողների փոխանակման ծրագրի շրջանակներում լավագույն ուսանողները կարող են իրենց ուսումը շարունակել նաև արտերկրի բուհերում:

Կրթական ծրագիրն ավարտելուց հետո շրջանավարտը ստանում է «Երկրաբանության» բակալավրի որակավորում:

3) «Քարտեզագրություն և կադաստրային գործ» կրթական ծրագիր

Այս միջդիսցիպլինար ծրագիրը նվիրված է ինտեգրված տարածական վերլուծություններին, իրազեկման և ցանցային գործունեության մասին հիմնարար և կիրառական հետազոտություններին, մասնագիտական կրթությանը և վերապատրաստմանը: Հիմքում ունենալով տարածքների ուսումնասիրության բաղադրիչը՝ ծրագիրն ուղղված է փոխգործունակ աշխարհագրական տեղեկատվական համակարգերի, տարածական մոդելավորման, արբանյակային հեռահար զոնդավորման, պատկերների վերլուծության, դասական քարտեզագրության խնդիրների, կադաստրային հաշվառման և քարտեզագրման հարցերի վրա: Կրթական ծրագիրը սպասարկող ամբիոնն ակտիվորեն ներգրավված է տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող զարգացման համագործակցության և կրթական ծրագրերում և ակտիվորեն աջակցում և առաջ է մղում ազատ տարածական տվյալների նախաձեռնությունը և «Թվային Երկրի» հայեցակարգ միջառարկայական հետազոտությունների և հաղորդակցության սխեմայում՝ խթանելով նոր, գեոտարածական տեխնոլոգիաների վրա հիմնված որոշումների աջակցության և քաղաքականության իրականացման մոտեցումը: Կրթական ծրագիրն սպասարկող ամբիոնը տնօրինում է աշխարհագրական տեղեկատվական համակարգերի և երկրի հեռազննման լաբորատորիաներին, որոնք հագեցած են ժամանակակից գործիքակազմով՝ մասնավորապես ինդուստրիալ ԱԹՍ-ով, GNSS և այլ նավիգացիոն համակարգերով, աշխատանքային հզոր կայաններով և այլն: Բոլոր համակարգիչները հագեցած են նորագույն ծրագրային ապահովման միջոցներով՝ մասնավորապես ESRI ArcGIS Pro և ArcGIS Online լիցենզիաներով:

«Քարտեզագրություն և կադաստրային գործ» կրթական ծրագրով դասավանդվող առարկաներն ուսանողներին հնարավորություն են տալիս ձեռք բերել քարտեզագրության հիմունքների, թվային քարտեզագրության,

կադաստրային գործի, անշարժ գույքի գույքագրման, գեոինֆորմացիոն տեխնոլոգիաների, աէրոտիեզերական նկարների վերծանման, տարածական տեղեկատվական բազաների, ժամանակակից գեոդեզիական գործիքների և այլ տեխնիկական ու թվային բնույթի գիտելիքներ:

«Քարտեզագրություն և կադաստրային գործ» կրթական ծրագրում ձեռք բերված տեսական գիտելիքներն ամրապնդվում են ուսումնական և մասնագիտական պրակտիկաների միջոցով: Ուսումնական պրակտիկաներն անցկացնում են ԵՊՀ ուսումնական բազաներում, երթուղիներ են իրականացնում ՀՀ տարբեր մարզերում, ինչպես նաև չափագրման և հատակագծման աշխատանքներ Երևան քաղաքի տարածքում: Մասնագիտական պրակտիկան ուսանողներն անցկացնում են ՀՀ կադաստրի կոմիտեի ստորաբաժանումներում և ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ում, Բարձրագույն տեխնոլոգիաների նախարարության «Գեոկոսմոս» ընկերությունում, որը հանդիսանում է ՀՀ առաջին արբանյակի օպերատորը, ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնում, ինչպես նաև մի շարք մասնավոր և միջազգային ընկերություններում:

Կրթական ծրագիրն ավարտելուց հետո շրջանավարտը ստանում է «Աշխարհագրության» բակալավրի որակավորում:

4) «Սերվիս» կրթական ծրագիր

Ժամանակակից հասարակությունների և տնտեսությունների զարգացվածության ցուցիչներից մեկը սերվիսային լինելն է, որը դառնում է պետությունների կայուն զարգացումն ապահովող առանցքային հենասյուներից մեկը: Սերվիսը բազմաշերտ, բազմաբովանդակ, համալիր երևույթ է, ծառայությունների համակարգ: Այն միտված է բարելավելու, արդյունավետ դարձնելու մարդկանց ու շրջակա բնական և հասարակական միջավայրի հետ փոխհարաբերությունների արդյունքում ի հայտ եկած նյութական և ոչ նյութական պահանջմունքների բավարարման գործընթացը:

«Սերվիս» կրթական ծրագրով դասավանդվող առարկաներն ուսանողներին հնարավորություն են տալիս ձեռք բերել գիտելիքներ սերվիսի հայեցակարգերի, պարադիգմաների, տեսությունների, սկզբունքների, նորարարությունների մասին, տիրապետել սերվիսային մարդու որակներին, ձևավորել սերվիսային հասարակություն, ուսումնասիրել սոցիալ-մշակութային բովանդակություն ունեցող ծառայությունները, ճանաչել ՀՀ ծառայությունների ոլորտը և դրա առանձնահատկությունները, տիրապետել խելացի և կայուն ծառայությունների ստեղծման հիմքերին: Այսինքն՝ կրթական ծրագիրը հնարավորություն է տալիս պատրաստել ՀՀ-ում սերվիսային համակարգ ձևավորելու մասնագետներ: Սերվիսի մասնագիտության ընկալումը և տեղայնացումը կարևոր է շուկան վերափոխելու համար, որն էլ ապահովվում է կրթական ծրագրով:

«Սերվիս» կրթական ծրագրով ձեռք բերված տեսական գիտելիքներն ամրապնդվում են ուսումնական և մասնագիտական պրակտիկաների միջոցով: Այդ նպատակով առաջին և երկրորդ կուրսերի համար ուսումնական պլանին համապատասխան կազմակերպվում են ուսումնական պրակտիկանները՝ ամռան ամիսներին, Երևանում և ՀՀ տարբեր մարզերում՝ ավտոբուսային և հետիոտն երթուղիներով: Մասնագիտական պրակտիկան կազմակերպվում է ՀՀ տարբեր պետական գերատեսչություններում ու հիմնարկ-ձեռնարկություն-ներում, այդ թվում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ՀՀ էկոնոմիկայի նախարարություններում, համայնքապետարաններում ու մարզպետարաններում և տարբեր սերվիսային ձեռնարկություններում՝ հյուրանոցներում, զբոսաշրջային օպերատորական/ գործակալական ընկե-րություններում, հեռահաղորդակցության և կապի ոլորտի կազմակերպություն-ներում, բանկերում, թանգարաններում և այլն:

«Սերվիս» կրթական ծրագիրն ավարտելուց հետո շրջանավարտը ստանում է «Սերվիսի» բակալավրի որակավորում:

Ֆակուլտետում գործող մագիստրոսական կրթական ծրագրերը:

Բակալավրիատի հիմքի վրա, ֆակուլտետում մասնագիտական և հետազոտական հմտությունները և գիտելիքները խորացնելու համար, ֆակուլտետում առաջարկվում են մագիստրոսական ներքոնշյալ կրթական ծրագրերը՝

- Աշխարհագրություն (առկա, հեռակա)
- Ֆիզիկական աշխարհագրություն (առկա)
- Հասարակական աշխարհագրություն (առկա)
- Ջրաօդերևութաբանություն (առկա)
- Երկրաֆիզիկա, ջրաերկրաբանություն և ճարտարագիտական երկրաբանություն (առկա)
- Օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանություն և հետախուզում (առկա)
- Քարտեզագրություն և կադաստրային գործ (առկա)
- Սերվիս (առկա, հեռակա)
- Կայուն զբոսաշրջություն (առկա)

Աշխատանքային հեռանկարներն ու կապն աշխատաշուկայի հետ

«Աշխարհագրություն» կրթական ծրագրիրն ավարտած շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ում և «Զվարթնոց ավիաօդերևութաբանական կենտրոն» ՓԲԸ-ում, ՀՀ տարբեր ջրօգտագործող ընկերություններում, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում, ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունում, ԿԳՄՄՆ-ում, ՀՀ վիճակագրական

կոմիտեում, մարզպետարաններում, համայնքապետարաններում, գիտա-հետազոտական տարբեր հիմնարկներում ու կազմակերպություններում, դպրոցներում:

«Երկրաբանություն» կրթական ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել՝ ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, շրջակա միջավայրի նախարարություններում, ՀՀ սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն ՊՈԱԿ-ում, ՀՀ կադաստրի կոմիտեում, մարզպետարաններում, հանքարդյունաբերական ձեռնարկություններում՝ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ, «ԶՊՄԿ» ՓԲԸ, «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ, «Թեղուտ» ՓԲԸ:

«Քարտեզագրություն և կադաստրային գործ» կրթական ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել ՀՀ կադաստրի կոմիտեի տարբեր ստորաբաժանումներում, մարզպետարաններում, համայնքային գրասենյակ-ներում, ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնում, Հայանտառ ՊՈԱԿ-ում, ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ում, ՀՀ էկոնոմիկայի, շրջակա միջավայրի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություններում, գիտահետազոտական և չափագրման կենտրոններում, «Գեոկոսմոս» ՓԲԸ-ում: Կրթական ծրագիրը սպասարկող ամբիոնը համագործակցում է նաև Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հետ:

«Սերվիս» կրթական ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել սերվիսային ձեռնարկություններում, մասնավորապես՝ զբոսաշրջային ինդուստրիայի և սոցիալ-մշակութային ծառայություններ մատուցող ձեռնարկություններում և համապատասխան պետական գերատեսչություն-ներում, ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեում, կապի և հաղորդակցության, մեծածախ և մանրածախ առևտրի ձեռնարկություններում, ֆինանսաբանկային կազմակերպություններում, կրթական հիմնարկություն-ներում՝ որպես կառավարիչ, խորհրդատու կամ սպասարկող անձնակազմ: Սերվիսի ամբիոնը համագործակցում է Գերմանիայի, Ռուսաստանի Դաշնության, Բուլղարիայի, Ֆրանսիայի բուհերի հետ, որի շնորհիվ ուսանողները կարող են տարբեր փոխանակման ծրագրերով որոշակի ժամանակահատվածում ուսանել այդ երկրներում:

Ուսանողական կյանք և ժամանց

Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում գործում են համալսարանական ուսանողական երկու ինստիտուցիոնալ կառույցները՝ Ուսանողական գիտական ընկերությունը (ՈՒԳԸ) և Ուսանողական խորհուրդը (ՈՒԽ):

ՈՒԳԸ-ն երկար տարիներ իր ակտիվ գործունեությունն է ծավալում ֆակուլտետում՝ իր աշխատանքներում ներգրավելով բազմաթիվ ուսանողների ու ասպիրանտների, ինչպես նաև ֆակուլտետի պրոֆեսարադասախոսական կազմին: Ֆակուլտետի ՈՒԳԸ--ն կազմակերպում է գիտաժողովներ և գիտական նստաշրջաններ, քննարկումներ, սեմինարներ, տեղեկատվական հանդիպումներ, ֆիլմերի և գրքերի քննարկումներ, ինչպես նաև նպաստում է ուսանողների գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հմտությունների զարգացմանը, գիտական հոդվածներ գրելուն և տպագրելուն, ակադեմիական ազնվության սկզբունքների տարածմանը:

Ուսանողական մյուս կառույցը՝ ՈՒԽ-ն, կապող օղակ է ֆակուլտետի ղեկավար կազմի և ուսանողության միջև: ՈՒԽ-ն ուսանողին իրազեկում է իր պարտականությունները և պաշտպանում ուսանողի շահերը: ՈՒԽ-ի առանցքային շեշտը միշտ դրվել է ուսանողության ներգրավման և ժամանցի կազմակերպման վրա: Ֆակուլտետում ՈՒԽ-ի միջոցով մշտապես կազմակերպվում են ինտելեկտուալ խաղեր, հանդիպումներ տարբեր ոլորտներում հաջողություն գրանցած մարդկանց հետ: ՈՒԽ-ի գործունեության կարևոր և անբաժան մասն են կազմում այցելություններ ՀՀ տարբեր մարզեր, մշակութային հուշահամալիրներ և թանգարաններ:

Ֆակուլտետում երախտագիտությամբ են հիշում Արցախյան ազատագրական պայքարում խոնարհված բոլոր շրջանավարտներին և ուսանողներին: Նրանց անունով են անվանակոչվել լսարաններ:

Ընդունելությունն ըստ կրթական ծրագրերի

Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում ընդունելությունը կկատարվի հետևյալ կրթական ծրագրերով՝

- երկրաբանություն
- աշխարհագրություն
- քարտեզագրություն և կադաստրային գործ
- սերվիս:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիների աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դիմորդների թիվն՝ ըստ կրթական ծրագրերի և տեղերի քանակի.

Կրթական ծրագիր	Ուսուցման համակարգ	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը
Աշխարհագրություն	Անվճ	14	7	7	7	4	7
	Վճ		8		8		9
Քարտեզագրություն և կադաստրային գործ	Անվճ	32	4	15	4	8	4
	Վճ		11		11		13
Սերվիս	Անվճ	130	0	138	0	124	4
	Վճ		75		75		76
Երկրաբանություն	Անվճ	13	9	5	9	4	9
	Վճ		6		6		7

Անցողիկ միավորներն ըստ վերջին 3 տարիների.

Կրթական ծրագիր	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
	Անվճ	Վճ	Անվճ	Վճ	Անվճ	Վճ
Աշխարհագրություն	21.25	19.25	20	-	24.75	-
Քարտեզագրություն և կադաստրային գործ	30.5	21.25	26	18.5	24.5	22.25
Սերվիս	-	23.75	-	25	37.25	22.5
Երկրաբանություն	22	19	20.5	-	18.75	-

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատմական ակնարկ

Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետը հիմնադրվել է 1934 թ., սակայն նրա պատմության ակունքները սկսվում են համալսարանի հիմնադրման առաջին իսկ օրից: Ֆակուլտետը Հայաստանում կենսաբանության տարբեր բնագավառների գծով որակյալ մասնագետների պատրաստման հիմնական գիտակրթական կենտրոնն է:

21-րդ դարում բնագիտության զարգացման հիմնական միտումները քննարկելիս հաճախ է խոսվում նոր հարյուրամյակում բնության մեջ եղած ամենաբարդ՝ կենսաբանական համակարգերի ուսումնասիրման նկատմամբ աճող հետաքրքրության մասին, ընդ որում՝ ոչ միայն կենսաբանների, այլև մյուս բնական գիտությունների գիտնականների կողմից: Կան բոլոր նախադրյալները, որ 21-րդ դարը լինելու է «կենսաբանության դար», հատկապես՝ մոլեկուլային կենսաբանության, որտեղ իրենց ուրույն տեղը կունենան կիրառական մաթեմատիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների մեթոդական մոտեցումները: Բնական է, որ ժամանակակից պահանջներին համապատասխանող կենսաբանության տարբեր բնագավառների բարձրորակ մասնագետների պատրաստումը ներկայիս հրատապ խնդիրներից է, որի իրականացումը, նախ և առաջ, դրված է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի առջև:

Կառուցվածքը

Ներկայումս ֆակուլտետի կառուցվածքը ներառում է 7 ամբիոն և 1 գիտահետազոտական ինստիտուտ: Ֆակուլտետում գործում են համալսարանական 2 գիտակրթական՝ կիրառական կենսաբանության գերազանցության ու մանրէաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոններ: Մասնագետների պատրաստումն իրականացվում է բուսաբանության և սնկաբանության, կենդանաբանության, մարդու ու կենդանիների մորֆոլոգիայի ու ֆիզիոլոգիայի, էկոլոգիայի և բնության պահպանության, գենետիկայի և բջջաբանության, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի, կենսաֆիզիկայի ամբիոններում:

Ֆակուլտետում գործող «Կենսաբանություն» գիտահետազոտական ինստիտուտը ներառում է նախկինում ամբիոններին կից բազային ֆինանսավորմամբ գործող գիտական լաբորատորիաները: Այն ներկայումս ունի 9 գիտական լաբորատորիաներ և 8 գիտական խմբեր, որտեղ կատարվող գիտական հետազոտությունների հիմնական ուղղությունները վերաբերում են մոլեկուլային և բջջային կենսաբանության, մոլեկուլային կենսաֆիզիկայի, թաղանթների կենսաֆիզիկայի, կենսաքիմիայի, բուսաբանության և սնկաբանության, մանրէաբանության, մանրէների և բույսերի կենսա-

տեխնոլոգիայի, մարդու մոլեկուլային գենետիկայի և բջջագենետիկայի, գենային ինժեներիայի, կենդանաբանության և հյուսվածքաբանության, մարդու և կենդանիների բարձրագույն նյարդային գործունեության ֆիզիոլոգիայի, էկոլոգիայի և բնապահպանության բնագավառներին:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Կենսաբանության ֆակուլտետի գիտակրթական պատշաճ մակարդակի, գիտական մեծ ներուժի վկայությունն է ներկայիս պատկառելի պրոֆեսորադասախոսական կազմը՝ ՀՀ ԳԱԱ 2 թղթակից անդամ, գիտությունների 18 դոկտոր և 67 թեկնածու:

Առաջարկվող կրթական ծրագրերն ու շնորհվող որակավորումները

Կենսաբանության ֆակուլտետում, ինչպես և ամբողջ համալսարանում, ուսուցումը տարվում է եռաստիճան համակարգով՝ բակալավրիատ (4 տարի ժամկետով), մագիստրատուրա (2 տարի) և ասպիրանտուրա (առկա՝ 3 տարի, հեռակա՝ 4 տարի):

Առկա ուսուցման համակարգում ֆակուլտետն ունի 296 ուսանողներ, նրանցից 210-ը՝ բակալավրիատի ուսանողներ են, 86-ը՝ մագիստրատուրայի, իսկ հեռակա ուսուցմամբ սովորողների թիվը 45 է: Ֆակուլտետում սովորում է 35 ասպիրանտ:

Բակալավրիատի համակարգում **«Կենսաբանություն»** մասնագիտությամբ գործում է **«Կենսաբանություն»** կրթական ծրագիրը, որի շրջանակում, արդեն երրորդ կուրսից, ուսանողները կարող են ավելի նեղ մասնագիտական գիտելիքներ ձեռք բերել հետևյալ 5 ուղղություններով՝ բուսաբանություն և սնկաբանություն, կենդանաբանություն, գենետիկա, մարդու ու կենդանիների մորֆոլոգիա ու ֆիզիոլոգիա, էկոլոգիա և բնության պահպանություն: Ըստ ցանկության, ուսանողները կարող են մասնակցել մանկավարժի կրթաբլոկի դասընթացներին և ստանալ նաև մանկավարժի որակավորում:

Բուսաբանության և սնկաբանության ամբիոնում պատրաստվում են մասնագետներ, որոնք տիրապետում են սնկերի, ստորակարգ և բարձրակարգ բույսերի ձևաբանությանը, նույնականացման հմտություններին, որը կարող են կիրառել բուսաբանական և ֆիտոպաթոլոգիական գիտական հետազոտություններում, սնկաթունաբանական ու սնկերի միջոցով օրգանական և անօրգանական նյութերի ու մթերքների քայքայման ուսումնասիրության ոլորտում, ինչպես նաև էկոլոգիական հարմարողականության վերաբերյալ գիտելիքներին: Շրջանավարտները տիրապետում են սնկաբանական, մանրէակենսաբանական, թունաբանական փորձաքննության և սննդամթերքի ֆիզիկաքիմիական ցուցանիշները որոշելու մեթոդներին: Ամբիոնը հանրապետությունում սնկաբանական հետազոտությունների միակ կենտրոնն է:

Կենդանաբանության ամբիոնում պատրաստվում են բարձրորակ

մասնագետներ, որոնք տիրապետում են կենդանիների կարգաբանության, էկոլոգաֆաունիստական ուսումնասիրությունների, տեսակների որոշման, պահպանության, վերարտադրության և կլիմայավարժեցման, հյուսվածքաբանական, իմունոհիստոքիմիական, ձևաչափական մեթոդներին և կարող են իրենց գիտահետազոտական աշխատանքներում կիրառել հարակից գիտությունների նորագույն մեթոդները: Ամբիոնում կատարվում են աշխատանքներ Հայաստանում տարածված կուսածին սողունների ծագման, պոպուլյացիաներում տեսակառաջացման հարցերի, Հայաստանի սեյսմիկ ակտիվ գոտիներում տարածված ողնաշարավորների պոպուլյացիաներում ընթացող միկրոէվոլյուցիայի պրոցեսների, ողնաշարավորների ներքին օրգանների ռեգեներացման և դրա կարգավորման ուսումնասիրությունների ուղղությամբ:

Գենետիկայի և բջջաբանության ամբիոնում պատրաստվում են մասնագետներ մոլեկուլային գենետիկայի, գենոմիկայի ու մոլեկուլային բժշկության, մուտագենեզի սկզբունքների, գենետիկական ճարտարագիտության, բջջագենետիկայի, բջջային կուլտուրաների կիրառման, գենետիկական վերլուծության, պոպուլյացիոն գենետիկայի, մարդաբանության, ֆարմակոգենետիկայի, բժշկական գենետիկայի, էկոլոգիական գենետիկայի ոլորտներում: Ամբիոնում պատրաստվող մասնագետները հաջողությամբ կարող են աշխատել գենոմիկայի, մոլեկուլային գենետիկայի, գենետիկական ճարտարագիտության, բջջագենետիկայի և գենետիկական թունաբանության բնագավառներում:

Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնում պատրաստվում են մասնագետներ շրջակա միջավայրի վրա մարդու ազդեցության հետևանքների գնահատման հիմնական մոտեցումներին, կենսաբազմազանության ուսումնասիրության ու պահպանության ոլորտներում: Ամբիոնում կատարվում են հողային ու ջրային էկոհամակարգերի վիճակի և կենսաբազմազանության գենետիկական ուսումնասիրություններ՝ ուղղված դրանց պահպանության ու կայուն օգտագործմանը: Ամբիոնում կատարվում են բազմաթիվ գիտական ու կրթական դրամաշնորհային ծրագրեր, որոնց ակտիվորեն մասնակցում են ուսանողները:

Մարդու ու կենդանիների մորֆոլոգիայի ու ֆիզիոլոգիայի ամբիոնում պատրաստվում են մասնագետներ, որոնք տիրապետում են փորձարարական հետազոտությունների համակարգչային գրանցման և վերլուծման ծրագրերին, հաջողությամբ կարող են աշխատել ֆիզիոլոգիայի խնդիրներով զբաղվող գիտահետազոտական ինստիտուտների լաբորատորիաներում ու ախտորոշիչ կենտրոններում: Ամբիոնում ուսումնասիրվում են էկոլոգիական ու տեխնածին գործոնների ազդեցության նեյրոֆիզիոլոգիական մեխանիզմները և օրգանիզմի ռեզիստենտությունը բարձրացնող միջոցների շտկող ազդեցությունը ֆիզիոլոգիական ֆունկցիաների վրա: Ուսումնասիրվում է նաև ուսումնական

տարբեր համակարգերում սովորողների հոգեմարմնաֆիզիոլոգիական ցուցանիշների փոփոխությունների բնույթը՝ ուսումնական ծանրաբեռնվածության պայմաններում:

«Կենսաքիմիա» մասնագիտությամբ գործում է **«Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա»** կրթական ծրագիրը, որի շրջանակներում ուսանողները հնարավորություն ունեն յուրացնելու կենսաքիմիայի հիմունքների և կենսաքիմիական գործընթացների առանձնահատկությունները: Տեսական գիտելիքներից բացի, նրանք ձեռք են բերում կենսաքիմիական անալիզի իրականացման հիմնական սկզբունքները, մասնավորապես, յուրացնում են սպեկտրաֆոտոմետրիայի, ֆլյուորեսցենտային անալիզի, էլեկտրոֆորեզի, իոնափոխանակային քրոմատոգրաֆիայի, ժել-ֆիլտրացիայի եղանակները: Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնում պատրաստվում են մասնագետներ, որոնք տիրապետում են կենսաբանական օբյեկտների ուսումնասիրման կենսաքիմիական, իմունոհիստոքիմիական, օրգանիզմի հիմնական համակարգերի վիճակի գնահատման այլ ֆունկցիոնալ ու ախտորոշիչ մեթոդներին, ինչպես նաև փորձարարական աշխատանքների մեթոդներին: Ամբիոնում ուսուցումը տարվում է նաև մանրէաբանության, բույսերի և մանրէների կենսատեխնոլոգիայի ուղղություններով: Հետազոտվում են արդի գիտական այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են մանրէների աճի կարգավորումը ու դրանց կենսազանգվածի արդյունավետ ստացումը, պրոկարիոտների կենսաթաղանթների հատկություններն ու ակտիվությունը, բակտերիաներում ջրածնի արտադրության ուղիները ու դրանց կառավարումը: Ուսումնասիրվում են Հայաստանի տաք աղբյուրների մանրէները, գնահատվում է դրանց կենսատեխնոլոգիական ներուժը, ավանդական կաթնամթերքի մանրէների բազմազանությունը, բացահայտվում են նոր հակամանրէային հատկություններով շտամներ: Շրջանավարտները կարող են աշխատել սննդի արտադրություններում, բնապահպանական ու բժշկական մշտադիտարկման ծառայություններում, ագրարային կազմակերպություններում, գիտական ու կրթական կենտրոններում: Այս կրթական ծրագրում ևս, ուսանողները կարող են մասնակցել մանկավարժի կրթաբլոկի դասընթացներին և ստանալ մանկավարժի որակավորում:

Բակալավրիատի համակարգում ուսանողներին տրվող տեսական գիտելիքները ամրապնդվում են Ծաղկաձորում ու Հանքավանի Մարմարիկ ուսանողական հանգրվանում անցկացվող ուսումնական, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական ինստիտուտներում և տարբեր կազմակերպություններում իրականացվող մասնագիտական պրակտիկաների ընթացքում: Բակալավրիատի մանկավարժի կրթաբլոկը ընտրած ուսանողների համար 3-րդ և 4-րդ կուրսերում կազմակերպվում է մանկավարժական պրակտիկա Երևան քաղաքի

դպրոցներում:

Մագիստրատուրայի համակարգում ֆակուլտետը մասնագետներ է պատրաստում ութ մասնագիտացումների գծով՝ բժշկական սնկաբանություն և կիրառական բուսաբանություն, կենդանաբանություն և մակաբուծաբանություն, գենոմիկա և բժշկական բջջագենետիկա, հիմնարար ու կիրառական ֆիզիոլոգիա, էկոլոգիա և կենսառեսուրսների կառավարում, կիրառական մանրէաբանություն, ընդհանուր և բժշկական կենսաքիմիա, կենսաֆիզիկա:

Ֆակուլտետի շրջանավարտների աշխատանքային ոլորտը բազմաճյուղ է, ուսումնական և գիտական հիմնարկներից (բուհեր, հանրակրթական դպրոցներ, գիտահետազոտական ինստիտուտներ) բացի կենսաբանների պահանջն օրեցօր աճում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման համակարգի մարմիններում, բնապահպանության, սննդարդյունաբերության, կենսատեխնոլոգիայի տարբեր բնագավառներում:

Աշխատանքային հեռանկարներն ու կապը աշխատաշուկայի հետ

Ֆակուլտետի շրջանավարտներից շատերը միջազգային ճանաչում ունեցող գիտնականներ են, ովքեր հաջողությամբ աշխատել և աշխատում են տարբեր արտասահմանյան երկրների գիտական կենտրոններում: Ֆակուլտետի ճանաչված մասնագետները համագործակցում են արտասահմանյան մի շարք երկրների (ԱՄՆ, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա, Ռուսաստանի Դաշնություն և այլն) գիտական կենտրոնների մասնագետների հետ և բազմիցս հանդես են գալիս դասախոսություններով, գիտական զեկույցներով ու համատեղ ծրագրերով:

Ուսանողական կյանք և ժամանց

Ֆակուլտետի ուսանողներն ակտիվորեն մասնակցում են ինչպես ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության, այնպես էլ ԵՊՀ մշակութային կենտրոնի կողմից կազմակերպվող բազմաբնույթ միջոցառումներին, ինչը դարձնում է ուսանողական կյանքն ավելի հետաքրքիր ու բովանդակալից:

Ընդունելությունն ըստ կրթական ծրագրերի

Կենսաբանության ֆակուլտետի բակալավրիատում ընդունելությունը կատարվում է հետևյալ կրթական ծրագրերով՝

- կենսաբանություն
- կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիների կենսաբանության ֆակուլտետի դիմորդների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և տեղերի քանակի.

Կրթական ծրագիր	Ուսուցման համակարգ	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը
Կենսաբանություն	Անվճ	30	20	32	20	16	12
	Վճ		10		10		24
Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա	Անվճ	40	20	35	20	30	13
	Վճ		10		10		24
Կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա	Անվճ	-	-	-	-	1	9
	Վճ		-		-		6

Անցողիկ միավորներն ըստ վերջին 3 տարիների.

Կրթական ծրագիր	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
	Անվճ	Վճ	Անվճ	Վճ	Անվճ	Վճ
Կենսաբանություն	15.5	-	16.75	16.25	20.75	-
Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա	22	17	21.5	16	26.5	18.5
Կենսաֆիզիկա և կենսաինֆորմատիկա	-	-	-	-	-	-

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատմական ակնարկ:

Պատմության ֆակուլտետը գործում է ԵՊՀ հիմնադրման օրվանից՝ 1919 թ-ից: Ֆակուլտետը սկզբում գործել է ինքնուրույն միավոր, ապա դարձել է պատմալեզվագրական ֆակուլտետի բաժին, հասարակագիտական բաժանմունքի ենթաբաժին, այնուհետև՝ մանկավարժության, արևելագիտության ու պատմագրության ֆակուլտետների բաժին:

Որպես ինքնուրույն միավոր վերակազմավորվել է 1936-1937 ուստարում: Պատմության ենթաբաժնի, բաժնի, ապա ֆակուլտետի դեկաններ են եղել՝ Հ. Մանանդյանը, Հ. Զորյանը, Ս. Պողոսյանը, Ն. Պողոսյանը, Բ. Հարությունյանը, Մ. Ներսիսյանը, Հ. Ժամկոչյանը, Գ. Շառոյանը, Հ. Պետրոսյանը, Ռ. Մովսիսյանը, Հ. Ղազարյանը, Մ. Հովհաննիսյանը, Բ. Հարությունյանը, Հ. Ավետիսյանը, Է. Մինասյանը: 2023 թ-ից ֆակուլտետի աշխատանքները ղեկավարում է դոցենտ Մ. Գաբրիելյանը:

Տարբեր տարիների ընթացքում ֆակուլտետում դասավանդել են ականավոր գիտնականներ, ակադեմիկոսներ՝ Հ. Մանանդյանը, Բ. Պիոտրովսկին, Մ. Ներսիսյանը, Ա. Հովհաննիսյանը, Գ. Սարգսյանը, Գ. Ղարիբջանյանը, Բ. Առաքելյանը, Հ. Ավետիսյանը, Լ. Խուրշուդյանը, Վլ. Բարխուդարյանը, Հ. Սիմոնյանը, Ա. Մելքոնյանը, թղթակից անդամներ՝ Մ. Հասրաթյանը, Վ. Ռշտունին, Ս. Հարությունյանը, Ա. Քալանթարյանը, Լ. Աբրահամյանը, Պ. Ավետիսյանը, պրոֆեսորներ՝ Լեոն, Ստ. Լիսիցյանը, Կ. Ղաֆադարյանը, Խ. Սամվելյանը, Գ. Միքայելյանը, Ա. Աբրահամյանը, Ա. Քալանթարը, Բ. Հարությունյանը, Պ. Հովհաննիսյանը, Ա. Մովսիսյանը, Ի. Ղարիբյանը, Հ. Մարգարյանը և շատ ուրիշներ:

Կառուցվածքը: Տարբեր տարիներ ֆակուլտետի կազմում գործել են փիլիսոփայության, միջազգային հարաբերությունների տեսության և պատմության բաժինները:

Ֆակուլտետն ունի 6 ամբիոն՝ հայոց պատմության, համաշխարհային պատմության, Հայաստանի հարակից երկրների պատմության, հնագիտության և ազգագրության, հայ արվեստի պատմության և տեսության, մշակութաբանության:

Ֆակուլտետում իրականացվում է բակալավրի 6 կրթական ծրագիր՝ պատմություն (առկա և հեռակա), արվեստաբանություն, մշակութաբանություն, կովկասագիտություն, հնագիտություն և ազգագրություն:

Հիմնադրման օրվանից մինչ օրս ֆակուլտետը տվել է ավելի քան 10000 շրջանավարտ, ովքեր աշխատում են գիտության, մանկավարժության, պետական, քաղաքական, հասարակական կյանքի և այլ բնագավառներում:

Ֆակուլտետի առկա համակարգում սովորում է 525 ուսանող, որոնցից 397-ը՝ բակալավրիատում, իսկ 128-ը՝ մագիստրատուրայում: Հեռակա ուսուցման ուսանողները 77-ն են, որոնցից 72-ը՝ բակալավրիատում, իսկ 5-ը՝ մագիստրատուրայում:

Հայոց պատմության ամբիոն: Ֆակուլտետի հիմնադիր ամբիոններից է: Ամբիոնի առաջին վարիչն է եղել ականավոր հայագետ, համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Հ. Մանանդյանը: Այնուհետև ամբիոնի վարիչ են եղել նշանավոր պատմաբաններ՝ Հ. Զորյանը, Ս. Պողոսյանը, Հ. Ժամկոչյանը, Ա. Աբրահամյանը, Մ. Ներսիսյանը, Վ. Պարսամյանը, Լ. Խուրշուդյանը, Հր. Սիմոնյանը, Բ. Հարությունյանը, Պ. Հովհաննիսյանը, Ա. Մովսիսյանը:

Ներկայումս ամբիոնում սովորում են շուրջ մեկ տասնյակ ասպիրանտներ և հայցորդներ:

«Հայոց պատմության հիմնահարցեր» առարկան դասավանդվում է համալսարանի բոլոր ֆակուլտետներում, իսկ ֆակուլտետում, բացի այդ առարկայից, դասավանդվում են նաև հայոց պատմության աղբյուրագիտություն, պատմագրություն, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Հայաստանի ռազմարվեստի պատմություն, հին, հնագույն, միջնադարի, նոր և նորագույն շրջանների պատմությունները և բազմաթիվ այլ մասնագիտական առարկաներ:

Ամբիոնը նաև նշանակալի դերակատարություն ունի պատմագիտության ամենատարբեր բնագավառներին վերաբերող իր ուսումնասիրություններով: Ամբիոնի աշխատակիցների կողմից լույս է ընծայվել ավելի քան 1200 մենագրություն՝ նվիրված հայոց պատմության բոլոր պատմաշրջաններին և հիմնախնդիրներին: Մասնավորապես նշանակալի են վերջին շրջանում հայոց ազատամարտի, Հայկական հարցի, ազգային գաղափարախոսության, Արցախի հիմնահարցի, Հայաստանի հանրապետությունների պատմության ուսումնասի-րության բնագավառներում կատարված աշխատանքները:

2022 թ. հայոց պատմության ամբիոնին է միացվել նաև սփյուռքագիտության ամբիոնը, որը գործում էր 2008 թ-ից: Միացումից հետո հայոց պատմության ամբիոնի կարևորագույն խնդիրներից է դարձել նաև սփյուռքի պատմության ուսումնասիրությունը: Այս ուղղությամբ աշխատանքները խարսխված են այնպիսի սկզբունքների վրա, որոնք կոչված են մասնագիտության գործնական արդիականությունը հարստացնելու նաև գիտահետազոտական բարձր որակներով: Այդ սկզբունքներն են՝ միջգիտակարգային մոտեցումը, մատուցվող գիտելիքների կիրառականությունը, մասնագիտական որակների հեռանկարայ-նությունը, գիտահետազոտական հմտությունների զարգացումը:

Ամբիոնի վարիչն է պ. գ. դ., պրոֆեսոր Էդիկ Մինասյանը:

Համաշխարհային պատմության ամբիոն: Հիմնվել է 1938 թ. իբրև ընդհանուր պատմության ամբիոն, 2005 թ. վերանվանվել է համաշխարհային պատմության

ամբիոն: Տարբեր տարիներին ամբիոնում աշխատել են նշանավոր գիտնականներ՝ Ա.Հովհաննիսյանը, Ստ.Ներսիսյանը, Գ.Միքայելյանը, Ջ.Կիրակոսյանը, Վ.Դիլոյանը, Գ. Հարությունյանը և այլք:

Ամբիոնում դասավանդվում են Հին Արևելքի պատմության, Միջին դարերի, ուշ արդիական և ժամանակակից պատմության ամենատարբեր հիմնահարցերի վերաբերող դասընթացներ, որոնց ծրագրերը մշակվել և հրատարակվել են արդի բուհական մանկավարժության սկզբունքների համաձայն: Տարիներ ի վեր ամբիոնի գիտահետազոտական աշխատանքն ընթացել է մի քանի հիմնական ուղղություններով. «Մինչարդյունաբերական, արդյունաբերական և հետարդյունաբերական քաղաքակրթությունների հիմնահարցեր», «Հայաստանը Արևելք-Արևմուտք քաղաքակրթական առնչությունների ծիրում», «Համաշխարհայնացումը հայոց պատմության համատեքստում», «Պատմագիտական միտք և հանրութային կյանք» և այլն:

Ավելի քան 85 տարիների ընթացքում ամբիոնի գիտնականները հրատարակել են 70 մենագրություն և 1000-ից ավելի հոդվածներ: Վերջին 20 տարիներին ամբիոնը կազմակերպել է մի շարք գիտաժողովներ համաշխարհային պատմության հանգուցախնդիրների մասին, հրատարակել է գիտական աշխատությունների ժողովածուներ՝ «Պատմության Հարցեր»՝ 6 հատոր, «Ինքնության հարցեր» և «Պատմություն և կրթություն»՝ 2 հատոր (4 համար), մասնակցել է հանրակրթական դպրոցի համաշխարհային պատմության (3 հատոր) և հայոց պատմության դասագրքերի (2 հատոր) ստեղծմանը: Վերջին 40 տարիների ընթացքում ունեցել է 34 ասպիրանտ ու հայցորդ, որոնք այժմ աշխատում են տարբեր ոլորտներում՝ գիտության և կրթության ոլորտի մասնագետներ, նախարարներ, պատգամավորներ, դեսպաններ, քաղաքական գործիչներ:

Ամբիոնի վարիչն է պ. գ. դ., պրոֆեսոր Հակոբ Հարությունյանը:

Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոն: Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնը ստեղծվել է 1998 թ., ավելի վաղ համալսարանում գործող ԽՍՀՄ և ԽՄԿԿ պատմության ամբիոնների հիմքի վրա: Այսպիսով՝ ամբիոնը ներկայիս անվանումով ընդամենը շուրջ երկու տասնամյակի պատմություն ունի, սակայն նրա ակունքներն ավելի խորն են և հասնում են մինչև ԵՊՀ հիմնադրման ժամանակները: Տասնամյակներ շարունակ ամբիոնի դասախոսները վարել են ԽՍՀՄ (այժմ՝ Ռուսաստանի) պատմության տարբեր փուլերը ներկայացնող ընդհանուր և նեղ մասնագիտական դասընթացներ: Վերանվանումից հետո ամբիոնը ղեկավարել են պրոֆ. Բ. Հարությունյանը, Հ. Աբրահամյանը և Հ. Մարգարյանը:

Ելնելով ժամանակի պահանջներից՝ ամբիոնում 2009 թ. մշակվեց «Կովկասագիտություն» մասնագիտությամբ մագիստրոսական ծրագիր:

Կովկասագիտության գծով կատարվող աշխատանքները նոր աստիճանի բարձրացվեցին 2011 թ., երբ ֆակուլտետի կազմում բացվեց «Կովկասագիտություն» բակալավրի կրթական ծրագիր, որի մշակման աշխատանքներին մասնակցել են ոչ միայն ամբիոնի դասախոսները, այլև ՀՀ ԳԱԱ առաջատար մասնագետները: Ներկայումս բաժնի ուսանողները հնարավորություն ունեն ուսումնասիրել Վրաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի, Իրանի, Թուրքիայի, հնագիտությունը և ազգագրությունը, ինչպես նաև յուրացնել վրացերեն ու ադրբեջաներեն լեզուները:

Ամբիոնի վարիչն է պ. գ. թ., դոցենտ Էդուարդ Զոհրաբյանը:

Հնագիտության և ազգագրության ամբիոն: ԵՊՀ կազմում 1921 թ. նշանավոր հայագետ, հնագետ Ա. Քալանթարի նախաձեռնությամբ հիմնվում է Հին Արևելքի պատմության և հնագիտության ամբիոնը: Ամբիոնի կյանքում կարևոր դեր խաղաց ուսումնական գործընթացին այնպիսի խոշոր գիտնականների ներգրավվածությունը, ինչպիսիք են Բ. Առաքելյանը, Կ. Ղաֆադարյանը, Բ. Պիոտրովսկին, Գ. Տիրացյանը, Դ. Վարդումյանը, Կ. Սեղբոսյանը: 1975 թ. ամբիոնը վերանվանվում է Հնագիտության և ազգագրության ամբիոն, որը մինչև 1982 թ. ղեկավարում է հնագետ, պրոֆեսոր Թ. Խաչատրյանը: 1983 թ. ամբիոնը գլխավորեց պրոֆեսոր Ս. Եսայանը: 1989 թ. ստեղծվեց ազգագրության ամբիոն, որի ղեկավարությունը ստանձնեց Յու. Մկրտումյանը: 1994-2000 թթ. ամբիոնը ղեկավարում էր Հր. Խառատյանը, մինչև 2004 թ.՝ կրկին Յու. Մկրտումյանը: 2004 թ. հնագիտության և ազգագրության ամբիոնները նորից վերամիավորվեցին մեկ ամբիոնի կազմում, որի վարիչ դարձավ 2001 թ-ից հնագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ի. Ղարիբյանը: 2009 թ. հնագիտություն և ազգագրության ամբիոնի վարիչն է պրոֆ. Հ. Ավետիսյանը: Ամբիոնի աշխատակիցները արդյունավետ գիտական և դաշտային հետազոտություններ են իրականացնում, ինչպես հանրապետությունում, այնպես էլ արտասահմանում, պեղվել են քարի դարից մինչև միջնադար բազմաթիվ նշանավոր հուշարձաններ, իրականացվել են տասնյակ դաշտային ազգագրական հետազոտություններ ՀՀ և ԱՀ տարածքներում: 2019-2020 ուստարվանից ամբիոնի աշխատակիցների ջանքերով բացվել է «Հնագիտություն և ազգագրություն» բակալավրիատի ծրագիրը:

Ամբիոնի վարիչն է պ. գ. դ., պրոֆեսոր Հայկ Ավետիսյանը:

Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոն: ԵՊՀ հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնը ստեղծվել է 1996 թ.: Իր հիմնադրման օրից ամբիոնը պատասխանատու է նույն ժամանակ ստեղծված «Արվեստաբանություն» բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի համար: Դասախոսների թվում են ոչ միայն Հայաստանի, այլ նաև ռուսական և այլ ուսումնական կենտրոնների շրջանավարտներ:

Հայ արվեստի պատմության ամբիոնն արվեստաբանության բաժնի ուսանողների համար կազմակերպում է հայ արվեստի պատմություն, ճարտարապետություն, կիրառական արվեստ, թանգարանագիտություն, երաժշտության, կինոյի պատմություն, արվեստի բիզնես և մենեջմենթ, համաշխարհային արվեստի պատմություն առարկաների դասավանդումը: Ամբիոնը հավասարապես կարևորում է թե՛ հայ, թե՛ համաշխարհային արվեստի պատմության առարկաների դասավանդումը: Ամբիոնի լավագույն ուսանողները հնարավորություն են ստացել իրենց որակավորումը բարձրացնել Իտալիայի (Վենետիկ, Ֆլորենցիա), Ֆրանսիայի (Մոնպելիե, Էքս ան Պրովանս), Հունգարիայի (Բուդապեշտ), Բելգիայի (Լուվեն լա Նով), Ռուսաստանի (Սանկտ Պետերբուրգ) համալսարաններում և գիտահետազոտական հաստատություն-ներում:

Ամբիոնի դասախոսները նաև առանձին դասախոսություններ են կարդում տարբեր երկրներից եկած (Չինաստան, Իտալիա, Իսպանիա) ուսանողների համար:

Ամբիոնի վարիչն է արվ. թ., դոցենտ Սաթենիկ Վարդանյանը:

Մշակութաբանության ամբիոն: Այս ամբիոնը հիմնադրվել է 2007 թ: «Մշակութաբանություն» բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի կազմողն ու դասընթացների իրականացման պատասխանատուն է, ինչպես նաև համահամալսարանական «Մշակութաբանություն» առարկայի դասավանդումն իրականացնողը:

Մշակութաբանության բաժնում դասավանդվում են մշակույթի պատմությանը, տեսությանը, կիրառական մշակութաբանական հետազոտություններին վերաբերող այնպիսի հատուկ և մասնագիտական կրթական դասընթացներ, ինչպես մշակութաբանության ներածություն, մշակույթը հումանիտար գիտությունների համակարգում, մշակութային մարդաբանություն, մշակույթի փիլիսոփայություն, մշակույթի սոցիոլոգիա, հնագիտություն, ազգագրություն, էթնոսոցիոլոգիա, քաղաքական մշակութա-բանություն, մշակութային փոխառնչություններ, մշակույթի մասին տեսությունների պատմություն, մասնագիտության արդի խնդիրներ և մշակույթը հետազոտող մի շարք այլ գիտական համակարգեր: Մշակույթի պատմության համալիրը ներառում է երկու բլոկ՝ Համաշխարհային մշակույթի պատմություն և Հայ մշակույթի պատմություն:

Ամբիոնի վարիչն է պ. գ. դ., պրոֆ. Համլետ Պետրոսյանը:

Պրոֆեսորադասախոսական կազմը:

Պատմության ֆակուլտետում ներկայումս դասավանդում են գիտությունների 15 դոկտոր, պրոֆեսոր, 39 դոցենտ, 10 ասիստենտ և 30 դասախոս: Վերջիններս իրենց ոլորտի լավագույն ներկայացուցիչներն են և մեծ համբավ են վայելում ՀՀ-

ում և նրա սահմաններից դուրս: Ֆակուլտետում դասավանդում են ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ Պ. Ավետիսյանը և Լ. Աբրահամյանը: Ֆակուլտետի ամբիոնները և բակալավրի ու մագիստրոսի կրթական ծրագրերը ղեկավարում են՝ Է. Մինասյանը, Հ. Ավետիսյանը, Հ. Պետրոսյանը, Լ. Չուգասզյանը, Հ. Հարությունյանը, Ա. Եղիազարյանը, Ս. Վարդանյանը, Վ. Հակոբյանը, Է. Զոհրաբյանը, Հ. Մխոյանը, Ա. Հովհաննիսյանը, Ս. Հովհաննիսյանը, Ա. Գնունին, Հ. Մուրադյանը և Լ. Մելիքյանը:

Առաջարկվող կրթական ծրագրերն ու շնորհվող որակավորումները

Բակալավրիատ

Պատմություն: «Պատմություն» կրթական ծրագրի նպատակը «Պատմություն» մասնագիտությամբ հիմնարար գիտելիքներ, տեսական բարձր պատրաստվածություն, գիտահետազոտական աշխատանք կատարելու կարողություն և հմտություններ ունեցող մասնագետներ պատրաստելն է:

Կրթական ծրագիրը արդիական և հեռանկարային է: Առաջարկվող ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել ՀՀ ԳԱԱ պատմության, արևելագիտության, հնագիտության և ազգագրության և այլ ինստիտուտներում, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում, այլ հետազոտական հաստատություններում: Սույն ծրագրի շրջանավարտները պահանջված են Հայաստանի ազգային արխիվում, տուրիստական գործակալություններում ու թանգարաններում, իսկ լրացուցիչ մանկավարժի որակավորում ձեռք բերելու դեպքում նաև դպրոցներում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում: «Պատմություն» ծրագրի շրջանակներում ձեռք բերված գիտելիքների ու հմտությունների շնորհիվ տասնամյակներ շարունակ և այսօր պատմաբանները բարձր դիրքեր են զբաղեցնում քաղաքական դաշտում, պետական կառավարման տարբեր օղակներում (ՀՀ Կառավարություն, նախարարություններ, Ազգային ժողով, Սփյուռքի հանձնակատարի գրասենյակ, ԱԱԾ, մարզպետարաններ, քաղաքապետարաններ, համայնքապետարաններ և այլն): Բակալավրիատի կրթական ծրագրի շրջանավարտները ստանում են պատմության բակալավրի որակավորում: Մանկավարժի լրացուցիչ որակավորման ծրագիրը ընտրած ուսանողները ստանում են նաև պատմության ուսուցչի որակավորում:

Արվեստաբանություն: Կրթական ծրագրի նպատակն է պատրաստել հիմնարար գիտելիքներ ունեցող ուսանողներ, ուսանողների մեջ զարգացնել արվեստի քննադատական ըմբռնումը, ինչպես նաև ունենալ տեսական բարձր պատրաստվածություն ունեցող, գիտահետազոտական, մանկավարժական, վարչական և հասարակական աշխատանք կատարելու կարողություն և հմտություններ ունեցող մասնագետներ: Առաջարկվող ծրագրի շրջանավարտները ուսումնառության ավարտից հետո կարող են կրթությունը

շարունակել հայաստանյան կամ արտասահմանյան բուհերում: Ծրագիրը արդիական և հեռանկարային է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, զբոսաշրջային գործակալություններում, թանգարան-ներում, մեդիա ոլորտում աշխատելիս: Արվեստաբանության բակալավրիատի կրթական ծրագրի շրջանավարտները ստանում են արվեստաբանության բակալավրի որակավորում:

Մշակութաբանություն: Կրթական ծրագրի նպատակն է պատրաստել «Մշակութաբանություն» մասնագիտությամբ հիմնարար գիտելիքներ, տեսական բարձր պատրաստվածություն ունեցող, գիտահետազոտական ու մանկավարժական աշխատանք կատարելու ունակություն և հմտություններ ունեցող, մշակույթի և մշակութային քաղաքականության ասպարեզում վարչաքաղաքական գործունեության իրականացմանը կողմնորոշված մասնագետներ: Մշակութաբան ուսանողների մոտ ձևավորվում են գիտելիքներ համաշխարհային, տարածաշրջանային և հայ մշակույթների պատմության, Հայաստանին հարևան երկրներում ընթացող ժամանակակից մշակութային գործընթացների վերաբերյալ, ինչը հնարավորություն է տալիս հասկանալ և վերլուծել հայ մշակույթի պատմության և ժամանակակից հայ մշակույթի զարգացման միտումները: Մշակութաբանության բակալավրիատի կրթական ծրագրի շրջանավարտները ստանում են մշակութաբանության բակալավրի որակավորում, իսկ այն ուսանողները, ովքեր ընտրում են մանկավարժի լրացուցիչ որակավորման ծրագիրը, ստանում են նաև ուսուցչի որակավորում:

Կովկասագիտություն: Կրթական ծրագրի նպատակն է պատրաստել «Կովկասագիտություն» մասնագիտությամբ բազային կրթություն ստացած, մեթոդաբանական լիարժեք կարողություններ, հիմնարար գիտելիքներ, տեսական բարձր պատրաստվածություն, գիտահետազոտական ու մանկավարժական աշխատանք կատարելու հմտություններ ունեցող, ինչպես նաև վարչական և հասարակական-քաղաքական գործունեությանը կողմնորոշված մասնագետներ: Ուսանողներն ուսումնառության ընթացքում յուրացնում են վրացերեն և ադրբեջաներեն լեզուները, ինչը լուրջ առավելություն է՝ հաշվի առնելով ներկայիս աշխարհաքաղաքական զարգացումները: Կրթական ծրագիրը խիստ արդիական և հեռանկարային է գիտահետազոտական ինստիտուտներում, վերլուծական կենտրոններում, պետական կառավարման օղակներում, դիվանագիտական ներկայացուցչություններում աշխատանքի անցնելու համար: «Կովկասագիտության» բակալավրիատի կրթական ծրագրի շրջանավատները ստանում են կովկասագիտության բակալավրի աստիճան:

Հնագիտություն և ազգագրություն: Կրթական ծրագրի նպատակն է պատրաստել մասնագետներ, որոնք ունեն հիմնարար գիտելիքներ հնագիտության և ազգագրության (մշակութային մարդաբանության),

վերջիններիս տեսության և մեթոդաբանության, հետազոտության ժամանակակից մեթոդների ու գործիքների վերաբերյալ: Ծրագրի շրջանավարտները մրցունակ են հայաստանյան և միջազգային կրթական և գիտական շուկաներում, ունակ են կատարելու գիտահետազոտական և գիտապրակտիկ աշխատանքներ: Ծրագիրը պահանջարկված է նաև բիզնես ոլորտում, հատկապես այնպիսի արագ զարգացող ուղղություններում, ինչպիսիք են հնագիտական, կրոնական, գաստրո և գյուղական զբոսաշրջությունը: Մասնագիտացումը խիստ արդիական և հեռանկարային է միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում, զբոսաշրջության ոլորտում, ակադեմիական ինստիտուտներում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատանքի անցնելու համար: «Հնագիտություն և ազգագրություն» բակալավրի կրթական ծրագրի շրջանավատները ստանում են պատմության բակալավրի աստիճան:

Մագիստրատուրա

Հայոց պատմություն: Բազմաբովանդակ է «Հայոց պատմություն» մագիստրոսի կրթական ծրագիրը: Դրանում ներառված են հայոց հնագույն և հին, միջին, նոր և նորագույն շրջանների պատմության առանցքային, պատմագիտության վերջին տասնամյակների ձեռքբերումների լույսով նորովի հետազոտվող հիմնախնդիրները: Հայոց հին և միջնադարյան պետականության հիմնախնդրի կողքին կարևորություն է տրվում նույն շրջանի Հայաստանի պատմական աշխարհագրության ու ժողովրդագրության կնճռոտ և գիտական ու քաղաքական մեծ հնչեղություն ունեցող հարցերին, նախամաշտոցյան հայ գրի, հայ միջնադարյան իրավունքի, Կիլիկյան Հայաստանի պատմության հիմնախնդիրներին: Նոր և նորագույն պատմության հիմնախնդիրներից նախապատվություն տրվում է հայկական ինքնության, հայոց նոր շրջանի ազատամարտի, հայոց Ցեղասպանության, Հայկական հարցի, հայ-ռուսական, հայ-թուրքական հարաբերությունների, նորագույն պետականության (Առաջին ու Երրորդ հանրապետություններ, Խորհրդային Հայաստան) և Արցախյան այսօր էլ խիստ արդիական հիմնախնդիրներին: Ծրագրի նպատակը հայոց պատմության, նրա սկզբնաղբյուրների ու պատմագրության վերաբերյալ հիմնարար գիտելիքներ, տեսական բարձր պատրաստություն ունեցող և գիտահետազոտական աշխատանք կատարելու ունակ, ինչպես նաև վարչաքաղաքական գործունեությանը կողմնորոշված մասնագետներ պատրաստելն է: Հայոց պատմություն մագիստրոսական ծրագրի շրջանավարտներն ստանում են «Հայոց պատմության» մագիստրոսի որակավորում:

Համաշխարհային պատմություն: Մագիստրոսական ծրագիրը մշակվել է տասնամյակների ընթացքում և ունի տեսական իմացաբանական հենք, որը, համադրվելով կոնկրետ պատմագիտական հղացքների հետ, տալիս է

համաշխարհային պատմության ընդգրկուն պատկերն ըստ հիմնախնդիրների: Ծրագրի հիմքում պատմության քաղաքակրթական ընկալումն է: Ծրագիրը նպատակ ունի ուսանողներին տրամադրելու համաշխարհային պատմության ու տեսության, առանձին դարաշրջանների վերաբերյալ խորը և բազմակողմանի գիտելիքներ՝ ներկայացնելու և բացատրելու պատմության տարբեր շրջափուլերի առանցքային իրադարձությունները, զարգացումները, գնահատելու պատմական գործընթացների շարժիչ ուժերն ու դերակատարներին, փոխանցելու հմտություններ և կարողություններ՝ դիտարկելու պատմական գործընթացները ընդլայն ըմբռնումների համածիրում (լոկալ, տարածաշրջանային, գլոբալ պատմություն), զարգացնելու ուսանողների վերլուծական ունակությունները՝ բացահայտելու համար պատմական գործընթացների պատճառներն ու հետևանքները, ընդհանրություններն ու առանձնահատկությունները՝ օժտելով ուսանողներին այնպիսի գիտելիքներով ու կարողություններով, որոնք կիրառելի են գիտահետազոտական և գիտամանկավարժական ոլորտներում: Համաշխարհային պատմություն մագիստրոսական ծրագրի շրջանավարտները ստանում են «Համաշխարհային պատմության» մագիստրոսի որակավորում:

Կովկասագիտություն: Ծրագրի նպատակն է պատրաստել հիմնարար գիտելիքներ, տեսական բարձր պատրաստվածություն ունեցող և գիտահետազոտական աշխատանք կատարելու ունակ, ինչպես նաև վարչաքաղաքական գործունեության կողմնորոշված երիտասարդ մասնագետներ, որոնք կաշխատեն ինչպես կրթական, գիտական, հաստատություններում, այնպես էլ արտաքին գործերի, պաշտպանության նախարարություններում, ազգային անվտանգության ծառայությունում, դիվանագիտական ներկայացուցչություններում և այլ կառույցներում: Ծրագիրը ձեռնամուխ է եղել իրականացնել համակողմանի գիտական հետազոտություններ Կովկասյան տարածաշրջանի Հյուսիսային Կովկասի ժողովուրդների, վրացիների և ադրբեջանցիների ինքնության և պատմության հիմնահարցերի վերաբերյալ: Կովկասագիտական բազային կրթություն ունեցող մասնագետների միջոցով ապահովվելու է նաև Հայաստանի, հայկական մշակույթի, տարածաշրջանային զարգացումներին հայերի բերած ավանդի ներկայացումը գիտական ու այլ միջավայրերում, այսպիսով հակազդելով նաև հակահայ քարոզչությանը: Կովկասագիտություն մագիստրոսական ծրագրի շրջանավարտները ստանում են «Կովկասագիտության» մագիստրոսի որակավորում:

Հնագիտություն և ազգաբանություն: Ծրագրի նպատակն է պատրաստել այնպիսի մասնագետներ, որոնք ունեն հստակ, հիմնարար գիտելիքներ հնագիտության և ազգաբանության, մարդաբանության տեսական և մեթոդաբանական հիմքերի, հետազոտության արդի մեթոդների ու գործիքների,

հայեցակարգերի վերաբերյալ, մրցունակ են միջազգային գիտակրթական շուկաներում, ունակ են կատարելու հստակ գիտահետազոտական աշխատանքներ, կողմնորոշված են հանրային, հասարակական ակտիվ գործունեությանը: Ծրագրի առավելություններից է ոչ միայն արդի տեսական, մեթոդաբանական զարգացումներին համապատասխան գիտելիքի փոխանցումը, այլ նաև պրակտիկ, կիրառական հմտությունների և ունակությունների ձևավորումը: Ծրագրի ուսանողները մասնակցում են հնագիտական պեղումների, տարբեր ազգաբանական (մարդաբանական) հետազոտական ծրագրերի և ձեռք են բերում կիրառական հմտություններ: Ծրագրի առավելություններից է Հնագիտական հետազոտությունների և Ազգաբանական ու մարդաբանական հետազոտությունների լաբորատորիաների առկայությունը: «*Հնագիտություն և ազգաբանություն*» մագիստրոսական ծրագրի շրջանավարտները ստանում են «Հնագիտություն՝ հնագիտության և ազգաբանության» մագիստրոսի որակավորում:

Արվեստաբանություն: Ծրագրի նպատակն է տրամադրելու ուսանողներին հայ և համաշխարհային արվեստի պատմության և տեսության խորացված գիտելիքներ, հուշարձանների և արվեստի ստեղծագործությունների նկարագրության, վերլուծության հմտություններ, ծանոթացնելու մասնագիտական հետազոտություններում նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման մեթոդներին, զարգացնելու ուսանողների մեջ արվեստի քննադատական մտածողությունը, ինչպես նաև հայ և համաշխարհային արվեստի պատմության թեմաներով զեկուցումների, գիտական հոդվածների, դասախոսությունների պատրաստման հմտությունները: Արվեստաբանության մագիստրոսի որակավորումը խիստ արդիական և հեռանկարային է այժմ բուհերում, թանգարաններում, գիտահետազոտական ինստիտուտներում, մասնավոր պատկերասրահներում, պետական կառավարման մշակութային մարմիններում, վարժարաններում, դպրոցներում, զբոսաշրջային գործակալություններում և բոլոր այն հաստատություններում, որոնք առնչվում են արվեստին և մշակույթին, ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Մագիստրոսական ծրագրի շրջանավարտները ստանում են «Արվեստաբանության» մագիստրոսի որակավորում:

Մշակութաբանություն: «Մշակութաբանություն» մասնագիտության մագիստրոսի կրթական ծրագիրը ներառում է երկու հիմնական բլոկ.
1. Մշակույթի տեսության, պատմության և ժամանակակից սոցիալ-մշակութային գործընթացների հետազոտական խնդիրները (քաղաքականություն և մշակույթ, կիրառական մշակութաբանության, կրոնի մարդաբանություն, մշակույթի մասին տեսությունների պատմություն, մասնագիտության արդի հիմնախնդիրներ, տուրիզմի մշակույթ և մշակութային

տուրիզմ և մշակույթը հետազոտող մի շարք այլ գիտական համակարգեր), 2. Հայաստանյան սոցիալ-մշակութային կյանքի հետազոտության, ներկայացման և կիրառման հիմնախնդիրները (հայ ավանդական աշխարհընկալում և ինքնություն, ժամանակակից հայ ինքնություն, հայոց տոնածիսական մշակույթ, արդի Հայաստանի սոցիալական գործընթացների մարդաբանություն, ժամանցը և զվարճանքը հայոց մշակույթում, քաղաքային տարածքի կազմակերպման հիմնախնդիրներն արդի Հայաստանում):

Ծրագրի նպատակն է պատրաստել մշակույթի տեսությանը, պատմությանն ու դերակատարմանը, մշակութային ժամանակակից գործընթացներին տեսական, մեթոդաբանական և հետազոտական մակարդակներով տիրապետող, մշակութային կյանքի կազմակերպմանն ու կառավարմանը կողմնորոշված մասնագետներ: «Մշակութաբանություն» մագիստրոսական ծրագրի շրջանավարտները ստանում են «Մշակութաբանության» մագիստրոսի որակավորում:

Սփյուռքագիտություն: Սփյուռքագիտությունը պատկանում է արդիական մասնագիտությունների թվին՝ հատկապես կապված ներկայումս սփյուռքների նկատմամբ պետությունների հետաքրքրությունների մեծացման, միջպետական հարաբերություններում սփյուռքների դերի բարձրացման, հետևաբար նաև՝ մասնագիտական-փորձագիտական հանրության ձևավորման անհրաժեշտության հետ: «Սփյուռքագիտություն» մագիստրոսական կրթական ծրագրի նպատակն է պատրաստել սփյուռքների վերաբերյալ գիտատեսական և գիտավերլուծական ունակություններով օժտված մասնագետներ: Ուսանողներին փոխանցվում է Հայկական սփյուռքի պատմության և ներկայի հիմնախնդիրների վերաբերյալ խորքային իմացություններ: Ուսանողներին տրամադրվում են նաև Հայկական սփյուռքի կազմակերպակառուցվածքային վիճակի վերաբերյալ համակարգային գիտելիքներ և հաղորդվում է հետազոտություններ կատարելու համար անհրաժեշտ գիտատեսական և մեթոդական պատրաստություն: Սփյուռքագիտություն մագիստրոսական ծրագրի շրջանավարտները ստանում են «Հայագիտության» մագիստրոսի որակավորում:

Հայագիտություն: «Հայագիտություն» մագիստրոսական կրթական ծրագրի նպատակն է պատրաստել հայագիտության համակարգի գիտակարգերի (պատմագիտություն, լեզվաբանություն, գրականագիտություն, մշակութաբանություն, սփյուռքագիտություն, ազգագրություն, հնագիտություն և այլն) վերաբերյալ համապարփակ գիտելիքներով օժտված մասնագետներ, նրանց տրամադրել հայագիտության առանձին գիտակարգերի՝ արդի փուլի հիմնական նվաճումներին վերաբերող հիմնարար գիտելիքներ և իմացություններ, նրանց շրջանում ձևավորել այդ գիտակարգերի հիմնախնդիրների վերաբերյալ ամբողջական ծանոթություն, հաղորդել հետազոտություններ կատարելու համար անհրաժեշտ գիտատեսական և մեթոդական պատրաստություն:

Հայագիտության մագիստրոսական ծրագրի շրջանավարտները ստանում են «Հայագիտության» մագիստրոսի որակավորում:

Վրացագիտություն: Մագիստրոսական ծրագրի իրականացումն ունի այժմեական հրատապ նշանակություն: Այն պայմանավորված է աշխարհաքաղաքական նոր և աշխարհատնտեսական արագընթաց փոփոխությունների համատեքստում տարածաշրջանի երկրների տեղի, դերի, նշանակության զարգացումների ընթացքի հեռանկարների ու միտումների գիտաքաղաքական գնահատման և գալիք մարտահրավերներին դիմակայելու անհրաժեշտությամբ: Ծրագրի իրականացման կարևորությունն ու անհրաժեշտությունը պայմանավորված են նաև հայ-վրացական հարուստ պատմամշակութային փոխառնչությունների, այդ ժառանգության վերարժևորման, փոխլրացման հենքին խարսխված տարածաշրջանային երկրների փոխհարաբերություններում անվտանգային հիմնախնդիրների արծարծմամբ և դրանց վերաբերյալ հնարավոր սցենարների մշակման առումով:

Ծրագրի խնդիրներից է նաև վրացագիտական բազային կրթություն ունեցող մասնագետների միջոցով ապահովել վրացական մշակույթի, տարածաշրջանային զարգացումներին վրացիների բերած ավանդի ներկայացումը գիտական ու այլ միջավայրերում:

Աշխատանքային հեռանկարներն ու կապն աշխատաշուկայի հետ

«*Պատմություն*» բակալավրի ծրագրի շրջանավարտները հնարավորություն ունեն աշխատանքի անցնելու ՀՀ ԳԱԱ պատմության, արևելագիտության ինստիտուտներում, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում և գիտահետազոտական այլ հաստատություններում: Սույն ծրագրի շրջանավարտները պահանջված են Հայաստանի ազգային արխիվում, զբոսաշրջային գործակալություններում ու թանգարաններում, իսկ լրացուցիչ մանկավարժի որակավորում ձեռք բերելու դեպքում նաև դպրոցներում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

«*Արվեստաբանություն*» բակալավրի ծրագիրը շրջանավարտների հնարավորությունները չեն սահմանափակվում միայն Հայաստանով: Բազմաթիվ ուսանողներ տարբեր ծրագրերով կարողացել են իրենց ուսումը շարունակել Իտալիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Հունգարիայի և այլ երկրների լավագույն համալսարաններում: Ծրագրի շրջանավարտները աշխատում են թանգարաններում, կրթական հաստատություններում, զբոսաշրջության և գիտության ոլորտներում՝ «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, Հայաստանի ազգային պատկերասրահ, այլ հաստատություններ:

«*Մշակութաբանություն*» բակալավրի ծրագրի շրջանավարտները որպես մշակութային մենեջերներ, մշակույթի տեսաբաններ, հետազոտողներ,

մշակութային քննադատներ, ներկա մշակութային գործընթացների փորձագետներ կարող են աշխատանքի անցնել ՀՀ ԿԳՄՍ և այլ նախարարություններում, ՀՀ Քաղաքացիական ծառայության ոլորտում, ՀՀ Կառավարության աշխատակազմում, մարզային մշակութային կենտրոններում, թանգարաններում, զբոսաշրջային կազմակերպություններում, ակադեմիական կառույցներում, հասարակական կազմակերպություններում, ԶԼՄ-ներում, ինչպես նաև միջազգային կառույցներում:

Ամբիոնը համագործակցում է ՀՀ ԿԳՄՄՆ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Հայաստանի պատմության թանգարանի, Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի, «Մետաքսի ճանապարհ. Հայաստան» հայ-իտալական կրթական և հետազոտական ծրագրի հետ:

«*Կովկասագիտություն*» բակալավրի կրթական ծրագրի շրջանակներում ուսուցանվող վրացերենի և ադրբեջաներենի իմացությունը հնարավորություն կտա շրջանավարտներին աշխատանքի անցնել ՀՀ ԱԳՆ-ում, ԱԱԾ-ում, դիվանագիտական ծառայություններում, միջազգային տարբեր կառույցներում և կազմակերպություններում: Շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել նաև ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության, պատմության, հնագիտության և ազգագրության ինստիտուտներում, «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում, Կովկասի ինստիտուտում, ինչպես նաև ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում, զբոսաշրջային գործակալություններում, թանգարաններում, ինչպես նաև պետական կառավարման տարբեր օղակներում՝ մարզպետարաններ, համայնքապետարաններ:

«Հնագիտության և ազգագրության» բակալավրի որակավորում ստացած մասնագետները կկարողանան աշխատանքի անցնել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում, դպրոցներում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, պետական կառավարման համակարգում (նախարարություններ, գերատեսչություններ), մարզպետարաններում, համայնքապետարաններում, թանգարաններում, ուսումնական հաստատություններում (մանկավարժի որակավորում ունենալու դեպքում) և այլ կազմակերպություններում: Զբոսաշրջային շուկայի ակտիվ զարգացմամբ պայմանավորված, այս մասնագիտության շրջանավարտներն ակտիվորեն կներգրավվեն նաև տարբեր զբոսաշրջային, մշակույթի, ինքնության ուսումնասիրության ու հանրայնացման հետ կապված տարբեր ծրագրերում:

«Հայոց պատմություն» մագիստրոսական ծրագիրն ավարտած շրջանավարտները հաջողությամբ իրենց տեղն են գտնում ոչ միայն կրթական համակարգի տարբեր օղակներում (դպրոցներ, միջին մասնագիտական ու

բարձրագույն ուսումնական հաստատություններ)՝ զբաղվելով ուսուցչական և դասախոսական գործունեությամբ, այլև գիտահետազոտական և մշակութային տարբեր հաստատություններում (ԳԱԱ պատմության և արևելագիտության ինստիտուտներ, Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, Ազգային արխիվ և այլն), օրենսդիր և գործադիր իշխանության տարբեր օղակներում, ՀՀ ԱԱԾ-ի և ՊՆ-ի համակարգերում:

«Համաշխարհային պատմություն» կրթական ծրագրի մագիստրատուրայի շրջանավարտները պահանջված են հանրապետության և արտերկրի տարաբնույթ հետազոտական և մանկավարժական ոլորտներում: Ծրագրի շրջանավարտների հնարավոր աշխատատեղերն են՝ դպրոցները, որտեղ 6-12-րդ դասարաններում ուսուցանվում է «Համաշխարհային պատմություն» դասընթացը, միջազգային կազմակերպություններն ու դրանց մասնաճյուղերը (ՄԱԿ-ի գրասենյակ, Մարդու իրավունքների երևանյան գրասենյակ, Եվրահինտեգրման հայկական գործակալություն և այլն), ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական հաստատությունները (Պատմության ինստիտուտ, Արևելագիտության ինստիտուտ և այլն), բուհերը, մասնագիտական կրթօջախները, ՀՀ պաշտպանության, արտաքին գործերի, ԿԳՄՍ նախարարությունները, Ազգային ժողովը, թանգարանները, հասարակական կազմակերպությունները, լրատվական գործակալությունները և այլն:

«Կովկասագիտություն» մագիստրոսական ծրագրի շրջանավարտները կարող են հանդես գալ որպես վերլուծաբաններ ու փորձագետներ, գործունեություն ծավալել հետազոտական հաստատություններում, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտում, ՀՀ ԳԱԱ պատմության, արևելագիտության ինստիտուտներում, «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում, Հայաստանի ազգային արխիվում, այլ բուհերում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում և դպրոցներում: Նրանք կարող են աշխատել նաև պետական կառավարման տարբեր օղակների (ՀՀ Ազգային ժողով, ԿԳՄՍՆ, ՊՆ, Սփյուռքի հանձնակատարի գրասենյակ, ԱԱԾ, վերլուծական ու թարգմանչական բաժիններում): Չի բացառվում համագործակցությունը Վրաստանի և ՌԴ-ի, ինչպես նաև միջազգային գիտահետազոտական ու վերլուծական կառույցների հետ:

«*Հնագիտություն և ազգագրություն*» ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ում, Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնում, պետական կառավարման

համակարգում (նախարարություններ, գերատեսչություններ), մարզպետարան-ներում, համայնքապետարաններում, թանգարաններում, զբոսաշրջային ու այլ կազմակերպություններում: Բավականին մեծ է միջազգային հետազոտական կառույցների հետ որպես հետազոտողներ, վերլուծաբաններ համագործակցող շրջանավարտների թիվը: Կրթական ծրագրի շրջանավարտների հմտությունները պահանջարկված են նաև փորձագիտական տիրույթում:

Սփյուռքագիտություն: ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը, ԿԳՄՍ, ԱԳ նախարարությունները, ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն պետական ծառայությունը հանդիսանում են սփյուռքագետներին աշխատատեղ ապահովող հիմնական մարմինները: Սփյուռքագետների համար աշխատատեղի հնարավորություն է նաև ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, որտեղ 2017 թ. գործում է Սփյուռքագիտական հետազոտությունների բաժին: Սփյուռքագետների համար աշխատանքի տեղավորման հնարավորություններ են ստեղծված նաև ԵՊՀ տարբեր ֆակուլտետներում և գիտական հանդեսների խմբագրություններում: ՀՀ ԱԳՆ դիվանագիտական ակադեմիայում «Սփյուռքագիտություն» մասնագիտության ընդգրկումը հնարավորություն է ընձեռում սփյուռքագետներին՝ ՀՀ ԱԳՆ-ում աշխատանքի անցնելու համար:

Հայագիտություն: Ծրագիրը նպատակային է՝ ներմուծված ԵՊՀ-ի և Համազգային հայ կրթական և մշակութային միության միջև կնքված համաձայնագրի հիման վրա: Ուստի հայագիտության մագիստրոսները աշխատանքով կարող են ապահովվել առաջին հերթին Համազգային հայ կրթական ու մշակութային միության կողմից՝ նրա հովանավորությամբ գործող տասնյակ դպրոցներում: Քննարկվում է նաև հայագետներին Սփյուռքի այլ կազմակերպությունների, մասնավորապես Հայ Կաթողիկէ եկեղեցու դպրոցներում աշխատանքի տեղավորելու հնարավորության հարցը: Մյուս կողմից «Հայագիտություն» մագիստրոսական ծրագրի շրջանավարտները հնարավորություն ունեն աշխատելու նաև հանրապետության դպրոցներում: Մասնագիտության լայն ընդգրկումը հնարավորություն է տալիս նրանց աշխատանքի անցնելու նաև ՀՀ պետական մարմինների աշխատակազմերում:

Վրացագիտություն: Մագիստրոսական կրթական ծրագրի շրջանավարտները, ստանալով վրացագետի որակավորում, կարող են աշխատել ինչպես հանրակրթական, բուհական, գիտական հաստատություններում (Հայաստանի ազգային արխիվ, «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, Հայաստանի ազգային գրադարան), այնպես էլ ՀՀ արտաքին գործերի, պաշտպանության նախարարություններում, ազգային անվտանգության ծառայությունում, դիվանագիտական ներկայացուցչություն-ներում, ՀՀ Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում

և այլ կառույցներում:

Ուսանողական կյանք և ժամանց

Մասնագիտական կրթության ընթացքում ուսանողները հնարավորություն են ունենում մասնակցել մասնագիտական պրակտիկաների, արշավների, որոնց ընթացքում բացահայտում են Հայաստանը, հայոց նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգությունը: Ֆակուլտետի առավելություններից են դասախոսների և ուսանողների կառուցողական հարաբերությունները, որոնք հնարավորություն են տալիս արդեն ուսումնառության ընթացքում ձևավորել և զարգացնել հետազոտական ունակություններն ու հմտությունները:

Կապը ֆակուլտետի տարբեր տարիների շրջանավարտների հետ, վերջիններիս հաճախակի այցելությունները, հանդիպումներն ու քննարկումները ուսանողների գիտական հմտություններն ու աշխարհայացքը ընդլայնելու լրացուցիչ հնարավորություններ են: Բավական է նշել, որ 2024-2025 թթ. ֆակուլտետում կազմակերպվել է մոտ հինգ տասնյակ նման միջոցառում ինչպես տեղացի, այնպես էլ հրավիրված մասնագետների մասնակցությամբ: Վերջին տարիներին ֆակուլտետում ակտիվ աշխատանքներ են տարվում նաև ուսանողների համար հարմարավետ միջավայր ձևավորելու ուղղությամբ. պարբերաբար համալրվում է ֆակուլտետի գրադարանը, վերանորոգվում և ժամանակակից պահանջներին համապատասխան կահավորվում են լսարանները, վերանայվում են գրասենյակի և ուսանողների հարաբերությունների սկզբունքները, խրախուսվում է կամավորականությունը: Վերջին տասնամյակում պարբերաբար կազմակերպվել են նաև շրջանավարիտների այցելություններ Արևմտյան Հայաստան և Կիլիկիա: Ֆակուլտետում ակտիվ գործում են համալսարանական երկու ուսանողական կառույցները՝ Ուսանողական խորհուրդը և Ուսանողական գիտական ընկերությունը:

Ընդունելությունն ըստ կրթական ծրագրերի

Պատմության ֆակուլտետում ընդունելությունը կկատարվի հետևյալ կրթական ծրագրերով՝

- պատմություն
- արվեստաբանություն
- մշակութաբանություն
- կովկասագիտություն
- հնագիտություն և ազգաբանություն:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիների պատմության ֆակուլտետի դիմորդների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և տեղերի քանակի.

Կրթական ծրագիր	Ուսուցման համակարգ	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը
Պատմություն	Անվճ	73	5	45	5	45	5
	Վճ		35		35		35
Արվեստաբանություն	Անվճ	10	3	14	3	8	3
	Վճ		12		12		12
Մշակութաբանություն	Անվճ	18	3	19	3	11	3
	Վճ		12		12		12
Կովկասագիտություն	Անվճ	34	6	27	6	21	6
	Վճ		14		14		16
Հնագիտություն և ազգագրություն	Անվճ	16	4	13	4	7	3
	Վճ		11		11		12

Անցողիկ միավորներն ըստ վերջին 3 տարիների.

Կրթական ծրագիր	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
	Անվճ	Վճ	Անվճ	Վճ	Անվճ	Վճ
Պատմություն	33.75	20.5	27	17.25	34.5	16
Արվեստաբանություն	27.5	20.75	33	18	28.75	17.25
Մշակութաբանություն	32.25	20.25	35.75	16.75	22.25	18
Կովկասագիտություն	27	19.75	26.5	15	30	16.5
Հնագիտություն և ազգագրություն	22	17	24.75	15.75	27.75	18

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատմական ակնարկ

1990 թ. ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում բացվել է միջազգային հարաբերությունների բաժին, որը 1991-1992 ուստարվանից գործել է պատմության ֆակուլտետի կազմում: 1993 թ. ապրիլին հիմնադրվել է միջազգային հարաբերությունների տեսության և պատմության ամբիոնը, որը հետագայում վերանվանվել է միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոն: ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ 1998 թ. սեպտեմբերի 16-ին պատմության ֆակուլտետի միջազգային հարաբերություն-ների ամբիոնի հենքի վրա ստեղծվել է միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, որի կազմում ընդգրկվել է նաև փիլիսոփայության ֆակուլտետի քաղաքագիտության ամբիոնը:

Կառուցվածքը

Ֆակուլտետում գործում են 4 ամբիոն և 2 կենտրոն՝

- միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոն
- դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոն
- քաղաքագիտության ամբիոն
- հանրային կառավարման ամբիոն
- ռուսաստանյան հետազոտությունների կենտրոն
- չինարենի և չինական մշակույթի կենտրոն:

Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում սովորում է 1547 ուսանող, որից 37-ը՝ արտերկրից:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Ֆակուլտետում դասավանդում են մեծ փորձ ունեցող բարձրակարգ դիվանագետներ և քաղաքագետներ՝ 9 դոկտոր, պրոֆեսոր, 33 գիտության թեկնածու, դոցենտ, 25 դասախոս և 21 ասիստենտ:

Առաջարկվող կրթական ծրագրերն ու շնորհվող որակավորումները

«Միջազգային հարաբերություններ» բակալավրի կրթական ծրագրում ուսանողները հնարավորություն ունեն ուսումնասիրելու միջազգային հարաբերությունների տեսություն և պատմություն, միջպետական հարաբե-րություններ և արտաքին քաղաքականություն, ժամանակակից միջազգային հարաբերությունների համակարգը և դրանց առնչվող մի շարք այլ դասընթացներ:

Այս կրթական ծրագրի ուսումնական պլանում զգալի տեղ է հատկացված դիվանագիտությանը՝ որպես խաղաղ բանակցությունների միջոցով արտաքին քաղաքականության իրականացման ձևերի, մեթոդների և եղանակների մասին գիտություն, ինչպես նաև դիվանագիտական և հյուպատոսական ծառայության

առանձնահատկություններին, դիվանագետի պատասխանատու առաքելությանը և հիմնական պարտականություններին: Դիվանագիտական և հյուպատոսական իրավունք ու ծառայություն, դիվանագիտական արարողակարգ և էթիկետ, բազմակողմ դիվանագիտություն և դիվանագիտական բանակցությունների վարում՝ ահա ոչ լրիվ ցանկը այն դասընթացների, որ դասավանդվում են բաժնում: Իհարկե, այդ ամենին ավելացված է նաև տեղական նյութը՝ Հայաստանի միջազգային հարաբերությունների և հայ դիվանագիտության պատմություն:

«Միջազգային հարաբերություններ» կրթական ծրագրում մեծ ուշադրություն է դարձվում օտար լեզուներով դասավանդվող դասընթացներին: Երկու օտար լեզվի ուսումնասիրությունն ու իմացությունը պարտադիր է, ինչն արձանագրված է դիվանագիտական ծառայության մասին ՀՀ օրենքում:

Ժամանակակից աշխարհում **քաղաքական գիտությունը** դառնում է ամենաարագ զարգացող մասնագիտություններից մեկը: Քաղաքագետների պահանջարկն այսօր զգացվում է հասարակական կյանքի համարյա բոլոր ոլորտներում: Լուրջ և բանիմաց քաղաքագետներ պետք են պետական ներկայացուցչական մարմինների խորհրդատվական և տեղեկատվական կենտրոններում և վերլուծական բաժիններում, թերթերի և ամսագրերի խմբագրություններին՝ քաղաքական վերլուծություններ կատարելու համար, ընտրարշավները մասնագիտական բարձր մակարդակով անցկացնելու նպատակով, քաղաքական, տնտեսական և սոցիալական տարբեր այլ կառույցներում հանրային կապերը ամրապնդելու առումով և այլն:

Վերջին ժամանակներում Հայաստանում, ինչպես և հետխորհրդային շատ երկրներում, մեծապես ակտիվացել է հասարակական կազմակերպությունների աշխատանքը, որոնք միավորելով քաղաքական խոր գիտելիքներ ունեցող երիտասարդների, միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ լայնորեն աջակցում են հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտներում ծավալվող ժողովրդավարացման գործընթացներին:

Մասնագիտական պատրաստվածության նման բարձր աստիճանի ապագա քաղաքագետները կարող են հասնել շնորհիվ ֆակուլտետում գործող **«Քաղաքագիտություն»** կրթական ծրագրի: Արդի քաղաքական գիտության պահանջներին համապատասխանող ուսումնական պլանը հնարավորություն է տալիս ուսանողներին ձեռք բերել անհրաժեշտ հմտություններ ժամանակակից ներքաղաքական գործընթացները գնահատելու, համաշխարհային քաղաքականության նոր մարտահրավերները հասկանալու, քաղաքական տեխնոլոգիաները գործնականում ճիշտ կիրառելու, սոցիալ-քաղաքական իրականությունում իրենց արժանավոր կերպով դրսևորելու համար: Մի խոսքով, քաղաքագիտության բաժնի ապագա շրջանավարտը դառնում է լայն

աշխարհայացքով օժտված, ազգային արժեքները գնահատող, հանդուրժողականությամբ ղեկավարվող, համաշխարհային օրինաչափություն-ները ճանաչող ակտիվ և նախաձեռնող քաղաքացի, ում հանդեպ հասարակության ներսում խիստ պահանջարկ կա:

«Հանրային կառավարում» բաժնում ուսումնասիրում են հանրային քաղաքականությունը, վարչական և քաղաքական փոխհարաբերությունները, ռազմավարական ուղղությունները: Բաժնում դասավանդվող առարկաներից են՝ մենեջմենթ և կառավարում, հանրային քաղաքականություն և համեմատական վարչարարություն, կազմակերպչական վարք և բյուրոկրատիայի տեսություն, համայնքի զարգացում և կառավարում, էլեկտրոնային կառավարում ու կրթության կառավարում և այլն:

2022-2023 ուստարվանից ֆակուլտետում մեկնարկել է նաև **«Հանրային քաղաքականություն և կառավարում»** բակալավրի կրթական ծրագիրը: Կրթական ծրագիրը, որոշակիորեն փոխառելով հանրային կառավարման կրթական և դիսցիպլինար բազայի մի շարք բաղադրիչներ (մոտ 15%), կրում է բազմագիտակարգային բնույթ՝ իր մեջ ներառելով ինչպես վերլուծական և մենեջերական չափումներ, այնպես էլ քաղաքականության հիմնարար և սեկտորալ ուղղությունների ուսումնասիրում (սոցիալական, տնտեսական, ներքին անվտանգային քաղաքականություն և այլն):

Բակալավրիատում բոլոր կրթական ծրագրերում կազմակերպվում է արտադրական պրակտիկա՝ վեց շաբաթ տևողությամբ, միջազգայնագետների համար հիմնականում՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությունում և Ազգային Ժողովում, քաղաքագետների համար՝ Ազգային Ժողովում և վերլուծական կենտրոններում, «Հանրային կառավարում» մասնագիտության գծով՝ պետական ինքնակառավարման մարմիններում:

Բակալավրիատի բարձր առաջադիմությամբ շրջանավարտները կարող են ուսումը շարունակել մագիստրատուրայում: Ֆակուլտետում գործում են հետևյալ մագիստրոսական կրթական ծրագրերը.

- Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն /առկա/
- Միջազգային հարաբերություններ /հեռակա/
- Համաշխարհային քաղաքականություն /առկա/
- Ազգային անվտանգություն /առկա և հեռակա/
- Հանրային քաղաքականություն և կառավարում /առկա/
- Ամերիկագիտություն /առկա/:

«Համաշխարհային քաղաքականություն» մագիստրոսական ծրագիրը միացել է ԱՊՀ ցանցային համալսարանին և «Համաշխարհային քաղաքականություն» մասնագիտացմամբ մագիստրոս շրջանավարտները ԱՊՀ ցանցային համալսարանի շրջանակներում ստանում են կրկնակի դիպլոմ:

Աշխատանքային հեռանկարներն ու կապն աշխատաշուկայի հետ

Կրթական նման մակարդակը ֆակուլտետի շրջանավարտներին հնարավորություն է ընձեռում աշխատելու դիվանագիտական հաստատություններում, միջազգային տարբեր կազմակերպություններում, հանրապետության պետական իշխանության մարմիններում, ինչպես նաև ոչ պետական հաստատությունների ու կազմակերպությունների հետազոտական-վերլուծական բաժիններում: Ներկայումս ֆակուլտետը համագործակցում է ԱՄՆ-ի, Հունաստանի, Եգիպտոսի, Սիրիայի, Իրանի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Լեհաստանի, Ուկրաինայի, Ռուսաստանի Դաշնության և այլ երկրների համալսարանների հետ: Ֆակուլտետում ավանդույթ են դարձել հանդիպումները Երևանում գործող օտարերկրյա դեսպանների, արտասահմանյան երկրներում ՀՀ դեսպանների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների երևանյան գրասենյակների ներկայացուցիչների, քաղաքագետների, վերլուծաբանների հետ:

Ուսանողական կյանք և ժամանց

Ակտիվ ուսանողական կյանքը ֆակուլտետում առավելապես պայմանավորված է Ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության բեղուն գործունեությամբ: Վերջինս ամեն տարի կազմակերպում է ուսանողական կոնֆերանսներ, որտեղ առավել հաջողված զեկուցումներն արժանանում են խրախուսման:

Ֆակուլտետի կողմից պարբերաբար կազմակերպվում են գիտաճանաչողական այցեր ու արշավներ, ամառային ու ձմեռային դպրոցներ՝ տեսական գիտելիքների ամրապնդման ու գործնական հմտությունների կիրառման նպատակով: Բացի այդ, ֆակուլտետը պարբերաբար հյուրընկալում է դեսպանների, արտասահմանյան պրոֆեսորների, քաղաքականություն մշակողների:

Ֆակուլտետի ուսանողներն ակտիվորեն մասնակցում են նաև միջազգային երիտասարդական գիտաժողովներին և արժանանում մրցանակների:

Ֆակուլտետում գործում են «Հոդվածագրության» և «Բանավեճ» ուսանողական ակումբները, որոնց մասնակիցները քննարկում, բանավիճում և բանախոսություններ են ունկնդրում իրենց հետաքրքրող քաղաքական և այլ բնույթի հարցերի շուրջ:

Ընդունելությունն ըստ կրթական ծրագրերի

Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում ընդունելությունը կկատարվի հետևյալ կրթական ծրագրերով՝

- միջազգային հարաբերություններ
- քաղաքագիտություն
- հանրային կառավարում
- հանրային քաղաքականություն և կառավարում:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիների միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դիմորդների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և տեղերի քանակի.

Կրթական ծրագիր	Ուսուցման համակարգ	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը
Միջազգային հարաբերություններ	Անվճ	248	2	220	2	167	2
	Վճ		108		108		108
Քաղաքագիտություն	Անվճ	105	3	104	3	87	3
	Վճ		52		52		57
Հանրային կառավարում	Անվճ	101	3	110	3	109	3
	Վճ		57		57		57
Հանրային քաղաքականություն և կառավարում	Անվճ	51	2	57	2	43	2
	Վճ		23		23		23

Անցողիկ միավորներն ըստ վերջին 3 տարիների.

Կրթական ծրագիր	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
	Անվճ	Վճ	Անվճ	Վճ	Անվճ	Վճ
Միջազգային հարաբերություններ	39	33.5	39.75	30.75	39.5	25.5
Քաղաքագիտություն	37.25	26.5	37	24.75	38	19.25
Հանրային կառավարում	37.75	27.25	39	31.75	38.75	32.5
Հանրային քաղաքականություն և կառավարում	33.5	26.5	38.75	28.25	36.75	23.5

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատմական ակնարկ

Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը համալսարանի հնագույն ֆակուլտետներից է: Համալսարանում տնտեսագիտական կադրերի պատրաստումը սկսվել է դեռևս 1921 թ-ից: Որպես առանձին ֆակուլտետ հիմնադրվել է 1934 թ-ին և գործել է մինչև 1975 թ.: 1975-83 թթ. տնտեսագետների պատրաստումը ԵՊՀ-ում ընդմիջվել է՝ կապված Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի հիմնադրման հետ: 10 տարվա ընդմիջումից հետո, 1984 թ-ին ֆակուլտետը համալսարանում վերաբացվել է «Տնտեսագիտական կիբեռնետիկա» անվանմամբ, որը 1991 թ-ին վերանվանվել է «Տնտեսագիտության», իսկ 2014 թ-ին՝ «Տնտեսագիտության և կառավարման» ֆակուլտետ:

1934 թ-ից ի վեր տասնյակ հազարավոր բարձրակարգ մասնագետներ են ավարտել Ֆակուլտետը, ովքեր գերազանց տիրապետելով իրենց մասնագիտությանը՝ հաջողությամբ և բարձր արդյունավետությամբ աշխատում են տնտեսության տարբեր ոլորտներում, պետական կառավարման ապարատում, գիտահետազոտական կենտրոններում և համալսարաններում:

Լավագույն ավանդույթները զուգակցելով տնտեսագիտական մտքի նորագույն նվաճումների հետ՝ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը շարունակում է զարգանալ: Այն հանդիսանում է որակյալ տնտեսագետ-կադրերի պատրաստման կարևորագույն կենտրոն՝ ընթանալով ուսանողակենտրոն ուսուցման ժամանակակից մեթոդների ներդրման ճանապարհով:

Երևանի պետական համալսարանը ամենահին համալսարանն է մեր երկրում, իսկ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը համալսարանի առաջատար ֆակուլտետներից մեկն է: Այն Հայաստանի և տարածաշրջանի ամենաբարձր վարկանիշ ունեցող ուսումնական հաստատություններից է, որտեղ ստացած կրթությունը հնարավորություն է տալիս դառնալու մրցունակ մասնագետ ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև՝ ամբողջ աշխարհում: ԵՊՀ-ն լավագույն ընտրությունն է նրանց համար, ովքեր ձգտում են Հայաստանում բարձրորակ կրթություն ստանալուն, մասնագիտական ոլորտում շարունակական առաջընթաց գրանցելուն և աշխատաշուկայում առաջատար ու պահանջված մասնագետ դառնալուն:

Կառուցվածքը

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը տնտեսագիտական բարձրագույն կրթություն ապահովող, պատմական երկար ուղի անցած, ամենահեղինակավոր և ճանաչված կենտրոնն է Հայաստանում: Ուսուցման համակարգը եռաստիճան է՝ բակալավրիատ, մագիստրատուրա և ասպիրանտուրա (առկա և հեռակա ուսուցմամբ):

Ազգային և միջազգային աշխատաշուկաների պահանջներին համահունչ կրթական ծրագրեր են առաջարկում Ֆակուլտետում գործող չորս ամբիոնները՝

- տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների,
- տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման,
- ֆինանսահաշվային,
- կառավարման և գործարարության:

Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնը ձևավորվել է 2016 թ-ին տեսական և ընդհանուր տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնների հիմքի վրա: Տեսական և ընդհանուր տնտեսագիտության ամբիոնը (հետագայում՝ տնտեսագիտության տեսության ամբիոն) հիմնադրվել էր 1929 թ-ին, իսկ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնը՝ 1991 թ-ին: Վերջինս Հայաստանում առաջինն էր իր մասնագիտացման ուղղվածությամբ: Ամբիոնն իրականացնում է ֆակուլտետի տնտեսագիտական կրթության հիմնարար՝ «Տնտեսագիտական տեսություն», «Տնտեսագիտական մտքի պատմություն», «Տնտեսական պատմություն», «Համաշխարհային տնտեսություն», «Միջազգային տնտեսագիտություն» և այլ առարկաների դասավանդումը: Ամբիոնն իրականացնում է ***«Տնտեսագիտություն»*** բակալավրիատական կրթական ծրագիրը:

Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնը (նախկինում՝ տնտեսական կիբեռնետիկայի ամբիոն) հիմնադրվել է 1965 թ-ին: Ֆակուլտետի հնագույն ամբիոններից մեկն է, որ ակտիվորեն համագործակցում է ՀՀ Կենտրոնական բանկի հետ: Ամբիոնն իրականացնում է **«Տվյալների գիտությունը բիզնեսում»** (Data Science for Business) մագիստրոսական ծրագիրը: Վերջինս իրականացվում է Սան Խոսեի պետական համալսարանի (ԱՄՆ), «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի ու Ինովացիոն լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի հետ համատեղ և «PMI Science»-ի աջակցությամբ: Մագիստրոսական ծրագրի ուսումնական ամբողջ ծրագիրը լիովին ներդաշնակեցված է Սան Խոսեի պետական համալսարանի «Տվյալների վերլուծություն» մագիստրոսական ծրագրի հետ:

Ֆինանսահաշվային ամբիոնը ստեղծվել է 2001 թ-ին: Տարբեր տարիների ամբիոնը ղեկավարել են ճանաչված գիտնական, պետական և հասարակական գործիչներ: Ամբիոնն իրականացնում է **«Ֆինանսներ»** բակալավրիատական, **«Ֆինանսներ»**, «**Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ»** և **«Հաշվապահական հաշվառում և աուդիտ»** մագիստրոսական կրթական ծրագրերը, որոնք շարունակաբար կատարելագործվում են՝ ներդնելով կրթական գործընթացում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման արդի զարգացումները:

Կառավարման և գործարարության ամբիոնը հիմնադրվել է 1996 թ-ին: Տարբեր տարիներին ամբիոնի ղեկավարումը ստանձնել են ականավոր տնտեսագետներ: Ամբիոնն իրականացնում է **«Կառավարում»** բակալավրիատական, **«Գործարար կառավարում (վարչարարություն)»** և **«Շուկայագիտություն (մարքեթինգ)»** մագիստրոսական կրթական ծրագրերը, որոնք մշտապես կատարելագործվում են՝ հաշվի առնելով միջազգային փորձի առանձնահատկությունները և ՀՀ աշխատաշուկայի զարգացումները:

Ներկայումս ֆակուլտետն ունի ավելի քան 1000 ուսանող (այդ թվում՝ առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներ, ասպիրանտներ և հայցորդներ):

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը գիտակրթական ու հետազոտական համատեղ նախագծերի իրականացման, մասնագիտական ու արտադրական պրակտիկաներ կազմակերպելու, ուսանողների՝ աշխատաշուկա ելքի ապահովման նպատակով ակտիվորեն համագործակցում է ՀՀ ֆինանսաբանկային ոլորտի, պետական կառավարման մարմինների և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ: Ուսումնառության ընթացքում կրթական գործընթացներին զուգահեռ, մեծ ուշադրություն է դարձվում նաև ուսանողների արտալսարանային կյանքին ու գործունեությանը: Ուսանողների համար կազմակերպվում են նաև հանրային դասախոսություններ, սեմինարներ, ճանաչողական այցեր, արտալսարանային դասեր ու հանդիպումներ ոլորտի փորձառու մասնագետների, հանրային գործիչների, մեծանուն գիտնականների, բիզնեսի ներկայացուցիչների հետ, որոնք իրենց հարուստ փորձն ու գիտելիքներն են փոխանցում ուսանողներին:

Ֆակուլտետը մշտապես աջակցում է բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին և շրջանավարտներին աշխատանքի տեղավորման հարցում:

Համալսարանում գործում է նաև «**Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը»**, որն այժմ ակտիվ համագործակցում է ՀՀ շուրջ 500 պետական և մասնավոր ընկերությունների, ձեռնարկությունների, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների հետ: Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը համալսարանի ուսանողներին և շրջանավարտներին պարբերաբար տեղեկացնում է թափուր աշխատատեղերի, պրակտիկաների, կամավորական աշխատանքների, ծրագրերի և այլ հնարավորությունների մասին:

ԵՊՀ-ում գործում է նաև «**Բիզնես ինկուբատոր**» կառուցվածքային ստորաբաժանումը, որի նպատակը տարբեր Ֆակուլտետներում, այդ թվում նաև՝ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում ստեղծվող արդյունքների առևտրայնացման միջավայրի ստեղծումն է, համալսարանական միջավայրում ծնվող գաղափարների գեներացումը և ակսելերացիան, այդ գաղափարները գիտակրթական, արդյունաբերական, տեխնոլոգիական արդյունքի վերածելու,

ինչպես նաև նորարարական գաղափարների հավաքագրմանն ու զարգացմանը միտված օժանդակության ապահովումը:

Գրադարան-ընթերցասրահ

ԵՊՀ-ն և տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետը, մասնավորապես, ունեն մասնագիտական հարուստ գրականություն, որը հասանելի է թե՛ պրոֆեսորադասախոսական կազմի, թե՛ ուսանողների համար: Համալսարանում մեծ ուշադրություն է դարձվում գրադարանների արդիակա-նացմանն ու գրականության համալրմանը: Ֆակուլտետի ընթերցասրահը հագեցած է նորագույն տեխնոլոգիաներով, գործում են էլեկտրոնային կատալոգներ, իսկ մասնագետները պատրաստ են օգնելու մասնագիտացված գրականության ընտրության հարցում:

Էլեկտրոնային ռեսուրսներ

Տեխնոլոգիական արդի ժամանակաշրջանում տպագիր գրքերին փոխարինելու են եկել էլեկտրոնային ռեսուրսները: Համալսարանը բաժանորդագրված է ինչպես հայկական, այնպես էլ արտասահմանյան բուհերի, ֆինանսական հաստատությունների և միջազգային կազմակերպությունների բազմաթիվ էլեկտրոնային ռեսուրսների և շտեմարանների: Այսպիսով, ուսանողներին հասանելի են մշտապես թարմացվող վիճակագրական տվյալների բազաներ, մի քանի հազար էլեկտրոնային գրքեր, տասնյակ հազարավոր արտասահմանյան հոդվածներ և թեմատիկ կատալոգներ:

Տեխնոլոգիական հագեցվածություն

Ֆակուլտետը շարժվում է ժամանակին համընթաց և պարբերաբար կրթական գործընթացներում ներդրվում են առաջադեմ տեխնոլոգիաներ: Ֆակուլտետը համալրվել է մի քանի համակարգչային լսարաններով, պրոյեկտորներով, համակարգիչներով և ՍՄԱՐԹ գրատախտակներով հագեցած ինտերակտիվ լսարաններով:

2023 թ-ից Ֆակուլտետում ստեղծվել է *Wolfram* մաթեմատիկական ծրագրավորման լեզվի ուսուցման լաբորատորիան, որը նախատեսված է թե՛ տնտեսագիտության և կառավարման, թե՛ ԵՊՀ այլ ֆակուլտետների ուսանողների և դասախոսների համար:

ԵՊՀ ուսուցման կառավարման առցանց հարթակում՝ https://e-learning.ysu.am -ում («Moodle»), հաջողությամբ ներդրվել և գործում են դասընթացների հիբրիդ տարբերակով կազմակերպման բոլոր անհրաժեշտ գործիքները: Ֆակուլտետի յուրաքանչյուր ուսանող ցանկացած համակարգչից մուտք ունի դեպի համալսարանական ցանցի անձնական հաշիվ, որտեղ հասանելի են բոլոր դասընթացների նյութերը, հարցաշարերը, առաջադրանքները: Գործում է նաև էլեկտրոնային գրանցամատյան: Անձնական դասացուցակը և ընտրովի դասընթացների գրանցումը ևս հասանելի են նշված հարթակում:

Պրոֆեսորադասախոսական կազմը

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում դասավանդում են ոլորտի առաջատար մասնագետներ՝ պրոֆեսորներ, գիտությունների դոկտորներ և թեկնածուներ, ՀՀ պետական պարգևների և մասնագիտական ոլորտում պատվավոր կոչումների արժանացած վաստակավոր դասախոսներ: Ֆակուլտետում համատեղության կարգով դասավանդում են նաև ՀՀ պետական կառավարման, ինչպես նաև ֆինանսաբանկային ոլորտի և առաջատար կազմակերպությունների մասնագետներ, հասարակական գործիչներ և մեծանուն գիտնականներ:

Ներկայումս Ֆակուլտետում գիտակրթական գործունեություն են ծավալում գիտությունների 12 դոկտոր, պրոֆեսոր, 43 դոցենտ, 70 գիտությունների թեկնածու: 2002 թ-ից Ֆակուլտետում գործում է տնտեսագիտության թեկնածուի և դոկտորի գիտական աստիճաններ շնորհող թիվ 015 մասնագիտական խորհուրդը:

Ֆակուլտետի դասախոսներն ակտիվ ներգրավված են ԵՊՀ-ում գործող բիզնես ինկուբատորի աշխատանքներում:

Առաջարկվող կրթական ծրագրերն ու շնորհվող որակավորումները

ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ

4-ամյա ծրագրի ավարտին շրջանավարտներին շնորհվում է տնտեսագիտության բակալավրի կամ կառավարման բակալավրի պետական դիպլոմ՝ կախված ընտրված կրթական ծրագրից: «Բակալավրի» որակավորումը շրջանավարտներին լայն հնարավորություններ է ընձեռում զբաղեցնել պաշտոններ տնտեսության տարբեր բնագավառներում, ինչպես նաև երկրի պետական կառավարման համակարգում և այլ ոլորտներում:

2026/2027 ուստարում **բակալավրիատում** (ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցմամբ) ընդունելությունը կազմակերպվում է երեք կրթական ծրագրերով՝

- ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
- ԿԱՌԱՎԱՐՈՒՄ (ԸՍՏ ՈԼՈՐՏԻ)
- ՖԻՆԱՆՍՆԵՐ (ԸՍՏ ՈԼՈՐՏԻ)

1. **«Տնտեսագիտություն»** *(շնորհվող աստիճանը՝ տնտեսագիտության բակալավր)*

Ծրագրի առավելությունները՝

- տնտեսագիտական առարկաների լայն շրջանակի ուսումնասիրություն,
- ճկուն անհատական ուսումնական ծրագիր,
- խորը մաթեմատիկական գիտելիքներ,
- ֆինանսաբանկային ոլորտի ուսումնասիրություն,
- առաջարկվող մի քանի օտար լեզուներից ընտրություն կատարելու հնարավորություն,

- մասնագիտական պրակտիկա ՀՀ մասնավոր և պետական կազմակերպություններում ու գերատեսչություններում:

Ծրագրի շրջանավարտները հնարավորություն ունեն ուսումը շարունակելու «Տնտեսագիտություն» մասնագիտության (առանց ընդունելության քննության) և այլ մասնագիտությունների գծով գործող մագիստրոսական կրթական ծրագրերում, ինչպես նաև կրճատված ժամկետներում՝ ստանալու բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան՝ 2-րդ մասնագիտության գծով:

Ավարտին՝ ծրագրի շրջանավարտը կունենա համապարփակ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ տնտեսագիտության տեսության, անցումային տնտեսության ուսումնասիրության, տնտեսագիտական մտքի պատմության, դրամավարկային, հարկաբյուջետային և մաքսային քաղաքակա-նությունների, միկրոտնտեսական և մակրոտնտեսական գործընթացների ուսումնասիրման համար մաթեմատիկական և էկոնոմետրիկ մոդելավորման մեթոդների կիրառման, որոշումների կայացման, միջազգային տնտեսագիտության, ֆինանսների, մարքեթինգի, մենեջմենթի, գործարարության, տնտեսության պետական կարգավորման և այլ բնագավառներում: Կրթական ծրագրի նպատակն է պատրաստել բարձրորակ տնտեսագետ-մասնագետներ տնտեսության տարբեր ոլորտներում տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների, ֆինանսաբանկային ոլորտի, արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի տարբեր օղակների, ինչպես նաև ՀՀ-ում գործունեություն ծավալած միջազգային կազմակերպությունների համար: Ծրագրի շրջանավարտները հնարավորություն կունենան աշխատել՝ ՀՀ կառավարությունում, նախարարություններում, պետական այլ գերատեսչություններում, մասնավոր սեկտորի կազմակեր-պություններում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, միջազգային կառույցներում և այլն:

2. **«Կառավարում (ըստ ոլորտի)»** *(շնորհվող աստիճանը՝ կառավարման բակալավր)*

Ծրագրի առավելությունները՝

- կառավարման առարկաների լայն շրջանակի ուսումնասիրություն,
- համապարփակ գիտելիք և հմտություններ բիզնեսի ստեղծումից մինչև կայացում հաջորդական բոլոր գործընթացների կառավարման վերաբերյալ,
- ճկուն անհատական ուսումնական ծրագիր,
- ուժեղ ֆինանսական կառավարման հմտություններ,
- առաջարկվող մի քանի օտար լեզուներից ընտրություն կատարելու հնարավորություն,

- մասնագիտական պրակտիկա և այցեր տնտեսության տարբեր ոլորտների կազմակերպություններ և հանդիպումներ ոլորտի փորձառու կառավարիչների հետ:

Ծրագրի շրջանավարտները հնարավորություն ունեն ուսումը շարունակելու «Կառավարում» մասնագիտության (առանց ընդունելության քննության) և այլ մասնագիտությունների գծով գործող մագիստրոսական ծրագրերում, ինչպես նաև կրճատված ժամկետներում՝ ստանալու բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան՝ 2-րդ մասնագիտության գծով:

Ավարտին՝ ծրագրի շրջանավարտը կունենա համապարփակ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ պետական կառավարման համակարգի բոլոր օղակների, ինչպես նաև բիզնեսի ստեղծումից մինչև կայացում բոլոր գործընթացների կառավարման վերաբերյալ՝ բիզնես գաղափարի ձևավորումից մինչև կազմակերպության գրանցում, գործունեության պլանավորում, մարդկային ռեսուրսների կառավարում, մարքեթինգային ռազմավարության մշակում, կազմակերպության գործունեության վերաբերյալ հաշվետվություն-ների պատրաստում, կազմակերպության ֆինանսական վերլուծություն, կազմակերպության գործունեությանը բնորոշ ռիսկերի բացահայտում և կառավարում, վերահսկողություն, արդյունավետ կառավարչական որոշումների ընդունում: Ծրագիրը հնարավորություն է ընձեռում ուսանողներին զարգացնել տնտեսագիտական մտածողությունը, ունակ լինել ստեղծել սեփական բիզնեսը, կյանքի կոչել նորարարական գաղափարները: Այն անընդհատ լրամշակվում է և արձագանքում է շուկայի ժամանակակից պահանջներին՝ տրամադրելով նաև նախագծերի կառավարման (project manager), թվային բիզնեսի, ռազմավարական կառավարման, լոգիստիկայի, որակի կառավարման համակարգերի և այլ ժամանակակից մասնագիտացումների վերաբերյալ գիտելիք և հմտություններ: Ծրագրի շրջանավարտները հնարավորություն ունեն ստեղծելու սեփական բիզնեսը, ինչպես նաև աշխատել ոլորտային կազմակերպություններում որպես անձնակազմի, ռիսկերի, ֆինանսների, որակի, նախագծերի և այլ օղակների կառավարիչներ, ստորաբաժանումների ղեկավարներ, վերլուծաբաններ, խորհրդականներ: Ծրագրի շրջանավարտները հնարավորություն կունենան աշխատել պետական կառավարման համակարգում՝ կառավարությունում, նախարարություններում, պետական այլ գերատեսչություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև մասնավոր հատվածում՝ արտադրական, ֆինանսաբանկային, ծառայությունների մատուցման ոլորտների կազմակերպություններում: Նրանք հնարավորություն կունենան նաև աշխատել ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչպես նաև միջազգային կառույցներում:

«Ֆինանսներ (ըստ ոլորտի)» (շնորհվող աստիճանը՝ տնտեսագիտության

բակալավր)

Ծրագրի առավելությունները՝

- ֆինանսների կառավարման առարկաների լայն շրջանակի ուսումնասիրություն,
- ճկուն անհատական ուսումնական ծրագիր,
- ֆինանսական մտածողության ձևավորմանը նպաստող դասընթացներ,
- խորը մաթեմատիկական գիտելիքներ,
- առաջարկվող մի քանի օտար լեզուներից ընտրություն կատարելու հնարավորություն,
- ուսումնառության գործնական (պրակտիկ) ուղղվածություն,
- մասնագիտական պրակտիկա և այցեր ֆինանսաբանկային ոլորտի հաստատություններ, կազմակերպություններ և հանդիպումներ ոլորտի փորձառու մասնագետների հետ:

Ծրագրի շրջանավարտները հնարավորություն ունեն ուսումը շարունակելու «Ֆինանսներ» մասնագիտության (առանց ընդունելության քննության) և այլ մասնագիտությունների գծով գործող մագիստրոսական ծրագրերում, ինչպես նաև կրճատված ժամկետներում՝ ստանալու բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան՝ 2-րդ մասնագիտության գծով:

Ավարտին՝ ծրագրի շրջանավարտը կունենա համապարփակ գիտելիքներ, հմտություններ և կարողություններ բիզնեսի ֆինանսական վերլուծության, հանրային և կորպորատիվ ֆինանսների կառավարման, այդ թվում՝ կազմակերպման, պլանավորման, վերլուծության և գնահատման ոլորտներում, պետական ֆինանսների, դրամավարկային, հարկաբյուջետային և մաքսային քաղաքականության, ֆինանսական շուկաների և ֆինանսական ծառայությունների մատուցման արդյունավետ կազմակերպման, կարգավորման և վերլուծության, բանկերի և ոչ-բանկ ֆինանսական հաստատությունների, աուդիտի, հաշվապահության և այլ բնագավառներում: Ծրագրի նպատակն է պատրաստել ֆինանսագիտության խորը գիտելիքներ, բարձր որակավորում ունեցող, մրցունակ մասնագետներ ֆինանսաբանկային ոլորտի, տնտեսության տարբեր ոլորտներում տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների, ինչպես նաև պետական կառավարման համակարգերի տարբեր օղակների համար: «Ֆինանսներ» ծրագիրն ապահովում է համապատասխան ակադեմիական բազա այն ուսանողների համար, ովքեր մտադիր են իրենց ապագա կարիերան կառուցել բիզնեսի, բանկային հատվածի, կազմակերպությունների ֆինանսական կառավարման և հանրային կառավարման ոլորտներում:

Ծրագրի շրջանավարտները հնարավորություն կունենան աշխատել պետական կառավարման համակարգում՝ ՀՀ կենտրոնական բանկում,

կառավարությունում, նախարարություններում, պետական այլ գերատեսչություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև մասնավոր հատվածում՝ արտադրական, ֆինանսաբանկային, ծառայությունների մատուցման ոլորտների կազմակերպություններում, այդ թվում՝ առևտրային բանկերում, ապահովագրական ընկերություններում, վարկային կազմակերպություններում և այլն: Նրանք հնարավորություն կունենան նաև աշխատել ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչպես նաև միջազգային կառույցներում:

ՄԱԳԻՍՏԱՏՈՒՐԱ

Մագիստրոսական ծրագրերի հիմնական նպատակը դիմորդների խորացված մասնագիտական վերապատրաստումն է: Ծրագրի ավարտին շրջանավարտներին շնորհվում է տնտեսագիտության մագիստրոսի կամ կառավարման մագիստրոսի պետական դիպլոմ՝ համապատասխան կրթական ծրագրով:

«Մագիստրոսի» որակավորումը շրջանավարտներին իրավունք է տալիս զբաղեցնել պաշտոններ, այդ թվում ընդգրկվել գիտահետազոտական աշխատանքներում, որոնց համար աշխատողից պահանջվում է խորացված, ոլորտային մասնագիտական կրթություն:

2026/2027 ուստարում մագիստրատուրայում ընդունելությունը կազմակերպվելու է յոթ մագիստրոսական ծրագրերով (առկա և հեռակա ուսուցմամբ)՝

«<u>ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ</u>

(շնորհվող աստիճանը՝ տնտեսագիտության մագիստրոս)

1. «Միջազգային տնտեսական հարաբերություններ» կրթական ծրագիր ***(առկա ուսուցմամբ՝ 1.5 տարի, հեռակա ուսուցմամբ՝ 2 տարի)***

Ուսումնառության ընթացքում ուսանողները ձեռք են բերում տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ միջազգային տնտեսական հարաբերությունների ոլորտում: Մագիստրոսական կրթական ծրագրում ներգրավված են տվյալ ոլորտի լավագույն մասնագետները, այդ թվում՝ հրավիրյալ դասախոսներ այլ բուհերից, գիտահետազոտական կենտրոններից և ֆինանսական ոլորտից:

Ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել հանրապետությունում գործող միջազգային այնպիսի տնտեսական կազմակերպությունների գրասենյակներում, ինչպիսիք են Համաշխարհային բանկը, Արժույթի միջազգային հիմնադրամը, ՄԱԿ-ի տնտեսական հանգույցներում, ՀՀ-ում գտնվող տարբեր երկրների դեսպանատներում: Հանրապետության բոլոր նախարարությունները, կազմակերպությունները, ինչպես նաև ձեռնարկությունների զգալի մասը ունեն արտաքին տնտեսական կապերով զբաղվող վարչություններ և բաժիններ, որտեղ նույնպես կարող են աշխատել տվյալ ծրագրի շրջանավարտները: ՀՀ-ում գործող առևտրային բանկերը զբաղվում են

արտաքին առևտրի ֆինանսավորման հարցերով, միջազգային վարկերի սպասարկումով, արժութաֆինանսական գործարքներով, տարբեր միջազգային բանկերի հետ թղթակցային հարաբերություններով: Ծրագրի շրջանավարտները կարող են զբաղվել նշված բոլոր գործառույթներով:

2. «Տվյալների գիտությունը բիզնեսում» կրթական ծրագիր (*առկա ուսուցմամբ՝ 1.5 տարի*)

«Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրի լավագույն ուսանողները, մեկ տարի սովորելով ԵՊՀ այս մագիստրոսական ծրագրում և մեկ տարի էլ շարունակելով Սան Խոսեի պետական համալսարանում (ԱՄՆ), հնարավորություն ունեն ստանալու կրկնակի դիպլոմ:

Կրթական ծրագիրն առաջին անգամ Հայաստանում ստեղծել է այնպիսի միջգիտակարգային ծրագիր, որը կպատրաստի մրցունակ, միջազգային կրթության որակներին համապատասխան մասնագետներ, որոնք կներկայացնեն միանգամից երեք ոլորտ՝ մաթեմատիկա, ծրագրավորում և բիզնես վերլուծություն: Միևնույն ժամանակ ծրագիրը կենտրոնացած է բիզնես գործընթացներում այդ գիտելիքների պրակտիկ կիրառությունների վրա և չի տրամադրում զուտ տեսական գիտելիք: «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագիրն ակադեմիական և նորարարական կրթությունների ակտիվ համագործակցության վառ օրինակ է, որը նախատեսված է նոր սերնդի տվյալների վրա հիմնված և նորարարությանը միտված մասնագետների վերապատրաստման համար, որոնք կարող են որպես տվյալագետներ աշխատել խոշոր տվյալների նոր էկոհամակարգերում, բիզնես, հաճախորդների վարքագծային վերլուծության, տվյալների նախագծման, կառուցման, մոդելավորման և կառավարման ոլորտներում: Այս կրթական ծրագիրն ուսանողներին ներգրավում է ինտենսիվ ուսուցման մեջ, տալիս է ոլորտի փորձագետների հետ աշխատելու գործնական, աշխատանքային փորձ և պարզապես չի լրացնում ունեցած ակադեմիական գիտելիքները, այլ սովորեցնում է ճիշտ օգտագործել ծրագրում ստացած կիրառական գիտելիքները:

Կրթական ծրագրի ուսանողները մրցունակ մասնագետներ են այսօրվա աշխատաշուկայում: Նրանք իրենց ստացած արդիական գիտելիքներով դարձել են աշխարհում տեղի ունեցող տվյալների հեղափոխության կարևոր մասնիկ՝ տվյալագիտության մեջ տեսական գիտելիքները փոխկապակցելով բիզնեսի պահանջներին, օգտագործելով Python, R, Java, SQL ծրագրավորման լեզուները, հեշտությամբ բիզնես որոշումներ են կայացնում՝ օգտագործելով տվյալների գիտության, մեքենայական ուսուցման և արհեստական բանականության մեթոդները: ՏԳԲ կրթական ծրագրի շրջանավարտներն այսօր աշխատում են SS առաջատար կազմակերպություններում՝ Picsart, SmartClickAI, WorldQuant, Krisp, Plat.ai, Service Titan, WebbFontaine, PMI Science, Cognaize, Synopsys Armenia,

NVIDIA, DataMotus, Sololearn, DataArt, ՀՀ կառավարությունում, նախարարություններում և պետական այլ գերատեսչություններում, միջազգային կառույցներում:

<u>«ՖԻՆԱՆՍՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ</u>

(շնորհվող աստիճանը՝ տնտեսագիտության մագիստրոս)

3. «Ֆինանսներ» կրթական ծրագիր (*առկա ուսուցմամբ՝ 1 տարի*)

«Ֆինանսներ» մագիստրոսական կրթական ծրագիրը ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «Ֆինանսներ» բակալավրի կրթական ծրագրի տրամաբանական շարունակությունն է: Ելնելով մագիստրոսական կրթական ծրագրի նպատակներից՝ «Ֆինանսներ» կրթական ծրագրում դասավանդելու են միջազգային հայտնի բուհերում՝ Լոնդոն Բիզնես Սքուլում («London Business School», ծրագիրը՝ «Master in Finance»), ՄԻԹ Սլոան Սքուլ օֆ Մենեջմենթում («MIT Sloan School of Management», ծրագիրը՝ «Master of Finance»), Փենսիլվանիայի համալսարանում, Ուորթոնի դպրոցում («Wharton School, University of Pennsylvania» ծրագիրը՝ «Master of Science in Finance»), Ֆրանկֆուրտի Ֆինանսների և կառավարման դպրոցում («Frankfurt School of Finance & Management», ծրագիրը՝ «Master in Finance»), Սինգապուրի կառավարման համալսարանում («Singapore Management University», ծրագիրը՝ «Master of Finance) և այլ նմանատիպ ծրագրերով ներառված առարկաներ: Նշված դասընթացները դասավանդելու են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, հանրային ոլորտում հետազոտական, վերլուծական և փորձագիտական փորձ ունեցող արհեստավարժ պրոֆեսորադասախոսական անձնակազմի օգնությամբ: Վերոգրյալի շնորհիվ ի վերջո հնարավոր կլինի հնարավորինս սեղմ ժամկետներում (մեկ տարի) պատրաստել անհրաժեշտ և բավարար գիտելիքներով ժամանակակից ֆինանսիստներ: Ծրագրի հիմնական նպատակն է ուսանողներին ֆինանսական ոլորտում առաջադեմ գիտելիքների և մասնագիտացված հմտությունների մատուցումը, ինչի արդյունքում հնարավոր կլինի պատրաստել շրջանավարտների, որոնք կտիրապետեն ֆինանսների տեսությանը, կունենան առաջադեմ վերլուծական հմտություններ և պատրաստ կլինեն գերազանցելու բանկային համակարգում, ոչ բանկ ֆինանսական կազմակերպություններում, պետական ֆինանսական հաստատություններում և ֆինանսական այլ հաստատություններում: «Ֆինանսներ» մագիստրոսական կրթական ծրագիրն ապահովում է համապատասխան ակադեմիական հիմք այն ուսանողների համար, որոնք մտադիր են իրենց ապագա կարիերան կառուցել բիզնեսի, բանկային հատվածի, կազմակերպությունների ֆինանսական կառավարման և հանրային կառավարման ոլորտներում: Ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել տնտեսության տարբեր ոլորտների ձեռնարկություններում,

Կենտրոնական բանկում, առևտրային բանկերում, խորհրդատվական ընկերություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում՝ ՀՀ նախարարություններում և տարբեր գերատեսչություններում՝ զբաղեցնելով տարբեր պատասխանատու պաշտոնները, այդ թվում՝ ֆինանսական խորհրդատու, տնտեսագետ, հաշվապահ, ֆինանսիստ, վարկային մասնագետ, ռիսկերի կառավարման մասնագետ և այլն:

4. «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» կրթական ծրագիր (*հեռակա ուսուցմամբ՝ 2.5 տարի*)

Ծրագիրն ապահովում է համապատասխան ակադեմիական բազա այն ուսանողների համար, ովքեր մտադիր են իրենց ապագա կարիերան կառուցել բիզնեսի, բանկային հատվածի, կազմակերպությունների ֆինանսական կառավարման և հանրային կառավարման ոլորտներում: Մագիստրոսական ծրագրի նպատակն է պատրաստել տնտեսության ֆինանսների ոլորտի հիմնարար գիտելիքներ և հմտություններ ունեցող մասնագետներ, որոնք ունակ կլինեն վերլուծելու և համակարգելու տնտեսական ոլորտին առնչվող ֆինանսական խնդիրները, կատարելու համապատասխան կանխատեսումներ, որոշումներ կայացնելու բանկային, ոչ բանկային, հարկային, մաքսային և ֆինանսական բաժնին առնչվող տարբեր ոլորտներում: Ուսումնառության ընթացքում ուսանողները կուսումնասիրեն ժամանակակից ֆինանսական ոլորտի գլոբալ և լոկալ հիմնախնդիրները, դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության ծրագրերի կազմման և վերլուծության ժամանակակից մոտեցումները, բանկային մենեջմենթի և մարքեթինգի մեթոդները, բանկային, մաքսային գործունեության և վարչարարության հիմնարար սկզբունքները: Ծրագրի շրջանավարտները հնարավորություն ունեն աշխատանքի անցնելու տնտեսության տարբեր ոլորտների ձեռնարկություններում, առևտրային բանկերում, խորհրդատվական ընկերություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում՝ զբաղեցնելով ֆինանսական ոլորտի դասընթացների դասախոսի, ֆինանսական խորհրդատուի, տնտեսագետի, հաշվապահի, ֆինանսիստի, վարկային մասնագետի, ռիսկերի կառավարման մասնագետի, ակտիվների և պասիվների կառավարման մասնագետի և այլ պաշտոններ:

Հնարավոր աշխատավայրերն են ՀՀ նախարարությունները, ՀՀ կենտրոնական բանկը, բուհերը, առևտրային բանկերը, ապահովագրական կազմակերպությունները, մասնավոր կազմակերպությունները:

<u>«ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ՀԱՐԿՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ</u>

(շնորհվող աստիճանը՝ տնտեսագիտության մագիստրոս)

5. «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» կրթական ծրագիր (*առկա ուսուցմամբ՝ 1.5 տարի, հեռակա ուսուցմամբ՝ 2 տարի*)

Ծրագիրն ապահովում է համապատասխան ակադեմիական բազա այն ուսանողների համար, որոնք մտադիր են իրենց ապագա կարիերան կառուցել բիզնեսի, ֆինանսների, կազմակերպությունների հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտներում: Կրթական ծրագրի նպատակն է պատրաստել տնտեսության ֆինանսների ոլորտի հիմնարար գիտելիքներ և հմտություններ ունեցող մասնագետներ, որոնք ունակ կլինեն գրանցել և վերլուծել ֆինանսատնտեսական գործունեության ոլորտին առնչվող տեղեկատվական տվյալները, ձևավորել կազմակերպության հաշվառման քաղաքականությունը, կազմել և վերստուգել ֆինանսական հաշվետվությունները: Ծրագիրը բարեհաջող ավարտած ուսանողն կտիրապետի ֆինանսական, կառավարչական և հարկային հաշվառման տեսական հիմունքները, սկզբունքները և հիմնախնդիրները, հարկաբյուջետային հարաբերությունների, հարկային, մաքսային վարչարարության նորմատիվ կարգավորման դրույթները, թվարկելու աուդիտորական գործունեության սկզբունքները, ներկայացնելու օրենսդրությունը և աուդիտորական ստանդարտները, նկարագրելու և դասակարգելու կազմակերպության և պետական գործառույթների բյուջետավորման ընթացակարգերը, ներկայացնելու ժամանակակից ֆինանսական ոլորտի գլոբալ և լոկալ հիմնախնդիրները, ձևակերպելու դրամավարկային քաղաքականության, բանկային գործունեության վերլուծության ժամանակակից մոտեցումները, գործնականում իրականացնելու ֆինանսական, կառավարչական և բանկային հաշվառում, ինչպես նաև միջազգային ստանդարտների հիման վրա կազմել ֆինանսական հաշվետվություններ և կատարել բազմագործոն վերլուծություններ:

<u>«ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ</u>

(շնորհվող աստիճանը՝ կառավարման մագիստրոս)

6. «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագիր (*առկա ուսուցմամբ՝ 1.5 տարի, հեռակա ուսուցմամբ՝ 2 տարի*)

Ծրագրի նպատակն է պատրաստել բիզնեսի ոլորտի նեղ ֆունկցիոնալ կառավարիչների, որոնք ISO 9001 միջազգային չափանիշներին համապատասխան կարող են բացահայտել կազմակերպության գործունեության ուղղություններին, գործարար գործընթացներին, բիզնես-համակարգերին, անձնակազմին, երրորդ անձանց, կազմակերպության հսկողությունից դուրս գտնվող անբարենպաստ արտաքին իրավիճակներին ուղեկցող ռիսկերը և միջոցառումներ իրականացնել դրանց նվազեցման ուղղությամբ, մշակել ռիսկերի կառավարման համակարգ՝ կազմակերպության ֆինանսական կայունության ամրապնդման նպատակով, մշակել և ներդնել կոնտրոլինգի համակարգ կազմակերպություններում, ներդնել կորպորատիվ կառավարման, արդյունավետ հաղորդակցման, անձնակազմի խթանման և գնահատման

մեթոդաբանություն, կիրառել գործնական հմտություններ գնահատելու կառավարչական որոշումների արդյունավետությունն ու արդյունքայնությունը տեղեկատվության՝ որոշակիության և անորոշության պայմաններում, ախտորոշել և գնահատել կազմակերպությունների անվճարունակությունը՝ գործարկելով վարկանշման մեթոդաբանություն:

Ծրագրի շրջանավարտները բարեհաջող անցնելով դասընթացը կարող են համալրել աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մրցունակ կառավարիչ-առաջնորդների կազմը, որոնց հատուկ է ստեղծարար կառավարչական գործելաոճը: Վերջիններս կարող են աշխատանքի անցնել կազմակերպությունների՝ ցածր, միջին և բարձր օղակի պաշտոններում:

Մագիստրոսական ծրագիրը հաջողությամբ ավարտած շրջանավարտները մասնագիտորեն պատրաստված կլինեն աշխատանքի և կկարողանան աշխատել որպես կառավարման բոլոր մակարդակների ղեկավարներ և փորձագետ-վերլուծաբաններ՝ տարբեր ոլորտներում մասնագիտացված կազմակերպություն-ներում, իրենց բիզնես գաղափարները գործնական կյանքում իրագործողներ և սեփական կազմակերպությունների հիմնադիրներ, փորձագետ-վերլուծաբան-ներ, նախագծերի, անձնակազմի, ֆինանսական, լոգիստիկայի, ռիսկերի կառավարման մասնագետներ, կազմակերպությունների վարկանշման մեջ ներգրավված մասնագետներ, կազմակերպության վերահսկողության մասով պատասխանատուներ, նախագծի կառավարիչներ, բիզնես խորհրդատուներ (բիզնես խնդիրների բացահայտում և լուծման ուղիների մշակում, որակի կառավարման համակարգի մշակում և ներդրում, կազմակերպությունների վարկանշում) և այլն:

«Շուկայագիտություն (մարքեթինգ)» մասնագիտություն

(շնորհվող աստիճանը՝ կառավարման մագիստրոս)

7. «Շուկայագիտություն (մարքեթինգ)» կրթական ծրագիր (*առկա ուսուցմամբ՝ 1.5 տարի, հեռակա ուսուցմամբ՝ 2 տարի*)

«Շուկայագիտություն (մարքեթինգ)» մագիստրոսական ծրագրի նպատակն է պատրաստել մրցունակ մասնագետներ, որոնք իրենց ակադեմիական և պրակտիկ գիտելիքը կիրացնեն ինչպես տեղական, այնպես էլ միջազգային կազմակերպություններում: Հաշվի առնելով աշխատաշուկայում շուկայագետ-ների նկատմամբ անընդհատ աճող պահանջարկը, ինչպես նաև որակյալ մասնագետներ պատրաստելու արդի մարտահրավերը՝ առարկայական ծրագրերը մշտապես կատարելագործվում են:

Մագիստրոսական ծրագրի շրջանակում ուսումնասիրվում են շուկայի հետազոտման մեթոդներ, ռազմավարական մարքեթինգ, թվային մարքեթինգ (Digital marketing), սպառողի վարքի կառավարում, պրոֆայլինգ (Profiling), նեյրոմարքեթինգ, սոցիալական մեդիաների մարքեթինգ (SMM), հաճախորդների

հետ հարաբերությունների կառավարում (CRM) և այլ դասընթացներ: «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մագիստրոսական ծրագրի դասախոսական կազմում ներգրավված են ինչպես ակադեմիական փորձ ունեցող (գիտությունների թեկնածուներ, դոցենտներ, դոկտորներ, պրոֆեսորներ), այնպես էլ հրավիրյալ նեղ ոլորտային մասնագետներ՝ մարքեթինգային կազմակերպությունների հիմնադիրներ, ղեկավարներ, խոշոր կազմակերպությունների մարքեթինգի բաժինների ղեկավարներ:

Ուսումնառության ընթացքում ուսանողների համար կազմակերպվում են մասնագիտական վարպետության և արտալսարանային դասեր: Ավարտական կուրսում ուսանողներն անցնում են 2 ամիս տևողությամբ մասնագիտական պրակտիկա մարքեթինգային կազմակերպություններում կամ խոշոր կազմակերպությունների մարքեթինգի բաժիններում: Ուսումնառության ընթացքում ձեռք բերելով և՛ ակադեմիական գիտելիքի, և՛ պրակտիկ հմտությունների մեծ պաշար, ուսանողները՝ որպես որակավորված մասնագետներ, ստանում են աշխատանքի առաջարկ ինչպես ուսումնառության շրջանում և պրակտիկայի ընթացքում, այնպես էլ մագիստրոսի որակավորում ստանալուց հետո: Տվյալ կրթական ծրագրի շրջանավարտը հնարավորություն ունի աշխատելու որպես մարքեթինգային կազմակերպությունների ղեկավար, տարբեր ոլորտների կազմակերպությունների մարքեթինգի բաժնի ղեկավար, պրոդուկտ մենեջեր, բրենդ մենեջեր, վաճառքի մենեջեր, PR մենեջեր, շուկայի զարգացման մասնագետ, մերչնդայզեր և այլն:

ԵՊՀ մագիստրատուրայի 2026/2027 ուստարվա առկա և հեռակա ուսուցման ձևերով ընդունելությանը մասնակցելու հնարավորություն ունեն ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված/ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած ոչ պետական այլ բուհերի բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները:

Աշխատանքային հեռանկարներն ու կապն աշխատաշուկայի հետ

Վերջին տարիներին ֆակուլտետն ուսուցման տարբեր ձևերով ավարտում ու որակավորում են ստանում տարեկան շուրջ 350 շրջանավարտներ, ովքեր աշխատում են պետական և մասնավոր կառույցներում՝ արտադրական և այլ ձեռնարկություններում, առևտրային բանկերում, ՀՀ նախարարություններում և գերատեսչություններում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, ՀՀ կենտրոնական բանկում և այլն:

Տնտեսագիտական կրթության որակական բարելավման, դասախոսական կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման կարևորագույն նախադրյալներից է համագործակցությունը արտասահմանյան առաջավոր համալսարանների հետ:

Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում միջազգային

համագործակցությունը դիտարկվում է որպես զարգացման և կրթության որակի բարելավմանն ուղղված ռազմավարական կարևոր ուղղություն: Ֆակուլտետը միջազգային համագործակցության ծրագրեր իրականացնում է դեռևս 1993 թ-ից: Գործունեության տասնյակ տարիների ընթացքում կնքվել են համագործակցության մի շարք համաձայնագրեր աշխարհի հեղինակավոր համալսարանների հետ, որոնք ապահովել են ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի միջազգային շարժունությունը: Համալսարանը համագործակցում է շուրջ 50 երկրի ավելի քան 230 համալսարանների և գիտական կենտրոնների հետ:

Ի թիվս բազմաթիվ միջազգային համագործակցության ծրագրերի, Ֆակուլտետում ուսանողների համար լայն հնարավորություն է ապահովվում՝

- Էրազմուս+ ծրագրի շրջանակներում ուսանողների շարժունություն՝ բակալավրիատի երկրորդ կուրսից սկսած,
- միջբուհական համագործակցության ծրագրերի շրջանակներում՝ ուսանողների շարժունություն բակալավրիատի երկրորդ կուրսից սկսած,
- մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների համար միջազգային տարբեր բուհերում և գիտահետազոտական կենտրոններում հետազոտական դրամաշնորհներ և ուսումը շարունակելու համար կրթաթոշակներ ստանալու հնարավորություններ,

Ուսանողների շարժունության ծրագրերից օգտվելու կարևորագույն նախադրյալ է հանդիսանում օտար լեզուների տիրապետումը և բարձր առաջադիմությունը:

Կրկնակի դիպլոմի մագիստրոսական ծրագիր Սան Խոսեի պետական համալսարանի հետ (ԱՄՆ)

«*Տվյալների գիտությունը բիզնեսում*» (Data Science for Business) մագիստրոսական ծրագիրն իրականացվում է Սան Խոսեի պետական համալսարանի, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի ու Ինովացիոն լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնի հետ համատեղ և «PMI Science»-ի աջակցությամբ: «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրի լավագույն ուսանողները, մեկ տարի սովորելով ԵՊՀ այս մագիստրոսական ծրագրում և մեկ տարի էլ շարունակելով Սան Խոսեի պետական համալսարանում (ԱՄՆ), հնարավորություն ունեն ստանալու կրկնակի դիպլոմ:

Մագիստրոսական ծրագրի ուսումնական ամբողջ ծրագիրը լիովին համապատասխանեցված է Սան Խոսեի պետական համալսարանի «Տվյալների վերլուծություն» մագիստրոսական ծրագրի հետ: 2020 թ-ի սեպտեմբերից ամեն տարի ֆակուլտետի «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագրի երկրորդ կուրսի մինչև հինգ մագիստրանտներ կարող են ուսումը

շարունակել ԱՄՆ Սան Խոսեի պետական համալսարանի «Տվյալների վերլուծություն» ծրագրի երկրորդ կուրսում:

Փաստացի առաջին անգամ Հայաստանում ստեղծվել է այնպիսի *միջգիտակարգային կրթական ծրագիր*, որը պատրաստում է մրցունակ, միջազգային կրթության որակներին համապատասխան մասնագետներ, որոնք ներկայացնում են միանգամից երեք ոլորտ՝ ***մաթեմատիկա, ծրագրավորում և բիզնես վերլուծություն***: Միևնույն ժամանակ ծրագիրը կենտրոնացած է բիզնես գործընթացներում այդ գիտելիքների պրակտիկ կիրառությունների վրա և չի տրամադրում միայն զուտ տեսական գիտելիք:

«Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագիրն ակադեմիական և նորարարական կրթությունների ակտիվ համագործակցության վառ օրինակ է, որը նախատեսված է նոր սերնդի տվյալների վրա հիմնված և նորարարությանը միտված մասնագետների վերապատրաստման համար, որոնք կարող են որպես տվյալագետներ աշխատել խոշոր տվյալների նոր էկոհամակարգերում, բիզնեսի, սպառողների վարքագծային վերլուծության, տվյալների նախագծման, կառուցման, մոդելավորման և կառավարման ոլորտներում: ՏԳԲ կրթական ծրագրի շրջանավարտներն այսօր աշխատում են ՏՏ առաջատար կազմակերպություններում՝ Picsart, SmartClickAI, WorldQuant, Krisp, Plat.ai, Service Titan, WebbFontaine, PMI Science, Cognaize, Synopsys Armenia, NVIDIA, DataMotus, Sololearn, DataArt, ՀՀ կառավարությունում, նախարարու-թյուններում և պետական այլ գերատեսչություններում, միջազգային կառույցներում:

Ուսանողական կյանք և ժամանց

Ուսանողական կյանքն ավելի հետաքրքիր և բովանդակալից դարձնելու համար Ֆակուլտետում ակտիվ գործում են Ուսանողական խորհուրդը և Ուսանողական գիտական ընկերությունը: ՈՒԽ և ՈՒԳԸ ջանքերով Ֆակուլտետում կազմակերպվում են ինչպես գիտակրթական (գիտաժողովներ, սեմինարներ ու դասախոսություններ), այնպես էլ ժամանցային, մշակութային և ինտելեկտուալ բնույթի մշակութային բազմաթիվ միջոցառումներ, որոնց շարքում սիրված են բիզնես խաղերը և սեմինար-քննարկումները: Միջոցառումների ցանկում հատուկ տեղ է զբաղեցնում բարեգործությունը, բազմաթիվ են հայրենասիրական միջոցառումները, ինչպես նաև գիտաճանաչողական այցելությունները ՀՀ տեսարժան վայրեր, որոնց ակտիվորեն մասնակցում են թե՛ ուսանողները, թե՛ պրոֆեսորադասախոսական կազմը:

Ընդունելությունն ըստ կրթական ծրագրերի

Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում ընդունելությունը կկատարվի հետևյալ կրթական ծրագրերով՝

- տնտեսագիտություն

- ֆինանսներ (ըստ ոլորտի)
- կառավարում (ըստ ոլորտի):

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիների տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դիմորդների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և տեղերի քանակի.

Կրթական ծրագիր	Ուսուցման համակարգ	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը
Տնտեսագիտություն	Անվճ	123	2	115	2	102	2
	Վճ		58		58		63
Ֆինանսներ (ըստ ոլորտի)	Անվճ	119	2	128	2	112	2
	Վճ		68		68		68
Կառավարում (ըստ ոլորտի)	Անվճ	149	2	119	2	129	2
	Վճ		68		68		68

Անցողիկ միավորներն ըստ վերջին 3 տարիների.

Կրթական ծրագիր	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
	Անվճ	Վճ	Անվճ	Վճ	Անվճ	Վճ
Տնտեսագիտություն	39	23.5	37.25	23.5	37	17.75
Ֆինանսներ (ըստ ոլորտի)	39.25	26.75	39.75	27.75	35.75	22.75
Կառավարում (ըստ ոլորտի)	39.5	32.25	39.5	28.75	39.5	30.25

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատմական ակնարկ

Համալսարանի հիմնադրման առաջին իսկ տարիներին, չնայած առկա բազում ու բազմապիսի դժվարություններին, այդ թվում և ուսյալ փիլիսոփա մասնագետների բացակայությանը, լուրջ քայլեր են կատարվում համալսարանում «Փիլիսոփայություն» կրթական ծրագրի պարտադիր բաղադրիչ դարձնելու ուղղությամբ: 1964 թ. պատմության ֆակուլտետում բացվում է փիլիսոփայության բաժին, 1969 թ. տալիս է առաջին շրջանավարտները:

1968 թ. ստեղծվում է փիլիսոփայության գծով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդ, որի առաջին նախագահը դարձավ փիլիսոփայության ամբիոնի վարիչ, փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հենրի Գաբրիելյանը:

1970 թ. փիլիսոփայության ամբիոնի հիման վրա ստեղծվեց երեք ամբիոն՝ դիալեկտիկական մատերիալիզմի և տրամաբանության (վարիչ՝ փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Բրուտյան), պատմական մատերիալիզմի, բարոյագիտության և գեղագիտության (վարիչ՝ փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Մ. Մելիքյան) և փիլիսոփայության պատմության և գիտական աթեիզմի (վարիչ՝ փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հ. Գաբրիելյան):

1976 թ. ստեղծվում է հոգեբանության ամբիոն, որի առաջին վարիչը դարձավ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Թութունջյանը:

1982 թ-ին ԵՊՀ գիտական խորհուրդը որոշեց ստեղծել փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետ: 1990 թ-ին հոգեբանության ամբիոնի փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետ տեղափոխվելու կապակցությամբ այն վերանվանվեց փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հոգեբանության ֆակուլտետ: Սոցիոլոգիայի ֆակուլտետի ստեղծումից հետո մայր ֆակուլտետը կոչվում է փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ:

Ներկայումս փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դեկանն է փիլ. գիտ. թեկ., դոցենտ Ա.Ս.Բաղդասարյանը:

Կառուցվածքը

Այժմ ֆակուլտետում գործում է երկու փիլիսոփայության ամբիոն՝ փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության (վարիչ՝ փիլ. գիտ. դոկ. պրոֆ.Ս.Զաքարյան) և սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության (վարիչ՝ փիլ. գիտ. դոկ., պրոֆ. Է. Հարությունյան) ու երեք հոգեբանության ամբիոն՝ սոցիալական և կլինիկական հոգեբանության (վարիչ՝ հոգ. գիտ. դոկ., պրոֆեսոր Գ. Շահվերդյանը), ընդհանուր հոգեբանության (վարիչ՝ հոգ. գիտ. դոկ., պրոֆեսոր Հ.Մ.Ավանեսյան) և անձի հոգեբանության (վարիչ՝ հոգ. գիտ. թեկ., դոցենտ Ն. Խաչատրյան):

Ֆալուլտետում գործում են նաև «Հոգեբանության գիտահետազոտական

կենտրոն»-ը, «Հոգեբանական աջակցության ուսումնագործնական լաբորատորիան» և «Պատմության փիլիսոփայության և տեսության լաբորատորիան»:

«Հոգեբանության գիտահետազոտական կենտրոն»-ի գործունեությունը միտված է հոգեկան առողջության, հոգեբանական բարեկեցության և անվտանգության ոլորտներում արդիական մեթոդների կիրառմամբ համակարգված և բազմափուլ հոգեբանական հետազոտություններ կատարելուն, ստացված արդյունքների հիման վրա հոգեբանական գնահատում իրականացնելուն, ինչպես նաև խորհրդատվության չափորոշիչների և գործիքակազմի ստեղծմանը: Կենտրոնը հետազոտական նոր աշխատանքների միջոցով նաև ներդնում է տեսական ու գործնական արժեք ունեցող տվյալներ ակադեմիական և հանրամատչելի հարթակներում, ինչպես նաև ապահովում է հետազոտությունների արդյունքների կիրառելիությունը մարդկային գործունեության տարբեր ոլորտներում (կրթություն, առողջապահություն, գործարարություն, ռազմական ոլորտ, սոցիալ-մշակութային ոլորտ և այլն):

Կենտրոնի հետազոտական ուղղություններն են՝ մեթոդաբանություն, հոգեֆիզիոլոգիա, կոգնիտիվ գիտություններ, անձը իրական սոցիալական (COVID-19, հետպատերազմյան իրավիճակ) և մասնագիտական գործունեության միջավայրում: Կենտրոնն զբաղվում է նաև ամբողջ աշխարհում կիրառվող և բարձր արդյունավետություն ունեցող մեթոդների տեղայնացման գործընթացով: Կենտրոնը համագործակցում է տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների հետ՝ ապահովելով հետազոտական արդի գործիքակազմ և արդյունքների կիրառելիություն գործունեության տարբեր ոլորտներում:

Հետազոտական կենտրոնի ենթակառուցվածքի՝ «Անձ և սոցիալական միջավայր» գիտահետազոտական լաբորատորիայի աշխատանքն ուղղված է անձի ուսումնասիրության ժամանակակից հարցարանների տեղայնացմանը և հայերենով հարցարանների մշակմանը, սոցիալ-մշակութային փոփոխման պայմաններում անձի արժեքների, համոզմունքների և նույնականացման միտումների ուսումնասիրությանը, անձնային տարբեր բնութագրերի և մշակութային կողմնորոշումների միջմշակութային ուսումնասիրությանը՝ միջազգային համագործակցության շրջանակում: Գործունեության ողջ ընթացքում լաբորատորիայի հետազոտական թիմը մասնակցել է միջմշակութային մի շարք ուսումնասիրությունների՝ համագործակցելով աշխարհի տարբեր համալսարանների հետազոտողների հետ: Լաբորատորիայի հետազոտական գործունեության ընթացքում հայերեն լեզվով տեղայնացվել են և մշակվել ժամանակակից անձի հոգեբանության ոլորտում լայնորեն կիրառվող մի շարք կարևոր մեթոդիկաներ: Անձ և սոցիալական միջավայր

գիտահետազոտական լաբորատորիայի կազմում գործում է «Հանրային գործընթացների հոգեբանական ուսումնասիրություններ» գիտական խումբը: Խումբը միտված է իրականացնելու այնպիսի ուսումնասիրություններ, որոնք օգնում են ավելի լավ հասկանալ, ինչպես նաև հեռահար առումով՝ բարելավել այսօր այստեղ գործող անհատի և խմբերի հնարավորությունները՝ մասնակցելու և դրականորեն ազդելու սեփական իրականության վրա:

«Հոգեբանական աջակցության ուսումնագործնական լաբորատորիան» ունի երկու հիմնական գործառույթ. կազմակերպել մագիստրատուրայում սովորող հոգեբանների մասնագիտական պրակտիկան, նրանց պատրաստել որպես պրակտիկ հոգեբաններ և ԵՊՀ ուսանողներին տրամադրել անվճար հոգեբանական աջակցություն: Այս երկու հիմնական նպատակին հասնելու համար լաբորատորիան կազմակերպում է ուսումնական խմբեր՝ մասնագիտական հմտությունների ձևավորման և գործնական գիտելիքների ձեռքբերման համար, թրեյնինգային և սուպերվիզիոն խմբեր հոգեբան ուսանողների համար, լրացուցիչ մասնագիտական կրթության ծրագրեր (կարճաժամկետ և երկարաժամկետ), բաց բնույթի սեմինարներ և քննարկումներ, որոնք նպաստում են ԵՊՀ ուսանողների հոգեբանական և անձնային աճին:

«Պատմության փիլիսոփայության և տեսության լաբորատորիան» հետազոտական կենտրոն է, որի ուշադրության առանցքը պատմության գաղափարն է, պատմության վերամտածման ու վերաշարադրման հնարավորությունը, պատմական մեթոդների կիրառման հորիզոնները: Լաբորատորիան առաջիկա տարիներին հետազոտելու է արդիականացման հայկական հարացույցները՝ խնդիր դնելով նոր շերտեր բացահայտելու 19-20-րդ դարերի պատմության, մասնավորապես հայոց պատմության մեջ: Լաբորատորիայի արտասահմանյան ղեկավարներն են Տուրկուի համալսարանի (Ֆինլանդիա) պրոֆեսոր Կալլե Փիհլայնենը և Ժնևի համալսարանի (Շվեյցարիա) պրոֆեսոր Վալենտինա Կալցոլարին, համաղեկավարը ԵՊՀ դոցենտ Դավիթ Մոսինյանն է: Լաբորատորիան նպաստում է ժամանակակից գիտական դիսկուրսի զարգացմանը՝ հարթակ առաջարկելով նորարարական մտածողության և պատմական նոր մեթոդաբանությունների հետազոտման համար:

Այժմ ֆակուլտետում գործում է առկա և հեռակա ուսուցում և՛ բակալավրիատում և՛ մագիստրատուրայում: Ֆակուլտետում սովորում են բակալավրիատի 520 ուսանող, որից 401-ը՝ առկա, 119-ը՝ հեռակա, և մագիստրատուրայի 162 ուսանող, որից 143-ը՝ առկա, 19-ը՝ հեռակա:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Ֆակուլտետում աշխատում են 1 թղթակից անդամ, 6 գիտության դոկտոր, պրոֆեսոր, 44 գիտության թեկնածու, 34 դոցենտ, 9 ասիստենտ և 34 դասախոս:

Առաջարկվող կրթական ծրագրերն ու շնորհվող որակավորումները

ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ

Առկա.

- Փիլիսոփայություն (4 տարի)
- Հոգեբանություն (4 տարի)

Հեռակա

- Հոգեբանություն (5 տարի)

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ

Առկա

Բարոյագիտություն (2 տարի)

Կլինիկական հոգեբանություն և հոգեթերապիա (2 տարի)

Կառավարման հոգեբանություն (1,5 տարի)

Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն (2 տարի)

Մանկական հոգեբանություն և հոգեթերապիա (2 տարի)

Ընտանիքի հոգեբանություն (1 տարի)

Հեռակա

Կիրառական հոգեբանություն (2,5 տարի)

ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏ

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի նպատակն է պատրաստել կրթության, գիտության և քաղաքացիական հասարակության կառույցներում փիլիսոփայության և բարոյագիտության մասնագետներ, որոնք ունակ կլինեն վերլուծել տեսական ու կիրառական փիլիսոփայության հիմնահարցերը և համակարգել արդի քաղաքակրթության գիտական ու փիլիսոփայական զարգացման միտումները, ինչպես նաև կանխատեսել քաղաքակրթական ճգնաժամերի աշխարհայացքային շարժառիթները, մշակել դրանց հաղթարման հայեցակարգերը: Ծրագրի ավարտին ուսանողը ստանում է փիլիսոփայության բակալավրի որակավորում, իսկ նախապես «Մանկավարժական մոդուլ»-ն ընտրած լինելու դեպքում՝ նաև ուսուցչի որակավորում:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ծրագիրը նպատակ ունի տրամադրելու բազմակողմանի գիտելիքներ հոգեբանության հիմնարար ոլորտների՝ ընդհանուր հոգեբանության, սոցիալական, զարգացման, կլինիկական հոգեբանության վերաբերյալ, ինչպես նաև զարգացնելու ուսանողների մասնագիտական կարողությունները՝ ուսուցանելով հոգեախտորոշման, հոգեբանական հետազոտության իրականաց-ման, հոգեբանական խորհրդատվության սկզբունքներն ու մեթոդները: Ծրագրի ավարտին ուսանողը ստանում է հոգեբանության բակալավրի որակավորում հոգեբանություն մասնագիտությամբ:

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ

ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի նպատակն է պատրաստել կրթության, գիտության և քաղաքացիական հասարակության կառույցներում բարոյագիտության մասնագետներ, որոնք ունակ կլինեն կանխատեսել սոցիոմշակութային և բարոյական շարժառիթներ ունեցող ճգնաժամային երևույթները և մշակել դրանց հաղթահարման հայեցակարգեր,վերլուծել և համակարգել ժամանակակից քաղաքակրթական մարտահրավերների աշխարհայացքային, սոցիալ-փիլիսոփայական և բարոյական հիմնախնդիրները, դասավանդել կրթական համակարգերում, աշխատել կրթական ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպություններում, վերլուծական կենտրոններում և հասարակական կազմակերպություններում:

Ծրագրի ավարտին ուսանողը ստանում է փիլիսոփայության մագիստրոսի որակավորում բարոյագիտություն մասնագիտացմամբ:

ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԹԵՐԱՊԻԱ

Ծրագիրը նպատակ ունի զարգացնելու ուսանողների մասնագիտական կարողությունները՝ կլինիկական հոգեբանության և հոգեթերապիայի տեսական և գործնական հիմնախնդիրները հասկանալու, մեկնաբանելու և վերլուծելու համար: Ուսանողներին ունակ դարձնել կիրառելու հոգեթերապևտիկ տարբեր ուղղությունների մեթոդները հոգեկան գործունեության տարբեր խանգարում-ներով այցելուների՝ ինչպես մեծահասակների, այնպես էլ երեխաների հետ աշխատանքում, անհատական և խմբային թերապևտիկ աշխատանքում, կիրառելու հոգեախտորոշիչ և հետազոտական հմտությունները, կազմակեր-պելու մասնագիտական աշխատանքը տարբեր պրոֆիլի հիվանդանոցներում և կլինիկաներում:

Ծրագրի ավարտին ուսանողը ստանում է հոգեբանության մագիստրոսի որակավորում կլինիկական հոգեբանություն և հոգեթերապիա մասնագի-տացմամբ:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի նպատակն է պատրաստել կառավարման, կազմակերպական և կիրառական սոցիալական հոգեբանության բնագավառների հետազոտողներ և գիտագործնական գիտելիքներով զինված մասնագետներ, որոնք ունակ կլինեն վերլուծել և համակարգել պետական և ոչ պետական կառավարման ոլորտներին առնչվող հոգեբանական հիմնախնդիրները, տնտեսագիտական հոգեբանության հարցեր, իրականացնել կազմակերպություններում առաջացող հոգեբանական խնդիրների կանխատեսում, գնահատում, վերլուծություն, կարգավորում և հոգեշտկողական աշխատանք, մարդկային ռեսուրսների կառավարում:

Ծրագրի ավարտին ուսանողը ստանում է հոգեբանության մագիստրոսի

որակավորում կառավարման հոգեբանություն մասնագիտացմամբ։

ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի նպատակն է նախապատրաստել ընտանեկան հոգեբանության և հոգեբանական խորհրդատվության ոլորտում տեսամեթոդաբանական և կիրառական խնդիրներով զբաղվող մասնագետներ, որոնք ունակ կլինեն գիտական տեսանկյունից ուսումնասիրել ընտանիքի զարգացման օրինաչափությունները, կառուցվածքային բաղադրիչները, տիպերը և դերային համակարգը, կազմակերպել հոգեբանական աջակցության ծառայություն և ընտանեկան խնդիրների հոգեբանական խորհրդատվություն և հոգեթերապևտիկ աշխատանքներ։

Ծրագրի ավարտին ուսանողը ստանում է հոգեբանության մագիստրոսի որակավորում ընտանիքի հոգեբանություն մասնագիտացմամբ։

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ և ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ծրագիրը նպատակ ունի զարգացնելու ուսանողների մասնագիտական կարողությունները՝ տրամադրելով խորացված ուսուցում անձի հոգեբանության բնագավառում, տրամադրելու ուսանողներին մասնագիտական այնպիսի գիտելիքներ և կարողություններ, որոնք անհրաժեշտ են հետազոտական, հոգեախտորոշիչ, խորհրդատվական, լուսավորչական և զարգացնող աշխատանք իրականացնելու համար սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայությունների շրջանակներում, օժանդակելու ուսանողներին՝ զարգացնելու իրենց մասնագիտական գիտելիքները և կարողությունները կրթության, առողջապահության և մասնագիտական գործունեության ոլորտներում՝ հոգեբանական ծառայության կայացմանը նպաստելու համար։

Ծրագրի ավարտին ուսանողը ստանում է հոգեբանության մագիստրոսի որակավորում անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն մասնագիտացմամբ։

ՄԱՆԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ և ՀՈԳԵԹԵՐԱՊԻԱ

Ծրագրի նպատակն է նախապատրաստել մանկական հոգեբանության և հոգեթերապիայի ոլորտում տեսամեթոդաբանական և կիրառական խնդիրներով զբաղվող մասնագետներ, որոնք ունակ կլինեն ուսումնասիրել երեխայի զարգացման օրինաչափությունները, նոր մոտեցումները, ուսումնասիրել երեխայի զարգացման առանձնահատկությունները՝ կրթության ոլորտում բարելավումներ իրականացնելու համար, կազմակերպել հոգեբանական աջակցության ծառայություն՝ իրականացնելով հոգեախտորոշիչ, հոգեկարգավորիչ և զարգացնող աշխատանք երեխայի զարգացման տարբեր փուլերում, ինչպես նաև կազմակերպելով խորհրդատվական և հոգեթերապևտիկ աշխատանքներ զարգացման, հոգեբանական, վարքային և հուզական, ընտանեկան դժվարություններ ունեցող երեխաների և դեռահասների հետ։

Ծրագրի ավարտին ուսանողը ստանում է հոգեբանության մագիստրոսի որակավորում մանկական հոգեբանություն և հոգեթերապիա մասնագիտացմամբ:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի նպատակն է ձևավորելու ուսանողների մոտ մասնագիտական այնպիսի գիտելիքներ և կարողություններ, որոնք անհրաժեշտ են անձի զարգացման տարբեր փուլերում հոգեախտորոշիչ, խորհրդատվական, հոգեթերապևտիկ, լուսավորչական և զարգացնող աշխատանք իրականացնելու համար, իրականացնել կազմակերպություններում առաջացող հոգեբանական խնդիրների գնահատում, կանխատեսում, վերլուծություն, մարդկային ռեսուրսների կառավարում, կազմակերպել և ուղղորդել կազմակերպության գործունեության հոգեբանական խորհրդատվության:

Ծրագրի ավարտին ուսանողը ստանում է հոգեբանության մագիստրոսի որակավորում հոգեբանություն մասնագիտացմամբ:

Աշխատանքային հեռանկարներն ու կապն աշխատաշուկայի հետ

«Փիլիսոփայություն» ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել գիտահետազոտական, կրթական-մանկավարժական լրատվական, հրատարակչական ոլորտներում գործող հիմնարկներում՝ զբաղեցնելով հետևյալ պաշտոնները. գիտահետազոտական ինստիտուտներում՝ կրտսեր գիտաշխատող, կրթական-մանկավարժական ոլորտում՝ հասարակագիտության ուսուցիչ, զանգվածային լրատվամիջոցներում՝ հեռուստատեսություն, PR մենեջեր, գովազդային գործակալ, լրագրող-հրապարակախոս: Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի մագիստրատուրայում, հետագայում՝ ասպիրանտուրայում:

«Հոգեբանություն» ծրագրի շրջանավարտները ինքնուրույն մասնագիտական գործունեության հնարավորություն կունենան հոգեախտորոշման, հոգեբանական աջակցության, առողջապահական, մասնագիտական գործունեության, սոցիալական խնամքի և կրթական ոլորտներում: Շրջանավարտները կարող են աշխատել խնամքի և պաշտպանության, ցերեկային կենտրոններում որպես սոցիալական խնամք և հոգեբանական աջակցություն իրականացնող մասնագետներ, հիմնական և ավագ դպրոցներում որպես հոգեախտորոշիչ, զարգացնող, հոգեշտկող և աջակցող հոգեբան-մասնագետներ: Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի մագիստրատուրայում, հետագայում՝ ասպիրանտուրայում:

«Բարոյագիտություն» մագիստրոսական ծրագիրը շրջանավարտներին հնարավորություն կտա աշխատելու որպես դասախոս, գիտաշխատող, լրագրող-

հրապարակախոս, փորձագետ, հանրային քաղաքականություն հետազոտող և մշակող մոնիթորինգ, PR մենեջեր, կրթական հաստատություններում, վերլուծական կենտրոններում, կրթական և սոցիալական ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպություններում: Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ասպիրանտուրայում:

«Կլինիկական հոգեբանություն և հոգեթերապիա» ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել հոգեբանական աջակցության կենտրոններում, հոգեկան առողջության պահպանման կենտրոններում, մանկական զարգացման կենտրոններում որպես զարգացմանն ու հոգեշտկմանը նպաստող հոգեբան-մասնագետ, տարբեր պրոֆիլի հիվանդանոցներում և վերականգնողական հաստատություններում, որպես կլինիկական հոգեբաններ և հոգեբանական խորհրդատվություն իրականացնող մասնագետներ, ինչպես նաև կազմակերպել անհատական մասնագիտական պրակտիկան՝ որպես հոգեթերապևտ, հոգեշտկող, հոգեբան խորհրդատու: Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը ԵՊՀ ասպիրանտուրայում, ինչպես նաև տարբեր գիտահետազոտական լաբորատորիաներում:

«Կառավարման հոգեբանություն» ծրագրի շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել պետական և ոչ պետական ձեռնարկություններում՝ զբաղեցնելով հետևյալ պաշտոնները. հոգեբան-խորհրդատու, հասարակայնության հետ կապերի ենթակառուցվածքի հոգեբան, մարդկային ռեսուրսների կառավարման մենեջեր, գիտակրթական ծրագրերի համակարգող, սոցիալ-հոգեբանական ծրագրերի համակարգող, մարքեթինգի բաժնի հոգեբան, ուսումնական կենտրոնի հոգեբան, թրենինգային ծրագրերի պատասխանատու, սոցիալ-հոգեբանական թիմի ղեկավար: Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի և այլ բուհերի ասպիրանտուրայում և աշխատել գիտահետազոտական լաբորատորիաներում:

«Ընտանիքի հոգեբանություն» ծրագիրը հնարավորություն կտա շրջանավարտներին աշխատելու որպես ընտանեկան հոգեբան-խորհրդատուներ, խմբային հոգեբան-խորհրդատուներ, ամուսնական հարաբերությունների հոգեբան-խորհրդատուներ, ծնող-երեխա միջանձնային հարաբերությունների հոգեբան-խորհրդատուներ, տարիքային տարբեր խմբերի անհատական խորհրդատվության մասնագետներ, թրեյնինգավարներ, քոուչներ: Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ասպիրանտուրայում:

«Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն» ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել հոգեբանական ծառայության

կենտրոններում, որպես անհատական կամ խմբային խորհրդատվություն իրականացնող մասնագետներ, խնամքի և պաշտպանության, ցերեկային կենտրոններում որպես հոգեբանական աջակցություն իրականացնող մասնագետներ, բժշկական և վերականգնողական հաստատություններում հոգեբանական խորհրդատվություն իրականացնող մասնագետներ, բուհերի ռեսուրսային կամ խորհրդատվական կենտրոններում որպես անհատական խորհրդատուներ, մասնագիտական կողմնորոշման կենտրոններում որպես գնահատում և խորհրդատվություն իրականացնող մասնագետներ, գիտակրթական կենտրոններում որպես հետազոտողներ, կազմակերպություն-ներում որպես անձնակազմի հետ աշխատող անհատական խորհրդատուներ, ինչպես նաև իրականացնել մասնավոր խորհրդատվական աշխատանք: Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը ԵՊՀ փիլիսո-փայության և հոգեբանության ֆակուլտետի ասպիրանտուրայում:

Կրթական ծրագրի շրջանավարտների հետ մշտապես պահվում է հետադարձ կապ և պարբերաբար իրականցվում են հարցումներ: Հարցումները ցույց են տալիս, որ շրջանավարտների զգալի մասը (մոտ 65%) աշխատում է մասնագիտությամբ, հատկապես հոգեբանական աջակցության կենտրոններում, կրթական-գիտական, երեխաների զարգացման, առողջապահության և բիզնես ոլորտներում: Կրթական ծրագրի շրջանավարտներից ոմանք աշխատում են մասնագիտությամբ նաև արտերկրում՝ վերականգնողական կլինիկաներում և հոգեբանական աջակցության տրամադրման տարբեր ոլորտներում:

«Մանկական հոգեբանություն և հոգեթերապիա» ծրագիրն ավարտած շրջանավարտները կարող են աշխատել հետևյալ հաստատություններում՝ հիմնական և ավագ դպրոցներ, հատուկ ծրագրով ուսուցմամբ կրթական հաստատություններ, մանկական խնամքի և պաշտպանության կենտրոններ, մանկական վերականգնողական հաստատություններ, հոգեբանական ծառայության կենտրոններ, մասնագիտական կողմնորոշման կենտրոններ: Ծրագրով նախատեսված գիտելիքները և կարողությունները հնարավորություն են տալիս շրջանավարտներին վերոնշյալ հաստատություններում իրականացել անհատական և/կամ խմբային խորհրդատվական, զարգացնող, հոգեախտորոշիչ և հոգեկանխարգելիչ աշխատանքներ: Շրջանավարտները կարող են իրականացնել ծնողավարման և ընտանեկան խորհրդատվություն, ինչպես նաև իրականացնել հոգեբանական գնահատման և վերականգնողական աշխատանքներ տարբեր հաստատություններում: Ծրագիրը հնարավորություն է ընձեռնում նաև շրջանավարտներին իրականացնելու մասնավոր պրակտիկա երեխաների և դեռահասների հետ: Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ասպիրանտուրայում:

Ուսանողական կյանք և ժամանց

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների ուժերով հաճախ կազմակերպվում են գիտաժողովներ, սեմինարներ, գրքերի քննարկումներ, նշվում հոբելյաններ և այլն: Ֆակուլտետում ավանդական են դարձել փիլիսոփայի և հոգեբանի օրերը, առաջին կուրսեցիների հետ բարձր կուրսեցիների հանդիպումները, դիպլոմների հանձնման հանդիսավոր արարողությունները Դավիթ Անհաղթի արձանի մոտ, ֆակուլտետի դահլիճում և այլն:

Ֆակուլտետում գործում են տարբեր ակումբներ. «Կոնտակտ», «Հարացույց», «Ընթերցասերների», «42», «Կլինիկական»:

Ֆակուլտետում ամենասպասելի իրադարձություններից է «Մանդարինի» տոնը, որի ընթացքում 2-րդ կուրսեցիները (և ոչ միայն) պաշտոնական և հանդիսավոր ձևով ընդունում են 1-ին կուրսեցիներին որպես «հոգեբան ուսանող»:

Ընդունելությունն ըստ կրթական ծրագրերի

Փիլիսոփայության և հոգեբանության Ֆակուլտետում ընդունելությունը կկատարվի հետևյալ կրթական ծրագրերով՝

- փիլիսոփայություն
- հոգեբանություն:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիների փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դիմորդների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և տեղերի քանակի.

Կրթական ծրագիր	Ուսուցման հասանկարգ	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը
Փիլիսոփայություն	Անվճ	20	3	18	3	11	4
	Վճ		12		12		11
Հոգեբանություն	Անվճ	172	5	155	5	141	5
	Վճ		75		75		75

Անցողիկ միավորներն ըստ վերջին 3 տարիների.

Կրթական ծրագիր	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
	Անվճ	Վճ	Անվճ	Վճ	Անվճ	Վճ
Փիլիսոփայություն	25.5	17.5	26.25	16	22.5	16
Հոգեբանություն	38	29.25	38.25	28	38.5	27.25

ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատմական ակնարկ

Սոցիոլոգիայի ֆակուլտետը որպես առանձին կառուցվածքային ստորաբաժանում սկսել է գործել 2004 թ-ից՝ առանձնանալով ԵՊՀ փիլիսոփայության, հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետից: Մինչ այդ՝ 1986 թ-ին կազմավորվել և գործում էր կիրառական սոցիոլոգիայի ամբիոնը: Սոցիոլոգիայի ֆակուլտետի հիմնադիրդեկանը հայտնի սոցիոլոգ, պրոֆեսոր Լյուդմիլա Հարությունյանն է:

Սոցիոլոգիայի ֆակուլտետի առաքելությունն է նպաստել Հայաստանում ժամանակակից մրցունակ մասնագետների պատրաստմանը, որոնք առաջնորդելու են հասարակական կյանքի բոլոր բնագավառներում առաջացող հիմնախնդիրների բացահայտման, կանխատեսման, ախտորոշման և լուծման գործընթացները:

Սոցիոլոգիայի ֆակուլտետի օրը նոյեմբերի 13-ն է: Յուրաքանչյուր տարի այդ օրը կազմակերպվում են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ միջազգային գիտաժողով, որին կարող են մասնակցել ֆակուլտետի դասախոսները, արտասահմանյան հրավիրյալ գիտնականները, նախորդ տարիների շրջանավարտները, պրակտիկ դաշտի մասնագետները և այլն: Այդ օրը սոցիոլոգիայի ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերությունը նույնպես կարգմակերպում է Ամենամյա երիտասարդական գիտաժողով, որին կարող են մասնակցել հասարակագիտական ոլորտի ուսանողներն ու երիտասարդ հետազոտողները:

Սոցիոլոգիայի ֆակուլտետի կառուցվածքը

Ֆակուլտետում գործում են 3 ամբիոն, 3 կենտրոն և 2 լաբորատորիա.

- Կիրառական սոցիոլոգիայի ամբիոն
- Սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոն
- Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոն
- Միգրացիայի ուսումնասիրությունների կենտրոն
- Սոցիալական հետազոտությունների ինովացիոն կենտրոնը
- Տարածաշրջանային ինտեգրացիայի և կոնֆլիկտների լուծման կենտրոն
- Կիրառական սոցիոլոգիայի լաբորատորիա
- Հեռաուսուցման լաբորատորիա:

Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնը կազմավորվել է 1986 թ-ին սոցիոլոգիական հետազոտությունների լաբորատորիայի հիման վրա, որը ԵՊՀ-ում գործում էր 1980 թ-ից: Ամբիոնն իրականացնում է բազմաբնույթ հետազոտություններ քաղաքական, տնտեսական, ռազմական, հաղորդակցությունների և ԶԼՄ սոցիոլոգիայի բնագավառներում, ինչպես նաև անվտանգային, գենդերային և միգրացիոն հիմնախնդիրների ուսումնասի-

ռություններ։ Այն ակտիվորեն համագործակցում է պետական և հասարակական կազմակերպությունների հետ, իրականացնում բազմաբնույթ սոցիոլոգիական հետազոտություններ, քաղաքական կառավարման գնահատում և խորհրդատվություն։

Սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոնը կազմավորվել է 2011 թ-ին։ Այդ պահից ի վեր ամբիոնն իրականացրել է հայաստանյան հասարակական կյանքի տարբեր ոլորտների հիմնախնդիրների ուսումնասիրությանն ուղղված բազմաթիվ նախագծեր՝ որպես ելք ունենալով նաև պրակտիկ բնույթի առաջարկներ։ Ամբիոնի գիտական և ուսումնական գործունեության հիմնական ուղղություններն են սոցիոլոգիական տեսությունները, սոցիոլոգիայի պատմությունը, տնտեսական սոցիոլոգիան, աշխատանքի, կրոնի, կառավարման սոցիոլոգիան և այլն։ Ամբիոնը միջազգային մակարդակում համագործակցում է տարբեր գիտակրթական հաստատությունների հետ։

Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնը հիմնադրվել է 2004 թ-ին։ Ներկայումս ամբիոնը պատրաստում է առաջատար սոցիալական աշխատողներ, սոցիալական կառավարման և հասարակայնության հետ կապերի մասնագետներ։ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնն արտերկրի իր գործընկերների հետ պարբերաբար կազմակերպում է հրավիրյալ դասախոսություններ և գիտաժողովներ, այդ թվում՝ Սոցիալական աշխատողների տարեկան միջազգային համաժողովը։ Ամբիոնն իրականացնում է համատեղ ուսումնական ծրագրեր Կոնեկտիկուտի համալսարանի սոցիալական աշխատանքի դպրոցի (ԱՄՆ), Ստավանգերի սոցիալական աշխատանքի համալսարանի (Նորվեգիա), Հրադեկ Կրալովե համալսարանի (Չեխիա) հետ։

Սոցիոլոգիայի ֆակուլտետի միգրացիոն հետազոտությունների կենտրոնը ստեղծվել է 2011 թ-ին։ Կենտրոնի ստեղծումը պայմանավորված է արդի Հայաստանում սոցիալական կարևորագույն խնդիրներից մեկի՝ միգրացիայի հրատապությամբ։ Կենտրոնի ստեղծումը հենց ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում պայմանավորված է առաջին հերթին այն հանգամանքով, որ վերջինս միգրացիայի ուսումնասիրության բնագավառում ունի տասնյակ տարիների առաջնակարգ փորձ և մասնագիտացված գիտական ներուժ, ինչի վկայությունն են ֆակուլտետի մասնագետների կողմից միջազգային կառույցների, տեղական և արտասահմանյան դրամաշնորհների աջակցությամբ իրականացվող բազմաթիվ միգրացիոն ուսումնասիրությունները, ծրագրերը, ֆակուլտետում շարունակաբար դասավանդվող առարկաներն ու ղեկավարվող հետազոտական թեմաները, ուսումնաարտադրական պրակտիկաները, ատենախոսությունները, արտասահմանյան և հայրենական պարբերականներում լույս տեսնող թեմատիկ հոդվածները, հաշվետվությունները, մասնակ-

ցությունները գիտական կոնֆերանսներին:

Սոցիոլոգիայի ֆակուլտետի տարածաշրջանային ինտեգրացիայի և կոնֆլիկտների լուծման կենտրոնը, որպես ռեսուրս կենտրոն, հիմնադրվել է 1996 թ-ին: Կենտրոնն աջակցում է տարածաշրջանային ուսումնասիրությունների խնդիրներին ուղղված գիտական գործունեությանը, մասնավորապես՝ Հարավային Կովկասի ինտեգրացիոն գործընթացներին, կոնֆլիկտների կանխարգելմանն ու լարվածության թուլացմանը տարածաշրջանում, «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն հասարակության» հիմնահարցերին և ժողովրդավարական փոխակերպումների հնարավորություններին:

Կիրառական սոցիոլոգիայի լաբորատորիան ֆակուլտետի հիմնական հետազոտական կենտրոններից մեկն է: Լաբորատորայի հետազոտությունները ներառում են բավականին լայն շրջանակներ՝ Հայաստանի բարձրագույն կրթական համակարգի հիմնախնդիրներից մինչև ամենահրատապ հասարակական հիմնախնդիրներ: Լաբորատորիան նպաստում է Հայաստանում բարձրորակ հետազոտական գործունեության իրականացմանը, կազմակերպում է կիրառական դասընթացներ, մեթոդական գիտաժողովներ, ամառային դպրոցներ, սեմինարներ և այլն: 2024 թ-ի հոկտեմբերից Կիրառական սոցիոլոգիայի լաբորատորային կից գործում է **ԵՊՀ տարածքային ուսումնասիրությունների և զարգացման լաբորատորիան**, որը կենտրոնանում է Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի տարածքային զարգացման ուսումնասիրության և դրա ուղղորդման անհետաձգելի անհրաժեշտության վրա: Այն միտված է ավելի լայն գլոբալ համատեքստում ուսումնասիրել հայ հասարակության կողմից առերեսվող եզակի մարտահրավերները և խոչընդոտները: Լաբորատորիայի նպատակները խորանում են տեղական մակարդակում խորհրդային արդիականացման ռազմավարությունների եզակի ասպեկտների բացահայտման, հետխորհրդային ժամանակաշրջանի հարմարվողական ռազմավարությունների ուսումնասի-րության և հասարակության կողմից կիրառվող կենսապահովման և գոյաբանական հարմարվողական ռազմավարությունների ընկալման մեջ:

Գիտակցելով բաց և ճկուն կրթական մոտեցման անհրաժեշտությունը՝ ԵՊՀ-ում 2004 թ-ին հիմնվեց **հեռաուսուցման լաբորատորիան:** Լաբորատորիայի հիմնական նպատակն է բաց, ճկուն և բարձրորակ կրթություն ստանալու հնարավորություն ընձեռել ուսանողներին: Լաբորատորիայի գործունեությունը նպատակ ունի խթանել և ընդլայնել Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի ժողովրդավարացման և նորարացման գործընթացները:

Սոցիոլոգիայի ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրերում սովորում են 242 ուսանողներ առկա և 17 ուսանողներ հեռակա համակարգում, իսկ մագիստրատուրայում՝ 71 ուսանող: Ֆակուլտետի շրջանավարտներից 6-ը

ուսումը շարունակում են ասպիրանտուրայում։

Պրոֆեսորադասախոսական կազմը

Սոցիոլոգիայի Ֆակուլտետի գիտակրթական գործընթացների կայացմանը և զարգացմանը մասնակցում են 3 դոկտոր, պրոֆեսոր, 19 գիտությունների թեկնածու, 11 դոցենտ, 8 ասիստենտ և 24 դասախոս։

Ֆակուլտետում պարբերաբար դասավանդում են նաև արտասահմանցի հրավիրյալ դասախոսներ՝ Գերմանիայի, Չեխիայի, Նորվեգիայի, Շվեդիայի, Շվեյցարիայի, Ավստրիայի, Պորտուգալիայի, ՌԴ-ի, ԱՄՆ-ի և այլ երկրների հեղինակավոր համալսարաններից։

Ֆակուլտետի դասախոսները պարբերաբար վերապատրաստվում են արտասահմանյան հեղինակավոր համալսարաններում։ Ֆակուլտետը համագործակցում է տարբեր երկրների՝ Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Նորվեգիայի, Շվեդիայի, Պորտուգալիայի, Չեխիայի, Ավստրիայի, Հնդկաստանի հանրահայտ համալսարանների, ինչպես նաև ԱՄՆ-ի Քոնեքթիքութի, Հյուսթոնի և Արիզոնայի համալսարանների հետ։

Առաջարկվող կրթական ծրագրերն ու շնորհվող որակավորումները

Սոցիոլոգիայի ձևավորման հենց առաջին իսկ տարվանից ամբիոնները ծավալել են գիտամանկավարժական արդյունավետ գործունեություն, որի արդյունքներն են նոր դասընթացների մշակումն ու դասավանդումը, ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների հրատարակումը, ֆակուլտետում նոր մասնագիտացումների ներդրումն ու միջազգային գիտաժողովների կազմակերպումը։

Սոցիոլոգիայի ֆակուլտետում գործում են բակալավրի 3 կրթական ծրագրեր.

- Սոցիոլոգիա
- Սոցիալական աշխատանք
- Հասարակայնության հետ կապեր։

«Սոցիոլոգիա» բակալավրի կրթական ծրագիրը մեկնարկել է 1991 թ-ին։ Ծրագրի նպատակն է պատրաստել մասնագետներ, ովքեր ունեն սոցիոլոգիայի, հարակից գիտակարգերի, հասարակական գործընթացների և հարաբերությունների, անհրաժեշտ տեսամեթոդաբանական մոտեցումների, հետազոտական մեթոդների վերաբերյալ բազմակողմանի ու համակարգված գիտելիքներ և կարողություններ՝ հասարակական կյանքի ուսումնասիրությանը, կազմակերպմանը և կառավարմանը միտված մասնագիտական գործունեություն ծավալելու, ինչպես նաև հետագայում ուսումը շարունակելու համար։

Սոցիոլոգիան, հանդես գալով որպես ժամանակակից հասարակագիտական գիտելիքի կարևորագույն, ինստիտուցիոնալացված բաղադրատարր, ներկայանում է որպես ինքնուրույն գիտություն և գիտակարգ։ Այն ներառում է տեսական, մեթոդաբանական մոտեցումների, հասկացութային համակարգերի և

կիրառական մեթոդիկաների մի ողջ բազմազանություն:

«Սոցիոլոգիա» մասնագիտության շրջանակներում կրթությունը ենթադրում է հասարակության վերաբերյալ համապարփակ աշխարհայացքի ու հետազոտական հմտությունների ձևավորում և հասարակական նշանակալի հիմնախնդիրների շուրջ տեսական հայեցակարգերի և պրակտիկ լուծումների ըմբռնում: «Սոցիոլոգիա» մասնագիտությամբ կրթական ծրագրեր առկա են ԱՄՆ-ի, Եվրոպայի, հետխորհրդային երկրների առաջավոր կրթական հաստատությունների ուսումնական ծրագրերում: Աշխարհի գրեթե բոլոր համալսարաններում տվյալ մասնագիտության կայացվածության փաստը վկայում է սոցիոլոգիայի բնագավառում բարձրագույն կրթության՝ ձևավորված, հաջողված, պահանջարկ և լայն տարածում ունեցող միջազգային կրթական պրակտիկայի առկայության մասին: «Սոցիոլոգիա» գիտության արդի ձեռքբերումները, հեռանկարային զարգացումները, կիրառական անհրաժեշտությունն ու տարամակարդակ հանրային պահանջարկը տրամաբանորեն հրամայական են դարձնում սոցիոլոգիայի ներառումը բարձրագույն կրթության համակարգում՝ իբրև մասնագիտական պատրաստման առաջնահերթ և առանձին ուղղություն:

21-րդ դարում հաջող կարիերա անելու համար յուրաքանչյուրին կօգնեն սոցիոլոգիական աշխարհայացքն ու մեթոդական գիտելիքները: Սոցիոլոգներն ուսումնասիրում և կառավարում են հասարակական կյանքը, սոցիալական փոփոխությունը, բազմազան համայնքները և նրանց փոխազդեցությունները: Սոցիոլոգներն օգտագործում են գիտական մեթոդներ՝ համալիր սոցիալական հիմնախնդիրներին առաջարկելով կիրառական լուծումներ: Սոցիոլոգիան նպաստում է անհատի ստեղծագործականության, նորարարականության, քննադատական մտածելակերպի, վերլուծական և հաղորդակցման հմտությունների զարգացմանը: Սոցիոլոգներն ավելի լավ են հասկանում գլոբալացվող աշխարհը և առավել ճշգրիտ ըմբռնում իրենց մասնագիտական կայացման ուղին:

«Սոցիալական աշխատանք» բակալավրի կրթական ծրագիրը մեկնարկել է 1996 թ.: Ծրագրի նպատակն է ուսանողներին տրամադրել համակողմանի և համակարգված գիտելիք հասարակության մեջ հումանիզմի, համերաշխության, հավասարության, արդարության, բարեկեցության մակարդակի բարձրացման և հարատև կատարելագործման սկզբունքների, սոցիալական պաշտպանության համակարգի, իրավունքների պաշտպանության գործիքների վերաբերյալ: Նրանց օժտել հասարակության խոցելի խմբերի ներկայացուցիչների և համայնքների հետ սոցիալական աշխատանքի գծով մասնագիտական գործունեություն իրականացնելու հմտություններով և կարողություններով:

Բակալավրիատում առկա ուսուցմամբ «Սոցիալական աշխատանք» կրթա-

կան ծրագրի 3-րդ կուրսից ուսանողները կարող են կրթությունը շարունակել ընտրելով հետևյալ մասնագիտացումներից որևէ մեկը՝ ընտանիքի և երեխաների սոցիալական պաշտպանություն ու սոցիալական աշխատանքը պրոբացիոն ծառայություններում:

Սոցիալական աշխատանքի գծով ուսման կարևոր մաս է կազմում մասնագիտական պրակտիկան: Այն կազմակերպվում է հանրապետության տարբեր սոցիալական ծառայություններում, որտեղ երկու ղեկավարների հսկողությամբ ուսանողները յուրացնում են մասնագիտական անհրաժեշտ հմտություններ:

«Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ բակալավրի դիպլոմ կարելի է ստանալ նաև սովորելով հեռակա ուսուցման բաժնում, որտեղ ուսուցումը 5 տարի է, իսկ լսարանային պարապմունքները տևում են տարեկան 8 շաբաթ:

Հասարակայնության հետ կապեր բակալավրի կրթական ծրագիրը ֆակուլտետում գործում է 2022 թ-ից: PR-ը (հասարակայնության հետ կապեր) ժամանակակից աշխարհում մեծ պահանջարկ վայելող մասնագիտություններից է, որը նպաստում է կազմակերպությունների և իրենց հասարակայնության միջև արդյունավետ հաղորդակցությունների ապահովմանը, տեղեկատվական հոսքե-րի կառավարմանը, կազմակերպությունների հեղինակության կայունացմանը, քաղաքական և բիզնես ոլորտի գործիչների վարկանիշների բարձրացմանը:

Սոցիոլոգիայի ֆակուլտետում գործում են մագիստրոսական հետևյալ 6 կրթական ծրագրերը.

- Հանրային քաղաքականության հետազոտություններ
- Կայուն քաղաքների կառավարում
- Սոցիալական աշխատանք և սոցիալական քաղաքականություն
- Հասարակայնության հետ կապեր (PR)
- Ռազմավարական հաղորդակցություն
- Մարդկային ռեսուրսների կառավարում (HR):

«Հանրային քաղաքականության հետազոտություններ» մեկ ուսումնական տարի տևողությամբ և 60 կրեդիտ բեռնվածությամբ մագիստրոսական կրթական ծրագիրը ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում գործում է 2023 թ-ից: Մագիստրոսական կրթական ծրագրի շրջանավարտներն ուսուցումն ավարտում են՝ ստանալով «Սոցիոլոգի մագիստրոս» որակավորումը:

Ծրագիրը նախագծվել և իրագործվել է հիմնվելով այն փաստի վրա, որ ՀՀ պետական և մասնավոր ոլորտում ձևավորվել են հետազոտահեն գործունեության և քաղաքականության մշակման հրամայականներ: Այս համատեքստում առանցքային նշանակություն են ձեռք բերել գիտության նորագույն ձեռքբերումների և միջազգային լավագույն փորձի հիմքով պատրաստված սոցիոլոգները, ովքեր ի վիճակի կլինեն իրականացնելու

վերոհիշյալ գործառույթները, հանդես կգան որպես ժամանակակից գիտելիքներով զինված և համապատասխան հմտություններով օժտված հետազոտողներ:

«Հանրային քաղաքականության հետազոտություններ» մագիստրոսական կրթական ծրագիրը միտված է հանրային կառավարման ոլորտում մեծ պահանջարկ ունեցող մասնագետներ պատրաստելուն՝ զինված արդիական հիմնախնդիր առաջադրելու և հետազոտելու, հանրային գործընթացների և երևույթների գնահատման մոդելներ նախագծելու, հանրային քաղաքականությունները բազմակողմանիորեն վերլուծելու և հետազոտությունների արդյունքներն ընդհանրացնելու ու լայն հասարակայնությանը ներկայացնելու կարողություններով: Համանման մագիստրոսի կրթական ծրագրեր գործում են աշխարհի այնպիսի հեղինակավոր բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչպիսիք են՝ Օքսֆորդի, Չիկագոյի, Գլազգոյի, Բրիստոլի համալսարանները:

«Կայուն քաղաքների կառավարում» մագիստրոսական կրթական ծրագիրը (90 կրեդիտ, 1.5 տարի տևողությամբ) ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում գործում է 2025 թ-ից: Մագիստրոսական կրթական ծրագրի շրջանավարտներն ուսուցումն ավարտում են՝ ստանալով «Կառավարման մագիստրոսի» որակավորումը:

Ծրագրի նպատակն է պատրաստել մասնագետներ, ովքեր կարող են իրականացնել քաղաքային կայուն զարգացման հետազոտություններ, գնահատել զարգացման ծրագրերի ազդեցությունը և կիրառել առաջադեմ գործիքներ՝ ճկուն, ներառական և էկոլոգիապես կայուն քաղաքների ձևավորմանն ու կառավարմանը նպաստելու նպատակով:

Ծրագիրը հիմնված է միջառարկայական մոտեցման վրա՝ համադրելով սոցիոլոգիական, քաղաքաշինական, բնապահպանական և կառավարման գիտելիքները: Ուսանողները ձեռք են բերում հետազոտական, վերլուծական և կիրառական հմտություններ՝ պետական, համայնքային, մասնավոր և միջազգային կառույցներում արդյունավետ գործունեություն ծավալելու համար:

«Կայուն քաղաքների կառավարում» ծրագիրը համահունչ է ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ 11) օրակարգին և մշակվել է առաջատար համալսարանների՝ Ալբորգի, Տուրկուի, Լոնդոնի թագավորական և Դուբլինի Թրինիթի քոլեջների համանման ծրագրերի հիման վրա:

«Սոցիալական աշխատանք և սոցիալական քաղաքականություն» մագիստրոսական կրթական ծրագիրը ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում գործում է 2024 թ-ից: Մագիստրոսական կրթական ծրագրի շրջանավարտներն ուսուցումն ավարտում են՝ ստանալով «Սոցիալական աշխատանքի մագիստրոս» որակավորումը:

COVID-19 և Արցախյան 44-օրյա պատերազմով պայմանավորված

սոցիալական ճգնաժամերը նոր մարտահրավերներ մղեցին ինչպես սոցիալական ոլորտի, այնպես էլ մասնագիտական կրթության առջև՝ բարձրացավ մասնագետների պահանջարկը: Հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջարկը և մասնագիտության արդի զարգացումները 2024/2025 ուստարվանից ներդրվեց մեկ տարի տևողությամբ (60 կրեդիտ) «Սոցիալական աշխատանք և սոցիալական քաղաքականություն» մագիստրոսի կրթական ծրագիրը: Ծրագրի շրջանավարտները ստանում են հիմնարար գիտելիք և տեսական հիմք, ինչպես նաև դրանց համահունչ հմտություններ և կարողություններ սոցիալական աշխատանքի մակրոպրակտիկայի և սոցիալական քաղաքականության բոլոր ուղղություններով:

«Սոցիալական աշխատանք և սոցիալական քաղաքականություն» մագիստրոսի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը մշակվել է Եվրոպական և Ամերիկյան առաջատար բուհերի համանման ծրագրերի ուսումնասիրության արդյունքում և համապատասխանում է Սոցիալական աշխատողների միջազգային ֆեդերացիայի և Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի պաշտոնական փաստաթղթերում ներկայացված չափորոշիչներին և պահանջներին:

«Սոցիալական աշխատանք և սոցիալական քաղաքականություն» մագիստրոսի կրթական ծրագրի նպատակն է ուսանողներին տրամադրել խորը և համակողմանի գիտելիք սոցիալական աշխատանքի և սոցիալական քաղաքականության արդի մոդելների և զարգացումների վերաբերյալ, ինչպես նաև փաստահենք սոցիալական քաղաքականություն մշակելու հմտություններ:

«Հասարակայնության հետ կապեր» մագիստրոսական կրթական ծրագիրը ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետում գործում է 2006 թ-ից, իսկ արդեն 2011 թ-ից այդ բաժնի շրջանավարտներն ուսուցումն ավարտում են հասարակայնության հետ կապերի մասնագետների վկայականով:

«Հասարակայնության հետ կապերի» մասնագետների պատրաստումն ուղղված է աշխարհում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, հաղորդակցման հարթակների բազմազանեցման, համաշխարհային բազմաբնույթ ճգնաժամերի պայմաններում անհրաժեշտ համակողմանի տեսական գիտելիքների և պրակտիկ հմտությունների տրամադրմանը՝ PR-ի, բրենդինգի, գովազդի, կորպորատիվ, սոցիալական, քաղաքական հաղորդակցության ոլորտներում ազգային ու միջազգային աշխատաշուկայում արդյունավետ մասնագիտական գործունեություն ծավալելու համար:

«Հասարակայնության հետ կապեր» ծրագիրը տալիս է համակողմանի տեսական գիտելիք և գործնական հմտություններ, որոնք անհրաժեշտ են հասարակայնության հետ կապերի, բրենդինգի, գովազդի, կոմերցիոն, մարքեթինգային, կորպորատիվ, սոցիալական, քաղաքական հաղորդակցությունների

ոլորտներում ազգային ու միջազգային աշխատաշուկայում մասնագիտական գործունեություն ծավալելու համար:

«Ռազմավարական հաղորդակցություն» մագիստրոսական նոր ծրագիրը ֆակուլտետում բացվել է 2023 թ-ին և կոչված է ուսանողներին տրամադրել հաղորդակցության ռազմավարությունների մշակման, շահառուների քարտեզագրման և քաղաքացիների թիրախային խմբերի ներգրավման, արտակարգ իրավիճակներում պետական հաղորդակցության, ապատեղեկատ-վության դեմ պայքարի, հանրային խոսքի և լրագրողների հետ աշխատանքի, պաշտոնական հաղորդակցության ավանդական և նորագույն հարթակների կիրառման վերաբերյալ համակողմանի տեսական գիտելիքներ և ձևավորելու համապատասխան պրակտիկ հմտություններ:

«Ռազմավարական հաղորդակցություն» ծրագրի նպատակն է ուսանողներին տրամադրել համակողմանի տեսական գիտելիք և պրակտիկ հմտություններ պետական, հանրային և մասնավոր կազմակերպություններում հաղորդակցային ռազմավարությունների մշակման, պետական և հանրային ոլորտներում հաղորդակցության առանձնահատկությունների, պետական կառույցների գործառույթների, հանրային խոսքի կազմակերպման, ԶԼՄ-ի գործառնման օրինաչափությունների վերաբերյալ:

«Ռազմավարական հաղորդակցություն» ծրագրի շրջանավարտները ստանում են «Հասարակայնության հետ կապեր» մագիստրոսի որակավորում:

«Մարդկային ռեսուրսների կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրի նպատակն է ուսանողներին փոխանցել մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտի վերաբերյալ հիմնարար գիտելիք՝ նրանց ծանոթացնելով ՄՌԿ տեսական հիմքերին և գործնական առանձնահատկություններին, տրամադրել նրանց ՄՌԿ ռազմավարության և քաղաքականության մշակման, իրականացման և գնահատման, ՄՌԿ ժամանակակից գործառույթների վերաբերյալ գիտելիք, ձևավորել և զարգացնել նրանց գործնական հմտությունները, ինչպես նաև ուսանողներին ծանոթացնել ՀՀ աշխատանքային օրենսդրության և հարակից օրենսդրական հիմքերին և սովորեցնել՝ ինչպես կիրառել դրանք:

«Մարդկային ռեսուրսների կառավարում» ծրագրի շրջանավարտները ստանում են «Կառավարման մագիստրոսի» որակավորում:

HR մասնագետները հանդիսանում են ղեկավարների և աշխատակիցների կապող օղակ, և HR մասնագետի աշխատանքից է կախված կազմակերպության արդյունավետությունը: HR մասնագետներն իրականացնում են աշխատակից-ների հավաքագրում, վերապատրաստում, ուսուցում, զարգացում, ինչպես նաև անձնակազմի կատարողականի գնահատում:

Աշխատանքի հեռանկարներն ու կապն աշխատաշուկայի հետ

«**Սոցիոլոգիա**» մասնագիտության բակալավրի և մագիստրոսի աստիճան ունեցող շրջանավարտները պահանջված են պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, գիտական և գիտահետազոտական կազմակերպություններում, տեղեկատվական և խորհրդատվական կազմակերպություններում, համայնքային ծառայություններ մատուցող կազմակերպություններում, կրթական հաստատություններում, առողջապահական և բնապահպանական գործակալություններում, նախագծային վերլուծական հետազոտական կենտրոններում, փորձագիտական խորհրդատվական հետազոտական կառուցվածքներում, տնտեսական տարբեր ոլորտների ձեռնարկությունների և կազմակերպությունների մարքեթինգային բաժիններում, հասարակական կարծիքի հետազոտման կենտրոններում, ներառյալ՝ լրատվական տարբեր կազմակերպությունները, միջազգային հասարակական կազմակերպություններում, հասարակական և իրավապաշտպան կազմակերպություններում, արդարադատության համակարգի կազմակերպություններում, տարածքային պլանավորման գործակալություններում, սոցիալական աջակցության գործակալություններում:

«Սոցիալական աշխատանք» բակալավրի շրջանավարտներն օգնում են անհատներին, խմբերին և համայնքներին լուծելու իրենց սոցիալական հիմնախնդիրները, ուժեղացնելով նրանց նոր գիտելիքներով ու հմտություններով, ավելի ներդաշնակ դարձնելով միջավայրի հետ նրանց փոխազդեցությունը: Սոցիալական աշխատողի միջամտության արդյունքում բարելավվում է մարդկանց սոցիալական գործառումը, հաղթահարվում են նրանց կյանքում առաջացած սոցիալական դժվարությունները:

Սոցիալական աշխատողները ակտիվորեն մասնակցում են սոցիալական փոփոխությունների նախագծման և իրականացման աշխատանքներին: ՀՀ սոցիալական պաշտպանության համակարգում իրականացվող բարեփոխումները խիստ պահանջված են դարձնում սոցիալական աշխատողներին:

«Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ շրջանավարտները կարող են աշխատել սոցիալական տարբեր ծառայություններում, համայնքապետարաններում, խնամքի հաստատություններում, կրթական և առողջապահական հաստատություններում, քրեակատարողական հիմնարկներում, դասավանդել մասնագիտական կրթական հաստատություններում և այլն:

«Սոցիալական աշխատանք և սոցիալական քաղաքականություն» մասնագիտացման մագիստրոսական ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել սոցիալական քաղաքանության մշակման ոլորտում՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Ազգային ժողովին կից

հանձնաժողովների փորձագիտական խմբերում, հասարակական, բարեգործական, հանրային նշանակության կազմակերպություններում, ինչպես նաև սոցիալական ծառայություններում:

«Հասարակայնության հետ կապեր» բակալավրի կրթական ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել որպես հասարակայնության հետ կապերի մասնագետ, PR-մենեջեր, պետական և մասնավոր կառույցներում PR-խորհրդատու, կազմակերպության լրատվական ծառայության աշխատակից, ղեկավար, փորձագետ, ինչպես նաև նշված մասնագիտության շրջանակներում կարող են դասավանդել մասնագիտական կրթական հաստատություններում:

«Հասարակայնության հետ կապեր» մագիստրոսի որակավորմամբ շրջանավարտների համար ՀՀ-ում առկա են աշխատանքի լայն հնարավորություններ, որոնք պայմանավորված են հաղորդակցման տեխնոլոգիաների և PR գործիքների զարգացմամբ, հասարակության պետական, հասարակական և մասնավոր հատվածներում ոլորտի մասնագետների պահանջարկի աճով, ինչպես նաև տեղական և միջազգային կառույցներում մասնագետների հաստիքների ավելացմամբ:

«Ռազմավարական հաղորդակցություն» մագիստրոսական կրթական ծրագրի շրջանավարտների համար ՀՀ-ում առկա են աշխատանքի լայն հնարավորություններ, որոնք պայմանավորված են հաղորդակցման տեխնոլոգիաների և PR գործիքների զարգացմամբ, հասարակության պետական, հասարակական և մասնավոր հատվածներում ոլորտի մասնագետների պահանջարկի աճով, ինչպես նաև տեղական և միջազգային կառույցներում ռազմավարական հաղորդակցության մասնագետների հաստիքների ավելացմամբ:

«Մարդկային ռեսուրսների կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրի շրջանավարտների համար ՀՀ-ում առկա են աշխատանքի տեղավորման լայն հնարավորություններ: Ծրագրի շրջանավարտները կարող են իրենց մասնագիտական գործունեությունը ծավալել ՀՀ Կառավարությունում, ՀՀ նախագահի աշխատակազմում, ԱԺ-ում, ՀՀ պետական և ինքնակառավարման մարմիններում, ՀՀ Կենտրոնական բանկում, պետական և ոչ պետական ֆինանսական կազմակերպություններում, ՄՌԿ ոլորտում գործող խորհրդատվական կազմակերպություններում, հյուրընկալության և սպասարկման, մարքեթինգի, արտադրության, ոլորտների առևտրային կազմակերպություններում, կրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններում, բուժհիմնարկներում, մշակութային և այլ կազմակերպություններում:

Ուսանողական կյանք և ժամանց

Ֆակուլտետում գործում են «Ուսանողական խորհուրդ» և «Ուսանողական գիտական ընկերություն» ուսանողական կառույցները, որոնք ուսանողների

առօրյան դարձնում են բազմակողմանի հագեցած:

Ուսանողական գիտական ընկերությունը նպատակ ունի կենտրոնացնել ֆակուլտետի ուսանողական-գիտական ռեսուրսը՝ կազմակերպելով սեմինարներ, գիտաժողովներ, դասախոսություններ, ֆիլմերի և գրքերի մասնագիտական քննարկումներ, որոնց մասնակցությունն ուսանողներին հնարավորություն է տալիս ընդլայնել մասնագիտական աշխարհայացքը և վերլուծական մտածողությունը:

Սոցիոլոգիայի ֆակուլտետի ՈՒԳԸ ամենահայտնի և ամենասպասված միջոցառումներից է ամեն տարի կազմակերպվող Սոցքեմփը: Այն բաց հարթակ է, որը ստեղծարար և ակտիվ երիտասարդներին թույլ է տալիս ներկայացնել սեփական հետազոտությունները և վերլուծությունները ոչ խիստ գիտական տեքստերով և ոչ խիստ ֆորմալ միջավայրում: Սոցքեմփի գաղափարի հիմքում բաց, ազատ և ոչ ֆորմալ հարթակի ստեղծումն է, իսկ նպատակը՝ գիտական դիսկուրսի շրջանակի ընդլայնումը: Ամեն տարի միավորելով տարբեր կուրսերի և մասնագիտությունների ուսանողներին, երիտասարդ հետազոտողներին, դասախոսներին՝ «Չկոնֆերանս» կոչվող այս միջոցառումը հարթակ է դառնում նոր միջգիտակարգային քննարկումների, սոցիալական կապիտալի հարստացման և գիտության հանրայնացման համար:

Սոցիոլոգիայի ֆակուլտետի ՈՒԳԸ ավանդական միջոցառումների թվում է ֆակուլտետի ուսանողների կողմից սպասված և սիրված ամենամյա երիտասարդական գիտաժողովը, որը սովորաբար կազմակերպվում է նոյեմբեր ամսին՝ նվիրվելով ֆակուլտետի ծննդյան օրվան: Ամեն տարի գիտաժողովն իր շուրջը համախմբում է գիտությամբ հետաքրքրված ուսանողների և երիտասարդ հետազոտողների, ովքեր ներկայանում են ամենատարբեր միջգիտակարգային զեկույցներով: Մասնագիտական հանձնաժողովի որոշմամբ լավագույն երեք զեկուցողները ստանում են մրցանակներ: Երիտասարդական գիտաժողովը բաց հարթակ է ինչպես երիտասարդ հետազոտողների, այնպես էլ 1-ին կամ 2-րդ կուրսի ուսանողների համար՝ կատարելու իրենց առաջին քայլերը դեպի գիտությունը:

Սոցիոլոգիայի ֆակուլտետի Ուսանողական գիտական ընկերության թիմը այսօրինակ միջոցառումների կազմակերպմամբ է զբաղվում ողջ ուսումնական տարվա ընթացքում՝ հանդես գալով նոր մտքերով, նոր գաղափարներով և հարթակ հանդիսանալով գիտությամբ հետաքրքրված ուսանողների համախմբման և առաջխաղացման համար:

Ուսանողական խորհուրդը կազմված է հետևյալ հանձնաժողովներից՝

Իրավական հանձնաժողով: Հանձնաժողովի նպատակն է բարձրացնել ուսանողների իրազեկվածության մակարդակն իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, պաշտպանել ուսանողների իրա-

վունքներն ու օրինական շահերը, բարձրացնել ուսանողի իրավագիտակցության մակարդակը, իրականացնել ՈւԽ իրավական ապահովումը:

Արտաքին կապերի հանձնաժողով: Հանձնաժողովի հիմնական գործառույթներից է ուսման և կրթության հետ կապված լավագույն ծրագրերի, միջոցառումների ու կրթաթոշակների մասին ուսանողներին տեղեկացնելը:

Մշակույթի հանձնաժողով: Հանձնաժողովի նպատակն է ապահովել մշակութային տարբեր ոլորտների հետ ծանոթացումը, ուսանողների մշակութային գիտելիքի հարստացումը, ինչպես նաև այլ մշակույթների հետ ծանոթացումը:

Գիտակրթական հանձնաժողով: Հանձնաժողովի գործառույթներից է ինտելեկտուալ խաղերի, բանավեճերի, տարբեր գիտահետազոտական ու գիտաճանաչողական արշավների, պատմամշակութային կոթողներ այցելությունների, ՀՀ-ում առաջատար մասնագետների հետ հանդիպումների, ուսանողներին հուզող թեմաների շուրջ քննարկումների միջոցով ուսանողների գիտակրթական կյանքի կազմակերպումը: Հանձնաժողովում ընդգրկված են տարբեր ֆակուլտետների բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներ:

Սոցիալական հարցերի հանձնաժողով և HR: Հանձնաժողովի նպատակն է տեղեկատվություն ունենալ ուսանողների սոցիալական խնդիրների մասին (անհրաժեշտության դեպքում լուծումներ գտնել), պարզել ուսանողների հետաքրքրությունների շրջանակը, բացահայտել առանձնահատուկ ընդունակություններ և այլ հմտություններ ունեցող ուսանողներին և խթանել դրանք:

Սպորտի հանձնաժողով: Հանձնաժողովի նպատակն է ուսանողների շրջանում ապահովել սպորտային առաջնություններ, խաղեր, ակտիվ ժամանց, որը նրանց հնարավորություն է տալիս ցուցադրել սպորտային հմտությունները:

Լրատվական հանձնաժողով: Հանձնաժողովի նպատակն է լուսաբանել ուսանողական խորհրդի հանձնաժողովների կողմից իրականացված միջոցառումները:

Ընդունելությունն ըստ կրթական ծրագրերի

Սոցիոլոգիայի ֆակուլտետում ընդունելությունը կկատարվի հետևյալ կրթական ծրագրերով՝

- սոցիոլոգիա
- սոցիալական աշխատանք
- հասարակայնության հետ կապեր:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիների սոցիոլոգիայի ֆակուլտետի դիմորդների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և տեղերի քանակի.

Կրթական ծրագիր	Ուսուցման համակարգ	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը
Սոցիոլոգիա	Անվճ	16	4	11	4	11	4
	Վճ		11		11		11
Սոցիալական աշխատանք	Անվճ	39	4	28	4	25	4
	Վճ		16		16		18
Հասարակայնության հետ կապեր	Անվճ	51	2	56	2	52	2
	Վճ		25		25		23

Անցողիկ միավորներն ըստ վերջին 3 տարիների.

Կրթական ծրագիր	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
	Անվճ	Վճ	Անվճ	Վճ	Անվճ	Վճ
Սոցիոլոգիա	28.5	17.75	30.25	16.5	26.25	20
Սոցիալական աշխատանք	34.75	21	27.75	17.5	33.5	21.5
Հասարակայնության հետ կապեր	39	33	39.25	31.25	36.75	27.75

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Բանասիրությունը հումանիտար գիտություն է, որն ուսումնասիրում է լեզուն ու գրականությունը, բացահայտում պատկերավոր խոսքի գեղեցիկ, իմաստալից ու խորհրդավոր աշխարհը: Այդ ասպարեզի դռներն իր ողջ հարստությամբ ու շռայլությամբ ձեր առջև կբացի ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետը: Լեզվի և գրականության ուսումնասիրությունը ոչ միայն գիտական, այլև մշակութային կարևոր նշանակություն ունի, ուստի Երևանի պետական համալսարանի հիմնադրման ժամանակ որոշվեց առաջին հերթին բացել պատմալեզվաբանական ֆակուլտետը: Հայ բանասիրության ֆակուլտետում ուսումնասիրվում են հայ և համաշխարհային գրականություն, հայագիտական և ընդհանուր լեզվաբանական տարբեր հիմնախնդիրներ:

Պատմական ակնարկ:

Հայ բանասիրության ֆակուլտետը համալսարանի հիմնադիր ֆակուլտետներից է (1919 թ.): Նրա հիման վրա են կազմակերպվել վաղուց ինքնուրույն գործող ԵՊՀ արևելագիտության, ռուս բանասիրության, եվրոպական լեզուների և հաղորդակցության և ժուռնալիստիկայի ֆակուլտետները: Ֆակուլտետի հիմնադիր դասախոսներից շատերը բարձրագույն կրթություն էին ստացել արտասահմանյան նշանավոր համալսարաններում, նրանց մի մասը բնակվում և աշխատում էր տարբեր երկրներում, բայց հայրենիքում բացված համալսարանը դարձավ միավորող ուժ և համախմբեց նրանց: Նորաստեղծ համալսարանում բանասիրական առարկաներ են դասավանդել գիտության երախտավորներ Մանուկ Աբեղյանը, Հրաչյա Աճառյանը, Ստեփան Մալխասյանցը, Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը, Գրիգոր Ղափանցյանը, Աշխարհբեկ Մելիք-Քալանթարը, Գևորգ Ասատուրը, Արսեն Տերտերյանը, գրող Կոստան Զարյանը և այլք:

Նրանց ջանքերն իզուր չանցան, և ֆակուլտետը դարձավ ու մնաց հայոց լեզվի ու գրականության գիտամանկավարժական հզոր կենտրոն: Հիմնադիր երախտավորներից հետո տարբեր տարիների ֆակուլտետում գիտամանկավարժական գործունեություն են ծավալել այնպիսի հանրաճանաչ գիտնականներ, ինչպիսիք են ակադեմիկոսներ և ակադեմիայի թղթակից անդամներ Մ. Մկրյանը, Գ. Ջահուկյանը, Էդ. Աղայանը, Է. Աթայանը, Ա. Ղանալանյանը, Էդ. Ջրբաշյանը, Հ. Թամրազյանը, Գ. Սևակը, Վ. Նալբանդյանը, Գ. Անանյանը, գիտության դոկտորներ Ս. Ղազարյանը, Հ. Բարսեղյանը, Հ. Մախչանյանը, Ս. Բազյանը, Մ. Ասատրյանը, Ա. Սուքիասյանը, Ս. Գյուլբուդաղյանը, Ռ. Իշխանյանը, Ա. Մարգարյանը, Գ. Գարեգինյանը, Ա. Շարուրյանը, Հ. Հարությունյանը, Ռ. Ղազարյանը, Լ. Եզեկյանը, Խ. Բադիկյանը, Ս. Աթաբեկյանը, Ա. Պապոյանը, Ս. Գալստյանը, Լ. Մնացականյանը, Ռ. Սաքապետոյանը, Գ. Մանուկյանը, Կ. Աղաբեկյանը, Լ. Հովսեփյանը, Ս. Մխիթարյանը, Փ. Մեյթիխանյանը և ուրիշներ:

Ֆակուլտետի շրջանավարտներ են եղել նշանավոր շատ գրողներ (Գ. Մահարի, Ն. Զարյան, Խ. Դաշտենց, Հ. Շիրազ, Պ. Սևակ, Վ. Դավթյան, Ս. Կապուտիկյան և ուրիշներ), գրականագետներ, լեզվաբաններ, պետական գործիչներ, մայրենի լեզվի ու գրականության հազարավոր ուսուցիչներ:

Կառուցվածքը:

Տարբեր շրջաններում ֆակուլտետում գործել են տարբեր ամբիոններ, գիտական կենտրոններ ու կաբինետներ: Ներկայումս ֆակուլտետն ունի չորս ամբիոն՝ հայոց լեզվի, հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության, Ակադեմիկոս Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության, հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության: Այս ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմը ուսումնասիրել և ուսումնասիրում է լեզվաբանությանը, գրականագիտությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ստեղծում մենագրություններ, ձեռնարկներ, դասագրքեր: Նախատեսվում է իրականացնել նոր ծրագրեր, ստեղծել գիտամեթոդական կառույցներ:

Պրոֆեսորադասախոսական կազմը:

Այսօր էլ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը (դոկտորներ Վ. Գաբրիելյան, Ժ. Քալանթարյան, Ա. Ավագյան, Ս. Մուրադյան, Վ. Սաֆարյան, Ալ. Մակարյան, Յու. Ավետիսյան, Ա. Աբաջյան, դոցենտ Ս. Գրիգորյան և ուրիշներ) ֆակուլտետի դեկան Ա. Գալստյանի ղեկավարմամբ արժանապատվությամբ է կատարում վաստակաշատ ավագների հիմնադրած գործը: Հանրակրթական դպրոցի տարբեր դասարանների՝ հայոց լեզվի և հայ գրականության մի շարք դասագրքերի հեղինակները ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի նախկին և ներկայիս դասախոսներ են:

Առաջարկվող կրթական ծրագրերն ու շնորհվող որակավորումները:

Ֆակուլտետում ուսուցումը եռաստիճան է. բակալավրիատ՝ 4 տարի, մագիստրատուրա՝ 1,5 տարի, ասպիրանտուրա՝ 3 տարի: Բակալավրիատում գործում է կրթական մեկ ծրագիր՝ «Հայոց լեզու և գրականություն»: Մագիստրա-տուրայում գործում են կրթական հետևյալ ծրագրերը՝ «Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ», «Հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն», «Հայ գրականության պատմություն», «Հայ նորագույն գրականություն և գրաքննադատություն»: Բակալավրիատում, երրորդ կուրսից սկսած, գործում են «Լեզվաբանություն», «Գրականագիտություն» և «Թարգմանչական գործ» մասնագիտացումները, որոնք ընտրած ուսանողները, ընդհանուր դասընթացներից բացի, անցնում են իրենց մասնագիտացմանը վերաբերող հատուկ դասընթացներ:

Ֆակուլտետում գործում է նաև հեռակա ուսուցմամբ բակալավրիատ (5 տարի):

Աշխատանքային հեռանկարներն ու կապը աշխատաշուկայի հետ: Ուսանելով Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետում՝ դուք կարող եք դառնալ հայ մտքի երախտավորների գործի արժանի շարունակողը: Մասնագիտական որակյալ կրթությունը կյանքում կօգնի ձեզ լինելու խմբագիր, դասախոս, ուսուցիչ, թարգմանիչ, գիտաշխատող և այլն: Ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» բաժնում ուսանելու տարիներին դուք կուսումնասիրեք ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, բառագիտություն, քերականություն, ոճագիտություն, խմբագրական գործ, խոսքային էթիկետ, թարգմանչական գործ, գրաբար, հայոց լեզվի պատմություն, արևմտահայերեն, ընդհանուր լեզվաբանություն, հայոց լեզվի համեմատական քերականություն, հայ ժողովրդի բանահյուսություն, հին, միջնադարյան, նոր, նորագույն և արդի հայ գրականություն, գրականության տեսություն, ինչպես նաև կյուրացնեք լեզվին և գրականությանը վերաբերող մասնագիտական տարբեր դասընթացներ:

Ուսանողական կյանք և ժամանց: Ֆակուլտետում գործում են գրական ստուդիա, ՈւԳԸ (ուսանողական գիտական ընկերություն), որոնց մասնակիցները պարբերաբար կազմակերպում են տարաբնույթ միջոցառումներ՝ էքսկուրսիաներ, այցելություններ թանգարաններ և մշակութային այլ օջախներ, հանդիպումներ գրողների, գրականագետների և լեզվաբանների հետ, գրքերի քննարկումներ և այլն: Ֆակուլտետի դասախոսների և ուսանողների ջանքերով երկար տարիներ լույս է ընծայվել ֆակուլտետային ամսաթերթ:

Ֆակուլտետը գիտամշակութային կապեր ունի Հայաստանի Հանրապետության և Սփյուռքի հայագիտական տարբեր հաստատությունների, ինչպես նաև ՀՀ գրողների միության, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Մատենադարանի, հայ գրողների տուն-թանգարանների, առաջավոր դպրոցների հետ, պարբերաբար կազմակերպվում են միջազգային, հանրապետական և միջբուհական գիտական նստաշրջաններ, կոնֆերանսներ:

Ընդունելությունն ըստ ծրագրերի

Հայ բանասիրության ֆակուլտետում ընդունելությունը կկատարվի հետևյալ կրթական ծրագրով՝

- հայոց լեզու և գրականություն:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիների հայ բանասիրության ֆակուլտետի դիմորդների թիվը՝ ըստ կրթական ծրագրի և տեղերի քանակի.

Կրթական ծրագիր	Ուսուցման համակարգ	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը
Հայոց լեզու և գրականություն	Անվճ	61	12	43	12	52	12
	Վճ		38		38		32

Անցողիկ միավորներն ըստ վերջին 3 տարիների.

Կրթական ծրագիր	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
	Անվճ	Վճ	Անվճ	Վճ	Անվճ	Վճ
Հայոց լեզու և գրականություն	31.5	20	29.25	15.75	34	18.5

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Պատմական ակնարկ

1921 թ-ին Երևանի պետական համալսարանում բացվել է մանկավարժության ֆակուլտետը, որի դեկանն է եղել դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Էդիլյանը: Նույն տարում մանկավարժության ֆակուլտետի կառուցվածքում ձևավորվել է մանկավարժության ամբիոնը, որը համալսարանի հնագույն ամբիոններից է՝ անցնելով 104-ամյա գիտակրթական ուղի: Մանկավարժության ամբիոնի կայացման և ուսումնագիտական աշխատանքների կազմակերպման ու զարգացման գործում իրենց ծանրակշիռ ներդրումն են ունեցել ճանաչված պրոֆեսորներ Գ. Էդիլյանը, Ա. Շավարշյանը, Մ. Սանթրոսյանը, Ա. Մովսիսյանը, Հր. Քարամյանը, Թ. Ջուհարյանը, Հ. Մախչանյանը, դոցենտներ Ա. Իգնատյանը, Ս. Խուդոյանը, Ալ. Մանուկյանը, Թ. Հուրիիխանյանը, Թ. Բալասանյանը, Լ. Ալեքսանյանը:

Ամբիոնի հիմնադիրների ստեղծած արժեքների պահպանման ու զարգացման գործին ներկայումս իրենց մեծ վաստակն են բերում ամբիոնի վարիչ, դոկտոր, պրոֆեսոր Ն. Հարությունյանը, դոցենտներ Վ. Գյուլբուդաղյանը, Ա. Ղազարյանը, Ա. Աշիկյանը, Ա. Ալեքսանյանը, Մ.Ավետիսյանը, Լ. Հայրապետյանը և ուրիշներ: ԵՊՀ մանկավարժության ամբիոնը հիմնադրման օրվանից իր կարևոր ներդրումն է ունեցել և այսօր էլ ունի Երևանի պետական համալսարանի գիտակրթական գործունեության մեջ:

Կառուցվածքը

2017 թ-ի հուլիսի 6-ին ԵՊՀ գիտխորհուրդը միաձայն որոշում կայացրեց մանկավարժության ամբիոնի բազայի վրա ստեղծել մանկավարժության և կրթության զարգացման կենտրոն, իսկ 2017 թ-ի դեկտեմբերի 23-ին ԵՊՀ հոգաբարձուների խորհուրդը հաստատեց ԵՊՀ գիտխորհրդի որոշումը:

Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնը ԵՊՀ-ի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է:

Կենտրոնում սովորում է 131 ուսանող: Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնում գործում են մանկավարժության ամբիոնը, կենտրոնի գիտխորհուրդը, մեթոդական խորհուրդը, որակի ապահովման հանձնաժողովը, արհբյուրոն, մրցութային հանձնաժողովը, ՈՒԽ-ն և ՈՒԳԸ-ն:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Կենտրոնում դասավանդում են 3 գիտ. դոկտոր, պրոֆեսոր, 16 գիտ. թեկնածու, դոցենտ և 10 դասախոս: Ամբիոնում աշխատում են ինչպես ԵՊՀ, այնպես էլ հանրապետության տարբեր բուհերի դասախոսներ:

Առաջարկվող կրթական ծրագրերը և շնորհվող որակավորումները

Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնում գործում է 3 կրթական ծրագիր:

2010/2011 ուստարում բացվել է «Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագիրը բակալավրիատում: Վերջինիս նպատակն է ՀՀ հանրակրթական դպրոցների համար պատրաստել սոցիալական մանկավարժներ, ովքեր կնպաստեն հանրակրթության ոլորտում երեխաների սոցիալական, հաղորդակցական, հոգեբանամանկավարժական տարաբնույթ խնդիրների և սահմանափակ կարողությունների տեր երեխաների ներառական ուսուցման հիմնահարցի լուծմանը՝ ելնելով իրենց մասնագիտական գործունեության նպատակից, խնդիրներից, գործառույթներից, թիրախային խմբերի առանձնահատկություններից և տեխնոլոգիաներից:

Կրթական ծրագրի նպատակն է ուսանողներին ներկայացնել սոցիալական մանկավարժության ուսումնասիրության հիմնախնդիրները, մեկնաբանել սոցիալական միջավայրի դաստիարակչական մեծ ներգործությունը տարբեր տարիքային խմբերի և տարբեր սոցիալական խնդիրներ ունեցող մարդկանց զարգացման գործընթացի վրա՝ սոցիալականացման համատեքստում:

Հանրակրթական դպրոցում սոցիալական մանկավարժն իրականացնում է հետևյալ գործառույթները. նա ուսումնասիրում, հետազոտում, ախտորոշում է աշակերտի առջև ծառացած խնդիրը, այնուհետև այն լուծելու համար օգնում, աջակցում, ուղղորդում, վերադաստիարակում, խորհրդատվություն և վերականգնողական (հոգեբանամանկավարժական) աշխատանքներ իրականա-ցում: Սրանք կատարվում են տարբեր մեթոդների և տեխնոլոգիաների միջոցով: Հայաստանի հանրակրթական դպրոցներում սոցիալական մանկավարժի անհրաժեշտությունն ու կարևորությունը ամրագրված է ՀՀ հանրակրթության պետական կրթակարգում /2004 թ./:

Մանկավարժության ամբիոնը մասնագիտական-կրթական գործունեության շրջանակներում առաջիկայում նախատեսում է բացել «Կիրառական սոցիալական մանկավարժություն» մագիստրոսական նոր կրթական ծրագիր՝ ընտանիքներում, դպրոցներում, հատուկ հաստատություններում սոցիալման-կավարժական կիրառական աշխատանքներ իրականացնելու համար: Այս կրթական ծրագրի արդյունավետ կազմակերպման համար 2026-2027 ուստարում կմեկնարկվի «Կիրառական սոցիալական մանկավարժության» լաբորատորիայի բացումը, որտեղ կկազմակերպվեն ուսանողների գործնական դասերը և կիրականացվեն հետազոտական աշխատանքներ:

Կենտրոնը մասնագիտական կրթական ծրագրեր է իրականացնում նաև մագիստրատուրայում:

1998 թ-ին Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի մանկավարժության ամբիոնը բացել է **«Կրթության կազմակերպում»** կրթական ծրագիրը: «Կրթության կազմակերպում» մագիստրոսական կրթական ծրագիրը պատրաստում է կրթության կազմակերպիչներ հանրապետության

հանրակրթության և բարձրագույն կրթության ոլորտների համար:

«Կրթության կազմակերպում» մագիստրոսական կրթական ծրագրի շրջանակներում կրթական գործի ապագա կազմակերպիչները ծանոթանում են ՀՀ կրթության համակարգի, նրա կառուցվածքի, կառավարման, ինչպես նաև կրթական բարեփոխումների մասին, որոնք կարևոր նշանակություն ունեն կրթության որակի ապահովման և զարգացման գործում: Հանգամանորեն վերլուծվում և քննարկվում են կրթական քաղաքականության նպատակները, խնդիրները, ռազմավարությունը և կրթության ֆինանսավորումը:

«Կրթության կազմակերպում» մագիստրոսական ծրագրում ուսանելու տարիներին ուսանողները ծանոթանում են կրթության օրենսդրական դաշտին, անհրաժեշտ գիտելիքներ են ձեռք բերում կրթության կառավարման հիմնախնդիրների, կրթության կառավարման տեսությունների, գործառույթների, մեթոդների ու ոճերի մասին: Այս ամենի արդյունքում կրթական գործի ապագա կազմակերպիչները գիտամանկավարժական պրակտիկայի ընթացքում կարողանում են տեսական գիտելիքները կիրառել կոնկրետ իրավիճակում. ճկուն, արագ դիրքորոշումներ ունենալ, հիմք ընդունել կառավարման սկզբունքները, մեթոդներն ու ոճերը՝ բարձրացնելու համար կառավարման արդյունավետությունը:

«Կրթության կազմակերպում» մագիստրոսական ծրագիրն իրականացվում է առկա և հեռակա ուսուցմամբ: Ուսանողների թիվը 41 է:

2006 թ-ից մինչ օրս այս կրթական ծրագրում անհատական գրաֆիկով սովորել և սովորում են սփյուռքահայ ուսուցիչներ և տնօրեններ Լիբանանից, Սիրիայից, Թուրքիայից, Եգիպտոսից և Իրանից:

2021/22 ուստարում մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնը մագիստրատուրայում բացել է երկրորդ մագիստրոսական կրթական ծրագիրը՝ **«Ուսուցչական առաջնորդություն»**:

Ծրագրի նպատակն է պատրաստել որակյալ մանկավարժներ Հայաստանի սահմանամերձ և հեռավոր մարզերի գյուղերի հանրակրթական դպրոցների համար:

Կրթական ծրագրի տևողությունը 1,5 տարի է, ուսուցման ձևը՝ հեռակա: Ուսանողների թիվը 27 է:

Բեղմնավոր է ԵՊՀ մանկավարժության ամբիոնի գիտահետազոտական գործունեությունը: Մանկավարժության ամբիոնն իր գործունեության 104 տարիների ընթացքում կատարել է հսկայածավալ գիտահետազոտական աշխատանքներ, որոնց արդյունքում տպագրվել է 53 մենագրություն, 16 դպրոցական դասագիրք, 18 ուսուցչի մեթոդական ձեռնարկ, 7 բուհական ձեռնարկ, Մանկավարժական հանրագիտարան՝ 2 հատորով, Մանկավարժական բառարան, ավելի քան 1620 գիտական հոդված և՛ Հայաստանում, և՛

արտերկրներում՝ Ռուսաստանի Դաշնություն, Վրաստան, Ուկրաինա, Բելառուս, ԱՄՆ, Հունգարիա, Գերմանիա, Լիբանան, Ավստրիա, Իսպանիա, Բելգիա, Լեհաստան։

Վերջին 20 տարիների ընթացքում մանկավարժության ամբիոնը ուսումնասիրել և զարգացրել է *մանկավարժության 14 գիտաճյուղ*. մանկավարժության պատմություն, համեմատական մանկավարժություն, սոցիալական մանկավարժություն, կրթության կառավարում, մանկավարժական վալեոլոգիա, մանկավարժական աքսելոգիա, մանկավարժական անտրոպոլոգիա, իրավաբանական մանկավարժություն, երջանկության մանկավարժություն, արվեստի մանկավարժություն, մանկավարժական աքմեոլոգիա, մանկավարժական ֆուտուրոլոգիա, մանկավարժական քվալիմետրիա և մանկավարժական ռիսկաբանություն։ Ուսումնասիրությունների արդյունքում տպագրվել է շուրջ 414 գիտական հոդված ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանյան տարբեր երկրների գիտական հանդեսներում /Ուկրաինա - Չերկասի համալսարանի Вестник, Կրոպիվնիցկիի պետական համալսարանի միջազգային գիտական նյութերի ժողովածու, ՌԴ-Մոսկվայի, Պետրոզավոդսկի, Տվերի պետական համալսարանների գիտական նյութերի ժողովածուներում և Լեհաստանի Վարշավայի համալսարանի միջազգային գիտաժողովի գիտական նյութերի ժողովածու/:

2012 թ-ից մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնում գործում է ԲԿԳԿ-ի գիտական աստիճաններ շնորհող Մանկավարժության 058 մասնագիտական խորհուրդը՝ ԺԳ.00.01 թվանիշով, (նախագահ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Կ. Հարությունյան)։ Մանկավարժության 058 մասնագիտական խորհուրդը 2012 թ-ի մարտից մինչև 2025 թ-ի դեկտեմբերը կազմակերպել է 70 ատենախոսության պաշտպանություն, որից 7-ը դոկտորական, 63-ը՝ թեկնածուական, այդ թվում 8-ը՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից։

Մանկավարժության ամբիոնը գիտական որակյալ կադրեր է պատրաստում ոչ միայն Հայաստանի, այլև Իրանի Իսլամական Հանրապետության համար։ Վերջին 10 տարիների ընթացքում Մանկավարժության 058 մասնագիտական խորհրդում պաշտպանվել է 8 ասպիրանտի թեկնածուական ատենախոսություն՝ ԻԻՀ-ից։

ԵՊՀ մանկավարժության ամբիոնն իրականացնում է միջազգային գործունեություն։ Մանկավարժության ամբիոնի գիտական գործունեությունը դուրս է եկել Հանրապետության սահմաններից։

ԵՊՀ մանկավարժության ամբիոնը կազմակերպել է միջազգային գիտաժողովներ և կլոր սեղաններ։

- 1997 թ. մայիսին կազմակերպվել է միջազգային գիտաժողով՝ «Անչափահասների դաստիարակության հիմնահարցերը շուկայական հարաբերությունների պայմաններում» խորագրով, որին մասնակցում էին մանկավարժներ ԱՄՆ-ից, Լիբանանից և Սիրիայից։
- 2004 թ-ի հունիսին կազմակերպվել է կլոր սեղան՝ «Նորովի մոտեցում կրթության համակարգի կառավարմանը» թեմայով, որին մասնակցում էին մանկավարժներ Իրանից։
- 2014 թ-ի հոկտեմբերի 17-18-ը Ծաղկաձորում տեղի է ունեցել ԵՊՀ-ի մանկավարժության ամբիոնի կազմակերպած «Մանկավարժության ժամանակակից հիմնախնդիրները» խորագրով տարածաշրջանային միջազգային գիտաժողովը՝ նվիրված ԵՊՀ հիմնադրման 95 և մանկավարժության ամբիոնի 93-ամյակներին։ Գիտաժողովին մասնակցում էին գիտնական մանկավարժներ ՀՀ-ից, Իրանից, Վրաստանից։
- 2017 թ-ի հոկտեմբերի 16-17-ին կենտրոնը կազմակերպել է միջազգային գիտաժողով, որին մասնակցել է նաև EERA-ի պրեզիդենտ պրոֆ. Թեո Վուբելսը։
- Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնը 2017 թ-ից Կրթական հետազոտությունների եվրոպական ասոցիացիայի՝ EERA անդամ է։
- 2019 թ-ի հուլիսի 3-ին կենտրոնը կազմակերպել է «Կրթության կառավարման հիմնախնդիրները բարձրագույն կրթության համակարգում» խորագրով մեկօրյա ամառային դպրոց՝ նվիրված ԵՊՀ 100-ամյակին։ Ամառային դպրոցին մասնակցում էր Ավստրիայի Գրացի համալսարանի մանկավարժության ամբիոնի վարիչ, դոկտոր պրոֆեսոր Յոհաննա Հոպֆները, ինչպես նաև Հայաստանի տարբեր բուհերի կրթության կառավարման ոլորտի մասնագետներ և մանկավարժներ։
- 2022 թ-ի օգոստոսի 22-24-ը կենտրոնը կազմակերպել է Հայաստանում՝ ԵՊՀ-ում, Եվրոպական կրթական հետազոտությունների ասոցիացիայի /EERA/ միջազգային համաժողովը, որին մասնակցում էին աշխարհի 54 երկրներից 800 գիտնական-մանկավարժներ։

Մանկավարժության ամբիոնի դասախոսները գիտական զեկուցումներով հանդես են գալիս ոչ միայն հանրապետական, այլև միջազգային գիտաժողովներին. Ռուսաստանի Դաշնություն, ԱՄՆ, Հունգարիա, Անգլիա, Գերմանիա, Շվեյցարիա, Իսպանիա, Ավստրիա, Լեհաստան։

Մանկավարժության ամբիոնը սերտորեն համագործակցում է Մոսկվայի մանկավարժական պետական համալսարանի մանկավարժության ֆակուլտետի հետ։ 2017 թ-ի ապրիլին մանկավարժության ամբիոնից 1 հայցորդ և 1 մագիստրանտ մեծ հաջողությամբ մասնակցել են ՄՊՄՀ-ի կազմակերպած միջբուհական ուսանողական միջազգային գիտաժողովին՝ արժանանալով «Լավագույն զեկույց» անվանակարգին։

2019 թ-ին մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնում ստեղծվել է **«Կրթությունը 21-րդ դարում»** միջազգային գիտամեթոդական հանդեսը։ Համագործակցում են մանկավարժ-գիտնականներ՝ Եվրոպական և ԱՊՀ 10 երկրներից՝ Ավստրիայից, Լեհաստանից, Ռուսաստանից, Բելառուսից, Անգլիայից, Նիդեռլանդներից, Չեխիայից, Արաբական Էմիրություններից, ԱՄՆ-ից և Ուկրաինայից։

Աշխատանքային հեռանկարները և կապը աշխատանքային շուկայի հետ

«**Սոցիալական մանկավարժություն**» կրթական ծրագրի կարևորությունը և անհրաժեշտությունը պայմանավորված են ոչ միայն աշխատաշուկայի պահանջարկ-առաջարկով, այլև 2004 թ-ին Կառավարության կողմից ընդունված ՀՀ Հանրակրթության պետական կրթակարգով, որտեղ ամրագրված է, որ ՀՀ բոլոր դպրոցները պետք է ունենան սոցիալական մանկավարժի հաստիք՝ դպրոցում առկա սոցիալ-մանկավարժական տարաբնույթ խնդիրները լուծելու համար։

Սոցիալական մանկավարժի մասնագիտության անհրաժեշտությունը պայմանավորված է նաև Հայաստանի հանրակրթական դպրոցներում համընդհանուր ներառական ուսուցման կազմակերպմամբ, որտեղ չափազանց կարևոր է սոցիալական մանկավարժի գործունեությունը։

Բակալավրիատի «Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագրի շրջանավարտները, ստանալով սոցիալական մանկավարժի որակավորում, կարող են աշխատել որպես սոցիալական մանկավարժ Հայաստանի Հանրապետության միջնակարգ հանրակրթական բոլոր դպրոցներում և սոցիալական աջակցության հաստատություններում։

«**Կրթության կազմակերպում**» մագիստրոսական կրթական ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել կրթության կազմակերպիչներ հանրակրթության և բարձրագույն կրթության ոլորտներում։

Առաջիկայում նախատեսվում է կազմակերպել «Կրթության կազմակերպում» մագիստրոսական կրթական ծրագիրը դիստանցիոն ուսուցմամբ՝ անգլերեն լեզվով։

«**Ուսուցչական առաջնորդություն**» մագիստրոսական կրթական ծրագրի շրջանավարտները, ստանալով ուսուցչի որակավորում, աշխատելու են որպես ուսուցիչ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ և հեռավոր մարզերի հանրակրթական բոլոր դպրոցներում՝ միջին և ավագ։

2019 թ. ստեղծվել է մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների միություն՝ սերտացնելով կապը կենտրոնի և նրա շրջանավարտների միջև։

Ուսանողական կյանք և ժամանց

Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի ՈՒԳԸ-ն և ՈՒԽ-ն

իրենց ակտիվ մասնակցությունն են բերում ԵՊՀ ՈՒԳԸ-ի և ՈՒԽ-ի աշխատանքներին։ «Սոցիալական մանկավարժություն» և «Կրթության կազմակերպում» կրթական ծրագրերի ուսանողներն ամբիոնի դասախոսների ղեկավարությամբ ելույթներով մասնակցում են ՈՒԳԸ-ի գարնանային և աշնանային նստաշրջաններին։ Մասնակից ուսանողներից շատերի ելույթները ճանաչվել են լավագույնը և ՈՒԳԸ-ի գիտական տեղեկագրում տպագրվել որպես հոդված։ Կենտրոնի ուսանողները ակտիվորեն համագործակցում են այլ բուհերի ՈՒԳԸ-ների հետ՝ մասնակցելով միջբուհական ուսանողական գիտական ընկերությունների աշխատանքներին՝ արժանանալով տարբեր մրցանակների։

Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի ուսանողները մասնակցում են մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի գիտխորհրդի աշխատանքներին (25%)։

Երկու տարվա կտրվածքով ներկայացնենք Կենտրոնի ՈՒԳԸ-ի և ՈՒԽ-ի գործունեությունը.

ԵՊՀ մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի ուսանողները տարիներ շարունակ ակտիվորեն մասնակցում են համալսարանական մշակութային կյանքին, ուսանողական փառատոներին, Ուրախների ու հնարամիտների ակումբի միջոցառումներին, կամավորական աշխատանքներին։ ԵՊՀ ՈՒԳԸ-ն մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի ՈՒԳԸ-ի հետ համատեղ 2025 թ–ի հոկտեմբերի 9-ին կազմակերպել է 11-րդ ուսանողական գիտական նստաշրջանը՝ նվիրված Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցին, որին մասնակցել են ուսանողներ ոչ միայն մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնից, այլև, ՇՊՀ-ից, ԳՊՀ-ից։ ՈՒԳԸ-ն մեկ տարվա ընթացքում կազմակերպել է նաև քննարկումներ, հանդիպումներ, սեմինարներ և այլ միջոցառումներ։

- Կենտրոնի ՈՒԽ-ն նույնպես կազմակերպել է տարբեր միջոցառումներ ուսումնական տարվա ընթացքում. հանդիպումներ, կինոդիտումներ, բանավեճեր, «Ինչ, որտեղ, երբ» մրցույթ, այց մանկատներ /Երեխաների աջակցության կենտրոն/, իրականացնելով կամավորական աշխատանքներ։
- **2024 թ–ի դեկտեմբերի վերջին** ՈՒԽ-ն կազմակերպել է ամանօրյա տոնական միջոցառում ուսանողների համար։
- **2025 թ–ի հոկտեմբերի 2-ին** ՈՒԽ-ն և ՈՒԳԸ-ն «Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագրի չորս կուրսերի ուսանողների ջանքերով կազմակերպել են միջոցառում՝ նվիրված Սոցիալական մանկավարժի միջազգային օրվան, որի ժամանակ տեղի է ունեցել 1-ին կուրսեցիների երդման արարողությունը։

Ընդունելությունն ըստ կրթական ծրագրերի

Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի բակալավրիատում

ընդունելությունը կկատարվի

- սոցիալական մանկավարժություն

կրթական ծրագրով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիների մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի դիմորդների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և տեղերի քանակի.

Կրթական ծրագիր	Ուսուցման համակարգ	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը
Սոցիալական մանկավարժություն	Անվճ	26	2	25	2	23	2
	Վճ		18		18		18

Անցողիկ միավորներն ըստ վերջին 3 տարիների.

Կրթական ծրագիր	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
	Անվճ	Վճ	Անվճ	Վճ	Անվճ	Վճ
Սոցիալական մանկավարժություն	26.5	18.5	34	18.25	25.75	19.25

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատմական ակնարկ

Երևանի պետական համալսարանում ժուռնալիստիկայի բաժինը բացվել է 1949/1950 ուստարում: Ժուռնալիստիկայի ֆակուլտետը ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ հիմնադրվել է 1999 թ-ին: Բաժնի և ֆակուլտետի շրջանավարտներից շատերը առանցքային դերակատարություն են ունեցել հայ լրագրության զարգացման և երկրի հասարակա-քաղաքական կյանքում:

Կառուցվածքը

Ֆակուլտետում գործում է երկու ամբիոն:

Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնում ներառված դասընթացները ներկայացնում են համացանցային ԶԼՄ-ների, մեդիաազդեցության ժամանակակից տեսությունների, մեդիա և հասարակություն փոխառնչություն-ների հիմնական ուղղությունները:

Տպագիր և հեռարձակվող լրատվամիջոցների ամբիոնի աշխատակիցների ուշադրության կենտրոնում ավանդական մեդիայի փոխակերպումները, առկա մարտահրավերներն ու հիմնախնդիրներն են:

Ամբիոնին կից գործում է ինովացիոն մեդիակենտրոնը՝ ժամանակակից հեռուստա և ռադիոստուդիաներով:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը համալրված է հանրապետությունում հայտնի մասնագետներով՝ 2 դոկտոր, պրոֆեսոր, 18 բանասիրական գիտությունների թեկնածու, 27 դասախոս:

Առաջարկվող կրթական ծրագրերն ու շնորհվող որակավորումները

Ֆակուլտետում գործում է ուսուցման եռաստիճան համակարգ: Առաջին աստիճանը բակալավրիատն է՝ ***«Լրագրություն»*** կրթական ծրագիր: Չորսամյա ուսումնառության ընթացքում ուսանողները ստանում են բարձրագույն մասնագիտական կրթություն՝ անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու, աշխատաշուկայում պահանջված ու մրցունակ լինելու համար:

Մագիստրատուրայում գործում է ***«Հեռուստալրագրություն»*** (Հանրային հ/ը-ն հետ համատեղ) կրթական ծրագիրը:

Աշխատանքային հեռանկարներն ու կապն աշխատաշուկայի հետ

Ֆակուլտետի շրջանավարտներից շատերն աշխատանքի են անցնում ԶԼՄ-ներում, ոմանք՝ ուսանողական տարիներից:

Հաշվի առնելով հայաստանյան լրատվադաշտի օրեցօր աճող պահանջարկը՝ ֆակուլտետը մշտապես թարմացնում է առաջարկվող կրթական ծրագրերը՝ փոխգործակցելով Հայաստանի և արտերկրի առաջատար լրատվամիջոցների և լրագրողական կազմակերպությունների հետ:

Ֆակուլտետի ուսանողներն ակտիվորեն մասնակցում են միջազգային մի

շարք կրթական ծրագրերի, հատկապես Erasmus + և Erasmus-mundus-ին:

Ֆակուլտետը ԵՊՀ միջազգային փոխանակման կրթական ծրագրերի շրջանակներում անգլերենով մշակել է մի շարք դասընթացներ արտերկրից ժամանող ուսանողների համար:

Մագիստրատուրայի լավագույն շրջանավարտներն ուսումնառությունը շարունակում են ասպիրանտուրայում, համալրում ֆակուլտետի պրոֆեսորա-դասախոսական կազմի շարքերը:

Տարեցտարի ընդլայնվում են կապերը արտերկրի առաջատար բուհերի հետ:

Ուսանողական կյանք և ժամանց

Ժուռնալիստիկայի ֆակուլտետ յուրաքանչյուր տարի ընդունվում են 45-ից 50 ուսանող, այդ թվում՝ արտերկրից:

Ֆակուլտետային ուսանողական խորհուրդը (ՈԻԽ) կազմակերպում է միջոցառումներ, իրազեկումներ: Ուսանողության ամենասիրած միջոցառում-ներից են անվանի լրագրողների հետ հանդիպումները:

Ֆակուլտետի Ուսանողական գիտական ընկերությունը (ՈՒԳԸ) կազմակերպում է գիտական նստաշրջաններ, դասախոսություններ, վարպե-տության դասեր, սեմինար-քննարկումներ և այլն:

Ժուռնալիստիկայի ֆակուլտետում նոր տեխնոլոգիաների կիրառումը կարևոր տեղ է զբաղեցնում, իսկ ուսումնական գործընթացը իրականացվում է նաև վիրտուալ տիրույթում՝ դասախոսների և ուսանողների օնլայն շփման միջո-ցով: Ինովացիոն կենտրոնում են տեղակայված Journalist.am էլեկտրոնային ուսումնական պարբերականի խմբագրությունը և «INNOՄԵԴԻԱ» փորձարարական հեռուստաընկերության խմբագրությունները:

Ընդունելությունն ըստ կրթական ծրագրերի

Ֆակուլտետում ընդունելությունը կկատարվի

- լրագրություն

կրթական ծրագրով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիների ժուռնալիստիկայի ֆակուլտետի դիմորդների թիվը՝ ըստ կրթական ծրագրի և տեղերի քանակի.

Կրթական ծրագիր	Ուսուցման համակարգ	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը
Լրագրություն	Անվճ	54	4	70	4	56	4
	Վճ		41		41		46

Անցողիկ միավորներն ըստ վերջին 3 տարիների.

Կրթական ծրագիր	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
	Անվճ	Վճ	Անվճ	Վճ	Անվճ	Վճ
Լրագրություն	36.75	17.5	38.5	23.5	37.25	15.5

ՌՈՒՍ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատմական ակնարկ

Ռուսագիտությունը՝ որպես բանասիրական գիտությունների համակարգի մի ճյուղ, ավանդաբար կարևորագույն տեղ է զբաղեցնում մեզանում: Բացի զուտ գիտական հետաքրքրությունից, որ ներկայացնում են թե՛ բուն ռուսագիտությունը, թե՛ առավել ևս՝ հայ-ռուսական համեմատական զուգադրական և տիպաբանական ուսումնասիրությունները բանասիրության բնագավառում, այն մեծ ազդեցություն է ունեցել մեր հասարակության հոգևոր կյանքում:

1938 թ. ԵՊՀ բանասիրական ֆակուլտետում բացվեց ռուսաց լեզվի և գրականության բաժանմունք: Տարիների ընթացքում այն ընդլայնվում էր թե՛ դասավանդվող առարկաների, թե՛ գիտական ուղղվածությունների ու թեմաների առումով:

1976 թ. այդ բաժանմունքի հիման վրա ստեղծվեց ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետը, որը հետագայում վերանվանվեց ռուս բանասիրության ֆակուլտետ:

Կառուցվածքը

Ֆակուլտետում գործում են հետևյալ ամբիոնները. ռուս գրականության, ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տեսության, ռուսաց լեզվի:

Ֆակուլտետում գործում է երեք ուսումնական կաբինետ, այդ թվում՝ ուսումնական կաբինետ-գրադարան, որում առկա է 3000-ից ավելի անուն գիրք:

Պրոֆեսորադասախոսական կազմը

2024/2025 ուստարում ֆակուլտետն ունեցել է 29 շրջանավարտ – 16 բակալավր և 13 մագիստրոս: Ֆակուլտետում դասավանդում են գիտությունների 4 դոկտոր, պրոֆեսոր, 17 բան. գիտ. թեկնածու, դոցենտ, 7 ասիստենտ և 14 դասախոս: Ֆակուլտետում առկա ուսուցմամբ սովորում է 112 ուսանող, որոնցից 100-ը՝ բակալավրիատում, 12-ը՝ մագիստրատուրայում: Շրջանավարտներից լավագույնները ուսումը շարունակում են ասպիրանտուրայում:

Ռուս բանասիրության ֆակուլտետում ուսումնամեթոդական աշխատանքն իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով՝

- ռուսերեն և գրականություն և միջմշակութային հաղորդակցություն և թարգմանություն (ռուսերեն) մասնագիտություններին առնչվող առարկաներ, որոնց ուսուցումն ապահովում են ֆակուլտետի ամբիոնները,
- ռուսաց լեզվի գործնական դասընթաց, որը դասավանդում են համալսարանի ոչ մասնագիտական ֆակուլտետներում ռուսաց լեզվի ամբիոնի դասախոսները:

Ֆակուլտետում կատարվում են նաև մի շարք գիտական ուսումնասիրություններ՝ ռուս գրականության պատմության և տեսության, ռուսաց

լեզվաբանության արդի հիմնահարցերի, լեզուների տիպաբանության և հաղորդակցման տեսության, ինչպես նաև ռուսաց լեզվի դասավանդման մեթոդիկայի ընդհանուր խնդիրների վերաբերյալ: 2015 թ. հունվարից առանձին շարքով լույս է տեսնում «Բանբեր Երևանի համալսարանի. Ռուս բանասիրություն» հանդեսը:

Ֆակուլտետի դասախոսները և լավագույն ուսանողները մասնակցում են հանրապետական, միջազգային գիտաժողովների, ինչի արդյունքում հրատարակվում են բազմաթիվ հոդվածներ և աշխատություններ: Դասախոսները ակտիվ մասնակցում են հանրակրթական դպրոցների համար ուսումնական գրականության ստեղծման աշխատանքներին:

Առաջարկվող կրթական ծրագրերն ու շնորհվող որակավորումները

Երկար տարիներ ֆակուլտետի հիմնական մասնագիտությունն է *«Ռուսերեն և գրականություն»*-ը: Ֆակուլտետում ընդունելությունն իրականացվել է հետևյալ մասնագիտություններով՝ *«Թարգմանչական գործ՝ ռուսաց և հայոց լեզուներ»* (2000 - 2014 թթ.), *«Հունարեն լեզու և գրականություն»* (2011 - 2013 թթ.), *«Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն՝ ռուսաց լեզու»* (2007 - 2018 թթ.): 2019/20 ուստարում ավելացել է *«Միջմշակութային հաղորդակցություն և թարգմանություն (ռուսերեն)»* մասնագիտությունը: **«Ռուսերեն և գրականություն»** և **«Միջմշակութային հաղորդակցություն և թարգմանություն (ռուսերեն)»** կրթական ծրագրերի շրջանավարտները ստանում են բանասիրության բակալավրի աստիճան:

Ելնելով ուսումնական գործընթացի օպտիմիզացման և ինտենսիֆիկացման բարձրացման անհրաժեշտությունից՝ 2022/2023 ուստարվանից ներդրվել է մեկամյա մագիստրոսական կրթական ծրագիր՝ 023102.00.7 - «Օտար լեզու և գրականություն» մասնագիտության՝ 023102.01.7 *«Ռուսերեն և գրականություն»*: *«Ռուսերեն և գրականություն»* մագիստրոսական ծրագրի նպատակն է՝ ուսանողների մոտ անհատական հմտությունների զարգացումն ու նրանց մոտ մասնագիտական և ընդհանուր մշակութային կարողությունների ձևավորումը, ինչը հնարավորություն կտա շրջանավարտին կայանալու որպես ռուս բանասիրության բնագավառում բարձրորակ և աշխատաշուկայում մրցունակ մասնագետ: Մագիստրոսական ծրագրերի շրջանավարտները ստանում են բանասիրության մագիստրոսի աստիճան:

Աշխատանքային հեռանկարներն ու կապն աշխատաշուկայի հետ

Աշխատաշուկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում կա տարբեր ոլորտներում հայերենից ռուսերեն որակյալ թարգմանիչների, ինչպես նաև միջմշակութային հաղորդակցման մասնագետների և հաղորդակցային ու մշակութային կոմպետենցիաներին տիրապետող որակյալ մասնագետների մեծ պահանջարկ:

«Ռուսերեն և գրականություն» բակալավրիական ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել՝ միջին մասնագիտական կրթության հաստատություններում՝ որպես ռուսաց լեզվի և ռուս գրականության ուսուցիչ, տեղեկատվական գործակալություններում, հրատարակչություններում և խմբագրություններում, միջազգային կազմակերպություններում, որտեղ անհրաժեշտ է ռուսերենի իմացությունը, գովազդային գործակալություններում, թանգարաններում, պետական և մասնավոր ձեռնարկություններում և գրասենյակներում:

«Միջմշակութային հաղորդակցություն և թարգմանություն (ռուսերեն)» բակալավրիական ծրագրի շրջանավարտները կարող են աշխատել. ՁԼՄ-ներում (օրաթերթերի և հանդեսների խմբագրություններում), տեղեկատվական գործակալություններում, հրատարակչություններում, կրթական օջախներում (միջնակարգ կրթության հաստատություններում), տուրիստական գործակալություններում, միջազգային կազմակերպություններում և բոլոր այն կազմակերպություններում, որտեղ պահանջվում է հայերենի և ռուսերենի լավ իմացություն և թարգմանչական հմտություններ:

«Ռուսերեն և գրականություն» մագիստրոսական ծրագրի շրջանավարտները մասնագետներ են, որոնք կարող են ազատ շփվել և բանակցել արտերկրի ռուսալեզու մասնագետների հետ, ուստի նրանք հնարավորություն ունեն աշխատել բոլոր այն կազմակերպություններում, որտեղ պահանջվում է ռուսերենի լավ իմացություն:

Ռուս բանասիրության ֆակուլտետը սերտորեն համագործակցում է Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի, Հայ-Ռուսական համալսարանի և հանրապետության այլ բուհերի համապատասխան ֆակուլտետների հետ:

Վերականգնվել են երբեմնի սերտ կապերը Ռուսաստանի և ԱՊՀ մյուս երկրների գիտական և գիտակրթական հաստատությունների հետ:

Տարբեր տարիներին ֆակուլտետում սովորել են օտարերկրյա ուսանողներ Իրանից, Չինաստանից, Կիպրոսից, Իտալիայից: Արդեն տաս տարի ֆակուլտետում գործում է մեկամյա մագիստրոսական ծրագիր օտարերկրացիների համար:

Ռուս բանասիրության ֆակուլտետը համագործակցում է Ազգերի բարեկամության ռուսական համալսարանի (Մոսկվա), Ա.Ս.Պուշկինի անվան ռուսաց լեզվի պետական համալսարանի (Մոսկվա), Մ.Վ.Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի (Մոսկվա), Ա.Ի.Հերցենի անվան ռուսական պետական մանկավարժական համալսարանի (Սանկտ Պետերբուրգ), Ստավրոպոլի պետական համալսարանի, Վոլգոգրադի պետական սոցիալ-մանկավարժական համալսարանի (Վոլգոգրադ), Պենզայի պետական համալսարանի հետ, Սալոնիկի Արիստոտելի անվան համալսարանի «ՅԱՍՈՆ»

ծրագրի, Աթենքի Ազգային և Կապոդիստրյան համալսարանի (Հունաստան), Թրակիայի Դեմոկրիտեսի անվան համալսարանի (Հունաստան), Տոկիոյի համալսարանի (Ճապոնիա), Բոլոնիայի համալսարանի (Իտալիա) և այլ գիտակրթական կենտրոնների հետ:

2022 թ-ից ֆակուլտետ ուսանողներ են ժամանում ամերիկյան առաջատար բուհերից՝ Յելի, Հարվարդի, Արիզոնայի, Բերկլիի, Ստենֆորդի և այլ համալսարաններից, «Russian Language and Area Studies Program (RLASP)» ծրագրի շրջանակներում 8-շաբաթյա (ամառային), կիսամյակային կամ տարեկան կազմակերպվող դասընթացներին մասնակցելու համար: Կիսամյակային դասընթացների մասնակցում են նաև Մեծ Բրիտանիայի համալսարանների ուսանողներ (Օքսֆորդի, Քեմբրիջի, Էդինբուրգի համալսարանների ուսանողներ):

«Erasmus+» ուսանողների փոխանակման ծրագրի շրջանակներում ֆակուլտետում ուսումնառություն են անցնում ուսանողներ Եվրոպայի առաջատար համալսարաններից՝ Բոլոնիայի համալսարան (Իտալիա), Բեռլինի Հումբոլդտի անվան համալսարան և Գրայֆսվալդի համալսարան (Գերմանիա), Փարիզի արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտ և Սայենս Պո համալսարան (Ֆրանսիա) և այլն:

Ուսանողների մասնագիտական պրակտիկայի շրջանակներում ֆակուլտետը համագործակցում է Երևանի մի շարք թանգարանների հետ (Ռուսական արվեստի թանգարան, Սերգեյ Փարաջանովի թանգարան, Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան), ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հետ:

Ֆակուլտետի դասախոսները և ուսանողները պարբերաբար այցելում են ՀՀ տարբեր մարզերի դպրոցներ, ինչպես նաև ֆակուլտետում հյուրընկալվում են Երևանի տարբեր դպրոցների աշակերտները: Այդ հանդիպումների ընթացքում դիմորդներին ներկայացվում են ֆակուլտետում գործող մասնագիտությունները, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները դասախոսություններ են կարդում, իսկ ուսանողներն անցկացնում են վիկտորինաներ:

Ուսանողական կյանք և ժամանց

Ֆակուլտետի ուսանողական կյանքը լի է բազմաբնույթ միջոցառումներով՝ ռուս գրողների հոբելյաններ, ինտելեկտուալ մրցույթներ և խաղեր, սեմինարներ և վեբինարներ՝ նվիրված արդիական տարբեր գիտական թեմաների:

Ֆակուլտետի ուսանողներն ակտիվ մասնակցում են ՌԴ ամառային դպրոցների (Վոլգոգրադ, Տվեր, Պսկով, Կրասնոյարսկ քաղաքներում)՝ 2023/2024 ուստարում ամառային դպրոցների դասընթացների մասնակցել է 17 ուսանող, 2024/2025 ուստարում՝ 15 ուսանող: Ուսանողներն նաև հնարավորություն ունեն «Erasmus+» ուսանողների փոխանակման ծրագրի շրջանակներում մեկ

կիսամյակի ընթացքում ուսումն անցնել Պալացկու համալսարանում (Չեխիա, ք. Օլոմոուց):

Ընդունելությունն ըստ կրթական ծրագրերի

Ռուս բանասիրության ֆակուլտետում ընդունելությունը կկատարվի հետևյալ կրթական ծրագրերով՝

- ռուսաց լեզու և գրականություն
- միջմշակութային հաղորդակցություն և թարգմանություն (ռուսերեն):

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիներին ռուս բանասիրության ֆակուլտետի դիմորդների թիվը՝ ըստ առաջին հայտի և անվճար տեղերի քանակի.

Կրթական ծրագիր	Ուսուցման համակարգ	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը
Ռուսերեն և գրականություն	Անվճ	13	5	10	7	12	7
	Վճ		10		13		8
Միջմշակութային հաղորդակցություն և թարգմանություն (ռուսերեն)	Անվճ	20	5	14	5	14	5
	Վճ		10		10		10

Անցողիկ միավորներն ըստ վերջին 3 տարիների.

Կրթական ծրագիր	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
	Անվճ	Վճ	Անվճ	Վճ	Անվճ	Վճ
Ռուսերեն և գրականություն	26.25	18.75	22.25	17.75	23.75	16
Միջմշակութային հաղորդակցություն և թարգմանություն (ռուսերեն)	28.5	20.5	28.25	16.5	28.25	19.25

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատմական ակնարկ

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետը կազմավորվել է 1991թ. բանասիրական ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների բաժնի հիման վրա: Իր գործունեության ընթացքում ֆակուլտետը հասցրել է մեծ ճանաչում ձեռք բերել ինչպես մեր հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Այդ տարիների ընթացքում ֆակուլտետը հաջողությամբ է հաղթահարել իր առջև ծառացած խնդիրները՝ ուսումնական պլանները, ծրագրերը և դասավանդման մեթոդները համապատասխանեցնելով գիտության, տնտեսության և մշակույթի ասպարեզներում առաջադրվող ժամանակակից պահանջներին: Ֆակուլտետի շրջանավարտները հաջողությամբ աշխատում են մեր հանրապետության ամենատարբեր հիմնարկներում, հանրակրթական դպրոցներում, բարձրագույն ուսումնական հաստատություններում, դեսպանատներում, պետական ու կառավարման բարձրագույն մարմիններում, արտասահմանում և մեր երկրում գործող միջազգային կազմակերպություններում: Ֆակուլտետը համագործակցում է ինչպես արտասահմանյան երկրների մի շարք համալսարանների (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Իսպանիա, Պորտուգալիա, Ռուսաստանի Դաշնություն և այլն), այնպես էլ Հայաստանի ամերիկյան համալսարանի, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի և Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի հետ: Ֆակուլտետի դասախոսները ամեն տարի վերապատրաստման դասընթացներ են անցնում Ֆրանսիայում, Իտալիայում, Իսպանիայում, Գերմանիայում:

Կառուցվածքը

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետում գործում են անգլիական բանասիրության (ամբիոնի վարիչ՝ բ.գ.դ., պրոֆեսոր Ա.Կնյազյան), ռոմանական բանասիրության (ամբիոնի վարիչ՝ բ.գ.դ., պրոֆեսոր Հ.Բաղդասարյան), գերմանական բանասիրության (ամբիոնի վարիչ՝ բ.գ.թ., դոցենտ Գ.Սավոյան), ֆրանսիական բանասիրության (ամբիոնի վարիչ՝ բ.գ.թ., դոցենտ Գ.Սարգսյան), արտասահմանյան գրականության (ամբիոնի վարիչ՝ բ.գ.թ., պրոֆեսոր Ա.Սեդրակյան), թարգմանության տեսության և պրակտիկայի (ամբիոնի վարիչ՝ բ.գ.թ., դոցենտ Ռ.Ղազարյան), միջմշակութային հաղորդակցության անգլերենի (ամբիոնի վարիչ՝ բ.գ.դ., պրոֆեսոր Շ.Պարոնյան) ամբիոնները, ինչպես նաև հումանիտար և բնագիտական ֆակուլտետները սպասարկող անգլերեն լեզվի թիվ 1 (ամբիոնի վարիչ՝ բ.գ.թ., պրոֆեսոր Մ.Ապրեսյան) և անգլերեն լեզվի թիվ 2 (ամբիոնի վարիչ՝ բ.գ.դ., պրոֆեսոր Ե.Երզնկյան) ամբիոնները:

Երկու հարյուր հիսունից ավելի բարձրակարգ մասնագետներ ունեցող

եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետը, որն այսօր իրականացնում է բազմաբնույթ ուսումնամեթոդական և գիտական գործունեություն, ապահովում է գործնական անգլերենի, ֆրանսերենի, գերմաներենի, իսպաներենի և իտալերենի ուսուցում՝ որպես հիմնական և երկրորդ մասնագիտական լեզուներ, տեսական գիտելիքներ է հաղորդում բանասիրության տարբեր գիտակարգերի ոլորտում, ծանոթացնում երկրագիտական և լեզվամշակութաբանական իրողություններին, պատրաստում է միջմշակութային հաղորդակցության, թարգմանչական գործի, երկու օտար լեզուների տիրապետող մասնագետներ: Օտար լեզուներով հաղորդակցությունը կարևոր տեղ է գրավում ժամանակակից աշխարհում: Այսօր անգլերենը իր կայուն դիրքն է ապահովել հասարակական կյանքի բազմաթիվ ոլորտներում: Այս առումով առավել հեռանկարային է ոչ միայն անգլերեն լեզվական գիտելիքների ուսուցումը, այլ հաղորդակցական հմտությունների զարգացումը: Անգլերենից բացի այլ մասնագիտական լեզվի (իսպաներեն, իտալերեն, ֆրանսերեն, գերմաներեն) ուսուցումն իր հերթին թույլ կտա ֆակուլտետում տրվող որակավորումը ստացած շրջանավարտներին իրենց գիտելիքները կիրառելու ՀՀ և արտերկրի կրթական և տնտեսական տարբեր բնագավառներում՝ դրսևորելով միջազգային որակավորումներրով աշխատելու ունակություններ:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Ֆակուլտետում դասավանդում են ՀՀ ԳԱԱ 1 թղթակից անդամ, բանասիրական գիտությունների 9 դոկտոր, 4 պրոֆեսոր, 66 թեկնածու դոցենտ, 27 թեկնածու ասիստենտ, 86 դասախոս:

Այստեղ սովորում է 1510 ուսանող, որից 100-ը՝ մագիստրատուրայում: Շրջանավարտներից 27-ը կրթությունը շարունակում է ասպիրանտուրայում:

2007 թ-ից ֆակուլտետում գործում է նաև հեռակա ուսուցման բաժինը:

Անգլիական բանասիրության ամբիոնում բակալավրի աստիճան ապահովող ծրագրի պահանջները բավարարելու համար հատկապես կարևորվում են բառագիտության, ոճագիտության, հնչյունաբանության, ձևաբանության և շարահյուսության տեսության, ուսումնասիրվող լեզվի պատմության, թարգմանաբանության և կիրառական լեզվաբանության ոլորտների գիտելիքները:

Մագիստրոսական երկամյա ուսուցումը հիմնվում է ժամանակակից գիտական ձեռքբերումների վրա՝ ներառելով գիտական իմացության այնպիսի տարաբնույթ ոլորտներ, ինչպիսիք են գործառական ոճագիտությունը, տեքստի մեկնաբանությունը, գործաբանական լեզվաբանությունը, հոգելեզվաբանությունը, դիսկուրսի տեսությունը, մշակութային մարդաբանությունը և այլն, որոնք նաև նպաստում են անհատի ձևավորմանն ու կայացմանը: Մագիստրոսի աստիճանի ապահովումը ենթադրում է նաև լեզվաբանական և լայն

բանասիրական տեսագործնական խնդիրներ լուսաբանող մագիստրոսական թեզի իրականացում և պաշտպանություն: Անգլիական բանասիրության ամբիոնը իրականացնում է բազմաձավալ գիտահետազոտական գործունեություն՝ պատրաստելով աստիճանավորված բարձրակարգ մասնագետներ (գիտության թեկնածուներ և դոկտորներ) ինչպես ԵՊՀ-ում, այնպես էլ հանրապետության այլ բուհերի գիտակրթական օղակներում աշխատելու համար: Ամբիոնը ակտիվորեն մասնակցում է նաև մասնագետների վերապատրաստման դասընթացների իրականացմանը՝ հաջողությամբ կյանքի կոչելով մասնագիտության արդի խնդիրների և անգլերենի որակավորման C1 – C2 մակարդակների ծրագրերը:

Ֆակուլտետի անգլիական բանասիրության ամբիոնի և մասնավորապես ամբիոնի վարիչի ակտիվ ջանքերով հիմնադրվել է Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիան, որն Անգլերենի ուսումնասիրության եվրոպական ֆեդերացիայի անդամ է 2003 թ. սեպտեմբերից: Ասոցիացիան ամբիոնի և հանրապետության այլ ամբիոնների հետ համագործակցելով՝ կանոնավոր կերպով կազմակերպում է անգլերեն լեզվին, գրականությանը և մշակույթին վերաբերող գիտաժողովներ, սեմինարներ և այլ միջոցառումներ՝ նպաստելով ոչ միայն Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի դասախոսների և հետազոտողների մասնագիտական և գիտական համագործակցության ամրապնդմանը, փորձի փոխանակմանը, այլև տարբեր երկրների բուհերի և գիտական կազմակերպությունների հետ համագործակցությանը: Ամբիոնն ակտիվ մասնակցություն ունի նաև ԵՊՀ-ի և ասոցիացիայի “Armenian Folia Anglistika” միջազգային գրախոսվող ամսագրի հրատարակման գործում:

Ամբիոնի բակալավրի ծրագրեր

Ամբիոնի բակալավրի ***Անգլերեն լեզու և գրականություն*** կրթական ծրագիրը նպատակ ունի պատրաստելու անգլերեն լեզվի և գրականության բնագավառում միջառարկայական գիտելիքներով և հմտություններով օժտված մասնագետներ: Այս ծրագրում կարևորվում է ոչ միայն անգլերենի բուն լեզվական գիտելիքների և դրանց կիրառման հմտությունների ուսուցումը, այլև անգլո-ամերիկյան գրականության, հռետորիկայի, զանգվածային լրատվության յուրահատկությունների իմացությունը: Սույն կրթական ծրագիրը ավարտելուց հետո ուսանողին շնորհվում է բանասիրության բակալավր որակավորում:

Բանասիրության տեսությանն առնչվող հիմնախնդիրների իմացությունը և հասարակական գործունեության դաշտում (կրթություն, մեդիա, գործարար, տուրիզմ և այլն) գործնական շփման ունակությունների զարգացումը շրջանավարտին կդարձնի մրցունակ, հնարավորություն կտա աշխատելու

մասնագիտական ուղղվածություն ունեցող հայրենական և միջազգային տարբեր հաստատություններում:

Ամբիոնի բակալավրի ***Անգլերեն լեզու, ֆրանսերեն լեզու (գերմաներեն լեզու, իսպաներեն լեզու, իտալերեն լեզու) և հաղորդակցություն*** կրթական ծրագրերը, որոնք իրականացվում են ֆրանսիական բանասիրության, գերմանական բանասիրության և ռոմանական բանասիրության ամբիոնների հետ համատեղ, նպատակ ունեն տրամադրել երկու օտար լեզվի և համապատասխան գրականության խորացված ուսուցում, տրամադրել տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ՝ հաշվի առնելով լեզվի ուսուցման ժամանակակից մեթոդները և զարգացնել ուսանողների հաղորդակցական հմտությունները, տեսությունը և պրակտիկան համադրելու և գնահատելու ունակությունը: Այս ծրագիրը ուսանողներին կտա այնպիսի գիտելիքներ և ազատ հաղորդակցվելու այնպիսի հմտություններ, որոնք անհրաժեշտ են հասարակական գործունեության բազմազան ոլորտներում մասնագիտական գործունեություն ծավալելու համար:

Այս ծրագրի շրջանավարտները երկու եվրոպական լեզուներով հաղորդակցվելու ժամանակակից հմտությունների և համապատասխան ռազմավարության կիրառման շնորհիվ կկարողանան դիմակայել շուկայական մրցակցությանը և իրենց տեղն ապահովել ժամանակակից աշխատաշուկայում: Կարևորվում և խրախուսվում են նաև քննադատական և վերլուծական հմտությունները, որոնք անհրաժեշտ նախապայմաններ են հետագա աշխատանքային գործունեության համար: Շրջանավարտները կարող են աշխատել մասնագիտական ուղղվածություն ունեցող տարբեր հաստատություն-ներում և ձեռնարկություններում, հանրապետական և միջազգային տարբեր կազմակերպություններում:

Անգլերեն լեզվի թիվ 1 և թիվ 2 ամբիոններն ակտիվորեն իրականացնում են լայնածավալ ու բազմամակարդակ կրթական ծրագրեր տարբեր ֆակուլտետ-ներում: Դրանք ուղղորդված են անգլերենի ուսուցումը ծառայեցնելու ուսանողների մասնագիտական նպատակներին:

Այսօր անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի վարիչի և իր գործընկերների ջանքերի շնորհիվ ԵՊՀ-ում բացվել է Միջազգային թեստավորման պաշտոնական կենտրոն, որը հաջողությամբ է անցկացնում TOEFL-ի (ibt) (անգլերենի որպես օտար լեզվի թեստ) դասընթացներ և քննություններ ՀՀ տարբեր բուհերում ասպիրանտուրա ընդունվողների համար: Ամբիոնի մի շարք դասախոսներ մասնակցել են Հայաստանում Բրիտանական խորհրդի կողմից անցկացված IELTS միջազգային թեստավորման ծրագրին՝ ապագայում ցանկացողների համար վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու նպատակով:

Դասախոսների որակավորման ծրագրերի շրջանակում անգլերենի թիվ 1

ամբիոնի մի շարք միջազգային թեստավորման փորձ ձեռք բերած դասախոսներ անց են կացնում լեզվի B1 - B2 մակարդակի եվրոպական սանդղակին համապատասխան դասընթացներ ITEP-ի քննությունը հաջողությամբ հանձնելու համար (միջազգային վկայագրի տրամադրմամբ):

Ամբիոնը նաև կազմակերպում է մասնագիտական անգլերենի (Professional English) ուսուցում ԵՊՀ-ի վարչական և տարբեր մասնագիտություններ ներկայացնող պրոֆեսորադասախոսական կազմի համար:

Ամբիոնի նպատակն է տարբեր բնագավառներում մասնագիտացող ապագա գիտնականներին տալ մասնագիտական անգլերենի հուսալի գիտելիքներ ու հմտություններ, որոնք կօգնեն նրանց ներկայացնելու ՀՀ գիտական պոտենցիալը միջազգային ասպարեզում:

Անգլերեն լեզվի թիվ 2 ամբիոնի կողմից անգլերենի դասավանդման գործընթացում կիրառվող ժամանակակից մեթոդները նպաստում են ընդհանուր անգլերենի իմացության խորացմանը զուգահեռ ուսանողների՝ մասնագիտական գիտելիքների և անգլերենով դրանք փոխանցելու ունակությունների զարգացմանը: Անգլերենի կրթական ծրագրի նպատակը սովորողների մոտ հաղորդակցական կարողություններ զարգացնելն է տարբեր բաղադրիչներով՝ ընդգրկելով խոսքային գործունեության բոլոր հմտությունները՝ ունկնդրել, ընթերցել, խոսել, գրել:

Քանի որ օտար լեզուների դասավանդման ժամանակակից առաջատար մեթոդաբանությունը չի կարելի լիարժեք համարել առանց նորագույն տեխնոլոգիաների (ICT) կիրառման, ամբիոնի կողմից ներդրվել և արդյունավետ կիրառվում է համակարգչային Edusoft – English Discoveries ծրագիրը, որն ընդգրկում է 12 մակարդակ՝ տարրականից (basic) մինչև բարձր (executive)՝ ներառյալ գործարար անգլերենը (Business English): Այս ծրագիրը մեծ հնարավորություններ է ստեղծում թե՛ դասախոսի, թե՛ ուսանողի համար և հնարավորություն ընձեռում ուսումնական գործընթացում ցուցաբերելու անհատական մոտեցում, բացահայտելու յուրաքանչյուր ուսանողի գիտելիքների մակարդակը և օգնելու նրան հաղթահարել դժվարությունները և լիարժեք ինտեգրվել ուսումնական գործընթացի մեջ:

Ամբիոնի կողմից առաջարկվող բազմամակարդակ A1-ից մինչև C2 կրթական ծրագրերն օգնում են ուսանողներին կատարելագործելու իրենց խոսքի մշակույթը, իսկ տարաբնույթ մեթոդների կիրառումը հետաքրքիր և արդյունավետ է դարձնում ուսումնական գործընթացը: Ամբիոնն ակտիվորեն մասնակցում է վերապատրաստման դասընթացների իրականացմանը՝ պատասխանատու լինելով որակավորման A1-A2 մակարդակների դասընթաց-ների և քննությունների կազմակերպման համար: Ամբիոնին կից գործում է Անգլիական ակումբը (English Club), որի հանդիպումներին ուսանողները

հանդես են գալիս իրենց հուզող հարցերով, մասնակցում քննարկումների, ներկայացնում զեկուցումներ: Կազմակերպվում են նաև արտալսարանային դասեր թանգարաններում, ցուցահանդեսներում և այլուր:

Միջմշակութային հաղորդակցություն՝ անգլերեն մասնագիտությունը համեմատաբար նոր է ֆակուլտետում: Հայաստանի և աշխարհի տարբեր երկրների միջև մշտապես զարգացող տնտեսական, միջազգային, կրթական, մշակութային կապերի շնորհիվ այսօր միջմշակութային հաղորդակցության ոլորտի լեզվաբանությունը լայն պահանջարկ ունեցող մասնագիտություն է: Այս ամբիոնի նպատակն է պատրաստել անգլերենի բարձրակարգ մասնագետներ, որոնք կկարողանան արդյունավետ հաղորդակցվել տարբեր լեզվամշակույթների ներկայացուցիչների հետ՝ կիրառելով լեզուների հարմարակման (ադապտացիա) մեխանիզմը: Ուսուցումը տարվում է անգլերեն գրավոր և բանավոր խոսքի, ինչպես նաև համացանցային գրագրության հմտությունները զարգացնելու ուղղությամբ:

Միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնում կատարվում է նաև գիտահետազոտական աշխատանք՝ ուղղված լեզվի և մշակույթի, ճանաչողական լեզվաբանության, միջմշակութային գործաբանության տարբեր բնագավառներին առնչվող խնդիրների լուծմանը:

Ծրագրի նպատակն է.

- Ուսանողներին տրամադրել խորը և համակողմանի գիտելիք միջմշակութային հաղորդակցության ոլորտին առնչվող տեսական և գործնական խնդիրների վերաբերյալ:
- Զարգացնել ուսանողների արդյունավետ միջմշակութային հաղորդակցության համար անհրաժեշտ գործնական մասնագիտական կարողությունները՝ կիրառելով անգլերեն բանավոր և գրավոր խոսքի գիտելիքներն ու հմտությունները հաղորդակցական տարբեր իրադրություններում, ինչպես նաև համացանցային եղանակով իրականացվող հաղորդակցություններում:
- Օժտել ուսանողներին արդյունավետ հաղորդակցմանը նպաստող միջառարկայական գիտելիքներով և կարողություններով՝ միջմշակու-թային բախումներից խուսափելու և դրանց լուծման ձևերը գտնելու նպատակով:
- Խթանել ուսանողների՝ անգլերենի և միջմշակութային հաղորդակցման տեսական և գործնական խնդիրների վերաբերյալ ինքնուրույն գիտական հետազոտություններ կատարելու ունակությունները:

Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

«Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն՝ անգլերեն» բակալավրի ծրագրի շրջանավարտները հնարավոր աշխատատեղեր կարող են

զբաղեցնել հետևյալ հաստատություններում՝ ՀՀ նախարարությունների արտաքին կապերի վարչություններ և հաղորդակցման բաժիններ, բանկեր, միջպետական համատեղ ձեռնարկություններ և միջազգային կազմակերպություններ, մեդիա ոլորտում գործող մարքեթինգային գործակալություններ, գովազդային, համացանցային և ինովացիոն տեխնոլոգիաների, տուրիզմի ոլորտներում գործող պետական և մասնավոր կազմակերպություններ և գրասենյակներ, ԱՄՆ և Մեծ Բրիտանիայի դեսպանատներ, արտասահմանում Հայաստանի ներկայացուցչություններ, անգլերենի ուսուցման կենտրոններ, ՀՀ դպրոցներ:

Ֆրանսիական բանասիրության ամբիոնը սպասարկում է ԵՊՀ-ի գրեթե բոլոր ֆակուլտետները՝ ապահովելով ֆրանսերենի ուսուցում ակադեմիական նպատակների համար, իսկ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետում՝ որպես առաջին և երկրորդ մասնագիտություն: Ֆրանսերենի ուսուցման համար ամբիոնն օգտագործում է Եվրոհամայնքի համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից առաջարկվող A1–ից C2 մակարդակներ ապահովող դասագրքերն ու մեթոդները: Ամբիոնը սերտորեն համագործակցում է Ֆրանսիայի Մոնպելիե քաղաքի Պոլ Վալերիի անվան համալսարանի և Էքս–Մարսելի համալսարանի հետ, որտեղ ամեն տարի վերապատրաստման կուրսեր են անցնում ինչպես ուսանողները, այնպես էլ դասախոսները: Հաշվի առնելով եվրոպական կրթական համակարգում առկա մասնագիտությունների ինտեգրման միտումները, 2017 թ-ից մագիստրատուրայում ներմուծվել է նոր մասնագիտացում «Միջմշակութային հաղորդակցություն (ֆրանսերեն)»:

Առաջարկվող կրթական ծրագրերը բակալավրիատի համար և շնորհվող որակավորումը

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի ֆրանսիական բանասիրության ամբիոնն առաջարկում է բակալավրիատի *«Անգլերեն լեզու, ֆրանսերեն լեզու և հաղորդակցություն»* կրթական ծրագիրը՝ շնորհելով լեզվաբանության բակալավրի որակավորում:

Աշխատանքային հեռանկարները և կապը աշխատանքային շուկայի հետ

Բակալավրիատի ***«Անգլերեն լեզու, ֆրանսերեն լեզու և հաղորդակցություն»*** կրթական ծրագրի շրջանավարտները լեզվական և երկու եվրոպական լեզուներով հաղորդակցվելու ժամանակակից հմտությունների և համապատասխան ռազմավարության կիրառման շնորհիվ կկարողանան դիմակայել շուկայական մրցակցությանը և իրենց տեղն ապահովել ժամանակակից աշխատաշուկայում: Կարևորվում և խրախուսվում են նաև քննադատական և վերլուծական հմտությունները, որոնք անհրաժեշտ նախապայմաններ են հետագա աշխատանքային գործունեության համար: Շրջանավարտները կարող են աշխատել այն հաստատություններում, ձեռնարկություններում, հանրապե-

տական և միջազգային տարբեր կազմակերպություններում, որոնցում կարևոր տեղ են զբաղեցնում անգլերենով և ֆրանսերենով գործառույթները:

Ռոմանական բանասիրության ամբիոնում այսօր իրականացվում է ռոմանական երկու լեզուների՝ իսպաներենի և իտալերենի դասավանդում:

Իսպաներեն լեզու ուսումնասիրող ուսանողներին հնարավորություն է տրվում խորությամբ տիրապետել աշխարհի ամենատարածված լեզուներից մեկին՝ իսպաներենին, ինչպես նաև հարուստ գիտելիքներ ձեռք բերել իսպանախոս աշխարհի քաղաքակրթության վերաբերյալ: Ռոմանական բանասիրության ամբիոնն ունի հայ-իսպանական լսարան՝ Կադիսի համալսարանի հետ համագործակցությամբ, հարուստ գրադարան և ապահովված է տեխնիկական անհրաժեշտ միջոցներով: Ամբիոնին կից գործում է նաև Իսպաներեն լեզվի և մշակույթի կենտրոն՝Գրանադայի համալսարանի հետ համագործակցությամբ: Ամեն տարի՝ մայիս և նոյեմբեր ամիսներին, ռոմանական բանասիրության ամբիոնում իսպանագիտական ուսումնասիրությունների հայտնի կենտրոնի՝ Սերվանտեսի ինստիտուտի հետ համագործակցությամբ կազմակերպվում են իսպաներենի՝ որպես օտար լեզվի որակավորման միջազգային քննություններ (DELE)՝ ըստ լեզուների իմացության եվրոպական արդի չափանիշների: Մի շարք փոխանակման ծրագրերի շրջանակներում իսպանական բաժնի ուսանողներն իսպաներեն լեզվի կատարելագործման տարբեր դասընթացներ են անցնում Մադրիդի, Ալմերիայի, Վալենսիայի, Կադիսի, Գրանադայի և այլ համալսարան-ներում:

Հայաստանի Հանրապետությունում և աշխատանքի միջազգային շուկայում իսպաներենի դերն ու նշանակությունը շատ մեծ է: Եվ եթե նկատի ունենանք աշխարհում իսպաներենի տարածվածության գործոնը, նաև իսպանախոս երկրների հետ մեր հանրապետության քաղաքական, տնտեսական և մշակութային հարաճուն կապերը, ապա ակնհայտ է, որ ամբիոնի կողմից իրագործվող «Անգլերեն լեզու, իսպաներեն լեզու և հաղորդակցություն» բակալավրի կրթական ծրագիրն արդիական է և պահանջված:

Իտալերեն լեզու ուսումնասիրող ուսանողներին հնարավորություն է տրվում մասնագիտական մակարդակով տիրապետել իտալերենին և ստացած գիտելիքները կիրառել գործնական աշխատանքում: Ամբիոնն ունի իտալերենի կաբինետ, հարուստ գրադարան և ապահովված է տեխնիկական անհրաժեշտ միջոցներով: Ամբիոնում մշտապես աշխատում է Իտալիայից գործուղված դասախոս, որը դասավանդում է մի շարք առարկաներ: Զանազան ծրագրերի շրջանակներում ամեն տարի Իտալական բաժնի ուսանողները և դասախոսներն իտալերեն լեզվի կատարելագործման և վերապատրաստման դասընթացներ են անցնում Իտալիայի տարբեր համալսարաններում: Ամեն տարի՝ հունիսին, ռոմանական բանասիրության ամբիոնում Սիենայի համալսարանի հետ

համագործակցությամբ կազմակերպվում է իտալերենի որակավորման միջազգային CILS քննություն՝ ըստ լեզուների իմացության եվրոպական արդի չափանիշների:

Իտալերեն լեզու ուսումնասիրող ուսանողներն ընդգրկվում են Հայաստանում Իտալիայի դեսպանատան հետ համագործակցության շրջանակում կազմակերպվող տարբեր ծրագրերում և հնարավորություն ունեն մասնակցելու դեսպանատանը պարբերաբար կազմակերպվող միջոցառումներին, ինչպես նաև օգտվելու դեսպանատան հարուստ գրադարանից:

Ամբիոնը պարբերաբար հրավիրում է մասնագետներ Իսպանիայի, Իտալիայի լավագույն համալսարաններից, որոնք աջակցում են ապահովելու օտար լեզուների դասավանդման բարձր մակարդակ:

Առաջարկող կրթական ծրագրերը բակալավրիատի և մագիստրատուրայի համար և շնորհվող որակավորումները

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի ռոմանական բանասիրության ամբիոնն առաջարկում է բակալավրիատի «Անգլերեն լեզու, իսպաներեն լեզու և հաղորդակցություն» և «Անգլերեն լեզու, իտալերեն լեզու և հաղորդակցություն» կրթական ծրագրերը՝ շնորհելով լեզվաբանության բակալավրի որակավորում:

Ամբիոնն առաջարկում է մագիստրատուրայի «Միջմշակութային հաղորդակցություն (իսպաներեն լեզու)» և «Միջմշակութային հաղորդակցություն (իտալերեն լեզու)» կրթական ծրագրերը՝ շնորհելով բանասիրության մագիստրոսի որակավորում:

Աշխատանքային հեռանկարները և կապը աշխատանքային շուկայի հետ

Բակալավրիատի ***«Անգլերեն լեզու, իսպաներեն լեզու և հաղորդակցություն» և «Անգլերեն լեզու, իտալերեն լեզու և հաղորդակցություն»*** կրթական ծրագրերի շրջանավարտները, խորապես տիրապետելով աշխարհում լայն տարածում ունեցող երկու օտար լեզուների և հաղորդակցական որոշակի հմտությունների, կարող են դիմակայել արդի մարտահրավերներին և իրենց արժանի տեղն ապահովել ժամանակակից աշխատաշուկայում: Բակալավրի նշված ծրագրերի շրջանավարտներն իրենց մասնագիտությամբ կարող են աշխատել պետական և ոչ պետական հաստատություններում, նախարարություններում, դիվանագիտական ծառայություններում, միջազգային տարբեր կառույցներում, նոտարական գրասենյակներում, մասնավոր ընկերություններում, տարբեր ուսումնական հաստատություններում և այլն:

Մագիստրատուրայի «Միջմշակութային հաղորդակցություն (իսպաներեն լեզու)» և «Միջմշակութային հաղորդակցություն (իտալերեն լեզու)» կրթական ծրագրերն ուսանողներին օժտում են այնպիսի գիտելիքներով ու

կարողություններով, որոնք միջմշակութային հաղորդակցության բնագավառում լայն աշխատանքային գործունեության հնարավորություններ են ընձեռում:

Քանի որ վերոհիշյալ կրթական ծրագրերը միտված են բավարարելու ինչպես տեղական, այնպես էլ միջազգային գործատուների պահանջները, շրջանավարտները հնարավորություն կունենան աշխատելու ինչպես համապատասխան միջազգային կազմակերպություններում (ՄԱԿ և այլն, բիզնեսի ոլորտում առկա կազմակերպություններ), այնպես էլ պետական կառույցներում, մշակութային միություններում, հրատարակչություններում, ոչ պետական ձեռնարկություններում, զանազան գիտակրթական հաստատություններում, գրավոր և բանավոր թարգմանության տարբեր ոլորտներում և այլն:

Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի նպատակն է պատրաստել որակյալ թարգմանիչներ տարբեր մասնագիտական ոլորտներում աշխատելու համար:

«Թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն» կրթական ծրագիրը պատրաստվում է թարգմանիչներ հետևյալ ուղղություններով՝ գեղարվեստական, մասնագիտական, ինչպես նաև բանավոր թագմանիչներ՝ հաջորդական և համաժամանակյա ուղղություններով: Դասընթացները տեղի են ունենում տեխնիկապես հագեցած լսարաններում (համակարգիչներ, հեռուստացույցներ, DVD-ներ, ձայնագրիչներ, ինչպես նաև համացանցից օգտվելու հնարավորություն): 2018-2019 ուստարվանից թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնում գործում են համընթաց թարգմանության մասնագիտացված լսարանները, որոնք կահավորված են ժամանակակից տեխնիկայով՝ համապատասխան միջազգային բոլոր չափանիշներին: Այստեղ վարպետության դասընթացներ են վարում տարբեր երկրներից հրավիրված բարձրակարգ մասնագետ-թարգմանիչներ: Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի նպատակներից է մատուցել շրջանավարտներին միջազգային չափանիշներին համապատասխան գիտելիքներ, որոնց շնորհիվ կապահովվի նրանց մրցունակությունն արդի աշխատաշուկայում: Ամբիոնը կատարում է գիտական աշխատանքներ՝ ուղղված թարգմանության տեսության և պրակտիկայի տարբեր ոլորտներին, ինչպես նաև ղեկավարում է ասպիրանտների և հայցորդների գիտական թեմաները:

Ամբիոնի ուսանողներն իրենց արտադրական (թարգմանչական) պրակտիկան անց են կացնում մայրաքաղաքի տարբեր կազմակերպություններում, որտեղ կարևորվում է թարգմանչի աշխատանքը:

«Թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն» մագիստրոսական կրթական ծրագրի նպատակն է զարգացնել ուսանողների մասնագիտական հմտությունները՝ տրամադրելով խորացված ուսուցում թարգմանաբանության ոլորտում, տրամադրել տեսական և գործնական գիտելիքներ՝ թարգմա-

նաբանության ժամանակակից մեթոդները, հիմնախնդիրները հասկանալու, մեկնաբանելու և վերլուծելու համար, ինչպես նաև հաղորդել ուսանողներին տարբեր մասնագիտական բնագավառներում թարգմանչական համապատասխան գործունեություն ծավալելու և որակյալ թարգմանություն կատարելու գործնական հմտություններ:

Սույն մասնագիտությամբ շրջանավարտները կարող են աշխատատեղեր զբաղեցնել հետևյալ հաստատություններում և կազմակերպություններում. տարբեր նախարարությունների արտաքին կապերի բաժիններում, տարբեր մասնագիտական ոլորտներին (իրավական, տնտեսական, քաղաքական և այլն) առնչվող միջազգային կազմակերպություններում և միջպետական համատեղ ձեռնարկություններում, նոտարական գրասենյակներում, դատարաններում, բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում, ինչպես նաև մի շարք այլ պետական հաստատություններում և մասնավոր ձեռնարկություններում:

«Վարչագործարարական թարգմանություն» և «Զբոսաշրջային թարգմանություն» մագիստրոսական կրթական ծրագրերն ուսանողներին տրամադրում են մասնագիտական գիտելիքներ և կարողություններ, որոնք կնպաստեն վարչարարական և զբոսաշրջային թարգմանության ոլորտում մասնագիտական գործունեության իրականացմանը:

Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

Որակյալ թարգմանիչների պահանջարկը հանրապետությունում մեծ է և աշխատանքի տեղավորման հնարավորությունները նույնպես բազմազան են: Սույն ծրագրի ավարտին ուսանողը կունենա ամբողջական և խոր գիտելիքներ թարգմանաբանության ոլորտում, ունակ կլինի կատարել գրավոր և բանավոր թարգմանություններ տարբեր մասնագիտական ոլորտներում, ինչը զգալիորեն կխթանի մրցունակությունն աշխատաշուկայում:

Գերմանական բանասիրության ամբիոնում կատարվում է նաև մեծ ծավալի գիտահետազոտական աշխատանք: Ամբիոնի դասախոսների ուժերով հրատարակվել և հրատարակման են պատրաստվել տարբեր բնույթի դասագրքեր, բառարաններ և ուսումնաօժանդակ նյութեր: Առանձին դասախոսներ ընդգրկված են Մանհայմի, Ռոստոկի, Համբուրգի, Հայդելբերգի համալսարանների հետ գիտական հետազոտությունների տարբեր համատեղ ծրագրերում: Ամեն տարի Գերմանիայից և Ավստրիայից հրավիրվում են բարձրակարգ մասնագետներ, որոնք իրականացնում են ինչպես մանկավարժական, այնպես էլ՝ գիտական աշխատանք: Գերմանական և ավստրիական ակադեմիական փոխանակման ծառայությունների միջոցով պարբերաբար տեղի է ունենում նաև ուսանողների և ուսանողական խմբերի փոխանակում:

Գերմանական բանասիրության ամբիոնն առաջարկում է հետևյալ կրթական ծրագրերը՝ Անգլերեն լեզու, գերմաներեն լեզու և հաղորդակցություն (բակա-

լավրի կրթական ծրագիր), Միջմշակութային հաղորդակցություն (գերմաներեն) (մագիստրոսի կրթական ծրագիր): Բարձր առաջադիմություն ցուցաբերող ուսանողները հնարավորություն են ստանում կատարելագործելու իրենց լեզվական գիտելիքները Գերմանիայի և Ավստրիայի առաջատար համալսարան-ներում, իսկ մագիստրատուրայի առանձին ուսանողներ՝ այնտեղ անցկացնելու իրենց նախադիպլոմային պրակտիկան:

Համահամալսարանական և ֆակուլտետային միջոցառումներին ակտիվ մասնակցություն են ունենում նաև այս բաժնի ուսանողները: Հատկապես նշանակալից է նրանց մասնակցությունը միջազգային կարգի գիտաժողովներին ու սեմինարներին: Բաժնի մի շարք ուսանողներ խրախուսվել են գերմանական և ավստրիական առանձին կազմակերպությունների կողմից, ստացել տարբեր կարգի կրթաթոշակներ և անցել մասնակի ուսումնառություն այդ երկրներում: 2017 թ-ից սկսած գերմանական ակադեմիական փոխանակման ծրագրի շրջանակներում տարեկան շուրջ 15 ուսանողներ մասնակցում են Քյոլնի համալսարանի հետ փոխհամագործակցությանը: Մագիստրատուրայի բաժնի ուսանողներն իրենց նախադիպլոմային պրակտիկան անցկացնում են հիշյալ համալսարանի Գերմանագիտության ինստիտուտում և հաջողությամբ պաշտպանում իրենց որակավորման աշխատանքները:

Ֆակուլտետում օտար լեզուների դասավանդումն իրականացվում է միմյանց լրացնող մի շարք մասնագիտական դասընթացների միջոցով. գործնական լեզվի դասավանդումը զուգորդվում է բազմաթիվ տեսական առարկաներով, որոնք հնարավորություն են տալիս լեզվական միջավայրի բացակայության պայմաններում պատրաստել բարձրակարգ մասնագետներ:

Վերոհիշյալ բաժնի շրջանավարտները հնարավորություն կունենան աշխատելու ինչպես գերմանախոս երկրների դեսպանատներում, Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության, Գյոթեի անվան ինստիտուտի և գերմաներեն լեզվի ուսուցիչների վերապատրաստման գերմանական գրասենյակներում, այնպես էլ հայրենական պետական կառույցներում, մշակութային միություններում, հրատարակչություններում: Բացի այդ, նրանք կարող են դասավանդել գերմաներեն լեզու միջնակարգ և ավագ դպրոցներում, միջին մասնագիտական և այլ կրթական հաստատություններում:

Արտասահմանյան գրականության ամբիոնում գործում է «Արտասահմանյան գրականություն» մագիստրոսական կրթական ծրագիր:

Աշխատանքային հեռանկարներն ու կապն աշխատաշուկայի հետ

Վերջին երեք տարիների աշխատաշուկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ այս կրթական ծրագրի շրջանավարտները աշխատում և պահանջված են.

- Հանրապետության բուհերի բանասիրական ֆակուլտետներում իբրև արտասահմանյան գրականության դասախոս:

- Գրականահրատարակչական համակարգում, որտեղ գրականագետ մագիստրանտը հաջողությամբ մասնակցում է հրատարակչական ծրագրերի ձևավորմանը, թարգմանությունների որակի վերահսկմանը, միջազգային գիտաժողովների և ցուցահանդեսների անցկացմանը, հրատարակչական ընդհանուր քաղաքականության իրականացմանը:
- ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, որտեղ նպաստավոր գործունեություն է իրականացվում համեմատական գրականագիտության, հայ գրականության միջազգային կապերի և գրականության տեսության բաժիններում:
- Մատենադարանում, որտեղ մշտապես անհրաժեշտություն է առաջանում արևմտաեվրոպական և հայ հնագույն գրական տեքստերի ուսումնասիրության, համեմատության և արժևորման, մեր մագիստրոսներն իրենց գիտագործնական նպաստն են բերում հետազոտական և թարգմանական աշխատանքներում, ինչպես նաև միջազգային գիտաժողովներում օտար լեզվով ներկայացնելով հայ հնագույն աշխարհիկ և հոգևոր գրականությունը:
- Հանրակրթական ավագ դպրոցներում, որտեղ արտասահմանյան գրականությունը ներառված է իբրև կամընտրական առարկա:

Ուսանողական կյանք և ժամանց

ԵՊՀ ուսանողական խորհուրդը ԵՊՀ ուսանողության ներկայացուցչական, նրա շահերը ներկայացնող և ինքնակառավարվող բարձրագույն ընտրովի մարմինն է: Այն արտահայտում և պաշտպանում է ուսանողության շահերն ու իրավունքները, նպաստում նրանց կրթական, գիտական, ստեղծագործական, ֆիզիկական, բարոյական և հոգևոր զարգացմանը: Ուսանողական խորհուրդը սեփական հմտությունների բացահայտման և նոր ընկերությունների լավագույն հարթակն է: Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի ուսանողական խորհուրդը կարևորում է ուսանողի արտահամալսարանական գիտելիքի ստացումը, ազատ ժամանցի ճիշտ և օգտակար օգտագործումը, զարգացումը և հարթակ է դառնում ֆակուլտետի ուսանողների համար՝ ինքնարտահայտվելու, ինքնադրսևորվելու և իր ուսանողական տարիները անմոռաց դարձնելու: Ուսանողական խորհրդի կազմակերպած ծրագրերի շրջանակներում ուսանողները սովորում են գրել ծրագրեր, առաջ են բերում համալսարանում առկա մի շարք խնդիրներ և տալիս են այդ խնդիրների լուծման իրենց տարբերակը: Բացի այդ, առաջին կուրսի ուսանողները ծանոթանում են ՈՒԽ կառավարման համակարգին, ձեռք են բերում նոր ընկերներ, մասնագիտական և ոչ մասնագիտական հմտություններ: Ֆակուտետի ներսում կազմակերպվում և նշվում են ինչպես հայկական, այնպես էլ այլ մշակութային տոներ, որոնք նպաստում են միջմշակութային կապերի ձևավորմանը:

Ֆակուլտետային ՈՒԽ-ն կազմված է 8 հանձնաժողովներից, որոնցից յուրաքանչյուրը կատարում է շատ կարևոր գործառույթներ թե՛ համալսարանի, թե՛ ուսանողների համար։

Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը ԵՊՀ ուսանողներին և ասպիրանտներին միավորող կառույց է։

Կառույցի գերնպատակն է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը։ Արդյունքում ՈՒԳԸ-ն կազմակերպում է միջազգային գիտաժողովներ, սեմինարներ ու դասախոսություններ, հրատարակում երիտասարդ գիտնականների և ուսանողների գիտական հոդվածները։ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն մշտապես աչքի է ընկնում ակտիվությամբ և հաճախ կազմակերպում է գիտահանրամատչելի միջոցառումներ՝ ուսանողական գիտաժողովներ, մասնագիտական սեմինարների շարքեր, տարատեսակ օլիմպիադաներ, էսսեների մրցույթներ, մասնագիտական դասընթացներ և այլն։ Ֆակուլտետային ՈՒԳԸ-ն սերտորեն համագործակցում է նաև ԵՊՀ այլ ֆակուլտետների հետ՝ մասնակցելով համատեղ կազմակերպված մի շարք ծրագրերի։ Ֆակուլտետի ՈՒԳԸ-ի անդամները հաճախ տպագրում են նաև իրենց գիտական ու գիտահանրամատչելի հոդվածները՝ հանդես բերելով մասնագիտական բարձր որակներ։ Ֆակուլտետային ՈՒԳԸ-ում արժևորվում է մասնագիտական հմտություններն ի նպաստ բոլորի գործի դնելու գաղափարը, ինչի մասին են վկայում մի շարք համագործակցային ծրագրերն այլ կազմակերպությունների հետ։

ԵԼՀ ՈՒԽ-ն և ՈՒԳԸ-ն սիրով և անհամբերությամբ սպասում է Քեզ, սիրելի՛ դիմորդ։ Բարեհաջող հանձնի՛ր քննություններդ և դարձի՛ր մեր մեծ ընտանիքի մի մասնիկը։

Ընդունելությունն ըստ կրթական ծրագրերի։

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետում ընդունելությունը կկատարվի հետևյալ կրթական ծրագրերով՝

- անգլերեն և գրականություն
- անգլերեն, ֆրանսերեն և հաղորդակցություն
- անգլերեն, գերմաներեն և հաղորդակցություն
- անգլերեն, իսպաներեն և հաղորդակցություն
- անգլերեն, իտալերեն և հաղորդակցություն
- միջմշակութային հաղորդակցություն՝ անգլերեն
- թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն։

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիների եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի դիմորդների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և տեղերի քանակի.

Կրթական ծրագիր	Ուսուցման համակարգ	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը
Անգլերեն և գրականություն	Անվճ	58	2	34	-		
	Վճ		28		30		
Թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն	Անվճ	105	3	113	3	105	3
	Վճ		72		72		72
Միջմշակութային հաղորդակցություն՝ անգլերեն	Անվճ	136	2	135	2	135	2
	Վճ		88		88		88
Անգլերեն, ֆրանսերեն և հաղորդակցություն	Անվճ	73	5	64	5	69	5
	Վճ		35		35		35
Անգլերեն, գերմաներեն և հաղորդակցություն	Անվճ	49	5	34	5	29	5
	Վճ		20		20		15
Անգլերեն, իսպաներեն և հաղորդակցություն	Անվճ	81	5	69	5	87	5
	Վճ		45		45		45
Անգլերեն, իտալերեն և հաղորդակցություն	Անվճ	60	4	27	4	28	4
	Վճ		21		21		11

Անցողիկ միավորներն ըստ վերջին 3 տարիների.

Կրթական ծրագիր	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
	Անվճ	Վճ	Անվճ	Վճ	Անվճ	Վճ
Անգլերեն և գրականություն	32.5	24.5	-	15.75		
Թարգմանչական գործ՝ անգլերեն և հայերեն	38.5	27	38	26	37.5	24.75
Միջմշակութային հաղորդակցություն՝ անգլերեն	39.25	30.5	39.5	28.5	39	28
Անգլերեն, ֆրանսերեն և հաղորդակցություն	38.75	32.5	39	31	38.25	30.5
Անգլերեն, գերմաներեն և հաղորդակցություն	38.25	34	36.75	27.75	38.25	32.25
Անգլերեն, իսպաներեն և հաղորդակցություն	38.75	31.5	38.5	31.25	38.25	31
Անգլերեն, իտալերեն և հաղորդակցություն	38	30.25	37.25	19.25	38.5	34

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատմական ակնարկ

Արևելագիտության հայկական դպրոցն արմատներով հասնում է Վիեննայի ու Վենետիկի Մխիթարյան միաբանություններ և Ռուսաստանում առաջին արևելագիտական օջախը՝ Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանը: Երևանի պետական համալսարանում արևելագիտական դասընթացներ դասավանդվել են բուհի հիմնադրման առաջին իսկ տարիներից: Արևելագիտության առաջին դասախոսը գրականագետ և արևելագետ Գևորգ Ասատուրն էր, ով 1921 թ-ին հրավիրվում է դասավանդելու վրացերեն և Արևելքի գրականություն:

1923 թ-ին Թավրիզից ԵՊՀ է հրավիրվում մեծանուն լեզվաբան Հրաչյա Աճառյանը: 1940 թ-ի սեպտեմբերից պրոֆեսոր Հ. Աճառյանի նախաձեռնությամբ ստեղծվում է արևելյան բանասիրության ամբիոն: Նույն թվականին բացվում է նաև Արևելյան լեզուների և գրականության բաժինը, որի հիման վրա 1968 թ-ին կազմավորվում է Արևելագիտության ֆակուլտետը: Տարբեր տարիներին ֆակուլտետը ղեկավարել են պրոֆեսորներ Գևորգ Նալբանդյանը, Բորիս Բալայանը, Մերի Քոչարը, Գուրգեն Մելիքյանը:

2017 թ-ից արևելագիտության ֆակուլտետի դեկանն է պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Մելքոնյանը:

Կառուցվածքը

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետը բաղկացած է երեք ամբիոններից՝ արաբագիտության, թյուրքագիտության և իրանագիտության:

Արաբագիտության ամբիոնի գիտակրթական գործունեության ոլորտը ներառում է արաբագիտության բոլոր հիմնական ուղղությունները. լեզվաբանությունը, միջնադարյան արաբական մշակույթն ու պատմությունը, իսլամագիտությունը, նոր և նորագույն ժամանակների արաբական գրականությունը, ժամանակակից տարածաշրջանային խնդիրների ուսումնասիրությունը, ինչպես նաև եբրայագիտությունը: Արաբագիտության ամբիոնին կից գործում է Աբդուլազիզ Սաուդ Ալ-Բաբտեյնի անվան արաբական մշակույթի կենտրոն, որը զբաղվում է հայ-արաբական հարաբերությունների և արաբերենի ուսումնասիրություններով: Արաբագիտության ամբիոնի վարիչն է պ. գ. թ., դոցենտ Հայկ Քոչարյանը:

Թյուրքագիտության ամբիոնի գիտակրթական գործունեության շրջանակում են Օսմանյան կայսրության, ժամանակակից Թուրքիայի, Ադրբեջանի և այլ թյուրքալեզու պետությունների ու ժողովուրդների պատմությանը, գրականությանը, մշակույթին առնչվող խնդիրները: ԵՊՀ-ի և Աստանայի՝ Գումիլյովի անվան եվրասիական ազգային համալսարանի միջև կնքված համագործակցության համաձայնագրի շրջանակներում 2010 թ-ից արևելագի-տության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնին կից գործում է

Ղազախական մշակույթի, լեզվի, գրականության և պատմության կենտրոնը: Թյուրքագիտության ամբիոնի վարիչն է պ. գ. թ., պրոֆ. Ալեքսանդր Սաֆարյանը:

Իրանագիտության ամբիոնի գիտահետազոտական և կրթական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է իրանագիտական ուղղություն-ների գրեթե ողջ բույլը՝ կենդանի և մեռած իրանական լեզուներ և բարբառներ, Իրանի և իրանալեզու տարածքների պատմություն, իրանական լեզվաբա-նություն և գրականություն, իրանական մշակույթի և քաղաքակրթության պատմություն: Իրանագիտության ամբիոնին կից գործում են Իսլամագիտության կենտրոնը և Կովկասյան հետազոտությունների կենտրոնը, որոնց գիտական հետաքրքրության հիմնական ասպարեզներն են, համապատասխանաբար, տասներկուիմամական շիայականությունը, իսլամի այլ ուղղությունների ուսումնասիրությունը և հարավկովկասյան ու մերձավորարևելյան տարածաշրջաններում տեղի ունեցող սոցիալ-քաղաքական և տնտեսական գործընթացները: Իրանագիտության ամբիոնի վարիչն է բ. գ. թ., պրոֆ. Վարդան Ոսկանյանը:

Ընթացիկ տարում արևելագիտության ֆակուլտետում սովորում է 590 ուսանող, որից 520-ը՝ բակալավրիատում, 70-ը՝ մագիստրատուրայում և 13-ը՝ ասպիրանտուրայում: Արևելագիտության ֆակուլտետում կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կրթական ծրագրերի շրջանակներում պարբերապար իրենց ուսումնառությունն են շարունակում նաև միջազգային համալսարանների ուսանողները:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Արևելագիտության ֆակուլտետում տարբեր տարիների դասավանդել են հայ արևելագիտության այնպիսի երախտավորներ, ինչպիսիք են Ջ. Կիրակոսյանը, Ե. Սարգսյանը, Հ. Փափազյանը: Ներկայումս արևելագիտության ֆակուլտետում դասավանդում է անվանի իրանագետ, պրոֆեսոր և բարերար Գուրգեն Մելիքյանը: Արևելագիտության ֆակուլտետում դասավանդում են գիտությունների 3 դոկտոր պրոֆեսոր, 6 պրոֆեսոր, 32 դոցենտ, 29 ասիստենտ, 16 դասախոս: Արևելագետների երիտասարդ սերունդը շարունակում է տասնամյակներով ձևավորված կրթական ավանդույթները: Ֆակուլտետի դասախոսները կրթական գործունեությանը զուգահեռ ակտիվորեն զբաղվում են գիտահետազոտական աշխատանքով՝ համագործակցելով հայաստանյան և արտասահմանյան գիտական կենտրոնների հետ: Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունքն են արևելյան լեզուների, մասնագիտական երկրների պատմության ու գրականության հայերենով հրատարակված դասագրքերը: Արևելագիտության ֆակուլտետում պարբերաբար դասախոսություններով և սեմինարներով են հանդես գալիս հայաստանյան և համաշխարհային բուհերի, գիտակրթական և վերլուծական

կենտրոնների գիտնականներ ու հետազոտողներ:

Առաջարկվող կրթական ծրագրերն ու շնորհվող որակավորումները

Արևելագիտության ֆակուլտետի բակալավրիատում ընդունելությունն իրականացվում է «Ադրբեջանագիտություն», «Արաբագիտություն», «Թյուրքագիտություն», «Իրանագիտություն» կրթական ծրագրերով: Շրջանավարտներին շնորհվում է «արևելագիտության բակալավրի» որակավորում: Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի, հարակից այլ մասնագիտություններով ծրագրեր իրականացնող բարձրագույն մասնագիտական այլ հաստատությունների մագիստրատուրայում:

«Ադրբեջանագիտություն» կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները տիրապետում են ադրբեջաներենի գրական, գիտական և խոսակցական բառապաշարի առանձնահատկություններին, ձեռք են բերում գրավոր և համաժամանակյա/ հերթականությամբ թարգմանության հմտություններ, ուսումնասիրում են թյուրքական ժողովուրդների ծագումնաբանության, պատմության, գրականության, ժամանակակից քաղաքական գործընթացների հիմնահարցերը: Ձևավորում են վերլուծական կարողություններ Ադրբեջանի (մասնավորապես հարավկովկասյան և մերձավորարևելյան) պատմության և արդի քաղաքականության հիմնահարցերը վերլուծելու առումով:

«Արաբագիտություն» կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները ձեռք են բերում գրական արաբերենով թարգմանչական աշխատանք (գրավոր և բանավոր) կատարելու հմտություններ, ուսումնասիրում են տարածագոտու ընդհանուր պատմամշակութային, էթնիկ և սոցիոլեզվական պատմական ու ժամանակակից պատկերը, յուրացնում են արևելագիտության ու արաբագիտության բնագավառի հիմնական գիտակարգերը, հումանիտար մտքի ուսումնասիրության ժամանակակից մեթոդներն ու մոդելները: Կրթական ծրագրում ներգրավված ուսանողները հնարավորություններ ունեն լեզվական վերապատրաստում անցնել արաբական որևէ երկրում (Կատար, Քուվեյթ, Եգիպտոս, Հորդանան):

«Թյուրքագիտություն» կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները տիրապետում են թուրքերենի և ադրբեջաներենի գրական, գիտական և խոսակցական բառապաշարի առանձնահատկություններին, ձեռք են բերում գրավոր և համաժամանակյա/ հերթականությամբ թարգմանության հմտություններ, ուսումնասիրում են թյուրքական ժողովուրդների ծագումնաբանության, պատմության, գրականության, ժամանակակից քաղաքական գործընթացների հիմնահարցերը: Ձևավորում են վերլուծական կարողություններ Թուրքիայի և Ադրբեջանի (մասնավորապես հարավկովկասյան և մերձավորարևելյան) պատմության և արդի քաղաքականության հիմնահարցերը վերլուծելու առումով:

«Իրանագիտություն» կրթական ծրագրի շրջանակներում ուսանողները յուրացնում են ժամանակակից պարսկերենի գրավոր և բանավոր խոսքի առանձնահատկությունները, ըստ հաղորդակցման համապատասխան ոլորտների՝ դրանց գործնական կիրառման առանձնահատկությունները, ուսումնասիրում են պատմական Իրանի երկրամասերի պատմամշակութային և քաղաքական իրակույթները, Իրանի էթնիկ-դավանական կազմը, իրանալեզու հանրույթների պատմական, մշակութային, լեզվական առանձնահատկություն-ները, իրանական մշակույթի պատմության զարգացման ընթացք:

Արևելագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում ընդունելությունն իրականացվում է «Ադրբեջանագիտություն», «Կիրառական արաբագիտություն», «Թյուրքական պատմաբանասիրություն», «Իրանական պատմաբանասի-րություն» և «Թալիշագիտություն և քրդագիտություն» կրթական ծրագրերով: Շրջանավարտները ստանում են «արևելագիտության մագիստրոսի» որակավորում: ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող անձինք:

«Ադրբեջանագիտություն» մագիտրոսական ծրագրի ավարտին շրջանավարտները տիրապետում են թյուրքական ու մերձավորարևելյան պատմամշակութային արեալի, քաղաքականության միջգիտակարգային ուսումնասիրման ժամանակակից մոտեցումների հիմնահարցերին, խորապես պատկերացնում են ՀՀ պետական շահերի տեսանկյունից տարածաշրջանին առնչվող գլոբալ և լոկալ հիմնախնդիրները: Ունենում են գիտական, գիտամանկավարժական և մասնագիտական այլ բնագավառներում աշխատելու և տարբեր հետազոտությունների արդյունքների վերլուծություն կատարելու կարողություն, ինչպես նաև թարգմանչական աշխատանք (թուրքերեն գրավոր և բանավոր) կատարելու հմտություն:

«Կիրառական արաբագիտություն» մագիտրոսական ծրագրի ավարտին շրջանավարտները տիրապետում են տարածաշրջանագիտական արդիական գործիքակազմին, խորապես պատկերացնում են սեմալեզու տարածագոտու ընդհանուր պատմա-, էթնո-, սոցիոլեզվական առանձնահատկությունները, ժամանակակից իսլամի պատմական, կրոնաիրավական և քաղաքական դրսևորումները:

«Թյուրքական պատմաբանասիրություն» մագիտրոսական ծրագրի ավարտին շրջանավարտները տիրապետում են թյուրքական ու մերձավորարևելյան պատմամշակութային արեալի, քաղաքականության միջգիտակարգային ուսումնասիրման ժամանակակից մոտեցումների հիմնահարցերին, խորապես

պատկերացնում են ՀՀ պետական շահերի տեսանկյունից տարածաշրջանին առնչվող գլոբալ և լոկալ հիմնախնդիրները: Ունենում են գիտական, գիտամանկավարժական և մասնագիտական այլ բնագավառներում աշխատելու և տարբեր հետազոտությունների արդյունքների վերլուծություն կատարելու կարողություն, ինչպես նաև թարգմանչական աշխատանք (թուրքերեն գրավոր և բանավոր) կատարելու հմտություն:

«Իրանական պատմաբանասիրություն» մագիստրոսական ծրագրի ավարտին շրջանավարտները տիրապետում են իրանական լեզուների հետ առնչվող հետազոտական և գործնական աշխատանքի հմտություններին, պատկերացնում և կարողանում են վերլուծել Իրանի և տարածաշրջանի երկրների միջև պատմական, կրոնական, քաղաքական և մշակութային հարաբերությունների ողջ համակարգը: Ծրագիրը ուսանողներին օգնում է զարգացնելու և խորացնելու իրանագիտության ոլորտում ձեռք բերած տեսական գիտելիքները և գործնական հմտությունները, պատրաստում է իրանագետ-մասնագետներ գիտական, կրթական, մշակութային, քաղաքական, տնտեսական, և հատկապես, միջպետական հարաբերությունների ոլորտներում դիվանագիտական, թարգմանչական, վերլուծական, խորհրդատվական, աշխատանք կատարելու համար, ինչպես նաև խթանում է ուսանողների քննադատական մտածողությունը, խրախուսում նրանց ինքնուրույն աշխատանքը, օգնում կիրառելու մասնագիտական կարողությունները գործնական դաշտում: Ստանալով բարձրագույն մասնագիտական կրթություն՝ ուսանողները ձեռք են բերում անհրաժեշտ գիտելիքներ և գործնական հմտություններ՝ աշխատաշուկայում պահանջված ու մրցունակ մասնագետ լինելու համար:

«Թալիշագիտություն և քրդագիտություն» մագիտրոսական ծրագրի ավարտին շրջանավարտները տիրապետում են քրդերենին ու թալիշերենին, կարողանում են վերլուծել և քննության առնել այդ ժողովուրդների լեզվական, պատմական, մշակութային ու քաղաքական առանձնահատկությունները և արդի հիմնախնդիրները: Ծրագիրը ուսանողներին օգնում է զարգացնելու և խորացնելու իրանագիտության ոլորտում ձեռք բերած տեսական գիտելիքները և գործնական հմտությունները, պատրաստում է իրանագետ-մասնագետներ գիտական, կրթական, մշակութային, քաղաքական, տնտեսական, և հատկապես, միջպետական հարաբերությունների ոլորտներում դիվանագիտական, թարգմանչական, վերլուծական, խորհրդատվական, աշխատանք կատարելու համար, ինչպես նաև խթանում է ուսանողների քննադատական մտածողությունը, խրախուսում նրանց ինքնուրույն աշխատանքը, օգնում կիրառելու մասնագիտական կարողությունները գործնական դաշտում: Ստանալով բարձրագույն մասնագիտական կրթություն՝ ուսանողները ձեռք են բերում անհրաժեշտ գիտելիքներ և գործնական հմտություններ՝

աշխատաշուկայում պահանջված ու մրցունակ մասնագետ լինելու համար:

Աշխատանքային հեռանկարներն ու կապն աշխատաշուկայի հետ

Արևելագիտության ֆակուլտետի ուսանողները տեղական և միջազգային շուկայի պահանջներին համապատասխանող մասնագետներ են, ովքեր հնարավորություն են ունենում գործի անցնել թե՛ պետական, թե՛ մասնավոր սեկտորներում: Արևելագետ մասնագետները պահանջված են ՀՀ Նախագահի աշխատակազմում, ՀՀ արտաքին գործերի, պաշտպանության նախարարություններում, ՀՀ ազգային անվտանգության ծառայությունում, այլ պետական մարմինների տեղեկատվավերլուծական և արտաքին կապերի ստորաբաժանումներում, քաղաքագիտական, տնտեսական և մշակութաբանական հետազոտություններ իրականացնող ոչ պետական կազմակերպություններում և լրատվամիջոցներում, ինչպես նաև զբոսաշրջային գործունեություն ծավալող, արտահանմամբ և ներկրմամբ զբաղվող մասնավոր ընկերություններում: Շրջանավարտների մի մասը հնարավորություն ունի գիտակրթական գործունեություն ծավալելու ՀՀ այնպիսի կարևոր գիտական կենտրոններում, ինչպիսիք են Գիտությունների Ազգային Ակադեմիան, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանը, Երևանի պետական համալսարանը և այլ պետական ու մասնավոր բուհեր, գիտահետազոտական ինստիտուտներ: Արևելագիտության ֆակուլտետը համագործակցային լայն ցանց է ձևավորել նաև միջազգային ասպարեզում՝ ինչպիսիք են համաշխարհային անվանի համալսարանները, տարբեր համալսարաններին կից գիտահետազոտական կենտրոնները, միջազգային կառույցներն ու դեսպանատները:

Ուսանողական կյանք և ժամանց

Արևելագիտության ֆակուլտետում ուսանողական կյանքը բազմաշերտ և հետաքրքիր է՝ շնորհիվ ֆակուլտետի Ուսանողական Խորհրդի (ՈՒԽ) և Ուսանողական Գիտական Ընկերության: Այս կառույցները ուսանողական տարիներն առավել հագեցած դարձնելու նպատակ ունեն՝ կազմակերպելով մասնագիտական սեմինարներ, ինտելեկտուալ խաղեր, ճանաչողական այցեր, ինչպես նաև գրքերի և ֆիլմերի քննարկումներ:

ՈՒԽ-ում գործում են երեք լեզվական ակումբներ՝ արաբերենի, թուրքերենի և պարսկերենի: Այս ակումբները նպաստում են ուսանողների լեզվական հմտությունների զարգացմանը՝ հնարավորություն տալով ոչ միայն արևելագիտության ֆակուլտետի, այլև այլ ֆակուլտետների ուսանողներին՝ ուսումնասիրել և կատարելագործել այդ լեզուները: Բանավեճի ակումբում ուսանողները զարգացնում են իրենց քննադատական մտածողությունը՝ քննարկումների և հռետորական մրցույթների միջոցով:

Ֆակուլտետի ուսանողները ակտիվորեն մասնակցում են միջֆակուլտետային տարբեր մրցույթների՝ զբաղեցնելով պատվավոր առաջին, երկրորդ և երրորդ

տեղերը, ինչպես «Արի Մրցենք» միջֆակուլտետային մրցույթում: Արևելագիտության ֆակուլտետի ուսխորհրդականները մշտապես ներգրավված են եղել նաև համալսարանի Ուսանողական Խորհրդի կողմից կազմակերպված մեծամասշտաբ ծրագրերում, ինչպիսիք են՝ «Զարկ» ուսանողական ճամբարը, «Ինքնակառավարում», «Զարգացում», «Հեքեթոն» և այլ նախագծեր, որտեղ հանդես են եկել որպես մենթորներ և հրամանատարներ՝ իրենց փորձառությունը կիսելով երիտասարդ մասնակիցների հետ:

ՈՒԽ-ի նախաձեռնությամբ կազմակերպվում են նաև բազմաթիվ բանախոսություններ, պանելային քննարկումներ և այցեր տարբեր թանգարաններ ու մշակութային այլ հաստատություններ, ինչը խթանում է ուսանողների մասնագիտական և մշակութային զարգացումը: 2024 թ-ին Արևելագիտության ֆակուլտետի Ուսանողական Խորհուրդը ճանաչվել է որպես լավագույն ֆակուլտետային ՈՒԽ՝ իր ակտիվ և բազմազան գործունեության շնորհիվ:

Ընդունելությունն ըստ կրթական ծրագրերի

Արևելագիտության ֆակուլտետում ընդունելությունը կկատարվի հետևյալ կրթական ծրագրերով՝

- արաբագիտություն
- իրանագիտություն
- թյուրքագիտություն
- ադրբեջանագիտություն:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիների արևելագիտության ֆակուլտետի դիմորդների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և տեղերի քանակի.

Կրթական ծրագիր	Ուսուցման համակարգ	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը
Արաբագիտություն	Անվճ	61	5	62	5	48	5
	Վճ		35		35		35
Իրանագիտություն	Անվճ	39	5	41	5	25	5
	Վճ		25		25		25
Թյուրքագիտություն	Անվճ	57	5	72	5	57	5
	Վճ		40		40		40
Ադրբեջանագիտություն	Անվճ	45	5	37	5	24	5
	Վճ		25		25		25

Անցողիկ միավորներն ըստ վերջին 3 տարիների.

Կրթական ծրագիր	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
	Անվճ	Վճ	Անվճ	Վճ	Անվճ	Վճ
Արաբագիտություն	36.5	24	38.25	22.25	37.25	18
Իրանագիտություն	31.25	16.75	35.5	16.25	32.25	16
Թյուրքագիտություն	37	19.5	35.75	27.25	37.25	24.5
Ադրբեջանագիտություն	32.5	17.25	30.25	17	29	17

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատմական ակնարկ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը Հայաստանում իրավաբանական բարձրագույն կրթություն ապահովող պատմական ամենաերկար ուղի անցած և ամենահեղինակավոր գիտակրթական կենտրոնն է: Բուհերի միջազգային վարկանիշային աղյուսակներում ԵՊՀ-ն ՀՀ ամենաբարձր վարկանիշ ունեցող բուհն է և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը իրավամբ համարվում է իրավաբանական կրթության առաջատարը, որի առաքելությունն է թե՛ ՀՀ և թե՛ արտերկրի աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող բարձրորակ իրավագետների պատրաստումը: Գոյության ավելի քան 90 տարիների ընթացքում ֆակուլտետը թողարկել է ավելի քան 25000 շրջանավարտ, որոնք համալրել են ՀՀ պետական կառավարման, իրավապահ և դատական մարմինների համակարգը, աշխատանքի անցել բանկային համակարգում, իրավաբանական կամ փաստաբանական գրասենյակներում, միջազգային, մասնավոր և այլ կառույցներում, ինչպես նաև արտերկրի հեղինակավոր իրավաբանական կազմակերպություններում:

Կառուցվածքը

Ներկայումս ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում, ինչպես և ամբողջ համալսարանում, ուսուցումն իրականացվում է եռաստիճան կրթական համակարգով՝ բակալավրիատ, մագիստրատուրա և ասպիրանտուրա: Կրթությունն առաջարկվում է ինչպես առկա, այնպես էլ հեռակա հիմունքներով:

Բակալավրի առկա կրթությամբ առաջարկվում է մեկ կրթական ծրագիր՝ «Իրավագիտություն»՝ 4 տարի տևողությամբ, որի շրջանավարտները ստանում են իրավագիտության ոլորտի հիմնարար գիտելիքներ:

Ուսումնական գործընթացը կազմակերպվում է ֆակուլտետի 7 ամբիոնների միջոցով՝ պետության և իրավունքի տեսության ու պատմության, սահմանադրական իրավունքի, քրեական իրավունքի, քրեական դատավարության և կրիմինալիստիկայի, քաղաքացիական իրավունքի, քաղաքացիական դատավարության, եվրոպական ու միջազգային իրավունքի:

Գործնական հմտությունների ձեռք բերման նպատակով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում 1999 թ-ից հաջողությամբ գործում է ՀՀ-ում առաջին իրավաբանական կլինիկան, որը ուսանողներին հնարավորություն է տալիս դեռևս ուսումնառության տարիներին փաստաբան-դասախոսի ղեկավարությամբ անմիջականորեն իրավաբանի գործառություններ իրականացնել՝ ոչ միայն իրավախորհրդատվություն տրամադրելով, այլև աջակցելով քաղաքացիների իրավունքների պաշտպանությանը ներպետական մակարդակով, իսկ առանձին դեպքերում՝ նույնիսկ ՄԻԵԴ դիմելով: Ներկայումս ԵՊՀ իրավաբանական կլինիկան գործունեություն է ծավալում քաղաքացիական

իրավունքի, քրեական իրավունքի, վարչական իրավունքի ոլորտներում, իսկ 2021 թ-ից սկսած՝ նաև անչափահասների և փախստականների հիմնախնդիրներով:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում գործում է գրադարան-ընթերցասրահ, համակարգչային սրահ, որը հնարավորություն է ընձեռում ուսանողներին օգտվել իրավաբանական ոլորտի էլեկտրոնային գրադարաններից և աղբյուրներից:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Ֆակուլտետում դասավանդում են ՀՀ ԳԱԱ 1 ակադեմիկոս, գիտությունների 12 դոկտոր, պրոֆեսոր, 74 գիտությունների թեկնածու, 38 դոցենտ, 58 դասախոս և 25 ասիստենտ: Ուսումնական գործընթացին մասնակցում են նաև ԵՊՀ գործընկեր համալսարանների պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները՝ առցանց տարբերակով կամ ՀՀ այցերի ընթացքում ուսանողների համար դասընթացներ իրականացնելով:

Առաջարկվող կրթական ծրագրերն ու շնորհվող որակավորումները

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում առկա ուսուցմամբ իրականացվում են 7 մագիստրոսական կրթական ծրագրեր:

«Դատական իրավունք և փաստաբանություն», «Բիզնես իրավունք և միջազգային արբիտրաժ», «Քրեական արդարադատություն և փաստաբանություն», «Մարդու իրավունքներ և սահմանադրական արդարադատություն» և «Միջազգային դատարաններ և արբիտրաժ» (1,5 տարի տևողությամբ) կրթական ծրագրերը հաջողությամբ ավարտած շրջանավարտներին շնորհվում է իրավագիտության մագիստրոսի որակավորում, «Միջազգային իրավունք» և «Մեդիա և տեղեկատվական իրավունք» (1 տարի տևողությամբ) կրթական ծրագրերը հաջողությամբ ավարտած շրջանավարտներին՝ իրավական ուսումնասիրությունների մագիստրոսի որակավորում: «Միջազգային դատարաններ և արբիտրաժ» կրթական ծրագիրը իրականացվում է ամբողջությամբ անգլերեն լեզվով՝ ուսումնական գործընթացին ներգրավելով նաև օտարերկրացի ճանաչված պրակտիկների և պրոֆեսորների:

«Իրավագիտություն» որակավորմամբ մագիստրատուրայի ուսանողները առավել նեղ և խորացված մասնագիտական գիտելիքներ ստանալով՝ հաջողությամբ կարող են գործունեություն ծավալել ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, իրավապահ, դատական կամ բանկային համակարգում, իրավաբանական կամ փաստաբանական գրասենյակներում, միջազգային կառույցներում և այլն: Իրավագիտության ֆակուլտետի մագիստրոսի կրթական աստիճան ունեցող շրջանավարտները կարող են կրթությունը շարունակել ինչպես ՀՀ, այնպես էլ արտերկրի իրավաբանական դպրոցների ասպիրանտուրայում:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետը հնարավորություն է ընձեռում կրթություն ստանալ նաև հեռակա. իրավագիտության բակալավրի աստիճանի հավակնող ուսանողների համար հեռակա կրթությունը կազմակերպվում է 5, իսկ երկրորդ կրթություն ստանալու նպատակով ընդգրկված ուսանողներինը՝ 4 տարի ժամկետով: Մագիստրոսի աստիճանի հավակնելիս՝ հեռակա կրթություն նախընտրած ուսանողների ուսման տևողությունը 2 տարի է: Հեռակա ուսուցմամբ առաջարկվում է երկու մագիստրոսական կրթական ծրագիր՝ «Դատական իրավունք և փաստաբանություն» և «Քրեական արդարադատություն և փաստաբանություն»:

Իրավագիտության ֆակուլտետը հնարավորություն է տալիս բակալավրիատում, մագիստրատուրայում կամ ասպիրանտուրայում սովորելիս՝ տարբեր միջազգային կառույցների և ԵՊՀ-ի գործընկեր համալսարանների միջև հաստատված համագործակցության շրջանակներում մեկ կամ մի քանի կիսամյակ սովորել արտերկրի իրավաբանական դպրոցներում: Իրավագիտության ֆակուլտետը նման համագործակցություն ունի Ռուսաստանի Դաշնության, Արևմտյան և Արևելյան Եվրոպայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Կանադայի, Ասիայի մի շարք առաջատար իրավաբանական դպրոցների ու գիտահետազոտական կենտրոնների հետ: Ֆակուլտետի նախկին սաներից շատերը իրենց կրթությունն են շարունակել Մոնպելյեի, Բեռլինի, Ստոկհոլմի, Ժնևի, Սորբոնի, Էսսեքսի, Լոնդոնի, Սթենֆորդի, Փենսիլվանիայի, Բերկլիի, Վաշինգտոնի, Բարսելոնայի, Ռուսաստանի Դաշնության և այլ համալսարաններում:

Միջազգային աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կադրերի պատրաստման գործում էական նշանակություն ունի միջազգային մասնագիտական մրցույթներին ֆակուլտետի ուսանողների մասնակցության ապահովումը: Վերջին տասնամյակների ընթացքում իրավագիտության ֆակուլտետի ուսանողները հաջողությամբ հանդես են եկել միջազգային իրավունքի հիմնախնդիրներին նվիրված մի շարք, այդ թվում՝ Նյուրբերգի, Ջեսափի, Մարտենսի, Ժան Պիկտեի, արբիտրաժային իրավունքի հիմնախնդիրներին նվիրված Վիլեմ Վիս, ներդրումային իրավունքի հիմնախնդիրների նվիրված Ֆրանկֆուրտի դատախաղ-մրցույթներում, մարդու իրավունքների հիմնախնդիրներին նվիրված Նելսոն Մանդելայի, ԷԼՍԱ, մրցույթներում: Ներպետական մակարդակում իրավագիտության ֆակուլտետի ուսանողները տարիներ շարունակ առաջատար են արբիտրաժային իրավունքի, քրեական իրավունքի և քրեական դատավարության հիմնախնդիրներին նվիրված, ինչպես նաև Հայաստանում Ամերիկյան համալսարանի, Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի, Կարմիր Խաչի Հայաստանյան գրասենյակի կազմակերպած հանրապետական մրցույթներում:

Աշխատանքային հեռանկարներն ու կապն աշխատաշուկայի հետ

Շրջանավարտները կարող են աշխատանքի անցնել ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, իրավապահ, դատական կամ բանկային համակարգում, իրավաբանական կամ փաստաբանական գրասենյակներում, միջազգային կառույցներում և այլն: Իրավագիտության ֆակուլտետի բակալավրի կրթական աստիճան ունեցող շրջանավարտները կարող են կրթությունը շարունակել ինչպես ՀՀ, այնպես էլ արտերկրի իրավաբանական դպրոցների մագիստրատուրայում:

Ուսումնական գործընթացին ակտիվորեն ներգրավված են նաև պրակտիկ գործունեություն ծավալող իրավագետներ՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության ներկայացուցիչներ: Ֆակուլտետում գործում է կարիերայի կենտրոն, որի նպատակն է ապահովել ուսանողշրջանավարտ-գործատու մշտական կապը և աջակցել շրջանավարտներին աշխատանքի անցնելու հարցում:

Ուսանողական կյանք և ժամանց

Իրավագիտության ֆակուլտետն աչքի է ընկնում ակտիվ ուսանողական կյանքով: Ֆակուլտետի Ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության ջանքերով կազմակերպվում են բազմաթիվ գիտական և մշակութային միջոցառումներ. դրանց հաճախականության և բովանդակային ընդգրկվածության ցուցանիշով իրավագիտության ֆակուլտետի ուսանողական կառույցները արդեն երկու տասնամյակից ավելի ԵՊՀ-ում առաջատարներից են:

Ընդունելությունն ըստ կրթական ծրագրերի

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում տարեցտարի նկատվում է դի-մորդների աճ, ինչը թույլ է տալիս, լուրջ մրցակցության արդյունքում, որպես ուսանող ներգրավել առավել նպատակասլաց և պատրաստված դիմորդների՝ երաշխավորելով հետագայում բարձրորակ իրավագետների պատրաստումը:

Իրավագիտության Ֆակուլտետում ընդունելությունը կկատարվի հետևյալ կրթական ծրագրով՝

- իրավագիտություն:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիների իրա-վագիտության ֆակուլտետի դիմորդների թիվը՝ ըստ կրթական ծրագրի և տեղերի քանակի.

Կրթական ծրագիր	Ստացման դասակարգում	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը
Իրավագիտություն	Անվճ	330	2	294	2	307	2
	Վճ		138		138		138

Անցողիկ միավորներն ըստ վերջին 3 տարիների.

Կրթական ծրագիր	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
	Անվճ	Վճ	Անվճ	Վճ	Անվճ	Վճ
Իրավագիտություն	40	37.5	39.75	37	40	37

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատմական ակնարկ

Աստվածաբանության ֆակուլտետը ԵՊՀ-ի ամենաերիտասարդ ֆակուլտետներից է, որը հիմնադրվել է 1995/96 ուստարում՝ ԳԱԱ և ԵՊՀ պատվավոր դոկտոր պրոֆեսոր, երջանկահիշատակ Շահե արքեպիսկոպոս Աճեմյանի ղեկավարությամբ ու մեկենասությամբ:

Կառուցվածքը

Աստվածաբանության Ֆակուլտետն ունի երկու ամբիոն՝ աստվածաբանության և հայ եկեղեցու պատմության և կրոնագիտության: Այս ամբիոններում ուսանողները մասնագիտանում են հետևյալ մասնագիտություններով՝ աստվածաբանություն, կրոնագիտություն, Հայ եկեղեցու պատմություն, կրոնական զբոսաշրջություն: Ուսանողներին հնարավորություն է տրվում սովորելու մի քանի օտար լեզու: Աստվածաբանության ֆակուլտետում է գործում հանրապետության բուհերում եզակի՝ հայերեն և օտարալեզու աստվածաբանական գրականությամբ հարուստ, 2 սրահով հագեցած կաբինետ-գրադարանը: Ֆակուլտետի առաջին դեկանի անունը կրող կաբինետ-գրադարանը ձևավորվել է Շահե արք. Աճեմյանի անձնական գրադարանի հիման վրա, ապա տարեցտարի համալրվել Անգլիայից, ԱՄՆ-ից, Գերմանիայից, Հունաստանից, Լիբանանից, Ֆրանսիայից, ինչպես նաև անհատներից ստացած նվիրատվություններով: Աստվածաբանության ֆակուլտետի հիմնադիր դեկան Շահե արք. Աճեմյանի նախաձեռնությամբ ստեղծվել է «Աճեմյան մատենաշարը», որով հրատարակվել են և հրատարակվում են տարբեր աշխատություններ:

Աստվածաբանության ֆակուլտետն այսօր ունի 153 ուսանող, որից 128-ը սովորում են բակալավրիատում, իսկ 25-ը՝ մագիստրատուրայում: Շրջանավարտներից 2-ը ուսումը շարունակում են ասպիրանտուրայում:

Պրոֆեսորադասախոսական կազմը

Ֆակուլտետում դասավանդում են 1 դոկտոր, 11 գիտությունների թեկնածու, դոցենտ, 1 աստիստենտ, 6 դասախոս: Ֆակուլտետն ունի բարձր որակավորում ունեցող դասախոսներ, որոնք և՛ Հայաստանում և՛ ողջ աշխարհում բարձր են պահում աստվածաբանության, կրոնագիտության և հարակից այլ գիտությունների վարկը:

Ֆակուլտետը նոր եռանդով շարունակեց գործել Ա. Եպս. Ժամկոչյանի գլխավորությամբ. ոչ միայն շարունակվեցին ձեռքբերումները, այլև արձանագրվեցին նորերը: Աստվածաբանության ֆակուլտետի ողջ աշխատակազմը զգալի ջանքեր է ներդնում ուսանողության ուսումնադաստիարակչական աշխատանքը լավագույնս կազմակերպելու համար. այդ նպատակին են ծառայում նաև հայրենագիտական պրակտիկան և գիտարշավները Հայաստանի տարբեր պատմամշակութային հուշարձաններ:

Առաջարկվող կրթական ծրագրերն ու շնորհվող որակավորումները

2021 թ-ի ՀՀ կառավարության որոշմամբ 2022/2023 ուստարում բացվել է բակալավրիատի «Կրոնական զբոսաշրջություն» կրթական ծրագիրը: Այն դառնալու է Հայաստանում եզակի, քանի որ ուսանողներին հնարավորություն է ընձեռնվել բացի կրոնագիտական առարկաներից ուսումնասիրել ու նաև կառավարման, զբոսաշրջության և սերվիսի ոլորտի առարկաներ, ինչպես նաև տարբեր արևելյան լեզուներ (թուրքերեն, պարսկերեն): 2025 թ. սեպտեմբերի 1-ից աստվածաբանության ֆակուլտետում գործում է «Կրոնական զբոսաշրջություն» նոր մագիստրոսական ծրագիրը: Ի տարբերություն այլ կրթական ծրագրի այս ծրագիրը առանձնանում է նրանով, որ ուսման տևողությունը 1 տարի է և ուսանողները ստանում են զբոսաշրջության մագիստրոսի աստիճան: Առաջին տարում կրթական ծրագիրը համալրել է հատկացված բոլոր տեղերը և հաջողությամբ իրականացնում է կրթական ծրագիրը:

Ուսանողական կյանք և ժամանց

Աստվածաբանության ֆակուլտետն աչքի է ընկնում ակտիվ ուսանողական կյանքով: Ֆակուլտետի Ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության ջանքերով կազմակերպվում են մի շարք միջոցառումներ, դասընթացներ, սեմինարներ, կինոդիտում-քննարկումներ, բանավեճեր, արշավներ և ուխտագնացություններ, ինչպես նաև սպորտային և ժամանցային միջոցառումներ: Ֆակուլտետում տոնվում են ազգային-եկեղեցական տոները: Ուսանողական գիտական ընկերությունը (ՈՒԳԸ) ուսանողությանը միավորող և գիտական մտածողության ձևավորմանը միտված կարևորագույն գիտակրթական կառույցներից է: Նրա առաքելությունն է խթանել ուսանողների գիտական և ստեղծագործական ներուժի զարգացումը, ինչպես նաև նրանց ակտիվ մասնակցությունը գիտահետազոտական գործընթացներին՝ նպաստելով ակադեմիական մտածողության, վերլուծական հմտությունների և նորարարական մոտեցումների ձևավորմանը: ՈՒԳԸ-ն իր առաքելությունը իրականացնում է՝ կազմակերպելով գիտաժողովներ, սեմինարներ, դասախոսություններ, գիտական և ճանաչողական այցեր, ինչպես նաև տարաբնույթ դասընթացներ ու կոնֆերանսներ:

ԵՊՀ ուսանողական խորհուրդը ուսանողության ներկայացուցչական, ինքնակառավարման բարձրագույն ընտրովի մարմին է, որն արտահայտում է ուսանողության շահերն ու իրավունքները, ապահովում է ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը, նպաստում նրանց կրթական, գիտական, ստեղծագործական, ֆիզիկական, բարոյական և հոգևոր զարգացմանը, կազմակերպում ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը: Աստվածաբանության ֆակուլտետի ՈՒԽ-ն ոչ միայն ուսանողական կառույց է, այլ նաև մի մեծ ընտանիք, որտեղ իշխում են փոխօգնությունը, ընկերասիրու-

թյունը և հոգևորար ժեքների պահպանումը: Աստվածաբանության ֆակուլտետի ուսանողական խորհրդի կազմում գործում է 6 հանձնաժողով, 1 հանձնախումբ:

Ֆակուլտետի կարևոր ձեռքբերումներից են միջազգային կապերը աշխարհի տարբեր երկրների համանման ուսումնական հաստատությունների հետ, որոնց աշխարհագրությունը գնալով ընդլայնվում է՝ Անգլիա, Դանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հոլանդիա, Շվեյցարիա, Սիրիա, Լիբանան: Ժամանակի ընթացքում տարբեր ուսանողների հնարավորություն է ընձեռնվել ուսումը շարունակել արտերկրում, հատկապես Գերմանիայի Մ. Լյութերի անվան համալսարանում: Սովորական երևույթ է նաև օտար դասախոսների դասավանդումը ֆակուլտետում: Կան միջբուհական սերտ հարաբերություններ տարբեր գիտահետազոտական ինստիտուտների՝ Մաշտոցի անվան Մատենադարանի և ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ: Պարբերական են մասնակցությունները տարբեր ծիսական արարողություններին: Թարգմանչաց տոնին կատարվում է 1-ին կուրսեցիների երդման արարողություն Օշականում՝ Մեսրոպ Մաշտոցի շիրմի առջև, և երեխաների մկրտություն Գեղարդի վանքում:

Ընդունելությունն ըստ կրթական ծրագրերի

Աստվածաբանության ֆակուլտետում ընդունելությունը կկատարվի հետևյալ կրթական ծրագրերով՝

- աստվածաբանություն
- կրոնական զբոսաշրջություն:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է վերջին երեք տարիների աստվածաբանության ֆակուլտետի դիմորդների թիվը ըստ կրթական ծրագրերի և տեղերի քանակի.

Կրթական ծրագիր	Ուսուցման համակարգ	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը
Աստվածաբանություն	Անվճ	8	5	5	5	4	5
	Վճ		10		10		15
Կրոնական զբոսաշրջություն	Անվճ	24	2	11	2	6	2
	Վճ		23		23		18

Անցողիկ միավորներն ըստ վերջին 3 տարիների.

Կրթական ծրագիր	2025 թ.		2024 թ.		2023 թ.	
	Անվճ	Վճ	Անվճ	Վճ	Անվճ	Վճ
Աստվածաբանություն	15.25	-	18	-	19.25	-
Կրոնական զբոսաշրջություն	26.5	15.25	32.75	18	19	-

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը հիմնադրվել է 1994 թ.՝ կոչված լինելով կասեցնել սահմանամերձ շրջաններից երիտասարդության արտահոսքը, ՀՀ հյուսիսարևելյան շրջաններում բարձրացնել գիտամշակութային, քաղաքական և տնտեսական մակարդակը, ձևավորել արդիական կայուն և բարձրակարգ գիտամշակութային մթնոլորտ, մտավորականության տեղական դպրոց, նպաստել առավել աչքի ընկնող ուսանողների կրթության շարունակմանը կրթության համակարգի հաջորդ աստիճաններում:

Մասնաճյուղի հիմնադրման գործում մեծ ավանդ է ունեցել առաջին տնօրենը՝ ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր ***Համլետ Սուրենի Կարայանը***: Ուսումնական հաստատության կայացման գործում իրենց ներդրումն են ունեցել մայրաքաղաքից հրավիրված պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամները, նրանց թվում՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գրիգոր Ավագյանը, գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ Վալերի Տեր-Անտոնյանը, Ռոլանդ Ավագյանը, Մարտին Աբրահամյանը, Իշխան Խաչատրյանը, Վիդոկ Մուսոյանը, Յուրի Մովսիսյանը, Արտաշես Պապոյանը, Ռաֆիկ Հարությունյանը, Միքայել Հովսեփյանը, Վլադիմիր Աբրահամյանը, նաև գիտությունների տասնյակ թեկնածուներ:

1996 թ. ապրիլից մինչև 2000 թ. հոկտեմբերը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը ղեկավարել է տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ***Շավարշ Մեղրակի Մարգարյանը***, 2000-2018 թթ.՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ ***Սամվել Արշավիրի Առաքելյանը***, 2018 թ. հունիսից մինչև 2019 թ. օգոստոսը մասնաճյուղի տնօրենի պաշտոնակատար եղել է ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ ***Արտակ Վոլոդյայի Յուզբաշյանը***, իսկ 2019 թ. սեպտեմբերից մինչև 2024 թ. դեկտեմբերը ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ ***Անուշավան Հայկարամի Մակարյանը***: 2024 թ. դեկտեմբերից ԵՊՀ ԻՄ տնօրենն է տնտեսագիտության թեկնածու ***Մհեր Մերուժանի Օթարյանը:***

Բոլոնիայի գործընթացի պահանջներից ելնելով և ուսուցման կազմակերպման ուսանողամետ համակարգին անցնելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ մասնաճյուղում առկա ուսուցմամբ բակալավրական կրթությունը 2008-2009 ուստարվանից իրականացվում է կրեդիտային համակարգով, իսկ հեռակա ուսուցմամբ՝ 2009-2010 ուստարվանից: Կրթօջախը ներգրավված է ՀՀ-ում գործող որակի ապահովման գործընթացում: 2022 թ. մասնաճյուղը ԵՊՀ կազմում երկրորդ անգամ ստացել է հավատարմագրում 6 տարի ժամկետով, ինչով արտաքին փորձագետների կողմից կրկին երաշխավորվել է ԵՊՀ ԻՄ գործունեության և մատուցվող կրթական ծառայությունների բարձր որակը: Վերջին տարիները ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի համար հատկանշվում են որպես կրթական բարեփոխումների շրջան: Ներդրվում

են մոդուլային ուսումնական ծրագրեր և պլաններ՝ որպես ուսուցման նորացման, ուսանողների շարժունության ապահովման կարևոր պայման և երաշխիք: Շարունակվում են հետևողական աշխատանքները ուսանողների հետազոտական աշխատանքների ակտիվացման և ուսումնագիտական գործընթացի զարգացման ուղղությամբ:

Մասնաճյուղն այսօր ունի չորս ֆակուլտետ՝ *Բնական գիտությունների* (դեկանի ԺՊ - տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ Ռ. Յոլչյան), *Հումանիտար գիտությունների* (դեկանի ԺՊ - պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Ն. Գրիգորյան), *Տնտեսագիտության* (դեկանի ԺՊ - ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ Ա. Մարգարյան) և *Կիրառական արվեստի* (դեկանի ԺՊ - բան. գիտ. թեկնածու, դոցենտ Վ. Աղաբաբյան), որտեղ գործում են 11 ամբիոն, 1 գիտաուսումնական լաբորատորիա, դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի 7 արվեստանոց, համակարգչային 4 սրահ, գրադարան, մարզադահլիճ:

Բնական գիտությունների ֆակուլտետն ունի երկու ամբիոն (ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների, ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության) և իրականացնում է բակալավրի մեկ կրթական ծրագիր. «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» (որակավորումը՝ *ինֆորմատիկայի բակալավր*):

Հումանիտար գիտությունների ֆակուլտետն ունի չորս ամբիոն (հայոց պատմության և հասարակագիտության, հայոց լեզվի և գրականության, մանկավարժության և հոգեբանության, օտար լեզուների) և իրականացնում է բակալավրի յոթ կրթական ծրագիր.

1. Պատմություն (որակավորումը՝ *պատմության բակալավր*),
2. Հայոց լեզու և գրականություն (որակավորումը՝ *բանասիրության բակալավր*)
3. Հոգեբանություն (որակավորումը՝ *հոգեբանության բակալավր*)
4. Անգլերեն և գրականություն (որակավորումը՝ *բանասիրության բակալավր*)
5. Ֆրանսերեն և գրականություն (որակավորումը՝ *բանասիրության բակալավր*)
6. Ռուսերեն և գրականություն (որակավորումը՝ *մանկավարժության բակալավր*)
7. Տարրական մանկավարժություն և մեթոդիկա (որակավորումը՝ *մանկավարժության բակալավր*):

Տնտեսագիտության ֆակուլտետն ունի երկու ամբիոն (ընդհանուր տնտեսագիտության, տուրիզմի կառավարման և մշակութաբանության) և իրականացնում է բակալավրի երկու կրթական ծրագիր.

1. Ֆինանսներ (ըստ ոլորտի) (որակավորումը՝ *տնտեսագիտության բակալավր*)

2. Զբոսաշրջություն (որակավորումը՝ *զբոսաշրջության բակալավր*):

Կիրառական արվեստի ֆակուլտետն ունի երկու ամբիոն (դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի, գծանկարի, գունանկարի և քանդակի) և իրականացնում է երկու կրթական ծրագիր.

1. Դեկորատիվ - կիրառական արվեստ (որակավորումը՝ *արվեստի բակալավր*)

2. Դիզայն (որակավորումը՝ *արվեստի բակալավր*):

Մասնաճյուղը նաև իրականացնում է հեռակա ուսուցմամբ հնգամյա բակալավրական կրթություն՝ հինգ կրթական ծրագրերով («Պատմություն», «Հոգեբանություն», «Տարրական մանվարժություն և մեթոդիկա», «Ֆինանսներ (ըստ ոլորտի)», «Զբոսաշրջություն»):

2020 թ-ից մասնաճյուղը հեռակա ուսուցմամբ իրականացնում է մագիստրոսի «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագիրը (որակավորումը՝ *մանկավարժության մագիստրոս*), իսկ 2023 թ-ից՝ «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագիրը (որակավորումը՝ *կառավարման մագիստրոս*):

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը պատրաստում է Երևանի պետական համալսարանի կրթական ծրագրերին համապատասխան բակալավրի և մագիստրոսի որակավորմամբ մասնագետներ: Ներկայումս առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրիատում սովորում է 1061 ուսանող (174-ը՝ անվճար, 921-ը՝ վճարովի): Մասնաճյուղում հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայում սովորում է 34 ուսանող՝ վճարովի հիմունքներով:

Բակալավրիատի լավագույն շրջանավարտները հնարավորություն ունեն իրենց ուսումը անվճար շարունակելու Երևանի պետական համալսարանի մագիստրատուրայի համապատասխան բաժիններում, ինչպես նաև մասնաճյուղի և այլ ուսումնական հաստատությունների մագիստրատուրաներում՝ վճարովի ուսուցման համակարգում:

Մասնաճյուղում դասավանդում է բարձրորակ պրոֆեսորադասախոսական անձնակազմ (11 պրոֆեսոր, 49 դոցենտ, 17 գիտությունների թեկնածու, Հայաստանի նկարիչների միության 5 անդամ, Հայաստանի դիզայներների միության 1 անդամ և 2 սպորտի վարպետ): Մասնաճյուղում աշխատող առաջատար պրոֆեսորադասախոսական անձնակազմի գերակշիռ մասը Երևանի պետական համալսարանից է: Գիտահետազոտական աշխատանքները հիմնականում իրականացվում են հայագիտության, ծրագրավորման, փոքր բիզնեսի զարգացման, լեզվի ու գրականության, ինչպես նաև պատմության, մանկավարժության և հոգեբանության հարցերի ուսումնասիրության

ուղղությամբ:

Մասնաճյուղում գործում են մի շարք ուսումնագիտական կենտրոններ՝ «Անգլերեն լեզվի ռեսուրս կենտրոն», «Ֆրանսերենի ուսուցման կաբինետ», «Ռուսաց լեզվի և մշակույթի կենտրոն»:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը համագործակցում է հանրապետության մի շարք համալսարանների, ինչպես նաև արտասահմանյան որոշ հաստատությունների՝ մասնավորապես Ֆրանսիայի Վալանս քաղաքի կրթօջախների, ԱՄՆ Այովայի համալսարանի, “Armenian Volunteer Network” ԱՄՆ-ում տեղակայված կրթական միջազգային կազմակերպության, Նոր բուլղարական համալսարանի, Սլովակիայի Պրեշովի և Բանսկա-Բիստրիցայի Մատեյ Բելի անվան համալսարանների, Զալցբուրգի համալսարանի Քրիստոնյա Արևելքի հետազոտությունների ինստիտուտի, ՌԴ Մոսկվայի, Եկատերինբուրգի, Սմոլենսկի, Ուրալի, Ղրիմի ֆեդերալ, Ղազախստանի Լ. Ն. Գումիլյովի անվան եվրասիական ազգային համալսարանի և այլ համալսարանների հետ:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտները ստանում են Երևանի պետական համալսարանի կողմից տրվող պետական նմուշի դիպլոմ: Շրջանավարտներից շատերը մրցութային կարգով աշխատանքի են անցնում պետական և ոչ պետական հաստատություններում:

Մասնաճյուղում աշխատանքներ են տարվում ուսանողական կյանքը հետաքրքիր և լիարժեք դարձնելու համար: Նման աշխատանքներում իրենց մասնակցությունն ունեն մասնաճյուղի ուսանողական կառույցները՝ Ուսանողական խորհուրդը և Ուսանողական գիտական ընկերությունը: Ամեն տարի անցկացվում են հիշարժան օրերին նվիրված բազմաբնույթ մշակութային միջոցառումներ, սպորտային տարբեր մրցույթներ և ինտելեկտուալ խաղեր: Մասնաճյուղի ուսանողները մասնակցում են նաև Երևանի պետական համալսարանում կազմակերպվող գիտական նստաշրջաններին և սպորտային միջոցառումներին:

2026-2027 ուստարում մասնաճյուղում առկա ուսուցմամբ բակալավրի ընդունելությունը կկատարվի հետևյալ կրթական ծրագրերով.

- պատմություն
- հայոց լեզու և գրականություն
- անգլերեն և գրականություն
- ֆրանսերեն և գրականություն
- ռուսերեն և գրականություն
- տարրական մանկավարժություն և մեթոդիկա
- հոգեբանություն
- դիզայն
- դեկորատիվ-կիրառական արվեստ

- ֆինանսներ (ըստ ոլորտի)
- զբոսաշրջություն
- ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրերով վերջին երեք տարիների դիմորդների թիվը, տեղերի քանակը և անցողիկ միավորները:

Կրթական ծրագիր	Համակարգ	2025 թ.			2024 թ.			2023 թ.		
		Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Անցողիկ միավոր	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Անցողիկ միավոր	Դիմորդների թիվը	Տեղերի քանակը	Անցողիկ միավոր
Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	Անվճ	35	10	27.25	21	10	20.25	25	10	20.25
	Վճ		12	19.75		25	16.5		25	16.25
Պատմություն	Անվճ	30	3	30.75	25	3	28.75	15	3	33
	Վճ		18	17.5		27	16.25		27	15.25
Հայոց լեզու և գրականություն	Անվճ	8	4	23.5	6	4	20.75	10	4	24.75
	Վճ		3	16		16	18.75		16	18
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Անվճ	10	5	17.25	9	5	17.5	7	5	19.5
	Վճ		3	15.25		20	16		20	19.25
Անգլերեն և գրականություն	Անվճ	32	4	39	31	4	35.75	21	4	33.25
	Վճ		26	20.5		31	18.5		31	15.75
Ֆրանսերեն և գրականություն	Անվճ	7	2	30.75	10	2	26.25	6	2	23.75
	Վճ		5	16		8	19.75		8	21
Ֆինանսներ (ըստ ոլորտի)	Անվճ	21	2	31	40	5	33	45	5	30
	Վճ		18	19		35	16.25		35	17
Զբոսաշրջություն	Անվճ	54	5	31.5	22	3	25.5	28	3	26.5
	Վճ		32	17		22	17.75		22	16.5
Հոգեբանություն	Անվճ	37	3	30.75	9	2	26.25	20	2	27.75
	Վճ		14	17.75		18	16.25		18	16.25
Ռուսերեն և գրականություն	Անվճ	12	2	23.5	13	2	34.5	9	2	31.25
	Վճ		7	16.5		18	16.75		18	19
Դիզայն	Անվճ	8	2	31	18	2	31	16	2	32
	Վճ		10	19.75		18	20		13	19
Դեկորատիվ-կիրառական արվեստ	Անվճ	11	3	27	13	3	28	14	3	29
	Վճ		12	20		17	19		12	19

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Երևանի պետական համալսարանի ընդունելության և դիմորդների հետ տարվող աշխատանքների կենտրոնի նախապատրաստական դասընթացների բաժնի գործունեության հիմնական նպատակը ՀՀ հանրակրթական հաստատությունների (դպրոցներ, քոլեջներ, վարժարաններ, նախնական մասնագիտական հաստատություններ) ավարտական դասարանների աշակերտների և սովորողների՝ բուհ ընդունվելուն նախապատրաստումն է, ինչպես նաև ուսումն այնտեղ շարունակելու համար ամուր հիմքերի ստեղծումը:

ԵՊՀ նախապատրաստական դասընթացները կազմակերպում և համակարգում է ընդունելության և դիմորդների հետ տարվող աշխատանքների կենտրոնի նախապատրաստական դասընթացների բաժինը:

Աշակերտները և սովորողները նախապատրաստական դասընթացներին գրանցվելու համար ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

- անձը հաստատող փաստաթուղթ,
- 2 լուսանկար:

Յուրաքանչյուր առարկայի ուսման տարեկան վարձը՝ 200 000 դրամ:

Նախապատրաստական դասընթացների բաժնի սովորողների համար կազմակերպվում են ութամսյա դասընթացներ: Այդ դասընթացները կազմակերպվում են յուրաքանչյուր ուստարվա հոկտեմբեր–մայիս ամիսներին: Դասընթացների համար դիմումներն ընդունվում են սեպտեմբերի 1-ից:

Նախապատրաստական դասընթացների բաժնում դասավանդում են ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի փորձառու մասնագետները:

Հանրակրթական բոլոր առարկաների գծով գործում է փորձագիտական խորհուրդ: Խորհուրդը հաստատում է առարկաների օրացուցային թեմատիկ պլանները և հետևում դրանց կատարմանը: Նախապատրաստական դասընթացները կազմակերպվում և անցկացվում են ՀՀ բուհերի ընդունելության պահանջներին նախապես համապատասխանեցված ծրագրերով: Դասընթացների որակը ապահովելու նպատակով ուսումնական տարվա ընթացքում անցկացվում են ընթացիկ և կիսամյակային ստուգողական աշխատանքներ: Դասընթացները հաջողությամբ ավարտած սովորողներին ավարտական քննությունների արդյունքներով տրվում է սահմանված նմուշի վկայական (հավաստագիր):

Ավարտողները հաջողությամբ մասնակցում են պետական ավարտական և միասնական քննություններին, ստանում բարձր գնահատականներ: Վերջին

տարիներին դիմորդների ավելի քան 95 տոկոսն ընդունվել է ՀՀ տարբեր բուհերի առկա և հեռակա բաժիններ:

Երևանի պետական համալսարանի ընդունելության և դիմորդների հետ տարվող աշխատանքների կենտրոնի նախապատրաստական դասընթացների բաժինը առանձնացված ձևով կազմակերպում է նաև նախապատրաստական դասընթացներ օտարերկրյա քաղաքացիների համար: Օտարերկրյա քաղաքացիների համար կազմակերպվող դասընթացների ծրագրերը կազմվում են, հաշվի առնելով դիմորդների նախնական պատրաստվածությունը՝ յուրաքանչյուր սովորողի նկատմամբ դրսևորելով անհատական մոտեցում: Միաժամանակ կազմված ծրագրերը և հատկացվող ժամաքանակները նախատեսված և հաշվարկված են այնպես, որ դիմորդները ԵՊՀ նախապատրաստական դասընթացներին մասնակցելով հնարավորություն են ստանում նաև ուսումը շարունակել ոչ միայն ԵՊՀ-ում, այլև ՀՀ մյուս բուհերում:

Օտարերկրյա քաղաքացի դիմորդների գիտելիքների նախնական մակարդակին համապատասխան խմբեր ձևավորելու համար բոլոր հանրակրթական առարկաներից նախապես անցկացվում է թեստավորում (խմբերը համազոր գիտելիքներ ունեցող դիմորդներով կազմելու և նրանց հետ աշխատանքը նպատակային ու արդյունավետ դարձնելու համար): Առանձին խմբերում են ընդգրկվում հայերենին տիրապետող, մասամբ տիրապետող և հայերեն չիմացող դիմորդները, ովքեր դասընթացների սկզբում՝ ավելի քան երկու ամիս, մասնակցում են միայն հայոց լեզվի խորացված դասընթացների, որից հետո միայն հայերենին զուգահեռ մասնակցում են նաև ընդունելության համար անհրաժեշտ մյուս առարկաների դասընթացներին:

Ուսումնական գործընթացի նման ձևով կազմակերպումը հնարավորություն է տվել Չինաստանից, Ճապոնիայից, Սիրիայից, Վրաստանից, Ռուսաստանից, Իրանից, Շվեյցարիայից, Հորդանանից, Հնդկաստանից, Տաջիկստանից և մյուս երկրներից ժամանած դիմորդների համար ուսուցումը կազմակերպել հնարավորինս արդյունավետ, ինչի շնորհիվ նախորդ տարիներին նշված երկրների հարյուրավոր քաղաքացիներ ընդունվել և ուսումը շարունակում են ԵՊՀ տարբեր ֆակուլտետներում:

ԵՊՀ օտարերկրյա քաղաքացիների համար կազմակերպվող նախապատրաստական դասընթացները նաև իրական հնարավորություն են ընձեռում Սփյուռքի մեր հայրենակիցների համար ուսումը շարունակել մայր բուհում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ ռեկտորի խոսքը 3
Ցանկ Երևանի պետական համալսարանի առկա և հեռակա ուսուցման 2026/2027 ուստարվա բակալավրի կրթական ծրագրերի և ընդունելության քննությունների 5
Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ 8
Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ 15
Ֆիզիկայի ինստիտուտ 18
Քիմիայի ֆակուլտետ 25
Ֆարմացիայի ինստիտուտ 31
Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ 38
Կենսաբանության ֆակուլտետ 47
Պատմության ֆակուլտետ 53
Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ 70
Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետ 75
Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ 93
Սոցիոլոգիայի ֆակուլտետ 103
Հայ բանասիրության ֆակուլտետ 117
Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոն 121
Ժուռնալիստիկայի ֆակուլտետ 129
Ռուս բանասիրության ֆակուլտետ 132
Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ 137
Արևելագիտության ֆակուլտետ 152
Իրավագիտության ֆակուլտետ 160
Աստվածաբանության ֆակուլտետ 165
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ 168
ԵՊՀ Նախապատրաստական դասընթացներ 173